Ա. ՔՈՍՅԱՆ, Ե. ԳՐԵԿՅԱՆ, Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Վ. ՂԼԵՉՅԱՆ, Ռ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

10

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ որպես դասագիրք ավագ դպրոցի 10–րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար

ՀՏԴ 373.167.1:930.9(075)
ԳՄԴ 63.3(0) g72
Հ 202

Գլխավոր խմբագիր՝ **Արամ Քոսյան**
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
Խմբագիր՝ **Արամ Նազարյան**
պատմագիտության թեկնածու

Հեղինակներ՝ **Արամ Քոսյան**
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
(Ներածություն, Մաս 1. Գլուխ Բ, Գլուխ Գ. §1, Գլուխ Դ)
Երվանդ Գրեկյան
պատմագիտության թեկնածու
(Մաս 1. Գլուխ Ա, Գլուխ Գ. §§ 2–5)
Գագիկ Հարությունյան
պատմագիտության թեկնածու, դոցենտ
(Մաս 2. Գլուխներ Ա, Բ, Գ, Դ)
Վալերի Ղլեչյան
պատմագիտության թեկնածու, դոցենտ
(Մաս 3. Գլուխ Ա, Գլուխ Բ. §§ 4, 5)
Ռուբեն Սաֆրաստյան
պատմագիտության դոկտոր
(Մաս 3. Գլուխ Բ. §§ 1–3)

Մեթոդական մասի հեղինակ՝ **Արմինե Սարգսյան**
պատմաբան, մանկավարժ

Հ 202 **Համաշխարհային պատմություն:** 10–րդ դաս.: Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք/ Ա. Քոսյան, Ե. Գրեկյան, Գ. Հարությունյան, Վ. Ղլեչյան, Ռ. Սաֆրաստյան.– Եր.: Զանգակ–97, 2009.– 176 էջ:

ԳՄԴ 63.3(0) g72

ISBN 978–99941–1–634–8

© Քոսյան Ա., Գրեկյան Ե., Հարությունյան Գ., Ղլեչյան Վ., Սաֆրաստյան Ռ., 2009 թ.
© «Զանգակ–97» հրատարակչություն, 2009 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Համաշխարհային պատմություն» առարկայի ներածություն 5

ՄԱՍ 1. ՀԻՆ ԾՐՁԱՆ

ԳԼՈՒԽ Ա. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7
§ 1. Արևելքի առաջին պետությունները 7
§ 2. Քաղաքակրթության մյուս կենտրոնները 10
§ 3. Համաեգիպտական պետությունը 13
§ 4. Խեթական պետությունը, Բաբելոնիան և Ասորեստանը Ք.ա. II հազարամյակում 16
§ 5. Նոր ասորեստանյան և Նոր բաբելոնյան տերությունները 19
§ 6. Իրանական բարձրավանդակը 21

ԳԼՈՒԽ Բ. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 24
§ 1. Հունական քաղաքակրթության սկիզբը 24
§ 2. Դասական շրջանի հունական պոլիսը 27
§ 3. Հունաստանը Ք.ա. V դարում 30
§ 4. Վաղ Հռոմ. Իտալիայի նվաճումը 32
§ 5. Հռոմը՝ Միջերկրական ծովի ավազանի գերիշխող 35
§ 6. Հանրապետությունից կայսրություն 37

ԳԼՈՒԽ Գ. ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 41
§ 1. Հին աշխարհի հասարակությունը 41
§ 2. Գիր և գրականություն 43
§ 3. Գիտությունը 46
§ 4. Կրոն 48
§ 5. Արվեստ 51

ԳԼՈՒԽ Դ. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՎԱՐՏԸ 54
§ 1. Հելլենիստական աշխարհը 54
§ 2. Հռոմեական կայսրությունը I–V դարերում 57
§ 3. Հռոմը Եվրոպայում և Արևելքում 59
§ 4. Արևելքի երկրները հելլենիստական դարաշրջանում 62
§ 5. Չինաստանը և Հնդկաստանը նոր հազարամյակի սկզբներին 65

ՄԱՍ 2. ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԳԼՈՒԽ Ա. ԱՆՑՈՒՄ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ 68
§ 1. Միջնադարյան քաղաքակրթության ձևավորումը Եվրոպայում 68
§ 2. Պետությունը վաղ միջնադարում 72
§ 3. Պայքար Արևմտահռոմեական կայսրության ժառանգության համար 74
§ 4. Քրիստոնեական եկեղեցին վաղ միջնադարում 78
§ 5. Վաղ միջնադարի Եվրոպական մշակույթը 80
§ 6. Բյուզանդիան V–VIII դարերում 82

ԳԼՈՒԽ Բ. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 85
§ 1. Խաչակրաց արշավանքները 85
§ 2. Սոցիալական միջավայրի վերակառուցումը դասական միջնադարում 88
§ 3. Դասային միապետության առաջացումը 91
§ 4. Դասական միջնադարի մշակույթը: Վաղ վերածնունդը Իտալիայում 93
§ 5. Բյուզանդիան IX–XV դարերում 97
§ 6. Բյուզանդական մշակույթը V–XV դարերում 99
§ 7. Միջնադարյան քաղաքակրթությունը Ռուսիայում 103

ԳԼՈՒԽ Գ. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 107
§ 1. Հինդու քաղաքակրթությունը 107
§ 2. Չինաստանը միջնադարում 110
§ 3. Ճապոնիան միջնադարում 113
§ 4. Իսլամական քաղաքակրթությունը 116
§ 5. Քոչվորական քաղաքակրթությունները 119
§ 6. Մինչկոլումբոսյան Ամերիկան 122

ԳԼՈՒԽ Դ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՇԵՄԻՆ 126
§ 1. Նոր ժամանակի շեմին 126
§ 2. Նոր Եվրոպայի ծնունդը 128
§ 3. Արևմտյան Եվրոպայի մշակույթը XVI դարում և XVII դարի առաջին կեսին 131

ՄԱՍ 3. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

ԳԼՈՒԽ Ա. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ (XVII դար – XX դարի սկիզբ) 135
§ 1. Աշխարհը նոր ժամանակների սկզբին 135
§ 2. Արդյունաբերական քաղաքակրթության առաջացման եվրոպական ուղու առանձնահատկությունները 138
§ 3. Ժողովրդավարության ձևավորման գործընթացը նոր ժամանակներում 140
§ 4. Հասարակական–քաղաքական ուսմունքները և շարժումները 143
§ 5. Սահմանադրական կարգերի հաստատման Անգլիայի ուղին 146
§ 6. Սահմանադրական կարգի հաստատման Ֆրանսիայի ուղին 149
§ 7. Գերմանիայի և Իտալիայի հասարակական–քաղաքական զարգացման առանձնահատկությունները 152
§ 8. Ավստրո–Հունգարիան՝ առանձնահատուկ սահմանադրական կայսրություն 154
§ 9. Ազգային պետությունների առաջացումը Բալկանյան թերակղզում 157
§ 10. Ռուսական քաղաքակրթության զարգացման ուղին 159
§ 11. Արդյունաբերական հասարակության ձևավորման Ամերիկյան ուղին 162

ԳԼՈՒԽ Բ. ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 164
§ 1. Օսմանյան կայսրությունը նոր ժամանակներում 164
§ 2. Արաբական երկրները նոր ժամանակներում 167
§ 3. Իրանը նոր ժամանակներում 169
§ 4. Չինաստանի և Ճապոնիայի արդիականացումը 171
§ 5. Գաղութային համակարգը 173

Պատմության պարբերացումը և փուլաբաժանումը

Համաշխարհային պատմությունը մարդկային հասարակության առաջընթացի միասնական շղթա է, որն անցել է մի շարք փուլեր՝ յուրաքանչյուրին հատուկ օրինաչափություններով: Ավագ դպրոցի դասագրքերը հենվում են պատմության փուլաբաժանման քաղաքակրթական մոտեցման վրա: Ըստ դրա՝ մարդկության անցած ուղին՝ իր սկզբնավորման պահից մինչև մեր օրերը, ստորաբաժանվում է երեք փուլերի՝ 1) մինչարդյունաբերական (հին և միջին դարեր), 2) արդյունաբերական (XVII դ. – XX դ. կեսեր) և հետարդյունաբերական (XX դ. երկրորդ կեսից մինչև մեր օրերը):

Քաղաքակրթություն բառը ծագում է լատիներենից, որտեղ այն նախապես նշանակում էր «քաղաքային, պետական, քաղաքացիական»: Հին հռոմեացիների պատկերացմամբ՝ քաղաքակիրթ էր համարվում նստակյաց, քաղաքային կենցաղով ապրող հասարակությունը, որը նրանք հակադրում էին հետամնաց, բարբարոսական հասարակությանը:

Այսօր գոյություն ունեն պատմության փուլաբաժանման տարբեր մոտեցումներ:

Առաջինը **փուլային տարաբաժանումն է**, ըստ որի՝ քաղաքակրթությունը մարդկային հասարակության զարգացման գործընթացն է՝ իր տարբեր փուլերով: Այն սկսվում է տոհմատիրական հասարակարգի քայքայումով և քաղաքակրթական արժեքների (նյութական և հոգևոր մշակույթ, պետականություն և այլն) ստեղծումով: Այդ քաղաքակրթական գործընթացը պայմանականորեն բաժանվում է մի շարք փուլերի, որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է որոշակի առանձնահատկություններով: Փուլային բաժանման հիմքում ընկած են մարդկության պատմության համար ընդհանուր երևույթները՝ արտադրության եղանակ, սոցիալ–քաղաքական հաստատություններ և այլն:

Երկրորդը **տեղական քաղաքակրթությունների** մասին տեսությունն է, ըստ որի՝ մարդկության պատմությունը բաղկացած է ինքնուրույն քաղաքակրթությունների պատմությունից: Դրանցից յուրաքանչյուրը ձևավորվել է մի որոշակի տարածքում և ունի իր քաղաքական, սոցիալ–տնտեսական և հոգևոր–մշակութային զարգացման առանձնահատկությունները: Օրինակ՝ Հին հնդկական, Հին եգիպտական, Միջնադարյան եվրոպական, Կենտրոնական և Հարավային Ամերիկայի և այլն: Տեղական քաղաքակրթությունների միասնությունից էլ բաղկացած է համաշխարհային պատմությունը: Տեղական քաղաքակրթություններից յուրաքանչյուրը ազդել է իր հարևանների զարգացման վրա: Այդ փոխշփումների միջոցով էլ քաղաքակրթական արժեքները հասել են մինչև մեր օրերը:

Տեղական քաղաքակրթությունների զարգացումը կարող է ընթանալ այլ քաղաքակրթություններից մեկուսացված: Այդ պարագայում քաղաքակրթությունը երկար դարեր պահպանում է իր նախնական տեսքը, չի ընդունում իր մեջ օտարի քաղաքակրթական արժեքները: Այդպիսի քաղաքակրթությունները անվանում են **ավանդական:** Ավանդական քաղաքակրթությունների օրինակներ են մինչկոլումբոսյան Ամերիկան, միջնադարյան Չինաստանը և Ճապոնիան և այլն:

Տարբեր քաղաքակրթությունների միջև փոխշփումները պատմական գործընթացի կարևորագույն բաղկացուցիչ մասն են: Դրանց բացակայության դեպքում քաղաքակրթական կենտրոնի զարգացումը սկսում է դանդաղել, նույնիսկ լճանալ, օրինակ՝ մինչկոլումբոսյան Ամերիկայի քաղաքակրթությունները: Նախքան Կոլումբոսի ճանապարհորդությունը և իսպանական նվաճումը ամերիկյան ժողովուրդները ծանոթ չէին մետաղամշակությանը, այստեղ հայտնի չէր անիվը և այլն:

Պատմության վերոհիշյալ փուլաբաժանմանը զուգահեռ ընդունված է դրա պայմանական տարաբաժանումը չորս խոշոր պարբերաշրջանների, որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է հասարակության պատմության որոշակի իրադարձությամբ: Այսպես՝ ա) Հնագույն և հին շրջան (հնագույն ժամանակներից մինչև մ.թ.V դար՝ Արևմտահռոմեական կայսրության անկումը), բ) Միջին դարեր (Արևմտահռոմեական կայսրության անկումից մինչև XVII դարի անգլիական հեղափոխություն), գ) Նոր շրջան (Անգլիական հեղափոխությունից մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը) և դ) Նորագույն շրջան (Առաջին աշխարհամարտի ավարտից մինչև մեր օրերը):

Արդի փուլում տեղի են ունենում պատմական նոր գործընթացներ: Համաշխարհային մակարդակով քաղաքական, տնտեսական և մշակութային կառույցների գոյությունը, տեղեկատվական դաշտի ձևավորումը ընդլայնել են տարբեր երկրների և ժողովուրդների միջև փոխհարաբերությունները: Այսօր ընթացող համահարթեցման (գլոբալացում) գործընթացները համակել են ողջ երկրագունդը: Ժամանակակից աշխարհի զարգացման գլխավոր բնորոշ առանձնահատկությունը միասնացումն է (ինտեգրում) բոլոր մակարդակներով:

Պատմական գործընթացի բազմազանությունը և միասնականությունը

Երկրագնդի տարբեր շրջաններում մարդու և հասարակության զարգացումը, պայմանավորված տեղական առանձնահատկություններով, ընթացել է տարբեր եղանակներով: Շրջակա միջավայրը իր խոր հետքն է թողել այդ գործընթացի վրա: Դրա արդյունքում ձևավորվել են տեղական քաղաքակրթական տարբերակները: Օրինակ՝ արևելյան, եվրոպական, աֆրիկյան, ամերիկյան: Սակայն վերոհիշյալ քաղաքակրթությունները, տարբերությունների հետ մեկտեղ, ունեն զարգացման ընդհանուր օրինաչափություններ: Հենց այդ հանգամանքով է պայմանավորված համաշխարհային պատմական գործընթացի միասնականությունը:

Հասարակության զարգացման միասնական օրինաչափություններից են հասարակության կազմակերպման եղանակը (պետություն), բնակչության տարաբաժանումը սոցիալական խմբերի և այլն: Սրանցից յուրաքանչյուրը յուրովի է դրսևորվում տարբեր երկրներում: Օրինակ՝ գետահովտային քաղաքակրթություններում (Հին Եգիպտոս, Միջագետք) պետության վաղ կազմավորումը և կենտրոնացումը պայմանավորված էր հասարակության մարդկային ողջ ներուժի նպատակասլաց աշխատանքի կազմակերպման անհրաժեշտությամբ: Դրան հակառակ՝ Արևելամիջերկրածովյան ավազանում (փյունիկյան քաղաք–պետություններ) պետությունը հանդես է գալիս որպես հասարակության կենսագործունեության հիմնական ուղղության՝ առևտրաարհեստագործական ոլորտի կարգավորող: Այդ է պատճառը, որ այստեղ պետական կառույցը անհամեմատ ավելի ապակենտրոնացված բնույթ ուներ:

Նորքարիդարյան հեղափոխություն

Մինչև Ք.ա. XI–X հազարամյակները երկրագնդի բնակչության տնտեսավարումը բնութագրվում է որպես յուրացնող: Այսինքն՝ մարդը իր գոյությունը պահպանում էր բնության ստեղծած պատրաստի բարիքների հաշվին (որսորդություն, հավաքչություն, ձկնորսություն): Գոյության միջոցների կարիքը ստիպում էր մարդկանց շարունակ տեղաշարժվել: Դեռևս չկային մշտական բնակավայրեր, իսկ սննդի պակասը արգելակում էր մարդկանց թվաքանակի աճը:

Երկրագնդի վերջին սառցակալումից հետո տեղի ունեցան կարևոր փոփոխություններ նաև մարդկանց կյանքում: Կյանքի համար բարենպաստ պայմաններ ունեցող շրջաններում մարդկանց առանձին խմբեր սկսեցին անցնել նստակեցության: Սկիզբ դրվեց **երկրագործությանը** և **անասնապահությանը:** Ք.ա. IX–VI հազարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհում, Միջագետքում, Միջերկրական ծովի արևելյան առափնյա շրջաններում, Չինաստանում, Եգիպտոսում, Հնդկաստանում սկսեցին առաջանալ վաղ երկրագործական կենտրոններ, առաջ եկավ արհեստագործությունը: Մի քանի հազարամյակների ընթացքում երկրագնդի բնակչությունը աճեց շուրջ 5–6 անգամ:

Անցումը նոր կենցաղավարման, որով պայմանավորվեց մարդկության հետագա պատմությունը, ստացել է **«նորքարիդարյան («նեոլիթյան») հեղափոխություն»** անվանումը:

Նորքարիդարյան հեղափոխության հետևանքով փոխվեցին հասարակության և բնության փոխհարաբերությունները, հարստացավ մարդու հոգևոր աշխարհը: Արդյունքում՝ հասարակության ներսում ձևավորվեց հարաբերությունների նոր համակարգ, որը և կոչվում է **«քաղաքակրթություն»:**

Համատեղ կյանքը առաջ բերեց մարդկանց մոտ համակեցության գաղափարը (հանդուրժողական վերաբերմունք օտարի, ոչ արյունակցի հանդեպ), որը հասարակության զարգացման ամենակարևոր պայմաններից է:

Նորքարիդարյան հեղափոխության ձեռքբերումներից էր մարդու հոգևոր պահանջմունքների բավարարումը: Շրջակա միջավայրի իմաստավորման արդյունքում ձևավորվեցին կրոնական հավատալիքների տարբեր դրսևորումներ՝ տոտեմապաշտությունը, ոգեպաշտությունը, ֆետիշապաշտությունը և հմայապաշտությունը:

Այսպիսով՝ նեոլիթյան հեղափոխությունը շրջադարձային փուլ էր երկրագնդի բնակչության հետագա զարգացման համար: Մի քանի հազարամյակներում հիմնավորապես փոխվեց մարդկանց կենսաձևը, նշանակալից զարգացում ապրեց տնտեսությունը, որը յուրացնողից վերաճեց արտադրողի: Իսկ Ք.ա. IV հազարամյակի վերջերից Առաջավոր Ասիայում սկսվեց պետականությունների ձևավորումը, որը հետագայում ընդգրկեց այն ժամանակվա ողջ քաղաքակիրթ աշխարհը՝ Միջերկրական ծովի ավազանից, Հայկական լեռնաշխարհից, Միջագետքից մինչև Հնդկաստան և Չինաստան: Սկսվեց մարդկության պատմության քաղաքակրթական ժամանակաշրջանը:

ՄԱՍ 1 ՀԻՆ ԾՐՋԱՆ

ԳԼՈՒԽ Ա ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. ԱՐԵՎԵԼՔԻ ԱՌԱՋԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետության կազմավորումը Եգիպտոսում: Եգիպտական քաղաքակրթությունը ձևավորվել է Աֆրիկայի հյուսիս–արևելքում՝ Նեղոս գետի ստորին հոսանքի շրջանում: Աշխարհագրական առումով երկիրը բաժանվում է երկու մասի՝ Վերին և Ստորին Եգիպտոս: Վերին Եգիպտոսը ձգվում է Նեղոսի հովտով, որը գետի երկու ափերին ընկած մի նեղ գոտի է: Ստորին Եգիպտոսը Նեղոսի դելտայի շրջանն է: Նրա ջրերով ոռոգվող տարածքից հնարավոր էր բերք հավաքել տարին մի քանի անգամ: Նեղոսի հովտում օգտակար հանածոներ չկան, սակայն փոխարենը հարևան շրջանները հարուստ են մետաղահանքերով:

Եգիպտոսում առաջին մշտական բնակավայրերը հանդես են գալիս Ք.ա. VI հազարամյակում, որոնց բնակիչները զբաղվում էին պարզունակ երկրագործությամբ: Հաջորդ հազարամյակի վերջում մարդիկ սկսեցին կառուցել ջրանցքներ, օգտագործել պղնձե գործիքներ և զենքեր: Բարձր զարգացման հասավ խեցեգործությունը, սկիզբ դրվեց միջազգային առևտրին:

Ք.ա. IV հազարամյակի առաջին կեսին մեծ փոփոխություններ արձանագրվեցին հասարակության կյանքում: Բնակավայրերի պարսպապատումը և խոշոր դամբարանների առկայությունը վկայում են հասարակության շերտավորման և քաղաքական կենտրոնացվածության մասին: Այդ պահից արդեն Եգիպտոսում սկսվում է պետականության ձևավորումը, որը որոշ ժամանակ անց հանգեցրեց պետությունների կազմավորմանը:

Առաջին պետականությունները ծնունդ առան խոշոր բնակավայրերի հիմքի վրա: Հույները դրանք անվանում էին **նոմեր**: Կենսատարածքի և նյութական միջոցների ավելացման նպատակով նոմերը պատերազմում էին միմյանց դեմ: Ք.ա. XXXIV–XXXIII դդ. ռազմական կամ խա-

ղաղ ճանապարհով նոմերը միավորվեցին, և կազմավորվեցին երկու խոշոր թագավորություններ՝ Վերին և Ստորին Եգիպտոսները:

Այս երկու թագավորություններն առժամանակ գոյակցում էին կողք կողքի՝ շարունակ պատերազմելով միմյանց դեմ: Ի վերջո հաղթեց Վերին Եգիպտոսը, և կազմավորվեց առաջին համաեգիպտական պետությունը: Միացյալ Եգիպտոսի առաջին արքան **Մինան** էր, որը և հիմք դրեց I հարստությանը: Եգիպտոսի պատմության այս ժամանակաշրջանը կոչվում է Վաղ թագավորություն (Ք.ա. XXXI–XXIX դդ.):

Երկու Եգիպտոսների միավորումը ունեցավ շրջադարձային նշանակություն: Դադարեցին պատերազմները, հնարավոր դարձավ վերականգնել տնտեսությունը, սկսվեց նորաստեղծ պետության քաղաքական, տնտեսական և հոգևոր–պաշտամունքային հիմքերի ամրապնդումը: Մինան կառուցեց նոր մայրաքաղաք՝ **Մեմֆիսը** Նեղոսի դելտայի շրջանում: Իրենք՝ արքաները, համարվում էին Վերին Եգիպտոսի գլխավոր աստված **Հորի** երկրային մարմնավորումը: Նրանք կրում էին **փարավոն** տիտղոսը («մեծ տուն», այսինքն՝ պալատ): Այս շրջանում իրականացվեցին առաջին ռազմական արշավանքները դեպի **Սինայի թերակղզի**, **Լիբիա** և **Նուբիա**:

Այսպիսով՝ Վաղ թագավորության ավարտին Եգիպտոսն արդեն ձևավորված ամուր պետություն էր: Հենց այս շրջանում հիմք դրվեց նրա հետագա հզորացմանը և միջազգային ասպարեզ դուրս գալուն:

Շումերի քաղաք–պետությունները: Միջագետքը քաղաքակրթության հնագույն կենտրոններից է: Այն ընդգրկում է Եփրատ և Տիգրիս գետերի միջին ու ստորին հոսանքի ավազանը՝ հասնելով մինչև Պարսից ծոցը: Կենտրոնական և Հարավային Միջագետքն աչքի է ընկնում չոր կլիմայով: Այդ պատճառով երկրագործությամբ հնարավոր է զբաղվել միայն այն շրջաններում, որոնք հնարավոր է ոռոգել Եփրատի և Տիգրիսի ջրերով:

Երկրագործությունը Միջագետքում սկզբնավորվել է դեռևս Ք.ա. IX հազարամյակում: Առաջին վաղ երկրագործական բնակավայրերն ի հայտ են եկել Հյուսիսային Միջագետքում՝ Հայկական լեռնաշխարհի հարավում և Զագրոսյան լեռների փեշերին: Այստեղից վաղ երկրագործները սկսեցին շարժվել հարավ: Ք.ա. VI հազարամյակում մարդիկ սկսեցին անցկացնել առաջին ոռոգող առուները, յուրացրին նոր հողեր, ի հայտ եկան նոր բնակատեղիներ: Հետագայում սկսվեց Հարավային Միջագետքի բնակեցումը:

Միջագետքի բնակչությունը բաղկացած էր տարբեր ժողովուրդներից: Հարավի հնագույն բնակիչները **շումերներն** էին: Ք.ա. III հազարամյակից Միջագետք են ներթափանցում **սեմալեզու ցեղեր** և **խուռիները**, իսկ ավելի ուշ՝ **կասիտները**: Միջագետքում տարբեր ժամանակներում հաստատվել են նաև այլ ժողովուրդներ:

Մինչև Ք.ա. III հազարամյակի սկիզբը Միջագետքը քաղաքական առումով միավորված չէր: Հարավում գոյություն ունեին շումերական տասնյակ քաղաք–պետություններ: Դրանցից առավել հայտնի էին **Քիշը**, **Ուրը**, **Լագաշը**, **Ուրուկը** և այլն: Այս քաղաքները մշտական պայքար էին մղում միմյանց դեմ:

Սկզբում վերելք ապրեց Քիշ քաղաքը, որը շուտով առաջնությունը զիջեց Ուրուկին: Վերջինիս իշխանությունը միառժամանակ տարածվեց գրեթե ողջ Հարավային Միջագետքի վրա: Կենտրոնացված պետություն ստեղծելու ջանքերը շարունակվեցին հետագայում ևս: Ուրուկից հետո գերիշխանությունն անցավ Ուրին, այնուհետև՝ Լագաշին: Ի վերջո **Ումմա** քաղաքին հաջողվեց պարտության մատնել լագաշցիներին: Շումերը կարճ ժամանակով միավորվեց Ումմայի իշխանության ներքո:

Միջագետքի պետությունները Ք.ա. III հազարամյակում: Ք.ա. III հազարամյակի կեսերից Միջագետք ներթափանցած սեմական ցեղերը սկսեցին գործուն դեր խաղալ այստեղի պետությունների քաղաքական կյանքում: Որոշ շրջաններում իշխանությունն անցավ սեմական առաջնորդների ձեռքը: Դրանցից էր **Աքքադի** թագավորության հիմնադիր **Սարգոնը (Ք.ա. 2330–2295 թթ.)**: Վերջինս սկզբում իշխանության եկավ Քիշ քաղաքում, ապա իր համար կառուցեց նոր նստավայր՝ Աքքադ քաղաքը:

Սարգոնն իրականացրեց մի շարք բարեփոխումներ: Նրան է վերագրվում աշխարհում առաջին մշտական բանակի կազմավորումը՝ բաղկացած 5400 զինվորներից: Հենվելով նոր բանակի վրա՝ Սարգոնը իր իշխանությունը տարածեց ողջ Շումերի վրա: Ավարտելով Շումերի նվաճումը՝ նա ձեռնամուխ եղավ արտաքին նվաճումների: Սարգոնն արշավանքներ ձեռնարկեց դեպի **Էբլա** և **Մարի** (ներկայիս

Սիրիայում), **Սուբարտու** (Հյուսիսային Միջագետք և Հայկական լեռնաշխարհի հարավ) և **Էլամ** (հարավարևմտյան Իրան): Այդ նվաճումների հետևանքով կազմավորվեց Աքքադի ընդարձակ տերությունը, որը ժամանակին հզորագույնն էր Առաջավոր Ասիայում:

Աքքադի թագավորությունն իր հզորության բարձրակետին հասավ Սարգոնի թոռան՝ **Նարամսինի** օրոք: Հենվելով քրմության վրա՝ նա ամրապնդեց արքայական իշխանությունը: Նարամսինը տաճարներին տալիս էր ընդարձակ հողատարածքներ, կառուցում նոր տաճարներ: Դրա դիմաց քրմությունը Նարամսինին հռչակեց Աքքադի աստված:

Նարամսինն իրականացրեց նաև մի շարք նվաճումներ տարբեր ուղղություններով: Իր արձանագրություններում նա իրեն համարում էր «**աշխարհի չորս կողմերի**» թագավոր:

Նարամսինի կառավարման վերջին տարիներին Աքքադի թագավորությանը սկսեցին սպառնալ լեռնական **կուտիների** ցեղերը: Նրա կառավարումից կարճ ժամանակ անց Միջագետքը նվաճվեց կուտիների կողմից:

Կուտիները Միջագետքը հյուսիսից և հյուսիս–արևմուտքից եզերող Հայկական Տավրոսի և Զագրոսի լեռների բնակիչներ էին: Նրանց իշխանությունը Միջագետքում սահմանափակվում էր տեղի քաղաքներից հարկ ստանալով: Կուտիական տիրապետությունը մեծ վնաս չպատճառեց տնտեսապես զարգացած քաղաքներին: Դրանց շարքում մեծ վերելք ապրեց հատկապես Լագաշ քաղաքը:

Կուտիների իշխանությունը շարունակվեց մոտ մեկ դար: **Ք.ա. 2109 թ.** Ուրուկ քաղաքից **Ուտուխեգալը** համախմբեց բնակչությանը և կուտիներին վտարեց Միջագետքից: Դրանից շատ չանցած՝ Միջագետքում գերիշխանությունն անցավ Ուր քաղաքին, որը և հիմք դրեց **Շումերա–աքքադական** միացյալ թագավորությունը. այն կոչվում է նաև **Ուրի III հարստության** պետություն:

Ուրի արքա **Շուլգին** և նրա հաջորդները արշավանքներ ձեռնարկեցին դեպի հարևան երկրներ, այդ թվում՝ դեպի **Էլամ**:

Շումերա–աքքադական թագավորությունը շուտով դարձավ Առաջավոր Ասիայի խոշորագույն պետություններից մեկը, որի սահմանները Պարսից ծոցից ձգվում էին մինչև Սիրիա և Հայկական լեռնաշխարհի հարավ: Ծաղկում ապրեց տնտեսությունը, անցկացվեցին նոր ջրանցքներ, զարգացման բարձր մակարդակի հասավ մշակույթը:

Ք.ա. XXI դ. վերջերից Միջագետք սկսեցին ներթափանցել քոչվոր **ամորեական** ցեղերը, որոնց հարվածների տակ Ուրը թուլացավ: Վերջին հարվածը Ուրին հասցրին հարևան էլամցիները: Օգտվելով երկրում ստեղծված տնտեսական ծանր իրավիճակից՝ նրանք գրավեցին Ուրը՝ գերեվարելով վերջին արքային:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ ազդեցություն են ունեցել աշխարհագրական պայմանները եգիպտական քաղաքակրթության ձևավորման վրա:
2. Ի՞նչ է նոմը: Ինչպե՞ս ձևավորվեց Վաղ թագավորությունը:
3. Բնական պայմանների ի՞նչ առանձնահատկություններ ուներ Միջագետքը: Ե՞րբ են Միջագետքում առաջին անգամ ոռոգման համար արհեստական կառույցներ ստեղծել:
4. Թվարկե՛ք Միջագետքի հայտնի քաղաք–պետությունները: Ո՞ր քաղաքները հաջորդաբար գլխավորեցին համաշումերական պետության ստեղծման գործընթացը: Ո՞վ էր Աքքադի թագավորության հիմնադիրը: Ո՞ւմ օրոք Աքքադի թագավորությունը հասավ իր հզորության բարձրակետին:
5. Ովքե՞ր էին կուտիները, որքա՞ն տևեց նրանց իշխանությունը Միջագետքում:
6. Ի՞նչ տարածք էր զբաղեցնում Շումերա–աքքադական թագավորությունը: Ինչո՞ւ անկում ապրեց Ուրի III հարստությունը:

§2. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Արևելյան Միջերկրականի առաջին քաղաք-պետությունները: Միջերկրական ծովի արևելյան ավազանը՝ Տավրոսյան լեռներից մինչև Եգիպտոս, մտնում է **Բարեբեր մահիկի** մեջ: Այս տարածքը երկրագնդի վրա երկրագործության հնագույն օջախներից է: Վաղ երկրագործական առաջին բնակատեղիներից էր **Երիքովը**, որը գոյություն ուներ դեռևս Ք.ա. VIII հազարամյակից: Նստակեցության և դրա հետ կապված պետականության ձևավորմանը նպաստեց նաև առևտուրը: Այստեղով էին անցնում Միջագետքից և Փոքր Ասիայից Եգիպտոս տանող առևտրական ուղիները, իսկ քաղաքների մեծ մասը ծովափին էր: Դա թույլ էր տալիս առևտրական կապեր հաստատել Միջերկրական ծովի ավազանի հետ: Առևտրական հարաբերություններում ներգրավված էին տեղի բոլոր ժողովուրդները՝ **քանանացիները**, **ամորեացիները** և այլն:

Երկրագործության զարգացման և առևտրական հարաբերությունների աճին զուգընթաց ձևավորվեցին խոշոր քաղաքային կենտրոններ, ինչպիսիք էին **Էբլան**, **Բիբլոսը**, **Տյուրոսը**, **Սիդոնը**, **Ուգարիտը** և այլն: Ք.ա. IV հազարամյակի վերջերին սկսվեց Էբլայի վերելքը: Այն բավական խոշոր պետական կազմավորում էր, իսկ Ք.ա. XXV–XIV դդ. Էբլայի քաղաքական ազդեցության տակ էր հայտնվել գրեթե ողջ Սիրիան: Առևտրական ճանապարհներին տիրելու և տարանցիկ առևտուրը վերահսկելու համար Էբլան ստիպված էր պայքարել միջագետքյան պետությունների, մասնավորապես՝ Աքքադի տերության դեմ:

Միտաննի: Ք.ա. III հազարամյակի ընթացքում Հայկական լեռնաշխարհից Հյուսիսային Սիրիա և Միջագետք տեղաշարժվեցին խուռիական ցեղերը: Այս նույն տարածքներ ներթափանցած **հնդարիական** ծագում ունեցող ռազմունակ ցեղերի գլխավորությամբ միավորված խուռիները **Ք.ա. XVI դ.** հիմնեցին **Միտաննիի թագավորությունը**:

Միտաննիի կազմավորումն ու վերելքը համընկավ Եգիպտոսի XVIII հարստության հզոր փարավոնների կառավարման հետ, և երկիրը ստիպված էր հենց սկզբից բախվել եգիպտացիների հետ: Մի պահ անգամ վտանգված էր նորաստեղծ թագավորության գոյությունը: **Սաուսադատար** արքային մեծ ջանքերի գնով հաջողվեց վերամիավորել պետությունը, ընդարձակել երկրի սահմանները: Միտաննին, սակայն, պարտություն կրեց Խեթական թագավորության դեմ մղվող պայքարում և կորցրեց իր նվաճումները:

Խեթական նվաճման վտանգը ստիպեց միտաննական արքաներին խաղաղ հարաբերություններ հաստատել Եգիպտոսի հետ, ինչը երբեմն ամրապնդվում էր դինաստիական ամուսնություններով: Սակայն Եգիպտոսի հետ մերձեցումը չփրկեց Միտաննիին: Օգտվելով այստեղ բռնկված գահակալական պայքարից՝ խեթական բանակը ներխուժեց Միտաննի՝ դրա մի հատվածում հաստատելով խեթական դրածո արքայի իշխանությունը: Միտաննին վերածվեց խեթերից կախյալ թագավորության:

Իր հերթին՝ Ասորեստանը ևս փորձում էր նվաճել Միտաննին: Ք.ա. XIII դարում Միտաննին բազմիցս ենթարկվեց նրա արշավանքներին: Ի վերջո՝ Ասորեստանին հաջողվեց նվաճել Միտաննին: Որոշ խուռիական իշխանություններ շարունակեցին գոյատևել երկրի լեռնային շրջաններում:

Արևելամիջերկրածովյան ավազանը Ք.ա. XI–VI դարերում: Ք.ա. XI դարում սկսվում է Միջերկրական ծովի արևելյան ավազանի երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային վերելքի նոր փուլը: Սկզբում հատկապես աչքի էին ընկնում փյունիկյան քաղաքները, ինչի վկայությունը **փյունիկյան մեծ գաղութացումն էր**: Փյունիկյան ծովագնացները սկսեցին ներթափանցել Միջերկրական ծովի արևմտյան ավազան և հիմնել իրենց գաղութները Հյուսիսային Աֆրիկայում, Պիրենեյան թերակղզում և այլուր: Գաղութացման գործում առավել ակտիվ էր Տյուրոս քաղաքը: Վերջինս իրեն ենթարկեց նաև **Սիդոնն** ու այլ ծովափնյա քաղաքներ՝ ստեղծելով ընդարձակ մի պետություն՝ **Տյուրոս-սիդոնյան թագավորությունը**:

Միջերկրականի ծովափից հեռու՝ Սիրիայի խորքերում, հիմնական դերակատարությունը պատկանում էր **արամեացիներին**: Արամեացիների խոշորագույն պետական կազմավորումներից էր **Դամասկոսը** (կոչվում է նաև Արամ):

ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ
(Ք.Ա. III–II ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐ)

Պաղեստինում Ք.ա. XI դ. սկզբներին ստեղծվեց **Իսրայելի** պետությունը: Այն իր հզորության բարձրակետին հասավ **Դավիթ** (մոտ Ք.ա. 1000–965 թթ.) և **Սողոմոն** (մոտ Ք.ա. 965–928 թթ.) արքաների օրոք: Պետության մայրաքաղաք դարձավ Երուսաղեմը, որն ընդարձակվեց և կառուցապատվեց շքեղ կառույցներով: Իսրայելի միասնական պետությունը կարճատև կյանք ունեցավ և շուտով տրոհվեց երկու թագավորությունների:

Ք.ա. VIII դարում Սիրիայի, Փյունիկիայի և Պաղեստինի պետությունների համար լուրջ սպառնալիք էր ներկայացնում վերելք ապրող Ասորեստանը: **Թիգլաթպալասար III**-ի օրոք ասորեստանյան զորքերը մեկը մյուսի հետևից սկսեցին գրավել Սիրիայի իշխանությունները: Նրա հաջորդ **Սարգոն II**-ը գրավեց Իսրայելի մայրաքաղաք **Սամարիան**: Որոշ ժամանակ անց ասորեստանցիների ձեռքն ընկավ փյունիկյան ողջ ծովափը: Ողջ տարածաշրջանը մինչև Եգիպտոսի սահման հայտնվեց ասորեստանյան տիրապետության տակ:

Ք.ա. VII դ. վերջերին, երբ Ասորեստանն անկում էր ապրում, նվաճված երկրները սկսեցին անկախանալ: Դրանից ամենից շատ օգտվեց **Տյուրոսը**, որը վերստանձնեց փյունիկյան ծովափի առաջատարի դերը: Վերելք ապրեց նաև Հուդայի թագավորությունը: Վերջինս, սակայն, շուտով ջախջախվեց Եգիպտոսի կողմից: Իր հերթին՝ եգիպտացիներին չհաջողվեց հաստատվել

արևելամիջերկրականի ափերին և տեր դառնալ ասորեստանյան ժառանգությանը: Բաբելոնիայի դեմ պայքարում Եգիպտոսը պարտվեց: Բաբելոնիայի արքա **Նաբուգոդոնոսոր II**–ը **Ք.ա. 587 թ.** գրավեց Երուսաղեմը, իսկ ավելի ուշ իր գերիշխանությունը հաստատեց փյունիկյան ծովափի քաղաքների նկատմամբ:

Այս տարածքները հետագայում անցան Աքեմենյան պարսկական տերությանը: Փյունիկիայի մի շարք քաղաքներ աքեմենյան գերիշխանության ներքո ծաղկում էին ապրում՝ հովանավորվելով աքեմենյան արքաների կողմից, որոնք շահագրգռված էին փյունիկյան առևտրի բարգավաճմամբ:

Աքեմենյան տերության անկումից հետո՝ հելլենիստական դարաշրջանում, փյունիկյան քաղաքները շարունակեցին պահպանել իրենց տնտեսական ներուժը: Նրանք ակտիվ մասնակցություն ունեին Առաջավոր Ասիայի և միջերկրածովյան ավազանի երկրների միջև իրականացվող միջազգային առևտրին:

Քաղաքակրթության սկիզբը Հնդկաստանում և Չինաստանում: Հնդկաստանը քաղաքակրթության հնագույն կենտրոններից է: Հնդկաստանը աչքի է ընկնում բերրի հողով և ջրի առատությամբ (այստեղով են հոսում ջրառատ **Ինդոս**, **Գանգես**, **Բրահմապուտրա** և այլ գետեր): Հնդկաստանի հնագույն բնակիչները **դրավիդյան** ժողովուրդներն էին:

Ք.ա. XXXIII դ. սկսած՝ Ինդոս գետի հովտում նկատվում է արտադրողական ուժերի բուռն աճ, յուրացվում է բրոնզի ձուլման տեխնիկան: Ընդարձակվում է բնակավայրերի տարածքը, ի հայտ են գալիս առաջին քաղաքները: Դրանցից մեկի անունով այս դարաշրջանը ստացավ **Խառապպայի մշակույթ** անվանումը: Այս դարաշրջանի բնորոշ կողմերից մեկը քաղաքային մշակույթի աննախադեպ բարձր մակարդակն էր: Խոշոր և փոքր քաղաքների թիվը հասնում էր մի քանի հարյուրի: Միայն Խառապպան ուներ քսան հազարից ավելի բնակչություն: Խառապպայի քաղաքակրթության կարևորագույն ձեռքբերումներից մեկը գրի ստեղծումն էր:

Խառապպայի մշակույթը մոտ Ք.ա. 1800 թ. սկսած անկում է ապրում: Խոշոր քաղաքների մեծ մասը լքվում է բնակիչների կողմից: Պատճառը կլիմայական փոփոխություններն էին, երբ տաք ու խոնավ եղանակային պայմաններին փոխարինեց չորային և համեմատաբար ցուրտ կլիման:

Ք.ա. XVIII դ. սկսած՝ Հնդկաստան ներթափանցեցին **արիական ցեղերը** և տիրեցին Հյուսիսային Հնդկաստանին: Արիացիները հետագայում յուրացրին երկրագործությունն ու քաղաքային կենցաղը: Արդեն Ք.ա. XV–XIII դդ. նրանք ստեղծեցին մի շարք պետություններ: Արքաները կոչվում էին **ռաջա**, որոնց իշխանությունը ժառանգական էր:

Մեծաքանակ նվաճված ժողովուրդների նկատմամբ գերիշխանությունը պահպանելու արդյունքում ձևավորվեց խոր անջրպետ արիացիների և տեղացիների միջև: Բնակչությունը ստորաբաժանվեց դասերի (վարնա): Դրանք էին՝ արտոնյալ խավը ներկայացնող **բրահմանները** (քրմեր), **քշատրիները** (ռազմիկներ), **վայշիները** (երկրագործներ, արհեստավորներ և առևտրականներ) և անազատների խավը ներկայացնող **շուդրաները** (ծառաներ, համայնքի իրավազուրկ անդամներ), ինչպես նաև ստրուկները: Պատկանելությունը վարնային ժառանգական էր, և խառը ամուսնությունը արգելված էր: Այս համակարգի հիման վրա միջնադարում և նոր ժամանակներում ձևավորվեց Հնդկաստանի հասարակության **կաստայական** կառուցվածքը:

Ք.ա. 517 թ. Հյուսիսային Հնդկաստանը նվաճվեց Աքեմենյան արքա Դարեհ I–ի կողմից: Այն մնաց նրա կազմում ընդհուպ մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները:

Չինաստանում վաղ երկրագործական հասարակությունը ձևավորվեց նեոլիթյան հեղափոխության շրջանում: Արդեն Ք.ա. VIII–VI հազարամյակներում Յանցզի գետի ավազանում գոյություն ունեին մի շարք մշտական բնակավայրեր: Այնուհետև այդ կենտրոնների խոշորացումը հանգեցրեց պետականությունների ձևավորման: Ամենուրեք հանդես են գալիս պալատական շինություններ: Ստեղծվում է հիերոգլիֆային գիրը:

Ք.ա. XVI դ. Հուանհե գետի միջին հոսանքի շրջանում հիմնվեց **առաջին խոշոր պետությունը՝ Ին** հարստության գլխավորությամբ: Արքայական իշխանությունը աստվածապետական էր: Արքան միաժամանակ գերագույն հոգևոր առաջնորդն էր: Այս դարաշրջանը քաղաքային մշակույթի ծաղկման փուլ էր: Առաջ եկան բազմաթիվ պարսպապատ քաղաքներ՝ կանոնավոր հատակագծով: Լայն կիրառում ստացավ գիրը: Ծաղկում ապրեց տնտեսությունը, մասնավորապես՝ մետաղագործությունը: Յուրացվել էր բրոնզի ձուլման տեխնիկան: Հատկապես տարածված էին բրոնզե անոթները: Որոշ անոթներ կշռում էին մի քանի հարյուր կիլոգրամ:

Ք.ա. XI դ. Ին հարստությանը սկսեցին

սպառնալ մինչ այդ նրա տիրապետության տակ գտնվող **չժոու** ցեղերը: Չժոուների առաջնորդ **Ու Վանը** գրավեց նրանց տարածքները և հիմնեց **Չժոու** հարստությունը (Ք.ա. 1046–249 թթ.): Այդ պետության պատմությունը բաժանվում է երկու փուլի՝ **Արևմտյան Չժոուի** և **Արևելյան Չժոուի** տիրապետության շրջան:

Նոր հարստության օրոք բուռն զարգացում ապրեց տնտեսությունը: Ստեղծվեց ջրանցքների միասնական համակարգ: Բրոնզին զուգահեռ լայն տարածում է ստանում երկաթը: Ծաղկում են արհեստները, գիտությունը, հատկապես՝ փիլիսոփայական միտքը: Պատահական չէ, որ Չինաստանի պատմության այս շրջանը կոչվում է նաև «**Մտքի հարյուր դպրոցների**» դարաշրջան:

Արևմտյան Չժոուն հզոր պետություն էր և վարում էր ակտիվ նվաճողական քաղաքականություն: Նրա արքաներն իրենց արշավանքների ժամանակ երբեմն հասնում էին մինչև Կենտրոնական Ասիա: Արքան (չինարեն՝ **վան**) ուներ գերագույն ռազմական և հոգևոր իշխանություն:

Ք.ա. 771 թ. երկրում սկսվեց գահակալական պայքար, ինչի արդյունքում գահ բարձրացավ **Պին** վանը: Դժվարանալով դիմագրավել քոչվոր ցեղերի ճնշմանը՝ նա մայրաքաղաքը տեղափոխեց արևելք՝ **Լոյան**, որով էլ սկսվում է **Արևելյան Չժոու** պետության դարաշրջանը:

Արևելյան Չժոուի գոյության առաջին տասնամյակներում Հուանհեի ավազանում գոյություն ունեին շուրջ 150 մանր պետություններ: Գերիշխանության համար ընթացած պայքարի արդյունքում ձևավորվեցին մոտ 10 խոշոր պետություններ: Չժոուի արքաների գերիշխանությունը սրանց մեծ մասի նկատմամբ ձևական էր: Թագավորությունների միջև պատերազմները և բախումները հյուսիսի ու արևմուտքի քոչվորների դեմ, թույլ չէին տալիս դրանցից որևէ մեկի հզորացումը: Քիչ չէին այն դեպքերը, երբ միմյանց դեմ պատերազմներում նրանք օգնության էին հրավիրում քոչվորներին: Դրա արդյունքում Ք.ա. 249 թ. Արևելյան Չժոուն անկում ապրեց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ են առաջացել առաջին քաղաք–պետությունները Արևելամիջերկրածովյան շրջանում. թվարկե՛ք դրանք: Ի՞նչ տարածք էր զբաղեցնում Էբլան վերելքի շրջանում:
2. Ի՞նչ հետևանք ունեցավ խուռիական ցեղերի ներթափանցումը Հյուսիսային Սիրիա և Միջագետք: Ե՞րբ է ստեղծվել Միտաննի պետությունը: Ինչո՞ւ այն կործանվեց:
3. Սիրիայի և Պաղեստինի տարածքում ինչ պետություններ ձևավորվեցին: Ո՞ր տերություններն էին Ք.ա. VIII–VI դարերում նվաճել Արևելյան միջերկրածովյան ավազանը:
4. Ե՞րբ է ձևավորվել Խառապպայի մշակույթը: Արիական ցեղերը ե՞րբ ներթափանցեցին Հնդկաստան, ի՞նչ հետևանքներ ունեցավ դա: Ներկայացրե՛ք հնդկական հասարակության սոցիալական կառուցվածքը:
5. Ե՞րբ է ձևավորվել Ին հարստության թագավորությունը: Ի՞նչն էր բնորոշ այս պետությանը: Ո՞վ և ե՞րբ հիմնադրեց Չժոու հարստությունը: Արևմտյան Չժոու հարստության շրջանը ի՞նչ անունով է հայտնի: Ո՞վ էր Արևելյան Չժոու պետության հիմնադիրը: Ինչո՞ւ և ե՞րբ անկում ապրեց Արևելյան Չժոու պետությունը:

§3. ՀԱՄԱԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հին թագավորություն: Վաղ թագավորության ավարտին Եգիպտոսում իշխանության եկավ III հարստությունը, որով սկսվում է Հին թագավորության դարաշրջանը (Ք.ա. XXVIII–XXIII դդ.): Առաջին փարավոն **Ջոսերի** գլխավոր նպատակներից էր Վերին և Ստորին Եգիպտոսների միավորումն ամրապնդելը: Նա իրականացրեց վարչաքաղաքական բարեփոխում՝ իշխանությունից հեռացնելով նոմերում ժառանգաբար իշխող տեղական ազնվականության ներկայացուցիչներին: Վերջիններս փոխարինվեցին նշանակովի պաշտոնյաներով,

որոնք հնազանդ էին նրան (հուն.՝ **նոմարքոսներ**): Ձևավորվեց կառավարման կուռ համակարգ:

Փարավոնի իշխանությունը հայտարարվեց աստվածատուր, իսկ փարավոնը՝ մարդ–աստված: Արքայական իշխանության առանձնահատուկ դերն ընդգծելու նպատակով փարավոնների դամբարանները սկսեցին կառուցել ավելի մեծ և ճոխ:

Հին թագավորությունն իր հզորության բարձրակետին հասավ IV հարստության օրոք: Եգիպտացիները սկսեցին արշավանքներ ձեռնարկել հարևան երկրների դեմ՝ դեպի հարավ՝ **Նուբիա**, դեպի արևմուտք՝ **Լիբիա,** և հյուսիս–արևելք՝ **Սինայի թերակղզի** և **Պաղեստին**:

IV հարստությանը հաջորդած նոր արքայատոհմը երկրին համակած ճգնաժամի պայմաններում ավելի ու ավելի մեծ զիջումներ էր անում նոմային ազնվականությանն ու քրմությանը: Արդյունքում արքայական իշխանությունը շարունակ հեղինակազրկվում էր և ի վերջո հասավ նվազագույնի: Երկրում փաստացի իշխանությունն անցավ նոմարքոսների ու բարձրաստիճան քրմության ձեռքը: Երկիրը տրոհվեց մի քանի տասնյակ ինքնուրույն իշխանությունների:

Միջին թագավորություն: Եգիպտոսի տրոհումը նոմերի իր հետ բերեց արյունալի պատերազմներ և ավերածություններ: Իրավիճակը որոշ կառավարողների ստիպեց վերականգնել միասնական պետությունը: Այդ շարժումը հյուսիսում գլխավորեց **Հերակլեոպոլիս**, իսկ հարավում՝ **Թեբե** քաղաքը: Պայքարում հաղթեց Թեբեն, և **Ք.ա. 2040 թ.** սահմաններում Թեբեի փարավոնը հիմնադրեց համաեգիպտական **XI հարստությունը**: Սկսվեց Եգիպտոսի քաղաքական, տնտեսական և մշակութային նոր վերելքը, որը տևեց մոտ երեք դար: Այս դարաշրջանը հայտնի է **Միջին թագավորություն** անվամբ:

Միջին թագավորության շրջանում վերականգնվեց երկրի տնտեսությունը, կառուցվեցին նոր ջրանցքներ և քաղաքներ: Տնտեսության վերելքը ուղեկցվում էր տեխնիկական նորամուծություններով: Եգիպտացիները յուրացրին բրոնզի ձուլման տեխնիկան: Եգիպտոսը սկսեց աշխույժ առևտուր կատարել Փոքր Ասիայի, Սիրիայի և Միջագետքի հետ:

Միջին թագավորությունն իր հզորության բարձրակետին հասավ XII հարստության օրոք: Եգիպտոսի սահմանը հարավում հասավ մինչև Նեղոսի երկրորդ սահանք: Նուբիան, որը հարուստ էր ոսկով, վերածվեց եգիպտական նահանգի: Եգիպտոսի իշխանությունը տարածվում էր նաև Պաղեստինի և փյունիկյան որոշ քաղաքների վրա:

XII հարստության անկումից հետո միասնական պետությունը սկսեց տրոհվել: Սկսվեցին երկպառակչական պատերազմներ նոմերի միջև, բնակչության ապստամբություններ: Ստեղծված իրավիճակից օգտվեցին արտաքին թշնամիները՝ **հիքսոսները**: Նրանք նվաճեցին Դելտայի շրջանը, և Եգիպտոսը դարձավ հիքսոսների ընդարձակ պետության մի մասը: Դելտայի արևելքում հիքսոսները հիմնեցին իրենց մայրաքաղաքը՝ **Ավարիսը**:

Նոր թագավորություն: Որոշ ժամանակ անց հիքսոսների դեմ պայքար սկսեցին Թեբեի շուրջ համախմբված նոմերը: Ի վերջո՝ Թեբեի փարավոն **Յահմոս I**–ը (**Ք.ա. մոտ 1540–1517 թթ.**) գրավեց Ավարիսը և վտարեց հիքսոսներին: Յահմոսը հիմնադրեց նոր՝ XVIII հարստությունը, որով սկսվեց Եգիպտոսի պատմության **Նոր թագավորության** դարաշրջանը:

Նոր հարստության փարավոնները ձեռնամուխ եղան բանակի վերակազմավորմանը: Ստեղծվեցին մարտակառքերի ջոկատներ, զորքերը զինվեցին կատարելագործված զենքերով: Բանակում աճեց վարձկան զորքերի թվաքանակը: Այժմ Եգիպտոսն ուներ խոշոր բանակ, որը թույլ տվեց վարելու գործուն արտաքին քաղաքականություն:

Արդեն **Թութմոս I**–ի օրոք Եգիպտոսի սահմանները հյուսիսում հասան մինչև Եփրատ, ուր եգիպտացիները հաղթեցին **Միտաննիին**: Աննախադեպ հաջողություններ արձանագրվեցին **Թութմոս III**–ի կառավարման ժամանակ (Ք.ա. 1468–1434 թթ.): Փարավոնը հյուսիսում հասավ մինչև Կարքեմիշ: Թութմոս III–ը ստեղծեց մի տերություն, որը հյուսիսից հարավ ձգվում էր մոտ 3200 կմ: Նրա հաջորդներն արդեն ստիպված էին մտածել ոչ թե նոր տարածքների, այլ եղածը պահպանելու մասին:

Փարավոնը ստեղծեց գաղութային վարչակազմ, որը պետք է իրագործեր նորանվաճ երկրների նկատմամբ տարվող քաղաքականությունը: Թութմոսն առաջինն էր, ով նվաճվածների վրա սահմանեց հարկային և այլ պարտավորություններ:

Տասնամյակներ տևած պատերազմների ընթացքում ձեռք բերված ռազմավարը և հարկերի մուտքը նպաստեցին տնտեսության զարգացմանը, սկսվեց շինարարական լայն գործունեություն:

Ք.ա. XIV դ. կարևոր իրադարձություններից էր փարավոն **Էխնաթոնի** կրոնական բարեփո-



Թութմոս III

խումը: Փարավոնների կողմից տրվող նվիրատվությունների շնորհիվ երկրում մեծ ազդեցություն ձեռք բերեց Թեբեի հովանավոր աստված **Ամոնի** տաճարը: Տաճարի քրմերը միջամտում էին նույնիսկ պետության աշխարհիկ գործերին: Դա պատճառ էր դառնում փարավոնների և քրմության միջև տարաձայնությունների և բախումների: Իրավիճակը լարվեց **Ամենհոտեպ IV**–ի (**Ք.ա. 1352–1336 թթ.**) կառավարման սկզբում:

Փարավոնը վճռեց հարցին տալ արմատական լուծում: Նա դիցարանում առաջ մղեց երկրորդական աստվածություն **Աթոնին**, որը մարմնավորում էր **Արևի սկավառակը**: Աթոնը հռչակվեց Եգիպտոսի միակ աստված: Մնացած բոլորը՝ ներառյալ Ամոնը, վերածվեցին Աթոնի սպասավորների: Ամենհոտեպն իրեն հռչակեց Աթոնի միակ որդի և ընդունեց նոր անուն՝ **Էխնաթոն** («Աթոնին հաճելի»): Նա տեղափոխվեց նորաստեղծ մայրաքաղաք՝ **Ախետաթոն** («Աթոնի հորիզոն»):

Էխնաթոնի բարեփոխումները հանդիպեցին ոչ միայն հին քրմության և նոմային ազնվականության դիմադրությանը, այլև արձագանք չգտան բնակչության մոտ: Էխնաթոնի մահից հետո նրա հաջորդները ստիպված էին վերականգնել Ամոնի և մյուս աստվածների պաշտամունքը, քրմությանը վերադարձվեցին նրա իրավունքները:

XVIII հարստության վերջին փարավոնների իշխանության տարիներին կտրուկ վատթարացավ Եգիպտոսի ներքին և արտաքին դրությունը: Եգիպտոսի ազդեցությունը Արևելամիջերկրածովյան ավազանում գործնականում վերացավ: Իրավիճակը բարելավվեց XIX հարստության իշխանության գալով, հատկապես **Ռամզես II**–ի (**Ք.ա. 1279–1213 թթ.**) օրոք:

Ռամզեսը ձեռնարկեց արտաքին աշխարհում կորսված դիրքերը վերականգնելու գործը: Խեթական տերության դեմ սկսված երկարատև հակամարտությունն ի վերջո ավարտվեց հաշտությամբ: **Ք.ա. 1259 թ.** Ռամզեսի և խեթական արքա **Խաթուսիլիս III**–ի միջև կնքվեց պայմանագիր, որով կողմերը պարտավորվում էին բոլոր վիճելի հարցերը լուծել բացառապես խաղաղ միջոցներով, իսկ երրորդ կողմի դեմ պատերազմի ժամանակ պետք է օգնեին միմյանց: Խեթա–եգիպտական պայմանագիրը դիվանագիտության պատմության մեջ եզակի օրինակ է, որի մի շարք սկզբունքներ ընկած են արդի դիվանագիտության հիմքում:

Հաստատված խաղաղությունը թույլ տվեց իրականացնել հսկայածավալ շինարարություն: Կառուցվեցին նոր քաղաքներ, այդ թվում՝ փարավոնի նոր նստավայր **Պեր–Ռամզեսը** (**Ռամզեսի տուն**): Կառուցվեցին բազմաթիվ տաճարներ, որոնցից նշանավոր է **Աբու–Սիմբելի** ժայռակերտ տաճարը: Նեղոսի դելտայում հազարավոր հեկտար հողատարածություններ դարձան ոռոգովի:

Ուշ թագավորություն: Ռամզեսի հաջորդների օրոք Եգիպտոսը կորցրեց իր ազդեցությունը արտաքին աշխարհում: Դա կապված էր առաջին հերթին Առաջավոր Ասիայում սկսված ճգնաժամի հետ, որի ընթացքում դադարեցին գոյություն ունենալուց Խեթական տերությունը և շատ այլ երկրներ: Փարավոնները մեծ դժվարությամբ էին դիմագրավում դեպի Եգիպտոս արշավող լիբիական ցեղերի և «ծովի ժողովուրդների» արշավանքներին:

Նոր թագավորության անկումից (Ք.ա. XI դ.) հետո Եգիպտոսն այլևս ի վիճակի չեղավ վերականգնելու իր ռազմաքաղաքական ազդեցությունը և տնտեսական ներուժը: **Ուշ թագավորության** շրջանում մի քանի դար շարունակ Եգիպտոսում իշխում էին օտար ծագման հարստություններ, կամ երկիրը օտարների տիրապետության տակ էր: Ք.ա. VIII դարում Եգիպտոսն ընկավ իր հարավային հարևան **Քուշի** (այժմ՝ Եթովպիա) տիրապետության տակ, իսկ Ք.ա. VII դ. կարճ ժամանակով նվաճվեց Ասորեստանի կողմից: Ի վերջո՝ **Ք.ա. 525 թ.** Եգիպտոսը նվաճվեց Կյուրոս Մեծի որդի Կամբիզի կողմից: Աքեմենյան տիրապետությունը Եգիպտոսում որոշ ընդմիջումներով շարունակվեց մինչև **Ք.ա. 332 թ.**, երբ Եգիպտոսը նվաճվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողմից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ և ո՞ւմ կողմից հիմնադրվեց Հին թագավորությունը: Ապացուցե՛ք, որ IV հարստության օրոք Հին թագավորությունը հասավ իր հզորության գագաթնակետին:
2. Ո՞ր հարստության օրոք Միջին թագավորությունը հասավ իր հզորության բարձրակետին:
3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ հիքսոսներին հաջողվեց արագորեն նվաճել Եգիպտոսը: Որքա՞ն տևեց նրանց գերիշխանությունը Եգիպտոսում:
4. Ի՞նչ նորամուծություն մտցրեց Թութմոս III–ը նվաճված երկրների նկատմամբ իր քաղաքականության մեջ: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ էր Ամենհոտեպ IV փարավոնը փորձում բարեփոխումներ իրականացնել:
5. Ո՞ր հարստության օրոք Եգիպտոսը կրկին սկսեց վերելք ապրել: Ներկայացրե՛ք Ռամզես II–ի իրականացրած բարեփոխումները:
6. Նկարագրե՛ք իրավիճակը Եգիպտոսում Նոր թագավորության անկումից հետո:

§ 4. ԽԵԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱԲԵԼՈՆԻԱՆ ԵՎ ԱՍՈՐԵՍՏԱՆԸ Ք.Ա. II ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ

Խեթական պետությունը: Ք.ա. III հազարամյակի կեսերից Փոքր Ասիայի երկրագործական կենտրոնների զարգացումը հանգեցրեց քաղաք–պետությունների ձևավորմանը: Ք.ա. XVIII դ. **Կուսսար** քաղաքի տիրակալ **Անիտտան** ժամանակավորապես միավորեց դրանք: Որոշ ժամանակ անց Կուսսարից ծագող նոր հարստության ներկայացուցիչ **Լաբարնա I**–ը հասավ հաջողության: Վերջինիս ստեղծած պետության (խեթերը այն կոչում էին **Խաթթի**) սահմանները ձգվում էին Կիլիկիայից մինչև Հալիսի գետաբերան: Նրան հաջորդած **Խաթթուսիլիս I**–ը մայրաքաղաքը փոխադրեց **Խաթթուսաս**, որը այդուհետև դարձավ Խեթական պետության մշտական մայրաքաղաքը: Նա գրավեց նաև Փոքր Ասիայի մեծ մասը:

Խաթթուսիլիսի գործուն արտաքին քաղաքականությունը շարունակեց նրա հաջորդ **Մուրսիլիս I**–ը: Վերջինս նվաճեց Յամհադի թագավորությունը, ջախջախեց Հյուսիսային Միջագետքի խուռիներին, գրավեց Բաբելոնը: Սակայն խեթական ազնվականությանը ձեռնտու չէր արքայական իշխանության ամրապնդումը, և շուտով Մուրսիլիսը դարձավ դավադրության զոհ: Երկրում սկսվեց տասնամյակներ տևած ներքին անկայունության շրջան: Դրա հետևանքով խեթերը կորցրին իրենց տարածքների մեծ մասը:

Ք.ա. 1450 թ. սահմաններում գահն անցավ Խաթթիում արքայական հարստության հետ սերտ կապեր հաստատած խուռիական ազնվականներից մեկին, որը կառավարեց որպես **Թուդխալիաս II**:

Նոր հարստության արքաները վերսկսեցին արշավանքները դեպի արևմտյան Փոքր Ասիա և Սիրիա՝ փորձելով հետ բերել կորցրածը: Դրանց արդյունքում խեթերը ստեղծեցին լայնածավալ տերություն, որն իր հզորության գագաթնակետին հասավ Ք.ա. XIV դ. **Սուպիլուլիումաս I**–ի և **Մուրսիլիս II**–ի օրոք: Խեթական տիրապետությունը հաստատվեց գրեթե ողջ Փոքր Ասիայի և Հյուսիսային Սիրիայի վրա: Խեթական գերիշխանության տակ հայտնվեց նաև Միտաննին:

Սուպիլուլիումասը պայմանագիր կնքեց **Հայասայի** արքա **Խուկկանայի** հետ, ըստ որի՝ կողմերը պարտավորվում էին օգնել միմյանց երրորդ կողմի դեմ պատերազմների ժամանակ:

Դրությունը փոխվեց Մուրսիլիսի հաջորդների օրոք: Խեթական պետությունը իր նվաճումները պահելու համար ստիպված էր ներքաշվել պատերազմների մի շրջափուլ, որն աստիճանաբար ուժասպառ արեց երկիրը: Իրավիճակն առավել բարդացավ գահակալական պայքարի հետևանքով: Խեթական արքայատունը տրոհվեց երկու ճյուղի, որոնք զուգահեռաբար կառավարում էին երկիրը:

Խեթական տերությունը կարճատև վերելք ապրեց Ք.ա. XIII դարում: Բարիդրացիական հարաբերություններ հաստատվեցին Եգիպտոսի և Հայկական լեռնաշխարհի արևմուտքում գտնվող պետությունների հետ: Խեթական արքայի դուստրը դարձավ Իսուվայի արքայի կինը: Իսուվայի արքաները արտոնյալ կարգավիճակ ունեին խեթական արքունիքում: Նրանք մասնակցում էին խեթական արքաների կողմից այլ երկրների հետ կնքվող պայմանագրերին՝ որպես վկաներ, կարող էին առաջնորդել խեթական բանակը:

Խեթական վերջին արքաների օրոք Ասորեստանի, միկենյան հույների և մյուս հակառակորդների դեմ մղվող պայքարում, ինչպես նաև ներքին երկպառակչական պատերազմներում վերջնականապես սպառվեցին խեթերի ուժերը: Իրավիճակը բարդացավ Փոքր Ասիայում տևական երաշտի պատճառով: Նրանք կորցրին Փոքր Ասիայի արևմտյան մասը, ապա և Կիպրոս կղզին: Մոտ Ք.ա. XII դարի սկզբներին Խեթական տերությունը տրոհվեց:

Այդ պահից սկսվում է փոքրասիական քաղաքակրթության պատմության նոր փուլ, որ կոչվում է **ուշ խեթական** կամ **լուվիական:** Նախկին Խաթթիի տարածքի մի մասում ստեղծվեցին համեմատաբար փոքր պետություններ, որտեղ կառավարում էին խեթական և լուվիական հարստությունները: Սրանք աղբյուրներում հանդես են գալիս **Խաթթի** ընդհանրական անունով:

Բաբելոնիա: Ք.ա. XX դարի կեսերից ամորեական ցեղերի մի մասը հաստատվեց Կենտրոնական Միջագետքում: Այստեղ՝ Եփրատ և Տիգրիս գետերի առավելագույն մերձեցման վայրում, նրանք հիմնեցին իրենց թագավորությունը, որի կենտրոն դարձավ **Բաբելոն** քաղաքը:

Բաբելոնիայի ռազմաքաղաքական վերելքը սկսվեց **Համմուրապի** արքայի օրոք **(Ք.ա. 1792–1750 թթ.)**: Նա սկզբում նվաճեց մի շարք ամորեական ցեղապետություններ և Հարավային Միջագետքի քաղաքներ: Այնուհետև բաբելոնցիները գրավեցին Աշուրը, հաղթական արշավանքներ իրագործեցին դեպի Էլամ: Համմուրապին իր տիրապետությունը հաստատեց ողջ Միջագետքի վրա:

Համմուրապին ձգտում էր ռազմական ուժով նվաճված պետությունը ամրապնդել նաև ներսից: Նրա հրամանով հավաքվեցին Միջագետքում նախորդ դարաշրջաններում ստեղծված օրենքների ժողովածուները և ամփոփվեցին մի օրենսգրքի մեջ: Դա **միջազգային իրավունքի պատմության մեջ առաջին հիմնավոր փորձն էր իրավական պետության ստեղծման ճանապարհին:**

Համմուրապիի հաջորդների օրոք Բաբելոնիան բախվեց լուրջ խնդիրների հետ: Էլամի արքայի արշավանքի հետևանքով կորսվեց Հարավային Միջագետքը: Ի վերջո՝ Բաբելոնիան **Ք.ա. 1531 թ.** գրավվեց խեթական արքա Մուրսիլիս I–ի կողմից: Ամորեական հարստության անկումից հետո Միջագետքում քաղաքական գերիշխանությունն անցավ **կասիտական ցեղերին**:

Կասիտները իրականացրին շինարարական լայն գործունեություն, վերականգնվեցին կիսավեր տաճարները, կառուցվեցին նորերը: Արքա **Կուրիգալզու I**–ը Բաբելոնի մոտ կառուցեց նոր մայրաքաղաք՝ **Դուր–Կուրիգալզուն**: Կասիտներն արագորեն ձուլվեցին Միջագետքի բնակչության հետ՝ ընդունելով նրանց մշակույթն ու լեզուն:

Բաբելոնիան կասիտների օրոք վարում էր գործուն արտաքին քաղաքականություն: Մի պահ անգամ նրանց իշխանությունը տարածվում էր գրեթե ողջ Միջագետքի վրա: Բաբելոնիան ջերմ հարաբերություններ ուներ Եգիպտոսի և Խեթական տերության հետ: **Կուրիգալզու II–ը** կարողացավ հաղթել Էլամին և գրավել Սուսան (հետագայի՝ Շոշը): Սակայն շուտով վերելք ապրող Ասորեստանը պայքար սկսեց Բաբելոնիայի դեմ: Վերջինիս դրությունը բարդանում էր նաև էլամցիների ձեռնարկած արշավանքների պատճառով: Կասիտները դժվարանում էին անխախտ պահել երկրի սահմանները, ապահովել միջազգային առևտրական ուղիների անվտանգությունը:

Ք.ա. XIII դ. վերջերին Ասորեստանի արքա **Թուկուլթի–Նինուրտա I**–ը գրավեց Բաբելոնը: Որոշ ժամանակ անց Բաբելոնիայի վերջին արքան պարտություն կրեց էլամցիներից և գերեվարվեց Էլամ: Սրանով ավարտվեց կասիտական հարստության իշխանությունը Բաբելոնիայում:

Վաղ Ասորեստանը: Աշուր քաղաքը Տիգրիս և Մեծ Զաբ գետերի միախառնման վայրում էր: Ք.ա. XX դ. սկզբներին Աշուրում հաստատվեց աքքադական հարստություն:

Աշուրի վերելքը նախ և առաջ պայմանավորված էր առևտրի և արհեստների զարգացումով: Այստեղով էին անցնում արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ տանող առևտրական ուղիները: Աշուրն առևտրական գաղութներ էր հիմնել այդ ուղիների հանգուցակետերում՝ հումքի աղբյուրներին առավել մոտ, հատկապես Փոքր Ասիայում: Աշուրցի առևտրականները զբաղվում էին մետաղի հումքի ներմուծմամբ, ինչից Միջագետքը զուրկ էր: Արտահանում էին արհեստագործական արտադրանք:

Ք.ա. XIX դ. արևմուտքից դեպի Միջագետք սկսվեց ամորեական ցեղերի ներհոսքը: Եկվորները Միջագետքում ստեղծեցին իշխանություններ: Ամորեացիների հարձակումները առևտրական ուղիների վրա խափանեցին առևտուրը, ինչը ծանր անդրադարձավ Աշուրի տնտեսության վրա: Այդ էր պատճառը, որ աշուրցիները հրավիրեցին ամորեական առաջնորդ **Շամշի-Ադդուին**, որը հռչակվեց Աշուրի արքա:

Նրա իշխանության օրոք Աշուրը նոր վերելք ապրեց տարածքային նվաճումների շնորհիվ: Շամշի-Ադդուն գրավեց Սիրիայի հյուսիսը՝ հասնելով նույնիսկ Միջերկրականի ծովափ: Արևմուտքում տերության սահմանները հասնում էին մինչև Զագրոսյան լեռներ:

Ամորեացիները, սակայն, ի վիճակի չեղան յուրացնելու գրավված երկրները, և արքայի մահից հետո նրա տերությունը սկսեց քայքայվել: Շուտով Աշուրը կտրվեց իր փոքրասիական գաղութներից, որոնք ավելի ուշ դադարեցին գոյություն ունենալուց: Իսկ Աշուր քաղաքը նվաճվեց Բաբելոնիայի արքա Համմուրապիի կողմից: Հաջորդ դարում Աշուրը գրավվեց Միտաննիի կողմից:

Ք.ա. XV դարի սկզբներին Ասորեստանը անկախանալու փորձեր ձեռնարկեց: Օգտվելով Միտաննիի ծանր վիճակից՝ Ասորեստանը գրավեց միտաննական որոշ տարածքներ: Ասորեստանի ռազմաքաղաքական վերելքը շարունակվեց հատկապես **Սալմանասար I-ի** օրոք **(Ք.ա. 1263-1234 թթ.)**: Նրա զորքերն արևմուտքում հասան մինչև Կարքեմիշ: Նա արշավանքներ իրագործեց դեպի Հայկական լեռնաշխարհ՝ բախվելով **Ուրուատրի** միության հետ:

Ասորեստանն իր հզորության բարձրակետին հասավ **Թուկուլթի-Նինուրտա I-ի** իշխանության տարիներին (**Ք.ա. 1233-1197 թթ.**): Նա արշավեց Հյուսիսային Սիրիա՝ այստեղից բերելով հարուստ ռազմավար և հազարավոր գերիներ: Նվաճվեց նաև Բաբելոնը: Ասորեստանյան արքան արշավանքներ ձեռնարկեց դեպի Հայկական լեռնաշխարհ՝ բախվելով **Նաիրի միության** հետ:

Ասորեստանցիները Թիգլաթպալասար I-ի օրոք (Ք.ա. 1114-1076 թթ.) նույնիսկ արշավեցին Հյուսիսային Սիրիա՝ Փոքր Ասիա: Դեպի նաիրյան երկրներ արշավանքի ժամանակ Թիգլաթպալասարը հասավ Վանա լիճ:

Թիգլաթպալասարի օրոք երկրի առջև ծառացած հիմնական խնդիրը արևմուտքից և հյուսիսից տարբեր ցեղերի պարբերական շարժումներն էին դեպի Ասորեստան: Մասնավորապես արամեացիների դեմ պայքարում Ասորեստանը կորցրեց կենսական տարածքներ և գրեթե մեկուկես դար հազիվ էր պահպանում իր գոյությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ էր Խեթական պետության հիմնադիրը: Ե՞րբ է սկսվել Խեթական տերության վերելքը, ո՞ւմ հետ է կապված այն: Նշե՛ք նրա ստեղծած տերության սահմանները:
2. Որո՞նք են Խեթական պետության անկման պատճառները:
3. Որտե՞ղ հիմնադրվեց Բաբելոնիան և ո՞ր ցեղերի կողմից: Ի՞նչ նպատակով Համմուրապին կազմեց միասնական օրենսգիրք: Ո՞րն է դրա պատմական նշանակությունը:
4. Որքա՞ն է իշխել կասիտների հարստությունը Բաբելոնում: Ներկայացրե՛ք Բաբելոնիայի արտաքին քաղաքականությունը կասիտների օրոք:
5. Ինչո՞վ էր պայմանավորված Աշուրի պետության վերելքը: Ո՞ր արքայի օրոք Ասորեստանը հասավ իր հզորության գագաթնակետին:

§ 5. ՆՈՐ ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ԵՎ ՆՈՐ ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր ասորեստանյան տերությունը: Տևական ճգնաժամից հետո Ք.ա. IX դարի սկզբներին Ասորեստանը սկսում է վերականգնել ազդեցության նախկին գոտիները: Այս առումով մեծ հաջողությունների հասավ **Աշուրնաձիրպալ II**–ը: Արևմուտքում Ասորեստանը նվաճեց մինչև Կարքեմիշ ձգվող տարածքը: Արքան Բաբելոնիայից նվաճեց բազմաթիվ սահմանային քաղաքներ: Ասորեստանի նվաճողական քաղաքականությունը շարունակեց Սալմանասար III–ը:

Սալմանասարը տարբեր ուղղություններով ձեռնարկեց ավելի քան 30 արշավանք, որոնց մի մասն ուղղված էր դեպի Հայկական լեռնաշխարհ՝ նորաստեղծ **Ուրարտուի** դեմ: Ասորեստանը ստիպված էր նաև ծանր պայքար մղել Սիրիայում:

Ք.ա. VIII դ. առաջին կեսին Ասորեստանը կտրուկ անկում ապրեց: Տասնամյակներ տևած հյուծիչ պատերազմները սպառել էին պետության նյութական և մարդկային ներուժը: Բացի այդ, հզորացել էր նրա մրցակից Վանի թագավորությունը:

Իրավիճակը փոխվեց **Թիգլաթպալասար III**–ի (**Ք.ա. 744–727 թթ.**) օրոք: Թիգլաթպալասարը ստեղծեց մշտական արհեստավարժ բանակ: Թիգլաթպալասարի կառավարումով սկսվեց Ասորեստանի պատմության մեջ շուրջ մեկ դար տևած նվաճողական անվերջ պատերազմների մի շրջափուլ: Այդ ընթացքում ասորեստանցիները շարունակաբար փորձում էին իրենց անմիջական ռազմական ներկայությունը ապահովել հատկապես արևմուտքում և Փոքր Ասիայում: Հյուսիսում Ասորեստանի նպատակն էր հզոր պատնեշ ստեղծել Ուրարտուի դեմ: Վերջինս Ասորեստանի գլխավոր մրցակիցն էր, որը Թիգլաթպալասարի ժամանակակից Սարդուրի II–ի օրոք իր հզորության բարձրակետին էր:

Թիգլաթպալասար III–ը պարտության մատնեց ուրարտացիներին, նվաճեց Ուրարտուի գերիշխանության տակ գտնվող մի շարք երկրներ: Արևմուտքում նա նվաճեց փյունիկյան ծովափն ու Պաղեստինը՝ հասնելով մինչև Եգիպտոս: Այդ նվաճումների արդյունքում Ասորեստանի տարածքը կրկնապատկվեց: Բաբելոնիան հայտնվեց ասորեստանյան շրջափակման մեջ: Ք.ա. 729 թ. Թիգլաթպալասարը գրավեց Բաբելոնը և հռչակվեց բաբելոնյան արքա:

Ասորեստանի գործուն արտաքին քաղաքականությունը շարունակեց **Սարգոն II**–ը: Իր կառավարման բոլոր տարիները նա անցկացրեց՝ պատերազմելով տարբեր ճակատներում: **Ք.ա. 720 թ.** նա գրավեց Սամարիան: Ասորեստանյան զորքերը շարժվեցին դեպի եգիպտական սահման և վերստին տիրեցին Գազային: Ասորեստանը իր գերիշխանությունը հաստատեց նաև Կիպրոսում: Օգտվելով այն հանգամանքից, որ ուրարտական արքան պարտվել էր Հայկական լեռնաշխարհ ներխուժած **կիմերական ցեղերից**՝ Սարգոնը **Ք.ա. 714 թ.** խոշոր արշավանք ձեռնարկեց դեպի Ուրարտու:

Սարգոնը էապես ընդարձակեց երկրի սահմանները նաև Փոքր Ասիայում՝ ի հաշիվ լուվիական պետությունների: Այստեղ, սակայն, **Ք.ա. 705 թ.** ասորեստանյան բանակը պարտվեց, իսկ Սարգոնը զոհվեց:

Հետագա տարիներին ասորեստանցիներից ավելի ու ավելի մեծ ջանքեր էին պահանջվում նվաճված երկրները վերահսկողության տակ պահելու համար: Թեև ասորեստանյան արքաները շարունակում էին վարել գործուն նվաճողական քաղաքականություն, սակայն դա նրանց հաջողությունների վերջն էր:

Օգտվելով Ասորեստանում սկսված գահակալական պատերազմներից՝ քաղդեացի ցեղապետ Նաբոպալասարը **Ք.ա. 626 թ.** թագադրվեց որպես Բաբելոնիայի արքա: Շուտով Նաբոպալասարը պատերազմը տեղափոխեց ասորեստանյան տարածք: Այս շրջանից սկսած՝ Ասորեստանը ստիպված էր մղել պարզապես գոյության պայքար: **Ք.ա. 612 թ.** Նինվեի անկումով Ասորեստանը դադարեց գոյություն ունենալուց:

Նոր Բաբելոնյան տերությունը: Թիգլաթպալասար III–ի կողմից նվաճվելուց հետո երկիրը գրեթե հարյուր տարի Ասորեստանի տիրապետության տակ էր: Սակայն բաբելացիներն օգտագործում էին ամեն հարմար առիթ՝ անկախությունը վերականգնելու համար: Այդ պայքարում առաջատար ուժը քաղդեական ցեղերն էին:

Նաբոպալասարի գլխավորությամբ բռնկված պայքարն ավարտվեց Ասորեստանի կործանմամբ: Առաջավոր Ասիայում սկսվեց **նորբաբելոնյան գերիշխանության դարաշրջանը:**

Նաբոպալասարին հաջորդած **Նաբուգոդոնոսոր II**–ը վարում էր գործուն արտաքին քաղաքականություն: Բաբելոնիան, որը տիրել էր

ասորեստանյան հիմնական տարածքներին, ձգտում էր դուրս գալու Միջերկրական ծով: Այստեղ նրա գլխավոր հակառակորդը Եգիպտոսն էր: Պատերազմն ընթանում էր փոփոխակի հաջողությամբ: Միայն **Ք.ա. 597 թ.** բաբելոնյան զորքերը գրավեցին Հուդայի թագավորության մայրաքաղաք **Երուսաղեմը**:

Եգիպտոսը, սակայն, չէր հաշտվում Բաբելոնիայի հզորության հետ և նրա դեմ դրդում էր պաղեստինյան և փյունիկյան իշխանություններին: Արդյունքում Բաբելոնիայի տիրապետությունն արևմուտքում գրեթե վերացավ:

Նաբուգոդոնոսորը ստիպված էր հերթական անգամ արշավել Պաղեստին: Նրա զորքերը այստեղից դուրս մղեցին եգիպտացիներին, ապա **Ք.ա. 587 թ.** գրավեցին Երուսաղեմը: Հուդայի ազնվականությունը բնաջնջվեց, իսկ թագավորությունը՝ որպես նահանգ, կցվեց Բաբելոնիային: Բազմահազար բնակիչներ գերեվարվեցին Բաբելոնիա:

Նաբուգոդոնոսոր II–ի օրոք Բաբելոնիան ապրում էր ծաղկուն օրեր: Երկրում իրականացվեցին խոշոր շինարարական աշխատանքներ: Դրանց գլուխգործոցը Բաբելոնի պարիսպներն էին ու քաղաքի գլխավոր տաճարային համալիրը, ուր վեր էր հառնում զիկկուրատը: Բաբելոնը վերածվեց Առաջավոր Ասիայի խոշորագույն քաղաքի՝ շուրջ 200 հազար բնակչությամբ:

Նաբուգոդոնոսոր II–ից հետո լարվեց երկրի ներքաղաքական իրավիճակը: Ազնվականությունը, խոշոր առևտրականները և քրմությունը սկսեցին միջամտել գահակալության խնդրին՝ ձգտելով իշխանության բերել իրենց դրածոներին: Ի վերջո գահին բազմեց ծագումով արամեացի **Նաբոնիդը**:

Նաբոնիդը սկսեց բարեփոխել բաբելոնյան դիցարանը: Նա գերագույն աստծո՝ Մարդուկի փոխարեն դիցարանում առաջ էր մղում Լուսնի աստված Սինին: Արքան միջամտում էր տաճարների գործերին, դրանք վերափոխում Լուսնի աստծո տաճարների և քրմապետներ կարգում իր մերձավորներին:

Նաբոնիդը որոշ ակտիվություն ցուցաբերեց արտաքին ասպարեզում: Նա արշավանքներ ձեռնարկեց դեպի Լիբանան և Պաղեստին: Բաբելոնյան զորքերը խորացան Արաբական թերակղզու անապատներում՝ հյուսիսային **Հիջազի** տարածքներում՝ գրավելով քարավանային ճանապարհների երկայնքով ընկած մի շարք օազիսներ: Այստեղով էին անցնում առևտրական կարևոր մայրուղիներ, որոնց վերահսկողությունը մեծ նշանակություն ուներ Բաբելոնիայի համար: Նաբոնիդը հաստատվեց **Տեյմայում**՝ այստեղ կառուցելով խոշոր պալատական համալիր, իսկ Բաբելոնի կառավարումը հանձնեց իր որդուն:

Այդ ընթացքում լարվեցին Բաբելոնիայի հարաբերությունները պարսկական տերության հետ, որը գրավել էր հարակից երկրները և շրջափակման մեջ վերցրել Բաբելոնիան: Դա դժգոհություն առաջ բերեց Նաբոնիդի գլխավոր հենարանը հանդիսացող խոշոր վաճառականության մոտ: Մարդուկ աստծո քրմերը ևս հարեցին նրանց:

Քրմությունը սկսեց նոր գահակալ փնտրել: Նաբոնիդի դեմ կազմակերպվեց դավադրություն: Այս իրավիճակում պարսկական բանակը Կյուրոսի գլխավորությամբ **Ք.ա. 539 թ.** ներխուժեց Բաբելոնիա:

Բաբելոնյան զորքերը չկարողացան դիմագրավել պարսիկներին: Բաբելոնյան քաղաքները մեկը մյուսի հետևից բացեցին իրենց դարպասները Կյուրոսի առջև, որին ընդունում էին իբրև ազատարարի: Կյուրոսը առանց մարտի մտավ Բաբելոն: Պարսիկները ձևականորեն պահպանեցին Բաբելոնյան թագավորությունը: Իսկ տարիներ անց Բաբելոնիան վերածվեց Աքեմենյան տերության սատրապության:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է սկսվել Ասորեստանի նոր վերելքը, ո՞ւմ անվան հետ է կապված այն:
2. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Թիգլաթպալասար III–ը արքայական իշխանությունն ամրապնդելու նպատակով: Ներկայացրե՛ք Ասորեստանի արտաքին քաղաքականությունը Սարգոն II–ի օրոք:
3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Ասորական տերությունը կործանվեց: Ե՞րբ և ո՞վ հասցրեց Ասորեստանին վերջին հարվածը:
4. Ե՞րբ վերականգնվեց Բաբելոնիայի անկախությունը: Ինչի՞ շնորհիվ Բաբելոնիան հաջողության հասավ Ասորեստանի դեմ պայքարում:
5. Ներկայացրե՛ք Նաբուգոդոնոսոր II–ի արտաքին քաղաքականության արդյունքները:
6. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Նաբոնիդը իր իշխանությունն ամրապնդելու համար:

§ 6. ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԸ

Էլամ: Ք.ա. III հազ. Իրանական բարձրավանդակի հարավ–արևմուտքում ձևավորվեցին առաջին՝ էլամական քաղաք–պետությունները: Հետագայում միավորվելով՝ այս երկրները կազմեցին **էլամական համադաշնությունը**:

Էլամը առաջիններից էր, որ ենթարկվեց Սարգոն Աքքադացու արշավանքներին: Աքքադի գոյության շրջանում Էլամը նրա քաղաքական և մշակութային հզոր ազդեցության ներքո էր: Էլամը կարճատև վերելք ապրեց Աքքադի թուլացման շրջանում:

Միջագետքում Ուրի III հարստության պետության ստեղծմամբ սերտ հարաբերություններ հաստատվեցին էլամական պետությունների հետ: Հետագայում էլամցիները այնքան էին հզորացել, որ անցան տարածքային նվաճումների: Էլամը գրավեց Ուրի պետությունը: Էլամական համադաշնությունն այս շրջանում հզոր ուժ էր և վարում էր գործուն արտաքին քաղաքականություն: Էլամի հեղինակությունն ընդունում էին ժամանակի խոշոր պետությունները՝ այդ թվում Բաբելոնը:

Էլամի վերելքը շարունակվեց **Ունտաշ–Նապիրիշայի** օրոք: Նա իր իշխանության տակ միավորեց էլամական տարածքների մեծ մասը, կառուցեց նոր նստավայր: Երկիրն իր հզորության բարձրակետին հասավ **Շուտրուկ–Նախունտե I** արքայի օրոք: Էլամական արշավանքների թիրախը կասիտական Բաբելոնիան էր: **Ք.ա. 1158 թ.** արքան գրավեց Բաբելոնիան: Բաբելոնյան ավելի քան 700 բնակավայրեր նվաճվեցին, և երկրից տարվեց հսկայական ռազմավար: Քիչ անց նոր արշավանքն ավարտվեց կասիտական վերջին արքայի գերեվարմամբ: Էլամցիները որպես ռազմավար տարան նաև Բաբելոնի հովանավոր Մարդուկ աստծո արձանը, ինչպես նաև Համմուրապիի հուշակոթողը, որի վրա արձանագրված էր նրա օրենսգիրքը:

Էլամի վերելքը կասեցրեց Իսսին քաղաքը: Իսսինի արքա **Նաբուգոդոնոսոր I**–ը գլխովին ջախջախեց էլամցիներին, վերադարձրեց Բաբելոնիայի գերեվարված աստվածներին: Էլամը

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Սև ծով
Կասպից ծով
Էգեյան ծով
Միջերկրական ծով
Սև ծով
Արաբական ծով
Սարդիս
Սինոպ
Բյուզանդիոն
Սամոս
Սպարտա
Աթենք
Մեգաբանիա
Ֆասիս
Տրապիզոն
Սարդիս
Մեմֆիս
Թեբեն
Սիդոն
Դամասկոս
Հերակլեոս
Ասորիք
Ասորեստան
Ուրարտու
Մարաստան
Էլամ
Սուսա
Բաբելոն
Ասորեստան
Նինվե
Ուր
Ուրուկ
Նիպուր
Սիրիա

երկար ժամանակ դադարեց աղբյուրներում հիշատակվելուց:

Էլամական պետության կտրուկ անկումը պայմանավորված էր նաև Էլամի տարածք իրանախոս ցեղերի ներխուժումներով: Այնուամենայնիվ, Ք.ա. VIII դ. Էլամը դեռևս մեծ ուժ էր:

Ք.ա.VIII–VII դարերում Էլամը վարում էր ընդգծված հակաասորեստանյան քաղաքականություն: Էլամցիները միջամտում էին բաբելոնյան գործերին, որի պատճառով տեղի էին ունենում էլամա–ասորեստանյան պատերազմներ: Ի վերջո՝ Ասորեստանը գրավեց մայրաքաղաք Սուսան, որից հետո էլամական համադաշնությունը դադարեց գոյություն ունենալուց: Էլամական մանր իշխանությունները վերջնականապես նվաճվեցին Կյուրոս II–ի կողմից:

Աքեմենյան տերությունը: Ք.ա. **1000 թ.** Հարավային Իրան մուտք գործեցին հին պարսկական ցեղերը և հիմնեցին ցեղապետություններ: Դրանցից առավել հզորը **Անշան** և **Պարսումաշ** երկրներն էին: Սկզբնապես սրանք Էլամի, իսկ հետո՝ մարական գերիշխանության տակ էին:

Պարսից Քսերքսես արքայի դամբարանի մուտքը

Անշանում գահ բարձրացած **Կյուրոս II**–ը (պարսկ. **Կուրաշ, Ք.ա. 558–529 թթ.**) **Ք.ա. 553 թ.** պայքար սկսեց Մարաստանի դեմ: Նա պարտության մատնեց մարերին, գրավեց նրանց մայրաքաղաք **Էքբատանը**:

Ազատվելով մարական գերիշխանությունից՝ Կյուրոսը ձեռնամուխ եղավ նոր նվաճումների: Նա գրավեց գրեթե ողջ Փոքր Ասիան՝ ներառյալ Կիլիկիան, շուտով նաև Բաբելոնիան: Կյուրոսը ստեղծեց Էգեյան ծովից մինչև Հնդկաստան ձգվող աշխարհակալ տերություն: Նա պատրաստվում էր նվաճել նաև Եգիպտոսը, սակայն վճռեց նախ արշավել միջինասիական քոչվոր ցեղերի դեմ: **Ք.ա. 529 թ. մասագետների** դեմ մղված ճակատամարտում պարսկական զորքերը ծանր պարտություն կրեցին, սպանվեց նաև Կյուրոսը:

Պարսկական գահին բազմած **Կամբիզը** շարունակեց հոր նվաճողական քաղաքականությունը՝ **Ք.ա. 525 թ.** գրավելով Ստորին Եգիպտոսը: Եգիպտոսը վերածվեց պարսկական սատրապության, թեև թագավորական իշխանությունը ձևականորեն պահպանվեց. Կամբիզն իրեն հռչակեց նաև Եգիպտոսի փարավոն:

Ք.ա. 522 թ. Կամբիզի դեմ ապստամբեց նրա կրտսեր եղբայր **Բարդիան**: Կամբիզը շտապեց հայրենիք, սակայն ճանապարհին մահացավ: Իսկ Բարդիան շուտով զոհ գնաց պալատական դավադրության: Գահն անցավ պարսկական ազնվականական խոշոր տներից մեկի ներկայացուցիչ **Դարեհին (Ք.ա. 522–486 թթ.):**

Իր իշխանությանը օրինական տեսք հաղորդելու նպատակով Դարեհը հայտարարեց իր նախնիների և Կյուրոսի՝ իբր թե միևնույն տոհմին պատկանելու մասին: Սակայն նրա իշխանությունը պարսիկներից զատ ոչ ոք չճանաչեց. ենթակա երկրները մեկը մյուսի հետևից սկսեցին ապստամբել: Դարեհը ստիպված էր երկու տարի շարունակ ճնշել ապստամբությունները: Դա նրան հաջողվեց 19 արյունահեղ ճակատամարտերից հետո: Դարեհ I–ի գահակալությամբ սկսվեց նոր՝ Աքեմենյան տոհմի իշխանության դարաշրջանը:

Ամրապնդելով իր իշխանությունը՝ Դարեհը ձեռնամուխ եղավ բարեփոխումների: Տերության տարածքը բաժանվեց 20 սատրապությունների, որտեղ կառավարում էին արքայական տան անդամները կամ պարսկական խոշոր ազնվականներ: Երկրում ներդրվեց համընդհանուր հարկային և դրամական համակարգ: Կառուցվեց «**Արքայական ճանապարհը**», որը Էգեյան ծովափի

քաղաքները կապում էր մայրաքաղաք Շոշի հետ: Վերակազմավորվեց նաև բանակը, որի հիմքը այսպես կոչված «Անմահների գունդն» էր՝ բաղկացած 10000 մարտիկներից:

Դարեհը ձգտում էր համաշխարհային տիրապետության: Զբավարարվելով տերութան սահմաններով՝ նա գրավեց Հնդկաստանի մի մասը: Աքեմենյան բանակը սկսեց մեկը մյուսի հետևից գրավել Էգեյան ծովի կղզիները, ապա մտավ եվրոպական մայրցամաք, ուր նվաճեց Թրակիան: Պարսիկներին հպատակվեց նաև **Մակեդոնիան**: Դարեհը, սակայն, անհաջողության մատնվեց հյուսիսսևածովյան **սկյութների** դեմ ձեռնարկած իր արշավանքում: Անհաջող էին նաև նրա՝ դեպի մայրցամաքային Հունաստան արշավանքները: Արքան սկսեց նախապատրաստվել նոր արշավանքի, սակայն չհասցրեց այն իրագործել:

Դարեհին հաջորդած **Քսերքսես I-ը** (Ք.ա. 486–465 թթ.) նույնպես հետ չէր մնում Դարեհից համաշխարհային տիրապետության հասնելու իր ծրագրերով: Սակայն նրա արշավանքը Հունաստան ձախողվեց: Ավելին՝ երկրում սկսվեցին դժգոհություններ, որոնց նպաստեց նաև մոլեգնող սովը: Քսերքսեսի մերձավորները դավադրություն կազմակերպեցին արքայի դեմ և սպանեցին նրան:

Նոր արքա Արտաքսերքսես I-ը ստիպված էր ընդհատել հույն–պարսկական պատերազմները և կնքել ոչ նպաստավոր հաշտություն, որով աքեմենյան արքան փաստացի կորցրեց իր գերիշխանությունը արևմտյան Փոքր Ասիայի նկատմամբ և զրկվեց Էգեյան ծովում նավատորմ պահելու իրավունքից:

Արդեն Արտաքսերքսեսից հետո նկատվում էր, որ տերությունը խնդիրներ ուներ իր տարածքային ամբողջականության պահպանման հարցում: **Ք.ա. 404 թ.** Արտաքսերքսես II–ի դեմ ապստամբեց նրա եղբայր, Փոքր Ասիայի սատրապ Կյուրոս Կրտսերը: Թեև ապստամբությունը ճնշվեց, սակայն այդուհետև հաճախակի դարձան սատրապների և ենթակա երկրների ապստամբությունները: Այս շրջանում տերությունից անջատվեցին Եգիպտոսը, Կիպրոսը, Խորեզմը և Սոգդիանան: Արևմտյան սատրապների մեծ ապստամբության ժամանակ ողջ Փոքր Ասիան տասը տարի անկախ էր աքեմենյան արքայից:

Փլուզվող տերությունը փրկելու մի վերջին ջանք գործադրեց **Արտաքսերքսես III-ը**: Թեև նրան առժամանակ հաջողվեց վերականգնել փլուզվող տերությունը, սակայն երկիրը զերծ պահել նոր ցնցումներից չհաջողվեց: Ինքը՝ Արտաքսերքսեսը, դավադրության զոհ դարձավ: Ի վերջո՝ գահին բազմեց աքեմենյանների կողմնային ճյուղերից մեկի ներկայացուցիչ, Հայաստանի սատրապ Արշամը: Գահ բարձրանալով՝ նա ընդունեց տոհմական **Դարեհ** անունը:

Դարեհ III-ը (Ք.ա. 336–330 թթ.) իր կառավարման սկզբում ստիպված էր մեկ անգամ ևս արշավել Եգիպտոս և ճնշել այստեղ բարձրացած ապստամբությունը: Եգիպտոսը վերանվաճվեց, սակայն Դարեհին վիճակված չէր շարունակել Արտաքսերքսեսի գործը: Աքեմենյան տերությանը սպառնում էր վերելք ապրող Մակեդոնիան:

Ք.ա. 334–331 թթ. Ալեքսանդր Մակեդոնացին մի շարք ջախջախիչ պարտությունների մատնեց աքեմենյան զորքերին: Իսկ **Արբելայի** (կամ Գավգամելայի) ճակատամարտից հետո Դարեհը ստիպված էր փոքրաթիվ ուժերով փախչել: Ի վերջո նա զոհ գնաց իր ուղեկիցներից մեկի՝ Բակտրիայի սատրապ **Բեսի** դավադրությանը: Աքեմենյան տերությունը կործանվեց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է կազմավորվել Էլամական համադաշնությունը: Ո՞ւմ օրոք Էլամը վերելք ապրեց:
2. Ե՞րբ և ո՞վ հիմնադրեց պարսկական տերությունը: Մինչև ո՞ւր էր ձգվում Կյուրոսի ստեղծած աշխարհակալ տերությունը: Ինչպե՞ս ավարտվեց Կամբիզի եգիպտական արշավանքը:
3. Ո՞ր տոհմի հիմնադիրն էր Դարեհ I–ը: Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց նա: Պարսից արքաներից ո՞ւմ օրոք և ինչո՞վ ավարտվեցին հույն–պարսկական պատերազմները:
4. Ինչպե՞ս ավարտվեց Պարսկաստանի բախումը Մակեդոնիայի հետ: Ինչո՞ւ անկում ապրեց Աքեմենյան տերությունը:

ԳԼՈՒԽ Բ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. ՀՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Կրետե–միկենյան քաղաքակրթությունը: Էգեյան ծովի ավազանում քաղաքակրթության ձևավորման վրա մեծ էր աշխարհագրական միջավայրի ազդեցությունը: Բալկանյան թերակղզու հարավային տարածքի կտրտվածությունը և հարյուրավոր կղզիների առկայությունը խոչընդոտում էին տարբեր շրջանների միջև կայուն հարաբերություններին: Յուրաքանչյուր շրջան զարգանում էր ինքնուրույն, որն էլ պայմանավորեց հունական աշխարհի քաղաքական մասնատվածությունը:

Առաջին պետությունները Հունաստանում ձևավորվեցին Ք.ա. II հազարամյակում: Էգեյան ծովի հարավում գտնվող Կրետե կղզում Ք.ա. II հազարամյակի սկզբներին առաջ եկան մի շարք մանր պետականություններ, որոնք հետո միավորվեցին մեկ պետության մեջ՝ **Կնոսոս** քաղաքի գլխավորությամբ: Բնակավայրերը հաղորդակցվում էին բարեկարգ ճանապարհներով: Կրետեի ոչ մի քաղաք, այդ թվում՝ Կնոսոսը, չուներ պարիսպներ, ինչը վկայում է ներքին կամ արտաքին սպառնալիքի բացակայության մասին:

Հունական առասպելներում որպես Կրետեի արքա է հիշատակվում **Մինոսը**: Վերջինս իր խոշոր ռազմական նավատորմի օգնությամբ վերացրել էր ծովահենությունը և տիրել Էգեյան ծովին: **Մինոսի** իշխանությունը հույներն անվանում էին **թալասսոկրատիա**՝ «ծովատիրություն»: Էգեյան ծովի շատ կղզիներում կրետացիները հիմնել էին գաղութներ: Ըստ **Թեսևսի** մասին առասպելի՝ **Մինոսին** հարկատու էր նաև **Աթենքը**:

Կրետեի արքան ուներ անսահմանափակ իշխանություն: Նա միաժամանակ պետության աշխարհիկ և հոգևոր գերագույն ղեկավարն էր: Արքայական իշխանության այս տեսակը ընդունված է անվանել **թեոկրատական** («աստվածապետական»):

Կրետեի պետությունը անկում ապրեց Ք.ա. XV դ.՝ հարյուրավոր կիլոմետրեր հեռու ընկած **Սանտորինի** կղզում տեղի ունեցած վիթխարի ուժգնության հրաբխի ժայթքման հետևանքով: Հրաբխային փոշին հաստ շերտով ծածկեց Կրետեն՝ պատճառելով մարդկային և նյութական խոշոր վնաս: Այս պահից Կրետեն թուլացավ և որոշ ժամանակ անց նվաճվեց մայրցամաքային Հունաստանից եկած **աքայացիների** կողմից:

Մայրցամաքային Հունաստանում առաջին պետականությունները ստեղծեցին Հունաստան եկած հունալեզու ցեղերը՝ **աքայացիները Ք.ա. XVIII–XVII դդ.**: Նրանք նվաճեցին այստեղ ապրող ցեղերին ու ստեղծեցին բազմաթիվ պետություններ: Դրանցից աչքի էին ընկնում **Միկենքը** (սրա անունից էլ այս դարաշրջանը հաճախ անվանում են «միկենյան»), **Պիլոսը, Տիրինթոսը**: Ի տարբերություն Կրետեի՝ աքայացիների բնակավայրերն ամրացված էին հզոր կիկլոպյան պարիսպներով:

Միկենյան դարաշրջանում հունական աշխարհում գոյություն ունեին տասնյակ պետություններ, որոնց միջև հաճախ պատերազմներ էին ծագում տարածք կամ ռազմավար ձեռք բերելու նպատակով: Միայն հազվադեպ՝ դեպի արտաքին աշխարհ կազմակերպվելիք արշավանքների ժամանակ, նրանք ստեղծում էին ժամանակավոր դաշինքներ: Այդպիսին էր նշանավոր **Տրոյական պատերազմը:**

Քաղաքական մասնատվածությանը զուգահեռ միկենյան պետությունները ուժեղ էին ոչ միայն ռազմական առումով: Նրանք ստեղծեցին կենտրոնացված կառավարման համակարգ, զարգացած գյուղատնտեսություն, արհեստագործություն և միջազգային առևտրական ցանց: Միկենցիները ակտիվորեն մասնակցում էին Առաջավոր Ասիայի քաղաքական և տնտեսական կյանքին: Նրանց արհեստագործական արտադրանքը լայն սպառում ուներ Արևելյան Միջերկրականում: Միկենյան պետությունների համար արտաքին առևտուրը մեծ եկամտի աղբյուր էր: Արևելքի երկրներում միկենցիները հիմնում էին գաղութներ, որոնց միջոցով իրականացվում էր արտաքին առևտուրը:

Միկենյան քաղաքակրթության զարգացման բարձր մակարդակի վկայությունն է Կրետեում ստեղծված պատկերային գիրը (գծային գիր), որը հետագայում փոխ առան աքայացիները:

Միկենյան քաղաքակրթությունը անկում ապրեց Ք.ա. XII դարում: Կլիմայի աստիճանական տաքացման հետևանքով Առաջավոր Ասիայում և Էգեյան ծովի ավազանում սկսված ճգնաժամի փուլում միկենյան պետությունների բնակչության մեծ մասը հեռացավ երկրից:

Հոմերոսյան դարաշրջանը: Միկենյան պետությունների անկմանը հաջորդեց շուրջ 300 տարի տևած մի ժամանակաշրջան, որը կոչվում է «**Հոմերոսյան դարաշրջան»:** Դա մի փուլ էր, երբ միկենյան քաղաքակրթության անկումից հետո սկսվեց երկարատև ճգնաժամ: Այդ ընթացքում չկային պետություններ, մոռացվեցին արհեստների և արվեստի շատ բնագավառներ, նույնիսկ գծային գիրը: Այս ամենը հետևանք էր նոր հունալեզու ժողովուրդների՝ դորիացիների կողմից միկենյան աշխարհի նվաճման: Զարգացման անհամեմատ ցածր աստիճանին գտնվող դորիացիները դեռևս երկար ճանապարհ պետք է անցնեին մինչև քաղաքակրթություն մուտք գործելը:

Այս դարաշրջանը Հոմերոսյան է կոչվում Ք.ա. VIII դարում ապրած պոետի անունով: Չնայած իր ստեղծագործությունները նա նվիրել է Տրոյական պատերազմի իրադարձություններին, սակայն շատ հաճախ նկարագրում է տոհմատիրական կարգերին հատուկ կենցաղ:

Հոմերոսյան դարաշրջանում Հունաստանը գյուղատիպ սակավաբնակ երկիր էր, որի բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն էր, արհեստները և առևտուրը թույլ էին զարգացած: Արտաքին աշխարհի հետ հարաբերությունները երկրորդական դեր էին խաղում բնակչության գործունեության մեջ:

Վաղ հունական պոլիսը: Հոմերոսյան դարաշրջանի ավարտին՝ Ք.ա. IX դ. վերջերից, Հունաստանում սկսում են ձևավորվել պետականություններ, որոնց հին հույն հեղինակներն անվանում էին **պոլիս**: «Պոլիս» հունարեն նշանակում է «քաղաք», սակայն հունական պոլիսը ավելի լայն իմաստ ուներ: Քաղաք էր կոչվում բուն բնակավայրը և բնակչության կենսագործունեության ոլորտում գտնվող տարածքը: Ժամանակի ընթացքում պոլիսը զգալիորեն ընդարձակվում է, ընդգրկում այլ բնակավայրեր՝ պահպանելով այդ անվանումը: Պոլիսի այս առանձնահատկությունն է պատճառը, որ այն երբեմն կոչվում է «**քաղաք–պետություն»:**

Պոլիսը ինքնակառավարվող ներփակ համայնք էր, որի բնակչությունը բաղկացած էր մեկ կամ մի քանի ցեղերից: Այստեղ պետության կառավարմանը՝ տարբեր ընտրովի մարմինների միջոցով, մասնակցում էր արական սեռի ողջ ազատ բնակչությունը (**դեմոս**): Գերագույն օրենսդիր մարմինը ժողովրդական ժողովն էր, որի որոշումները պարտադիր էին բոլորի համար: Այսինքն՝ այստեղ գործում էր հետևյալ սկզբունքը՝ փոքրամասնության ենթարկում մեծամասնության կամքին:

Կապված տեղական առանձնահատկությունների հետ՝ Հունաստանում ձևավորվեցին երկու տիպի պոլիսներ, որտեղ ստեղծվեցին պետական կառավարման տարբեր համակար-

Տեսարաններ Կնոսոսի պալատի ավերակներից. Կրետե կղզի

գեր: Դրանց միջև տարբերությունն այն էր, թե հասարակության որ խավի ձեռքում էր իրական իշխանությունը:

Առաջինը **ժողովրդավարական** պոլիսներն էին, որտեղ ժողովրդավարական հաստատությունները, ի դեմս ժողովրդական ժողովի, ապահովում էին պոլիսի ազատ բնակչության իշխանությունը: Որպես կանոն՝ այդպիսի պոլիսները Հունաստանի առավել զարգացածներն էին: Դա բացատրվում է ավանդական երկրագործական տնտեսավարման հետ մեկտեղ արագ տեմպերով աճող արհեստագործության և առևտրի տեսակարար կշռով: Ժողովրդավարական պոլիսի լավագույն օրինակը **Աթենական պետությունն** էր:

Ի հակակշիռ դրան՝ որոշ պոլիսներ, որտեղ ուժեղ էին տոհմատիրական շրջանից պահպանված ավանդույթները, իրենց բնույթով **խմբիշխանական** (օլիգարխիական) (հունարեն **օլիգոս՝** «քիչ» և **արխե՝** «իշխանություն» բառերի համադրմամբ, նշանակում է «քչերի իշխանություն») կամ **ազնվականական** (արիստոկրատական) էին (հունարեն **արիստոս՝** «լավագույն» և **կրատոս՝** «ուժ, իշխանություն» բառերից): Այստեղ պահպանվում էին ժողովրդավարական հաստատությունները, սակայն տոհմային ավագանու ձեռքում էր փաստացի իշխանությունը: Այդպիսին էին Սպարտան, Բեոտիայի, Էվբեայի և որոշ այլ շրջանների պոլիսները:

Ք.ա. VIII–VI դդ. հունական աշխարհից տարբեր ուղղություններով սկսված **գաղութացման** ընթացքում Միջերկրական և Սև ծովերի ավազաններում կազմավորվեցին հարյուրավոր պոլիսներ: Սրանք ստեղծվում էին իրենց հիմնադիր պոլիսի օրինակով:

Տոհմատիրական կարգերի քայքայման շրջանում, երբ դեռևս չէին ամրապնդվել կառավարման ժողովրդավարական ինստիտուտները, Հունաստանի որոշ մարզերում ժամանակավորապես առաջ է գալիս միանձնյա կառավարման եղանակ: Այն ստացել է **տիրանիա** անվանումը: Օգտվելով ստորին խավերի դժգոհությունից և հենվելով նրանց վրա՝ առանձին մարդիկ գրավում էին իշխանությունը և սկսում կառավարել միանձնյա՝ հաշվի չնստելով կառավարման մարմինների հետ:

Տիրանները բնաջնջում կամ վտարում էին իրենց քաղաքական հակառակորդներին: Իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով նրանք երբեմն կատարում էին դեմոսի որոշ պահանջներ: Օրինակ՝ Աթենքի տիրան **Պիսիստրատը** վտարված էվպատրիդների հաշվին հող բաժանեց Ատտիկայի հողազուրկներին: Բնակչության համար մշտապես կազմակերպվում էին զանազան միջոցառումներ՝ հասարակական տոնախմբություններ, հյուրասիրություններ, ոմանց տրվում էին նվերներ:

Ժամանակավորապես տիրանիա հաստատվեց մի շարք հունական պոլիսներում՝ **Աթենք, Կորնթոս, Սամոս, Միլեթ:** Տիրանիան հունական պոլիսներում սոցիալական ամուր հենարան չուներ, այդ իսկ պատճառով երկար չգոյատևեց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կրետե կղզում ե՞րբ են ձևավորվել առաջին պետականությունները: Ո՞ր պետությունը և ե՞րբ քաղաքականապես միավորեց Կրետե կղզին: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Կրետեի բոլոր քաղաքները պարսպապատ չէին: Ի՞նչ է նշանակում՝ ա) «թալասսոկրատիա», բ) «թեոկրատական պետություն»: Ե՞րբ և ինչո՞ւ անկում ապրեց Կրետեի պետությունը:
2. Որո՞նք էին աքայացիների ստեղծած պետությունները: Ինչո՞ւ անկում ապրեց միկենյան քաղաքակրթությունը:
3. Բնութագրե՛ք Հոմերոսյան դարաշրջանի Հունաստանը:
4. Ի՞նչ է պոլիսը: Ե՞րբ են դրանք առաջացել: Կառավարման ի՞նչ համակարգ ունեին պոլիսները: Պոլիսի ի՞նչ տիպեր կային:
5. Ինչպե՞ս է առաջացել տիրանիան: Տիրանիան ունեցե՞լ է արդյոք դրական հետևանքներ պոլիսների կյանքում. հիմնավորե՛ք պատասխանը:

§ 2. ԴԱՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՊՈԼԻՍԸ

Աթենական պոլիսի ձևավորումը. Սոլոն: «Պետական շինարարությունը» Աթենքում սկսվեց Ք.ա. VIII դ.: Պետության գլխավոր գործադիր պաշտոնյան կոչվում էր **արքոնտ**: Սկզբում նա կառավարում էր ցմահ, հետագայում պաշտոնավարման ժամկետը սահմանափակվեց մեկ տարով: Ավելացվեց նաև արքոնտների քանակը: Արքոնտի աշխատանքը չէր վարձատրվում: Պաշտոնավարման ավարտից հետո նրանք մտնում էին **ավագների խորհուրդ** (**արեոպագոս**):

Պետության գերագույն օրենսդիր մարմինը **ժողովրդական ժողովն** էր (**էկլեսիա**), որի դերը այս շրջանում մեծ չէր: Իրականում բոլոր կարևոր խնդիրները լուծում էր արեոպագոսը: Կառավարման այս համակարգը շարունակում էր տոհմատիրական ժամանակաշրջանում ձևավորված իրողությունները: Փաստացի իշխանությունը տոհմային ավագանու՝ **էվպատրիդների** ձեռքում էր:

Ատտիկայի բնակչության սոցիալական և գույքային շերտավորումը հանգեցրեց նրա մի մասի սնանկացման, ինչը դեմոսի հուզումների պատճառ դարձավ: Գիտակցելով վտանգը՝ տոհմային ավագանին փորձում էր միջոցներ ձեռնարկել մթնոլորտի բարելավման ուղղությամբ:

Աթենական պետության ժողովրդավարացման սկիզբը կապված է արքոնտ **Սոլոնի** անվան հետ: **Ք.ա. 594 թ.** Սոլոնը ձեռնարկեց առաջին լուրջ քայլը պետության գոյությանը սպառնացող վտանգը վերացնելու համար:

Սոլոնը առաջին հերթին վերացրեց պարտային ստրկությունը: Նույնիսկ Ատտիկայից դուրս ստրկության վաճառված աթենացիները պետական միջոցների հաշվին հետ գնվեցին և վերադարձվեցին: Արգելվեց այդուհետև աթենացուն ստրկության վաճառել: Այս միջոցառման շնորհիվ օրինականացվեց աթենական քաղաքացու անձնական ազատությունը: Ավելին՝ Սոլոնը աթենական քաղաքացիություն շնորհեց Ատտիկայում մշտապես բնակվող օտար պոլիսների շատ ներկայացուցիչների:



Սոլոն

Ատտիկայում մտցվեց **գույքային ցենզ**, որով բնակչությունը բաժանվեց **4 գույքային խմբերի**: Սա ծանր հարված էր տոհմատիրական կարգերին: Այդուհետև գնահատվելու էին ոչ թե մարդու ծագումը, այլ նրա անձնական արժանիքները: Մարդը հասարակական–պետական սանդուղքով բարձրանալու համար պետք է հենվեր ոչ թե իր նախնիների դիրքի, այլ սեփական աշխատանքի վրա:

Սոլոնը ստեղծեց ժողովրդական ժողովի կողմից ընտրված **400–ի խորհուրդ** (**բուլե**), որի կազմում ներառվեցին 100–ական ներկայացուցիչ Ատտիկայի 4 ցեղերից յուրաքանչյուրից: Բուլեն պետք է քննարկեր էկլեսիա մտնող օրենքների նախագծերը:

Սոլոնը ստեղծեց **ատենակալների դատարան**: Այդուհետև դատավորները չէին կարող միայնակ որոշում կայացնել, այլ պետք է վերջնական վճիռը թողնեին 12 ատենակալների հայեցողությանը: Այն վերածվեց Ատտիկայի գերագույն դատական մարմնի: Դատական համակարգի այս նորույթը գոյատևում է մինչև օրս:

Սոլոնի բարեփոխումները Աթենական պետության հետագա զարգացման առումով վիթխարի նշանակություն ունեցան: Դրանք վճռական հարված հասցրին տոհմատիրական կարգերին:

Կլիսթենեսի բարեփոխումները: Աթենական պետության ժողովրդավարացման հաջորդ փուլում՝ **Ք.ա. 508 թ.,** կատարվեցին Կլիսթենեսի բարեփոխումները: Նրա կարևորագույն ձեռնարկումը գործադիր իշխանության մարմիններում ընտրության կարգի հիմնավոր վերափոխումն էր, որը թույլ կտար ապահովել բոլոր քաղաքացիների մասնակցությունը պետական կառավարմանը:

Այդ նպատակով Ատտիկան բաժանվեց երեք վարչական շրջանների՝ **ա) Աթենքը՝ իր արվարձաններով, բ) ծովեզերքը** և **գ) ներքին շրջանները**: Սրանցից յուրաքանչյուրը իր հեր-

թին բաժանվում էր **10** մասերի (**տրիտիաներ**): Յուրաքանչյուր երեք շրջանից մեկական տրիտիա միասին կազմում էին **1 ֆիլ** (ցեղ): Այսպիսով՝ նախկին չորս ցեղային ֆիլերի փոխարեն կազմվեցին **10 տարածքային ֆիլեր**: Այս միջոցառման նպատակն էր խառնել բնակչությունը, որպեսզի էվպատրիդները չկարողանան ազդել ընտրությունների ընթացքի և բնակավայրերի ներքին գործերի վրա:

Տրիտիան իր հերթին բաժանվում էր մի քանի **դեմոսների**: Դեմոսը տնտեսական, վարչական և ռազմաքաղաքական ինքնուրույն միավոր էր, որն ուներ ընտրովի ղեկավար (**դեմարքոս**):

Կլիսթենեսը բարելավեց օրենսդիր մարմինների գործունեությունը: Սոլոնի **400–ի խորհուրդը** դարձավ **500–ի խորհուրդ**, որում ներգրավվեցին 50–ական ներկայացուցիչ յուրաքանչյուր ֆիլից: Տարին բաժանվեց 10 մասի, և դրանցից յուրաքանչյուրի ընթացքում էկլեսիա մտնող օրինագծերը քննարկվում էին այդ 50 անձանց կողմից:

Կլիսթենեսը ստեղծեց **10 ստրատեգոսների խորհուրդ**, որոնցից յուրաքանչյուրը հերթով ղեկավարում էր աթենական աշխարհազորը:

Պետական պաշտոնյաների գործունեությունը վերահսկելու նպատակով սահմանվեց, որ նրանք կանոնավոր կերպով հաշվետվություն ներկայացնեն էկլեսիային:

Կլիսթենեսը մտցրեց **օստրակիզմը**: Ըստ դրա՝ յուրաքանչյուր տարվա սկզբին էկլեսիան որոշում էր Ատտիկայից վտարել այն քաղաքացիներին, ում գործունեությունը կարող էր վնաս հասցնել պետությանը: Այդպիսի անձինք վտարվում էին **10 տարի ժամկետով**՝ առանց գույքի բռնագրավման:

Կլիսթենեսի բարեփոխումները կարևորագույն նշանակություն ունեցան աթենական ժողովրդավարության զարգացման համար: Դրանք դարձան Ք.ա. V դ. կեսերին Պերիկլեսի օրոք ստեղծված աթենական ժողովրդավարության համար հիմք:

Սպարտա: Հունական պոլիսների շարքում Սպարտան ուներ ընդգծված օլիգարխիական տիպի քաղաքական կառույց: Այստեղ վառ արտահայտված էր տոհմատիրական կարգերի վերջին փուլին բնորոշ տոհմային ավագանու անվերապահ իշխանությունը:

Սպարտայում այդպիսի կառույցի առկայությունը պայմանավորված էր հետևյալ հանգամանքով: Կրետե–միկենյան դարաշրջանից հետո Պելոպոնես եկած համեմատաբար փոքրաթիվ դորիացիները նվաճել էին տեղի աքայացիներին: Իրենց իշխանությունը պահպանելու համար նրանք (կոչվում էին **սպարտիատներ**) ստիպված էին մեկուսանալ պետության մնացյալ բնակչությունից, անխախտ պահել սեփական շարքերը: Այդ էր պատճառը, որ Սպարտայում միայն սպարտիատներն էին համարվում լիարժեք քաղաքացիներ: Պետության բնակչությունը կազմված էր երեք սոցիալական խմբերից:

1) **Սպարտիատներ՝** պետության իրավահավասար քաղաքացիներ. պետության ողջ հողային ֆոնդը համարվում էր սպարտիատների սեփականությունը: Այն սպարտիատին տրվում էր օգտագործման համար և կարող էր հետ վերցվել հակապետական արարքի պատճառով: Սպարտիատը իրավունք չուներ հողը վաճառելու կամ նվիրելու որևէ մեկին:

2) **Հելոտներ՝** դորիացիների կողմից նվաճված աքայացիներ. նրանց մի քանի ընտանիքներ կցված էին սպարտիատների հողակտորներին: Հելոտներն աշխատում էին սպարտիատի հողի վրա և պարտավոր էին վերջինիս տալ բնամթերային հարկ: Հելոտը նույնպես համարվում էր պետության սեփականությունը: Հելոտները բացարձակապես իրավազուրկ էին:

3) **Պերիօյկոսներ՝** նույնպես աքայացիների հետնորդներ, որոնք ապրում էին պետության սահմանամերձ շրջաններում: Սրանք անձնապես ազատ էին, ունեին մասնավոր սեփականություն, սակայն քաղաքացիական իրավունքներ չունեին:

Սպարտան ուներ **երկու արքա,** որոնք ներկայացնում էին սպարտական երկու հնագույն տոհմեր: Արքայի գործառույթները հիմնականում

Սպարտա. թատրոնի ավերակները

ռազմական և ծիսական բնագավառներին էին վերաբերում: Նրանց իշխանությունը սահմանափակ էր: Իրական իշխանությունն իրականացնում էր 30 հոգուց բաղկացած **ավագների խորհուրդը՝ գերուսիան՝** (**գերաս՝** «ծերունի» բառից). արքաները նույնպես գերուսիայի անդամներ էին:

Իրավական առումով Սպարտայի գերագույն օրենսդիր մարմինը **ժողովրդական ժողովն** էր (**ապելլա**), սակայն նրա դերը հասցված էր նվազագույնի: Այն ընդամենը կարող էր հավանություն տալ կամ չտալ գերուսիայի ներկայացրած առաջարկություններին: Ընդհակառակը, գերուսիան կարող էր չեղյալ հայտարարել ապելլայի որոշումները:

Սպարտայի գործադիր իշխանության կարևոր մասն էր **էֆորների** հաստատությունը: Ապելլայի կողմից ընտրված 5 էֆորները (ըստ պետության մարզերի քանակի) ունեին գերագույն վերահսկիչ գործառույթներ: Նրանց հաշվետու էին բոլոր սպարտացիները, այդ թվում՝ արքաները և գերոնտները: Էֆորները վերահսկում էին ֆինանսները, դատական և ոստիկանական գործերը, հետևում էին սպարտացիների կենցաղին ու բարքերին, ընդունված սովորույթների պահպանմանը (օրինակ՝ ավելորդ շռայլությունը, մեծամտությունը, անվայել պահվածքը հասարակական վայրերում և այլն):

Սպարտական պետությունն ուներ խիստ ընդգծված պահպանողական–կաստայական բնույթ, որն ապահովում էր սպարտիատների անվերապահ իշխանությունը:

Պոլիսային համակարգի քաղաքական առանձնահատկությունները: Հունական պոլիսները, անկախ դրանց կառավարման եղանակից, ունեին մի կարևոր առանձնահատկություն: Դա պոլիսի ներսում ազատ, իրավահավասար քաղաքացիների և դրանցից դուրս գտնվող բնակչության հակադրությունն էր, որն արտահայտվում էր պետության քաղաքական կառուցվածքում: Պոլիսի հիմքը կազմում էր մեկ կամ ավելի ցեղերի բնակչությունը, որը իշխանության կրողն էր: Նրանք էին, որ կարող էին ընտրել և ընտրվել պետական պաշտոններում, պատերազմների ժամանակ մասնակցել աշխարհազորին: Օրենքի առջև բոլոր քաղաքացիները հավասար էին:

Երկու տիպի պոլիսների միջև տարբերությունը հետևյալն էր. ժողովրդավարական պոլիսներում ժամանակի ընթացքում ընդարձակվում էին քաղաքացիների իրավունքները և մասնակցությունը պետական կառավարմանը, ինչպես եղավ Աթենքում: Հակառակ դրան՝ օլիգարխիական պոլիսներում փաստացի (սակայն ոչ իրավական) իշխանությունը իրականացնում էր տոհմային ազնվականությունը:

Վերոնշյալ քաղաքական կառուցվածքի գոյությունը հնարավոր էր միայն սահմանափակ տարածք ունեցող պետություններում: Պոլիսի՝ չափից ավելի խոշորացման, դրանում օտար բնակչություն ներառելու դեպքում պոլիսային կառույցը չէր կարող լիարժեք գործել: Այդ էր պատճառը, որ պոլիսային համակարգին բնորոշ էր պահպանողականությունը: Ավելի ուշ՝ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո, երբ հունական աշխարհը լայնորեն ներթափանցեց Առաջավոր Ասիա, պոլիսի էությունը հիմնավորապես փոխվեց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կառավարման ինչ համակարգ ստեղծվեց Աթենքում Ք.ա. VIII դարում:
2. Վերհանե՛ք Սոլոնի բարեփոխումների նշանակությունը Աթենքի համար: Դատական համակարգի ինչ նորույթ է պահպանվել մինչ օրս:
3. Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց Կլիսթենեսը: Ձեր կարծիքով՝ ո՞րն է դրանցից ամենակարևորը:
4. Ինչո՞վ էին պայմանավորված Սպարտայի քաղաքական կառուցվածքի առանձնահատկությունները: Որո՞նք էին բնակչության երեք հիմնական խմբերը Սպարտայում: Հողի սեփականության ինչ յուրահատկություն կար սպարտացիների պետությունում:
5. Ներկայացրե՛ք Սպարտայի պետական կառավարման մարմինները և դրանց հիմնական գործառույթները:
6. Ո՞րն է պոլիսային համակարգի գլխավոր հակադրությունը: Ինչո՞ւ է այս համակարգը բնութագրվում որպես պահպանողական:

§ 3. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ Ք.Ա. V ԴԱՐՈՒՄ

Հույն–պարսկական պատերազմները: Ք.ա. VI դ. վերջերին Աքեմենյան արքա Դարեհ I–ը նվաճեց Փոքր Ասիա թերակղզին և փակեց Էգեյան ծովից դեպի Սև ծով տանող ծովային ուղին: Փոքր Ասիայի կորուստը ծանր հարված էր մայրցամաքային հունական պոլիսներին, քանի որ դադարեց Արևելքի հետ եկամտաբեր առևտուրը: **Ք.ա. V դարի սկզբին**՝ փոքրասիական պոլիսների ապստամբության ճնշումից հետո, Դարեհն անցավ մայրցամաքային Հունաստանի նվաճմանը:

Առաջին արշավանքը **Ք.ա. 492 թ.** անհաջողության մատնվեց: Փոթորկի ժամանակ նավատորմի մեծ մասը խորտակվեց: Դարեհը **Ք.ա. 490 թ.** նոր արշավանք ձեռնարկեց: Սակայն Ատտիկայի ծովափին՝ **Մարաթոնի դաշտում,** աթենական զորքը հասավ հաջողության, և պարսիկները հետ դարձան: Պարսկական երկու արշավանքները ստիպեցին հունական պոլիսներին միավորել ուժերը հնարավոր նոր պատերազմի դեպքում. 31 պոլիսներ ստեղծեցին ռազմական միություն:

Դարեհի որդի **Քսերքսեսը** խոշոր բանակով **Ք.ա. 480 թ.** հյուսիսային Հունաստանից շարժվեց հարավ՝ դեպի **Թերմոպիլյան կիրճը**, որը միջին Հունաստան տանող միակ ճանապարհն էր: Մինչև հունական պոլիսները կհասցնեին հավաքել իրենց ուժերը և դիմադրություն կազմակերպել, Սպարտայի արքա **Լեոնիդասը** իր թիկնապահ գնդով (**300 զինվոր**) ընդառաջ գնաց պարսիկներին և փակեց **Թերմոպիլյան կիրճը**: Երկօրյա մարտերից հետո սպարտական ջոկատը զոհվեց, և պարսիկները շարունակեցին իրենց երթը:

Պարսիկները հասան Ատտիկա, որի բնակչությունը հասցրել էր հեռանալ կղզիներ: Նրանք ավերեցին Ատտիկան և մտան **Աթենք:** Հունական միացյալ ուժերը ամուր պատնեշ ստեղծեցին միջին Հունաստանից Պելոպոնես տանող ճանապարհին: Նույն թվականին Ատտիկայի ափերին՝ **Սալամին կղզու** մոտ, **Թեմիստոկլեսը** ջախջախեց պարսկական նավատորմը: Սալամինի պարտությունից հետո **Քսերքսեսը** իր նավատորմի մնացած մասի հետ վերադարձավ Փոքր Ասիա՝ Հունաստանում թողնելով զորքի հիմնական մասը:

Ք.ա. 479 թ. Բեոտիայի Պլատեա քաղաքի մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամարտ հունական միացյալ բանակի և պարսիկների միջև, որն ավարտվեց պարսիկների լիակատար պարտությամբ: Նույն թվականին Փոքր Ասիայի ծովափին՝ **Միկալեի** հրվանդանի մոտ, հունական նավատորմը ջախջախեց պարսկական նավատորմը:

Պլատեայի և Միկալեի ճակատամարտերը բեկում մտցրին հույն–պարսկական պատերազմների հետագա ընթացքի մեջ: Վերացավ դեպի Հունաստան պարսիկների ներխուժման վտանգը, և ռազմական գործողությունները սկսեցին ընդմիջումներով ընթանալ հիմնականում ծովում:

Վերջապես **Ք.ա. 449 թ.** Աքեմենյան տերության մայրաքաղաք **Շուշում** պարսից արքայի և Աթենքի դեսպան Կալիասի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որով ավարտվեցին պատերազմները: Պարսիկները պարտավորվեցին հրաժարվել Էգեյան ծովի ավազանում գերիշխանություն հաստատելու իրենց ծրագրերից: Փոքրասիական պոլիսները, մնալով Աքեմենյան տերության կազմում, ինքնուրույնություն ստացան ներքին հարցերում:

Աթենական պետության «ոսկեդարը». Պերիկլես: Հույն–պարսկական պատերազմների ավարտին Աթենական պետությունը հասավ իր հզորության բարձրակետին: Աթենքը ստեղծեց պոլիսների խոշոր միություն (**Աթենական ծովային միություն**): Աթենքն ուներ հարյուրավոր ռազմանավերից բաղկացած նավատորմ: Նա նույնիսկ երբեմն միջամտում էր Աքեմենյան տերության ներքին գործերին: Աթենքի վերելքը և այնտեղ ժողովրդավարական կառավարման համակարգի հետագա բարելավումը կապված էր խոշոր քաղաքական գործիչ **Պերիկլեսի** անվան հետ: Վերջինս նպատակ ուներ Աթենքը վերածելու Հունաստանի քաղաքական հեգեմոնի:

Իր հեղինակության շնորհիվ Պերիկլեսը, սկսած **Ք.ա. 443 թ., 15 տարի** վերընտրվում էր որպես **առաջին ստրատեգոս**, այսինքն՝ պետության բարձրագույն գործադիր պաշտոնյա: Պերիկլեսն անցկացրեց մի շարք բարեփոխումներ, որոնց նպատակն էր պետության կառավարման համակարգի կատարելագործումը: Նրա օրոք սովորական երևույթ էր պետական կառա-

վարման տարբեր օղակներում ստորին խավերի ներկայացուցիչների ընտրությունը: Պերիկլեսը հաճախ քվեարկության փոխարեն մարդկանց պաշտոնի էր նշանակում **վիճակահանությամբ**՝ ձգտելով բացառել հովանավորչությունը:

Շարքային աթենացիներին պետական կառավարման համակարգում ներառելու նպատակով Պերիկլեսը պաշտոնի դիմաց մտցրեց **վարձատրություն**: Չունևոր աթենացիներին տոների ժամանակ դրամ էր բաժանվում՝ թատրոն հաճախելու համար: Պերիկլեսի օրոք ընդարձակվեց **լիթուրգիայի** (ընծայաբերում) երևույթը: Յուրաքանչյուր հարուստ աթենացի պարտավոր էր իր անձնական միջոցների հաշվին պետության համար կառուցել նավեր, ֆինանսավորել հասարակական միջոցառումներ:

Պերիկլեսի օրոք **էկլեսիան** վերածվեց պետության իրական ղեկավար մարմնի: Էկլեսիան էր ընտրում ստրատեգոսներին և մյուս պաշտոնյաներին, հայտարարում պատերազմ, կնքում պայմանագրեր, ընդունում պետական պաշտոնյաների հաշվետվությունները: Պերիկլեսը մտցրեց **բողոքարկման համակարգ**: Ցանկացած ազատ աթենացի իրավունք ուներ բողոքարկելու էկլեսիայի կողմից նախկինում ընդունված օրենքը կամ էկլեսիա մտած օրենքի նախագիծը:

Պերիկլեսի օրոք ավարտվեց «**Երկար պարիսպների**» կառուցումը, որով Աթենքը հուսալիորեն պաշտպանվեց թշնամու հարձակման դեպքում: Պաշարման ժամանակ էլ քաղաքը կարող էր անարգել օգտվել իր նավահանգստից՝ օգնություն ստանալով դրսից:

Պերիկլեսի կառավարման ընթացքում Աթենքը վերածվեց Հունաստանի ժողովրդավարության հենակետի: Աթենքի ազդեցությունը տարածվում էր Հունաստանի մեծ մասի վրա: Սա Աթենական պետության քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային հզորության բարձրակետն էր, որ ընդունված է անվանել «**Պերիկլեսյան ոսկեդար**»:

Պելոպոնեսյան պատերազմները: Ք.ա. V դարի կեսերին սրվեցին Աթենական միության և Սպարտայի ու նրա պելոպոնեսյան դաշնակիցների հարաբերությունները: Աթենական և Պելոպոնեսյան միությունները պայքարում էին հանուն Հունաստանում գերիշխանության ձեռքբերման: Պելոպոնեսյան միության որոշ անդամների նկատմամբ Աթենքի գործողությունները պատերազմի առիթ դարձան:

Ք.ա. 431 թ. Սպարտայի արքա **Արքիդամոսը** մտավ Ատտիկա, որի բնակչությունը ապաստան գտավ քաղաքում: Հաշվի առնելով պելոպոնեսցիների առավելությունը ցամաքում՝ Աթենական միությունը օգտագործում էր իր ռազմածովային մեծ ներուժը: Ի պատասխան հակառակորդի հարձակման՝ Միության նավատորմը ասպատակում էր Պելոպոնեսի ծովափը: Ռազմական գործողություններն ընթանում էին փոփոխակի հաջողություններով:

Ք.ա. 425 թ. աթենական զորավար **Դեմոսթենեսը** նավերով զորք իջեցրեց Պելոպոնեսի ծովափ և գրավեց **Պիլոս քաղաքը**: Իրենց հերթին սպարտացիները փորձեցին տրոհել Աթենական միության շարքերը: **Ք.ա. 424 թ.** սպարտական մի ջոկատ շարժվեց հյուսիս: Այդ արշավանքի նպատակն էր հարկադրել Հունաստանի հյուսիսի պոլիսներին դուրս գալու Աթենական միությունից:

Տևական պատերազմը և մեծ զոհերը ստիպեցին հակառակորդներին հաշտություն կնքել: Ըստ պայմանագրի (**Ք.ա. 421 թ.**), որը ստացավ **Նիկիասի հաշտություն** անվանումը, վերականգնվեց նախապատերազմյան իրավիճակը (status quo):

Սակայն մի քանի տարի անց պատերազմը վերսկսվեց, որի համար առիթ եղավ Սիցիլիայի հունական գաղութների միջև ծագած հակամարտությունը: Հայտնի զորավար **Ալկիվիադեսի** ձնշման տակ Աթենքի իշխանությունները որոշեցին զորք ուղարկել Սիցիլիա:

Ք.ա. 415 թ. նավատորմը շարժվեց դեպի Սիցիլիա: Աթենական զորքը Սիցիլիայում սկզբնական հաջողություններից հետո սկսեց պարտություններ կրել: Նախ անհաջողության մատնվեց **Սիրակուզա** քաղաքի պաշարման ժամանակ, այնուհետև պարտվեց և գերի վերցվեց:

Սիցիլիական արշավանքի հետևանքով Աթենքը զրկվեց իր նավատորմի մեծ մասից, իսկ որոշ պոլիսներ դուրս եկան Աթենական միության կազմից: Ուժերի հարաբերակցությունը սկսեց փոխվել հօգուտ պելոպոնեսցիների: Բացի այդ, Սպարտան պարսիկների օգնությամբ խոշոր նավատորմ կառուցեց: Դրա դիմաց Սպարտան ճանաչեց պարսիկների գերիշխանությունը Փոքր Ասիայի հունական պոլիսների նկատմամբ:

Ք.ա. 404 թ. կնքվեց պայմանագիր, որով Աթենական միությունը ցրվեց, նավատորմը հանձնվեց հաղթողներին: Քանդվեցին Աթենքի պարիսպները: Աթենքը նաև պետք է ընդուներ Սպարտայի գերիշխանությունը:

Այսպիսով՝ պատերազմներն ավարտվեցին

Պելոպոնեսյան միության հաղթանակով: Սակայն դրանք ծանր հետևանքներ ունեցան ողջ հունական աշխարհի հետագա զարգացման համար: Թե՛ պարտվողները, թե՛ հաղթողները մարդկային և նյութական խոշոր կորուստներ ունեցան:

Պատերազմների ընթացքում դրսևորվեց պոլիսների միջև առկա հակասությունների ողջ խորությունը: Հարկ եղած դեպքում պոլիսները չէին վարանում օգնության դիմել ոչ հեռավոր անցյալում իրենց գլխավոր հակառակորդ Աքեմենյան տերությանը: Օգտվելով դրանից՝ պարսիկները վերականգնեցին իրենց գերիշխանությունը Փոքր Ասիայում:

Հետագա տասնամյակների ընթացքում հունական հասարակությունը ընկղմվեց քաղաքական և տնտեսական խոր ճգնաժամի մեջ, որը Ք.ա. IV դ. երկրորդ կեսին հանգեցրեց Մակեդոնիայի կողմից նվաճման:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դարեհ I–ը ե՞րբ նվաճեց Փոքր Ասիայի արևմտյան ծովափնյա տարածաշրջանը: Ի՞նչ հետևանք ունեցավ դա հունական պոլիսների համար:
2. Նշանավոր ի՞նչ ճակատամարտեր են տեղի ունեցել պարսիկների երկրորդ և երրորդ արշավանքների ժամանակ:
3. Ո՞ւմ գլխավորությամբ և ե՞րբ ստեղծվեց Աթենական միությունը: Ե՞րբ ավարտվեցին հույն–պարսկական պատերազմները:
4. Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց Պերիկլեսն իր երկարատև կառավարման ընթացքում: Ինչո՞ւ է ասվում, որ Աթենքը ծաղկում ապրեց նրա օրոք, ի՞նչ է կոչվել այդ ժամանակաշրջանը:
5. Որո՞նք էին Պելոպոնեսյան պատերազմի պատճառները: Ե՞րբ ավարտվեց Պելոպոնեսյան պատերազմը: Ցույց տվե՛ք դրա հետևանքները Հունաստանի համար:

§ 4. ՎԱՂ ՀՌՈՄ. ԻՏԱԼԻԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Իտալիայի ժողովուրդները. էտրուսկներ: Ապենինյան թերակղզին, շնորհիվ մերձարևադարձային կլիմայի և բերրի հողերի, հնագույն ժամանակներից պարբերաբար բնակեցվում էր տարբեր ժողովուրդներով:

Դրանց մի մասի միայն անվանումներն են պահպանվել: Օրինակ՝ **լիգուրներ** (Լիգուրիական ծով), **սարդեր** (Սարդինիա կղզի), **կորսեր** (Կորսիկա կղզի) և այլն: Ք.ա. II հազարամյակի վերջերին եկան իտալական ցեղերը, որոնցից **լատինները** հաստատվեցին Կենտրոնական Իտալիայում: Նրանց անունով էլ կոչվեց Լացիում մարզը՝ **Հռոմ** կենտրոնով: Նույն ժամանակներում Փոքր Ասիայից Իտալիա եկան **էտրուսկները** և զբաղեցրին Կենտրոնական Իտալիան: Այս շրջանը հետագայում ստացավ **Էտրուրիա** անվանումը: Իտալիայի բնակչության շարքում մեծ էր հույների դերը, որոնք այստեղ եկան Ք.ա. VIII–VI դդ.՝ հիմնելով տասնյակ գաղութներ: Դրանցից աչքի էին ընկնում **Կապուան, Նեապոլիսը, Սիրակուզան** և այլք: Իտալիայի ժողովուրդներից էին նաև կելտական ցեղերը, որոնց հռոմեացիներն անվանում էին գալլեր:

Էտրուսկները Կենտրոնական Իտալիայում հիմնեցին բազմաթիվ քաղաքներ, որոնք միավորված էին տարբեր միություններում: Էտրուսկյան քաղաքներից իրենց նշանակությամբ առանձնանում էին **Վեյքը** (Հռոմի մոտ), **Պերուզիան** (այժմ՝ **Պերուջա**), **Տարքվինիումը** և այլն:

Բարձր կազմակերպվածության, ռազմական և հատկապես ծովագնացության բնագավառներում ունեցած հմտությունների շնորհիվ էտրուսկյան քաղաքները մեծ ազդեցություն ձեռք բերեցին: Էտրուսկները Իտալիայի հունական գաղութներին համարում էին իրենց տնտեսական մրցակիցները, այդ իսկ պատճառով նրանք սկսեցին ծավալել գաղութացման քաղաքականություն:

Էտրուսկների և հույների մրցակցությունը հանգեցրեց ռազմական բախման: **Ք.ա. 535 թ. Կորսիկայի** մոտ էտրուսկյան–կարթագենյան միացյալ նավատորմը պարտության մատնեց հույներին: Սակայն հետագայում էտրուսկները պարտվեցին: Նրանք կորցրին նաև Իտալիայի հյուսիսը, որտեղ հաստատվեցին գալլերը:

Էտրուսկները հայտնի էին որպես հմուտ քաղաքաշինարարներ: Քաղաքները կառուցվում էին միասնական հատակագծով: Ապագա քաղաքի տարածքի սահմանները գութանով փորում էին, այնուհետև սկսում էին կառուցել պարիսպներ և վարչական շենքեր:

Էտրուսկները երկրպագում էին բազմաթիվ աստվածների՝ **Վերտումնումի** գլխավորությամբ: Աստվածների կամքը մարդկանց հասցնելու համար տաճարներում քրմերը հետազոտում էին թռչունների և կենդանիների ներքին օրգանները և կատարում գուշակություններ: Հետագայում այդ սովորույթը տարածվեց հռոմեացիների մոտ:

Էտրուսկները խոր հետք են թողել հետագայի Հռոմեական պետության քաղաքական և հոգևոր–մշակութային զարգացման վրա: Մասնավորապես, լատինական այբուբենի հիմքում ընկած է էտրուսկյան գիրը:

Հռոմեական հանրապետության քաղաքական կարգը: Ք.ա. VIII–VII դարերում՝ արքայական իշխանության շրջանում, լատինական և այլ ցեղերով բնակեցված Լացիում մարզը՝ Հռոմ կենտրոնով, միավորվեց մեկ պետականության մեջ: Այն վերածվեց Իտալիայի առավել աչքի ընկնող քաղաքական միավորներից մեկի:

Արքայական շրջանի Հռոմեական պետությունում դեռևս ուժեղ էին տոհմացեղային հարաբերությունները: Կյանքի բոլոր բնագավառներում տեսանելի էր ցեղային կառույցի գերակայությունը: Հռոմեական երեք ցեղերը (լատիններ, սաբիններ և էտրուսկներ) կտրուկ հակադրվում էին պետության մնացած բնակչությանը: Նրանք էին օգտվում քաղաքացիական բոլոր իրավունքներից, կազմում էին պետության օրենսդիր և գործադիր իշխանությունը: 300 տոհմերի բաժանված վերոհիշյալ ցեղերից բացի, մնացած բոլորը դուրս էին «հռոմեական ժողովրդից»: Նրանք կոչվում էին **պլեբեյներ** (լատին.՝ **plebs** «հասարակ ժողովուրդ, ամբոխ») և չունեին քաղաքացիական իրավունքներ:

Արքայական իշխանության տապալումից հետո (Ք.ա. 510 թ.) պլեբեյների՝ շուրջ երկու դար տևած պայքարն ավարտվեց հաջողությամբ, և նրանք քաղաքացիական իրավունքներ ստացան:

Հռոմի գերագույն օրենսդիր մարմինը ժողովրդական ժողովն էր՝ **կոմիցիաները**: Հռոմեական պետության քաղաքական կառուցվածքում կարևորագույն դեր ուներ Ծերակույտը՝ **Սենատը** (ավագների խորհուրդ): Միայն Ծերակույտի որոշումից հետո էր հարցը քննարկման ուղարկվում կոմիցիաներ: Վերջինիս որոշումը պարտադիր պետք է հաստատվեր Ծերակույտի կողմից: Գործադիր իշխանության մարմինները հաշվետու էին Ծերակույտի առջև: Ծերակույտի անդամների կազմը մշտապես լրացնում էին պաշտոնավարումը ավարտած բարձրագույն գործադիր պաշտոնյաները:

Հռոմում գոյություն ուներ ընտրովի գործադիր իշխանության ճյուղավորված համակարգ՝ **մագիստրատուրա**:

Հանրապետական կարգերի ձևավորման սկզբնական շրջանում գերագույն մագիստրատը **պրետորն** էր, որի տեղակալը կոչվում էր **քվեստոր**: Հետագայում սկսեցին ընտրել երկու պրետորներ՝ հավասար իրավունքներով, որպեսզի թույլ չտային մեկ մարդու ձեռքին մեծ իշխանության կենտրոնացում: Սրանք պարտավոր էին մշտապես խորհրդակցել միմյանց հետ, որի պատճառով շուտով այս պաշտոնյաները կոչվեցին **կոնսուլներ**:

Հռոմում բոլոր պաշտոնները կոլեգիալ էին, այսինքն՝ յուրաքանչյուր պաշտոն ներկայացված էր երկու և ավելի անձանցով:

Կոնսուլներն իրականացնում էին բանակի հրամանատարությունը: Քվեստորի լիազորությունները տարածվում էին պետական գանձարանի, ֆինանսական հարցերի վրա: Նրանք ուղեկցում էին կոնսուլին արշավանքների ժամանակ, զբաղվում ռազմավարով:

Բոլոր պաշտոնների պաշտոնավարման ժամկետը մեկ տարի էր: Կար ևս մեկ կարևոր մագիստրատուրա՝ երկու **ցենզորներ**, որոնք հինգ տարին մեկ ընտրվում էին 18 ամիս ժամկետով և իրականացնում էին բնակչության հաշվառումն՝ ըստ գույքային խմբերի, կազմում էին ծերակույտականների նոր ցուցակներ:

Պետության համար ծանր իրավիճակներում (պատերազմ, խոշոր ապստամբություններ և այլն) 6 ամիս ժամկետով ընտրվում էր արտակարգ լիազորություններով օժտված պաշտոնյա՝ **դիկտատոր**: Նա կարող էր այդ ընթացքում կառավարել՝ առանց հաշվի առնելու պետական

մարմինների կարծիքը: Սովորաբար դիկտատոր էր նշանակվում կոնսուլներից մեկը:

Մագիստրատուրաներում աշխատանքը չէր վարձատրվում, քանի որ դա համարվում էր մարդուն տրված պատվավոր գործ:

Ընդհանուր առմամբ՝ **Ք.ա. VI–III դդ.** ընթացքում Հռոմում քայլ առ քայլ ձևավորվեց **հանրապետական՝ ժողովրդավարական կառավարման համակարգ,** որը գոյատևեց ընդհուպ մինչև Ք.ա. I դարի վերջին քառորդը:

Իտալիայի նվաճումը: Հռոմեական հանրապետության ամրապնդմանը զուգընթաց սկսվում է նրա ռազմական ակտիվությունը Լացիումից դուրս: Հռոմի գլխավոր հակառակորդները սկզբում էտրուսկյան քաղաքներն էին, այնուհետև՝ Իտալիա ներթափանցած ռազմատենչ գալլերը: Վերջիններս հաստատվել էին Պո գետի ավազանում՝ հիմնելով իրենց գլխավոր քաղաքը՝ **Մեդիոլանումը** (այժմ՝ **Միլան**):

Ք.ա. 390 թ. գալլերը պաշարեցին Հռոմ քաղաքը: Նրանք գրավեցին քաղաքի մեծ մասը. անառիկ մնաց միայն **Կապիտոլիումի բլուրը**: Յոթամսյա պաշարումից հետո հռոմեացիները ստիպված էին մեծ ռազմատուգանք վճարել, և գալլերը հեռացան:

Գալլական սպառնալիքը ստիպեց հռոմեացիներին մերձենալու էտրուսկների և լատինական ցեղերի հետ: Ռազմական դաշինքներ կնքվեցին Հռոմի և Իտալիայի այլ միությունների հետ: Առևտրական պայմանագիր կնքվեց նաև հյուսիսաֆրիկյան **Կարթագեն** պետության հետ, որի շնորհիվ աճեց Հռոմի հեղինակությունը:

Ամրապնդելով իր դիրքերը և տնօրինելով նյութական ու մարդկային խոշոր միջոցների՝ պաշարների՝ Հռոմը սկսեց ծավալել նվաճողական քաղաքականություն: Առաջին լուրջ հաջողությունը Կենտրոնական Իտալիայում գտնվող **սամնիտական միության** հպատակեցումն էր: Նվաճված քաղաքների հետ կնքվեցին անհավասար պայմանագրեր: Նրանց տարածքներում հիմնվեցին գաղութներ, որտեղ կարիքավոր հռոմեացիները ստացան հողատարածություններ:

Սամնիտներից հետո հերթը հասավ տնտեսապես հզոր Հարավային Իտալիային, որտեղ հունական հարուստ գաղութներն էին: Հռոմի և հունական **Տարենտում քաղաքի** հարաբերությունների սրումը ստիպեց վերջինիս բնակչությանը օգնության դիմելու Էպիրոսի արքա **Պյուռհոսին**: Վերջինս հայտնի զորավար էր՝ Ալեքսանդր Մակեդոնացու տոհմից, և ձգտում էր կրկնելու իր նախնու փառքը՝ տիրանալով Իտալիային, Սիցիլիային և Կարթագենին: Պյուռհոսը որոշեց օգտագործել հարմար առիթը:

Ք.ա. 280 թ. Պյուռհոսի բանակը ափ իջավ Իտալիայում: Առաջին երկու ճակատամարտերում հասավ հաջողության, սակայն մեծ կորուստների գնով: Վերահաս վտանգը ստիպեց Հռոմին դաշինք կնքել Կարթագենի հետ: Վերջապես **Ք.ա. 275 թ. Բենեվենտումի** մոտ վճռական ճակատամարտում Պյուռհոսը պարտվեց: Իսկ **Ք.ա. 265 թ.** Հռոմը նվաճեց Ապենինյան թերակղզու վերջին ինքնուրույն քաղաքը՝ էտրուսկյան **Վոլսինիումը**: Սրանով ավարտվեց Իտալիայի նվաճումը Հռոմի կողմից: Այժմ միայն Պո գետի՝ գալլերով բնակեցված տարածքն էր դուրս մնում Հռոմի տիրապետությունից:

Այսպիսով՝ Ք.ա. III դարի կեսերին Հռոմը գերիշխող քաղաքական ուժ դարձավ Իտալիայում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ առանձնահատկություններ ունի Իտալիայի աշխարհագրական դիրքը: Իտալիայի ո՞ր մասն էին զբաղեցնում էտրուսկները:
2. Որտե՞ղ ձևավորվեց Հռոմեական պետությունը: Որքա՞ն տևեց արքայական ժամանակաշրջանը Հռոմում:
3. Ո՞ր ցեղերն էին համարվում հռոմեական քաղաքացիներ: Ներկայացրե՛ք Հռոմեական պետության կառավարման հանրապետական համակարգը մինչև Ք.ա. I դարի վերջը: Ո՞վ էր դիկտատորը:
4. Ո՞րն էր Հռոմի հեղինակության բարձրացման պատճառը: Ինչո՞ւ Պյուռհոսը համաձայնվեց օգնել Տարենտումի բնակչությանը:
5. Ե՞րբ ավարտվեց Իտալիայի նվաճումը Հռոմի կողմից:

§ 5. ՀՌՈՄԸ՝ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ԱՎԱԶԱՆԻ ԳԵՐԻՇԽՈՂ

Հռոմը և Կարթագենը: Նվաճելով Ապենինյան թերակղզու մեծ մասը՝ Հռոմն անցավ տարածքային նվաճումների նաև արտաքին աշխարհում: Տնտեսապես հարուստ Սիցիլիայի համար նրա և Կարթագենի միջև **Ք.ա. 264–202 թթ.** տեղի ունեցան երկու պատերազմներ (դրանք ստացել են **Պունիկյան** անվանումը): Հատկապես ծանր էր երկրորդը, որի ընթացքում կարթագենցի զորավար Հաննիբալը մտավ Իտալիա, և Հռոմին մեծ ջանքերի գնով հաջողվեց հասնել հաջողության: Պատերազմի ավարտին Կարթագենը զրկվեց իր բոլոր տիրույթներից և ստիպված էր վճարել վիթխարի ռազմատուգանք: Կարթագենը դադարեց Հռոմի մրցակիցը լինելուց, որով Հռոմը վերածվեց Արևմտյան Միջերկրականի գերիշխող ուժի (հեգեմոնի): Այդուհետև Հռոմը, տիրելով նյութական և մարդկային մեծ միջոցների, ռազմաքաղաքական խոշոր ուժ էր:

Մինչև Ք.ա. III դարի վերջերը Հռոմը միայն հազվադեպ էր ուշադրություն դարձնում Արևելյան Միջերկրականի վրա: Լուծելով Կարթագենի խնդիրը՝ Հռոմը հնարավորություն ստացավ զբաղվելու արևելքով, որի համար առիթ ծառայեցին հելլենիստական պետությունների միջև ընթացող պատերազմները:

Մակեդոնական երկրորդ պատերազմը: Հաննիբալի արշավանքի ընթացքում Մակեդոնիայի արքա **Փիլիպոս V**–ը և Սելևկյան արքա **Անտիոքոս III**–ը համաձայնության եկան Էգեյան ծովում, Փոքր Ասիայում և Սիրիայում Եգիպտոսին պատկանող տարածքների զավթման կապակցությամբ: Ձգուշանալով Մակեդոնիայի հզորացումից՝ Արևելյան Միջերկրականի մի շարք երկրներ՝ **Պերգամոնը, Հռոդոսը, Աթենքը** և այլք, պայքար սկսեցին Փիլիպոսի դեմ: **Ք.ա. 201 թ. Քիոս կղզու** մոտ ծովային ճակատամարտում Փիլիպոսը պարտվեց: Օգնություն ստանալու ակնկալիքով դաշնակիցները դիմեցին Հռոմին: Վերջինիս ձեռնտու էր Մակեդոնիայի թուլացումը, ինչպես նաև Արևելյան Միջերկրականի մանր պետությունների աջակցությունը:

Հռոմը պայմանագրեր կնքեց Հռոդոսի և Պերգամոնի հետ, որից հետո պահանջեց Փիլիպոսից զորքերը դուրս բերել հունական քաղաքներից և Եգիպտոսին վերադարձնել նրա տարածքները: Փիլիպոսի մերժումից հետո **Ք.ա. 200 թ.** հռոմեական բանակը ափ իջավ Հունաստանի արևմուտքում ու շարժվեց դեպի Մակեդոնիա: **Ք.ա. 197 թ. Թեսալիայի Կինոսկեֆալե** կոչվող վայրում հռոմեացիները պարտության մատնեցին մակեդոնական զորքին:

Նույն թվականին Մակեդոնիայի հետ կնքվեց պայմանագիր, ըստ որի՝ Մակեդոնիան պետք է հրաժարվեր իր բոլոր նվաճումներից, վճարեր 1000 տաղանդ ռազմատուգանք: Փիլիպոսը Հռոմին պետք է հանձներ իր նավատորմը, իր զորքը կրճատեր մինչև 5000–ի: Բացի այդ, առանց Հռոմի համաձայնության նա չէր կարող պատերազմ սկսել որևէ պետության դեմ և պետք է ճանաչեր հունական քաղաքների անկախությունը:

Ավարտելով պատերազմը՝ հռոմեական զորքը մնաց Հունաստանում՝ որոշ քաղաքներում տեղադրելով կայազորեր: Հռոմեացիներն ազատորեն միջամտում էին հունական քաղաքների ներքին գործերին, ակնհայտորեն աջակցում հռոմեամետ ազնվականությանը:

Այսպիսով՝ Մակեդոնական երկրորդ պատերազմը Հռոմի առջև բացեց արտաքին քաղաքականության նոր ուղղություն՝ հիմք դնելով նրա հետագա ծավալման համար:

Պատերազմ Սելևկյան պետության դեմ: Հռոմի մակեդոնական արշավանքի շրջանում Սելևկյան պետության արքա Անտիոքոս III–ը սկսեց նվաճողական քաղաքականություն: Գրավելով Հարավային Սիրիան՝ նա այնուհետև իրեն ենթարկեց Փոքր Ասիայի ծովափնյա քաղաքները և մտավ **Թրակիա** (ներկայիս Բուլղարիայի մի մասը): Այժմ նրա ձեռքում էին Սև և Էգեյան ծովերը կապող նեղուցները: Անտիոքոսը հանդիսավորությամբ ընդունեց Հռոմի երդվյալ թշնամի Հաննիբալին: Անտիոքոսը նաև սկսեց հակահռոմեական ելույթների դրդել Հռոմից դժգոհ հունական քաղաքներին: Անտիոքոսի գործողությունները ստիպեցին Հռոմի դաշնակիցներ Պերգամոնին և Հռոդոսին պատերազմ հայտարարել նրան և դիմել Հռոմին:

Ք.ա. 192 թ. Անտիոքոսի բանակը մտավ Հունաստան: Սակայն հռոմեական բանակը Թերմոպիլյան կիրճում պարտության մատնեց սելևկյան զորքին: Զարգացնելով հաջողությու-

նը՝ հռոմեական բանակը մուտք գործեց Փոքր Ասիայի հյուսիս–արևմուտք: Այստեղ՝ **Մագնեսիայի** մոտ, **Ք.ա. 190 թ.** հռոմեացիները գլխովին ջախջախեցին Անտիոքոսին: Վերջինիս հետ **Ք.ա. 188 թ.** կնքվեց պայմանագիր, որով Անտիոքոսը պարտավորվում էր վճարել խոշոր ռազմատուգանք, էականորեն կրճատել նավատորմը, ինչպես նաև հանձնել Փոքր Ասիայի իր տիրույթները: Նա պարտավորվում էր նաև հանձնել Հաննիբալին, սակայն վերջինս փախավ Հայաստան:

Փոքր Ասիայում Անտիոքոսից գրաված տարածքները Հռոմը հանձնեց իր դաշնակիցներ Պերգամոնին և Հռոդոսին: Փաստորեն **Ք.ա. 200–190 թթ.** ընթացքում Հռոմին հաջողվեց պարտության մատնել Արևելյան Միջերկրականի երկու հզորագույն պետություններին՝ Մակեդոնիային և Սելևկյան պետությանը: Վերջինս կարճ ժամանակում կորցրեց իր բազմաթիվ այլ տիրույթներ հյուսիսում և արևելքում՝ հօգուտ հզորացող Մեծ Հայքի և Պարթևական թագավորությունների:

Մակեդոնիայի և Հունաստանի նվաճումը: Նախորդ պատերազմից հետո Փիլիպոսը, այնուամենայնիվ, կարողացավ զգալիորեն ամրապնդել իր պետությունը: Նա շարունակաբար կուտակում էր ռազմամթերք և պայմաններ ստեղծում կորցրածը հետ բերելու համար: Հռոմում գիտակցում էին Մակեդոնիայի տնտեսական վերելքի վտանգները: Փիլիպոսին փոխարինեց նրա որդին՝ **Պերսևսը**, որը շարունակեց հոր քաղաքականությունը: **Պերսևսը** ստեղծեց հակահռոմեական դաշինք, որին միացան **Էպիրոսը և Իլիրիան**: Հռոմի վերջնագրին ի պատասխան՝ **Պերսևսը** իր հերթին պահանջեց Մակեդոնիան եռօրյա ժամկետում ազատել բոլոր հռոմեացիներից: **Ք.ա. 171 թ.** Հռոմը պատերազմ հայտարարեց Մակեդոնիային:

Երբ հռոմեական զորքը հայտնվեց Մակեդոնիայում, Պերսևսի հունական դաշնակիցների մի մասը անցավ Հռոմի կողմը: Պերսևսը դիմեց Հռոմին հաշտության առաջարկով, որը չընդունվեց: **Ք.ա. 168 թ.** Պերսևսը պարտություն կրեց, որից հետո հռոմեացիները գրավեցին Էպիրոսը:

Պատերազմից հետո Մակեդոնիան՝ որպես պետություն, վերացվեց: Նրա տարածքը բաժանվեց չորս շրջանների: Նմանապես երեք մասի բաժանվեց **Իլիրիան**: Մակեդոնիայի հունական դաշնակիցները նույնպես պատժվեցին: Շուրջ 1000 հայտնի հույներ գերեվարվեցին Հռոմ, այդ թվում՝ նշանավոր պատմիչ Պոլիբիոսը:

Մակեդոնիայի վերացումով փոխվեց Հռոմի արևելյան քաղաքականությունը: Այժմ արդեն նրա դաշնակիցներ Պերգամոնի և Հռոդոսի հետագա հզորացումը ձեռնտու չէր Հռոմին: Շուտով Հռոմի թույլտվությամբ Պերգամոնից անջատվեց նրա կազմում գտնվող **Գալաթիան**, ճանաչվեց նաև **Պափլագոնիայի** անկախությունը: Նույն կերպ կրճատվեց Հռոդոսի ազդեցությունը Էգեյան ծովում:

Մակեդոնիայի նվաճումից հետո Հռոմը արդեն իրեն լրիվ ապահով էր զգում Արևելյան Միջերկրականում և պատրաստ էր իր անմիջական տիրապետությունը հաստատելու նաև Առաջավոր Ասիայում:

Սակայն Մակեդոնական պատերազմից շուրջ 20 տարի անց էլ հռոմեացիները խնդիրներ ունեին Բալկանյան թերակղզում: Ինչպես հունական քաղաքները, այնպես էլ Մակեդոնիայի բնակչությունը դեռևս հույս ունեին ազատագրվելու հռոմեական տիրապետությունից:

Ք.ա. 148 թ. հռոմեացիները ճնշեցին Թրակիայում մեկ տարի առաջ սկսված ապստամբությունը, որից հետո ձեռնամուխ եղան լուրջ փոփոխությունների: Մակեդոնիան, Էպիրոսը և Հոնիական կղզիները միավորվեցին, և ստեղծվեց **Մակեդոնիա պրովինցիան:** Այդպիսով՝ վերոհիշյալ ընդարձակ տարածքը ներառվեց Հռոմի վարչաքաղաքական համակարգ՝ վերածվելով նրա հզոր հենակետի:

Այնուհետև Հռոմը միջամտեց Հունաստանում **Աքայան միության** և **Սպարտայի** միջև սկսված պատերազմին: Հռոմը աջակցեց Սպարտային և **Ք.ա. 146 թ. Իսթմոսի** ճակատամարտում հասավ հաջողության: Գրավելով Միության ամենախոշոր քաղաք Կորնթոսը՝ հռոմեացիները ողջ բնակչությանը ստրկության վաճառեցին: Ցրվեցին բոլոր հունական միությունները: Հունական քաղաքները այդուհետև պետք է ենթարկվեին Մակեդոնիայի հռոմեական կառավարչին: Հունական քաղաքների զգալի մասը ավերվեց և թալանվեց: Հռոմ ուղարկվեցին մշակույթի բազմաթիվ հուշարձաններ:

Վերոհիշյալ իրադարձությունների հետևանքով Ք.ա. II դարի կեսերին Հռոմի անմիջական տիրապետությունը հաստատվեց Էգեյան ծովի ամբողջ ավազանում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ ընթացք և արդյունքներ ունեցան Պունիկյան պատերազմները Հռոմի համար:
2. Ի՞նչ համաձայնության էին եկել Փիլիպոս V–ը և Անտիոքոս III–ը: Ներկայացրե՛ք Հռոմի և Մակեդոնիայի միջև կնքված պայմանագրի բովանդակությունը:
3. Ինչո՞վ ավարտվեց Հռոմի և Անտիոքոս III–ի հակամարտությունը:
4. Ովքե՞ր էին Մակեդոնիայի դաշնակիցները Հռոմի դեմ երկրորդ պատերազմի ժամանակ: Ներկայացրե՛ք պատերազմի արդյունքները: Ինչո՞ւ Հռոմին հաջողվեց հաստատել իր ազդեցությունը Հունաստանի վրա:

§ 6. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

Հանրապետական կարգի ճգնաժամը: Ք.ա. I դարի սկզբներին հանրապետական կառավարման համակարգը դժվարությամբ էր վերահսկում լայնածավալ պետությունը: Լուրջ խնդիրներ կային նաև Իտալիայում՝ կապված իտալիկների պահանջների հետ: Բնակչության մի զգալի մասը կազմող իտալիկները պահանջում էին հռոմեական քաղաքացիներին հավասար իրավունքներ: Մերժում ստանալով՝ նրանք ապստամբեցին, և **Ք.ա. 91–89 թթ.** ընթացավ քաղաքացիական պատերազմ: Չնայած պատերազմն ավարտվեց իտալիկների պարտությամբ, սակայն Հռոմը ստիպված էր բավարարել նրանց շատ պահանջներ:

Պատերազմից քիչ անց Հռոմում սրվեց պայքարը **ժողովրդավարական ուժերի** (**պոպուլյարներ**) և **օպտիմատների** (Ծերակույտի վերնախավը) միջև: Դրա առիթը **Ք.ա. 88 թ.** կոմիցիաների որոշումն էր, որով Պոնտոսի արքա Միհրդատի դեմ պատերազմում հռոմեական բանակի հրամանատար նշանակվեց պոպուլյար **Գայոս Մարիոսը**: Այդ որոշումից դժգոհ զորավար **Կոռնելիոս Սուլլան**, որը մինչ այդ արդեն Ծերակույտի կողմից հաստատվել էր այդ պաշտոնում, ապստամբեց և գրավեց Հռոմը: Սուլլան ձերբակալեց իր քաղաքական հակառակորդներին և անցկացրեց մի շարք միջոցառումներ:

Ծերակույտի կազմում ներառվեցին նրա կողմնակիցներից **300 հոգի,** կրճատվեց ժողովրդական ժողովի և տրիբունների իշխանությունը: Սակայն **Սուլլայի՝** արշավանքի գնալուց հետո պոպուլյարները գրավեցին Հռոմը և չեղյալ հայտարարեցին Սուլլայի անցկացրած օրենքները: Հաջողությամբ ավարտելով պատերազմը Միհրդատի դեմ՝ Սուլլան **Ք.ա. 83 թ.** վերադարձավ Իտալիա և գրավեց Հռոմը: Հետո նա Ծերակույտին ստիպեց իրեն **դիկտատորի** լիազորություններ տալ՝ անսահմանափակ ժամկետով:

Սուլլայի հրամանով կազմվեցին այն մարդկանց ցուցակները (պրոսկրիպցիաներ), ովքեր հայտարարվեցին օրենքից դուրս և ենթարկվեցին մահապատժի: Սուլլայի հազարավոր հակառակորդներ զոհ գնացին ահաբեկչությանը: Նա փոփոխություններ կատարեց պետական կառա-

Հուլիոս Կեսար



Մարկոս Կրասոս

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ


ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ
ԲԱԼԹԻԿ ԾՈՎ
ԳԵՐՄԱՆԻԱ
ԱՏԼԱՆՏՅԱՆ ՕՎԿԻԱՆՈՍ
ԳԱԼԻԱ
ԴԱԿԻԱ
ԻԼԻՐԻԱ
ՀՌՈՄ
Նեապոլ
Տոլեդո
Նոր Կարթագեն
Սարագոսա
Մարսելիա
Լուգդունում
Սիրակուզա
Սարդինիա կղ.
Սիցիլիա կղ.
Մարդինիա կղ.
Մ Ի Ջ Ա Ր Կ Ա Ն Ա Ծ Ո Վ
Ս Ա Հ Ա Ր Ա Յ Ի Ն Ա Ն Ա Ծ Ո Վ
Ս Ա Ր Մ Ա Տ Ի Ա
Ս Ա Ր Մ Ա Տ

Դրան նպաստեց նաև այն, որ Կեսարը ծանր պատերազմներ էր վարում Գալլիայում: Քաղաքական իրավիճակի սրման պայմաններում հռոմեական հասարակության վերնախավը գալիս էր եզրակացության, որ անհրաժեշտ է ուժեղ ձեռք, ով կկարողանար կարգուկանոն մտցնել երկրում: Այդ դերում Ծերակույտը տեսնում էր Պոմպեոսին, այլ ոչ պոպուլյար Կեսարին: **Ք.ա. 52 թ.** Պոմպեոսն ընտրվեց կոնսուլ, ընդ որում՝ նա միայնակ էր վարում այդ պաշտոնը: Փաստորեն Պոմպեոսը դարձավ դիկտատոր: Նա փորձում էր թուլացնել Կեսարի դիրքերը՝ վերջինիս համարելով իր գլխավոր հակառակորդը:

Ք.ա. 49 թ. Կեսարի բանակը Գալլիայից շարժվեց դեպի Հռոմ և գրավեց քաղաքը: Անսպասելի հարձակումը ստիպեց Պոմպեոսին փախչել Բալկաններ: Նույն թվականին Կեսարը Իբերիայում ստիպեց Պոմպեոսի բանակին հանձնվել: Իտալիա վերադառնալուց հետո նա ստացավ դիկտատորի գործառույթներ:

Կեսարը վերականգնեց Սուլլայի օրոք քաղաքացիությունից զրկված անձանց իրավունքները: Այնուհետև ընտրվելով կոնսուլ՝ նա Իլիրիայում հաղթեց գրեթե կրկնակի մեծ զորք ունեցող Պոմպեոսին: Վերջինս փախավ Եգիպտոս, սակայն այնտեղ սպանվեց Եգիպտոսի արքայի հրամանով:

Շարունակելով իր հաղթարշավը՝ Կեսարը Աֆրիկայում և Իբերիայում ջախջախեց պոմպեոսականների բանակները, որով էլ ավարտվեց քաղաքացիական պատերազմը: Կեսարը դարձավ Հռոմեական հանրապետության իրական տերը:

Ք.ա. 44 թ. Հռոմ վերադառնալուց հետո Կեսարը հռչակվեց **ցմահ դիկտատոր**: Մինչ այդ նա արդեն ստացել էր ցմահ **տրիբունի**, ինչպես նաև **ցենզորի** պաշտոն: Իսկ ավելի վաղ նա ուներ **մեծ պոնտիֆեքսի** (քրմապետ) պաշտոնը: Կեսարը փաստացի ստացավ անսահմանափակ իշխանություն: Կեսարը նաև Ծերակույտի անդամների թիվը հասցրեց **900-ի**՝ ի հաշիվ իր կողմնակիցների: Ծերակույտականներ դարձան նրա շատ զորահրամանատարներ և նույնիսկ նախկին ստրուկներ:

Հանրապետական կառավարման մարմինները շարունակում էին աշխատել, սակայն բոլոր ընտրովի պաշտոնյաների թեկնածությունները տրվում էին Կեսարի կողմից, և մնում էր միայն դրանք հաստատել:

Այսպիսով՝ Հռոմում հաստատվեց Կեսարի միայնակ կառավարումը, որն անվերապահորեն տնօրինում էր պետության ռազմական, քաղաքական և հոգևոր գործերը: Կեսարի իշխանությունը հենվում էր նրան նվիրված բանակի վրա: Նվաճված Գալլիայի և մյուս պրովինցիաների բնակչության որոշ խավերի հռոմեական քաղաքացիություն տալու շնորհիվ Կեսարը ուժեղ հենարան ուներ նաև այդ երկրներում:

Կեսարը կարևոր ձեռնարկումներ իրականացրեց նաև այլ ասպարեզներում: Հատվեց նոր

Հռոմեական Ծերակույտ. ծերակույտականների նիստ

դրամ, որը շուտով դարձավ Հռոմում դրամաշրջանառության միակ միջոցը: Իսկ **Ք.ա. 45 թ.** կատարվեց **տոմարի բարեփոխում**: Նախկին **լուսնային օրացույցը** փոխարինվեց **արևայինով:** Տարին, ըստ դրա, բաղկացած էր **365 և կես օրից**: Չորս տարին մեկ փետրվարին ավելացվում էր մեկ օր: **Հուլիոսյան օրացույցը** մնաց կիրառման մեջ ընդհուպ մինչև XX դարի սկզբները:

Կեսարը վարում էր հավասարակշիռ քաղաքականություն՝ ձգտելով նախապատվություն չտալ ո՛չ պոպուլյարներին, ո՛չ օպտիմատներին: Նա նույնիսկ թույլ տվեց Հռոմ վերադառնալ իր քաղաքական հակառակորդներին:

Կեսարը սկսեց նախապատրաստվել արշավանքի ընդդեմ պարթևների, սակայն չհասցրեց: Հռոմում լուրեր տարածվեցին այն մասին, որ **Կեսարը** պատրաստվում է իրեն արքա հռչակելու: **Ք.ա. 44 թ.** նա Ծերակույտի դահլիճում զոհ գնաց դավադրության:

Երկրորդ եռապետությունը: Կեսարի սպանությունից հետո սրվեցին հարաբերությունները նրա կողմնակիցների, որոնց գլխավորում էին **Անտոնիոսը** և **Լեպիդոսը**, և հակառակորդների միջև: Կեսարին սպանող ծերակույտականները փախան Հռոմից: Քաղաքական հակառակորդների միջև բախումներից հետո քաղաքական ասպարեզն անցավ Անտոնիոսին, Լեպիդոսին և Կեսարի ազգական ու որդեգիր Օկտավիոսին: Վերջինս այդուհետև սկսեց կոչվել **Գայոս Հուլիոս Կեսար Օկտավիանոս**: Այս երեքի միջև բանակցությունների արդյունքում **Ք.ա. 43 թ.** կնքվեց դաշինք Ծերակույտի դեմ համատեղ պայքարելու նպատակով, այսինքն՝ ստեղծվեց **Երկրորդ եռապետությունը**: Շուտով եռապետները մտան Հռոմ և իրենց հակառակորդների ջարդ կազմակերպեցին, որին զոհ գնացին հազարավոր մարդիկ:

Սակայն Իտալիայից դուրս դեպքերը զարգանում էին ի վնաս եռապետների: Պոմպեոսի որդին գրավել էր Սիցիլիան, Սարդինիան, Կորսիկան և փորձում էր շրջափակել Իտալիայի նավահանգիստները: Իսկ Բալկանյան թերակղզում և Սիրիայում խոշոր բանակներ էին հավաքել Կեսարին սպանող **Կասիոսը և Բրուտոսը**: Նրանք պատրաստվում էին ներխուժելու Իտալիա:

Ք.ա. 42 թ. Հունաստանում եռապետները հաղթեցին Կասիոսին և Բրուտոսին, որից հետո իրար մեջ բաժանեցին պրովինցիաները: Անտոնիոսին հասավ Արևելյան Միջերկրականը, Օկտավիանոսին՝ Գալլիան, Իբերիան և Իլիրիան, Լեպիդոսին՝ Աֆրիկան:

Որոշ ժամանակ անց Օկտավիանոսն ամրապնդեց իր իշխանությունը: Նա գրավեց Սիցիլիան, որից հետո ձերբակալեց Լեպիդոսին և իր ձեռքը վերցրեց նրա տիրույթները: **Ք.ա. 36 թ.** Օկտավիանոսը հռչակվեց ցմահ տրիբուն: Այդ նույն թվականին Անտոնիոսը ծանր պարտություն կրեց պարթևներից: Փաստորեն եռապետությունը տրոհվեց, և հասունանում էր բախում Օկտավիանոսի և Անտոնիոսի միջև: Օկտավիանոսը Իտալիայից վտարեց Անտոնիոսի կողմնակիցներին, իսկ Ծերակույտը նրան պատերազմ հայտարարեց:

Ք.ա. 31 թ. Ակցիումի հրվանդանի մոտ Անտոնիոսի նավատորմը պարտվեց, իսկ նրա ցամաքային զորքերն անցան Օկտավիանոսի կողմը: Անտոնիոսը և Կլեոպատրան ինքնասպանություն գործեցին: Եգիպտոսը վերածվեց Օկտավիանոսի անձնական տիրույթի: Սրանով ավարտվեցին քաղաքացիական պատերազմները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչը առիթ եղավ պոպուլյարների և օպտիմատների միջև պայքարի սրման համար: Ո՞վ հաղթեց այդ պայքարում:
2. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Սուլլայի դիկտատուրան:
3. Ինչպե՞ս ձևավորվեց Առաջին եռապետությունը, ովքե՞ր կազմեցին այն: Ինչո՞ւ Պոմպեոսի դիրքերն ամրապնդվեցին Իտալիայում:
4. Ինչպե՞ս ավարտվեց Կեսարի և Պոմպեոսի միջև հակամարտությունը: Ի՞նչ տիտղոսներ էր կրում Կեսարը: Ներկայացրե՛ք Կեսարի իրականացրած բարեփոխումները:
5. Ինչո՞ւ ստեղծվեց Երկրորդ եռապետությունը: Ի՞նչով ավարտվեցին քաղաքացիական պատերազմները Հռոմում:

ԳԼՈՒԽ Գ ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ազատ բնակչություն: Նորքարիդարյան հեղափոխության ավարտական փուլում պետականության ձևավորման հետ մեկտեղ արմատական փոփոխություններ տեղի ունեցան հասարակության սոցիալական կառուցվածքում: Դրա պատճառը գույքային և սոցիալական շերտավորումն էր: Պետական աշխատակազմի ձևավորումը, աշխատանքի բաժանումն ըստ բնագավառների (երկրագործություն, արհեստագործություն, ռազմական գործ և այլն) աստիճանաբար հանգեցրին սոցիալական խմբերի առաջ գալուն: Այդ գործընթացը անցել է մի շարք փուլեր, որոնցից յուրաքանչյուրին հատուկ էին զարգացման առանձնահատկություններ:

Ընդհուպ մինչև Ք.ա. I հազարամյակի երկրորդ կեսը թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում բնակչության շերտավորումը ընթանում էր չափազանց դանդաղ: Դեռևս վաղ պետականությունների փուլում ձևավորված սոցիալական հարաբերությունների պահպանողական բնույթը շատ դեպքերում փոփոխությունների չենթարկվեց նաև հետագայում:

Վաղ պետականությունների (քաղաք–պետություն, նոմ) սոցիալական հիմքը կազմում էր **տոհմային համայնքը:** Վերջինս ինքնակառավարվող օղակ էր, որտեղ սովորութային ուժով գործում էր հավասարության սկզբունքը: Այն արտահայտվում էր համայնքի (գյուղական բնակավայր) ողջ հողային պաշարի ընդհանուր սեփականության մեջ: Հողը պատկանում էր բոլորին, և ոչ ոք այն չէր կարող վաճառել կամ նվիրել, նաև մասնատել իր ժառանգների միջև: Սկզբնապես նույնիսկ հողը յուրաքանչյուր երկրագործական տարվա սկզբին վիճակահանությամբ տրվում էր համայնքի անդամին : Այդպիսին էր իրավիճակը Միջագետքում, Եգիպտոսում, Հայաստանում, հունական պոլիսներում «Հոմերոսյան» դարաշրջանում: Նույնիսկ Սպարտայում հողը տրվում էր սպարտիատին ոչ որպես սեփականություն, այլ օգտագործման նպատակով: Ինչպես հողը, այնպես էլ նրա վրա աշխատող հելոտները պատկանում էին պետությանը:

Հողի նկատմամբ ընդհանուր սեփականության գաղափարը գերիշխող էր գրեթե բոլոր հին հասարակություններում: Պետությունների ամրապնդման, արքայական իշխանության հզորացման հետ մեկտեղ տեղի էր ունենում համայնական հարաբերությունների նշանակալից վերափոխում: Դա հատկապես նկատելի էր արևելյան հասարակություններում: Արքայական իշխանության ամրապնդումը, պետությունների խոշորացումը և խոշոր հողատիրության հանդես գալը նպաստեցին համայնքի իրավունքների կրճատմանը: Համայնքը սկսում էր ավելի մեծ կախվածության մեջ ընկնել իր տիրոջից (արքա, տոհմային ազնվական, տաճար): Այս երևույթը հատուկ էր արևելյան պետություններին և ոչ բնութագրական՝ հունահռոմեական աշխարհին ընդհուպ մինչև հելլենիստական դարաշրջան և Հռոմեական հանրապետության վերջին փուլ:

Իրավական տեսանկյունից **պետության լիիրավ անդամ** (քաղաքացի) էր համարվում ինչպես արևելքում, այնպես էլ արևմուտքում, **համայնքի անդամը,** ով ուներ իր մասնաբաժինը համայնական հողերից: Հենց այդ էր նրան իրավունք տալիս մասնակցելու ժողովրդական ժողովին և աշխարհազորին, նաև պետության քաղաքական կյանքին:

Ինչ–ինչ պատճառներով հողի կորուստը կարող էր հանգեցնել քաղաքացիական իրավունքների կորստյան: Օրինակ՝ Պելոպոնեսյան պատերազմների ընթացքում և դրանից հետո սկսված քաղաքական և տնտեսական ճգնաժամի պայմաններում պոլիսներում տասնյակ հազարավոր քաղաքացիներ զրկվեցին հողից: Դրա հետևանքով վտանգվեց նրանց քաղաքացիության հարցը, ինչը պատճառ դարձավ սոցիալական ընդվզումների:

Հողազրկումը և երբեմն դրան ուղեկցող՝ պարտքի դիմաց ստրկացման երևույթը, որ

ի հայտ էր գալիս զույքային շերտավորման ընթացքում, կարող էր լրջորեն վնասել պետությանը: Այդպիսի երևույթներ են վկայված Եգիպտոսի Միջին թագավորությունում, Աթենական պետությունում մինչև Սոլոնի կառավարումը և այլն: Վերջինիս կողմից աթենացու ստրկացման վրա դրված արգելքը լիովին արտացոլում է համայնքի անխախտելիության սկզբունքի կարևորությունը հնագույն հասարակությունների գոյության համար:

Համայնքի կայունության պահպանման նպատակով շատ երկրներում զինծառայության էին վերցվում օտարերկրացիներ: Ստեղծվում էր վարձու բանակ, որը պետք է պաշտպաներ սեփական բնակչությանը՝ համայնքի անդամին: Վերջինիս հիմնական գործը պետք է լիներ պետության տնտեսական և քաղաքական հիմքի՝ համայնքի պահպանումը:

Կախյալ բնակչություն: Արդեն վաղ պետականություններում իրավահավասար բնակչության կողքին գոյություն ունեին կախվածության տարբեր աստիճանի մարդկանց խմբեր: Դրանք առաջին հերթին ստրուկներն էին, որոնց գոյացման աղբյուրը, չհաշված որոշ քանակությամբ պարտային ստրուկներին, պատերազմներն էին և առք ու վաճառքը: Ստրուկներն օգտագործվում էին պետական նշանակության խոշոր շինարարական աշխատանքներում, ինչպես նաև օժանդակ ոլորտներում (տնային սպասավորներ, արհեստավորներ և այլն): Ստրկական աշխատանքի դերը պետության տնտեսական հիմքը կազմող երկրագործության մեջ խիստ սահմանափակ էր: Բացառություն է կազմում Հռոմում խոշոր տնտեսություններում ստրկական աշխատանքի կիրառումը՝ Ք.ա. III դ. սկսված:

Ստրուկներից զատ, հատկապես արևելյան խոշոր պետություններում հաճախակի էր կիրառվում հարևան երկրներից բնակչության լայն զանգվածների տեղահանության քաղաքականությունը: Այն իրականացնում էին խեթերը, ասորեստանցիները, եգիպտացիները, հայերը: Դրա նպատակն էր բնակեցնել սեփական պետության անմարդաբնակ կամ սակավաբնակ շրջանները կամ քաղաքները: Սովորաբար դրանք երկրագործներ և հմուտ արհեստավորներ էին, որոնց կարիքը խիստ զգացվում էր: Վերաբնակիչները հիմնականում բնակեցվում էին պետական, այլ ոչ մասնավոր անձանց պատկանող տարածքներում: Վերաբնակիչները անձնապես ազատ էին, սակայն ինքնակամ տեղաշարժվելու իրավունք չունեին:

Կախյալ բնակչության հաջորդ խումբը կազմում էին որևէ պատճառով այլ պետություն տեղափոխված անձինք: Սրանք նույնպես անձնական ազատություն և սեփականության իրավունք ունեին, սակայն զուրկ էին պետության քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքից (օրինակ՝ **մետոյկոսները՝** Աթենքում, **պլեբեյները՝** վաղ Հռոմում):

Սեփական–օտար հարաբերակցությունը: Բոլոր վաղ հասարակություններին բնորոշ էր պետության տարածքում սեփական և օտար բնակչության ընդգծված հակադրությունը, որը ծագում էր դեռևս տոհմատիրական դարաշրջանից: Այն լիուլի վկայված է բոլոր պետություններում և իր արտացոլումն է գտել արևելյան և արևմտյան փիլիսոփաների և այլ հեղինակների աշխատություններում:

Այդպիսին էր մասնավորապես, **Չինաստանում** փիլիսոփա **Կոնֆուցիոսի** կողմից ձևակերպված ուսմունքը: Ըստ դրա՝ մարդիկ բաժանվում էին երկու խմբի: Առաջին խումբը կազմում էին նրանք, ովքեր պետք է կառավարեին, իսկ մյուս խումբը պետք է ծառայեր: Չնայած ասվածը վերաբերում է սեփական բնակչության ներսում ձևավորված շերտավորմանը, սակայն իր ակունքներով հասնում է շատ ավելի վաղ դարաշրջան: Այդպիսին էր **Հնդկաստանում** արիացիների հայտնվելուց հետո ստեղծված **կաստայական հասարակությունը:** Նվաճող արիացիները կտրուկ հակադրվում էին տեղական բնակչությանը, որը բացարձակապես իրավազուրկ էր: Նույնը՝ նաև հին **Սպարտայում,** որտեղ միայն սպարտիատներն էին համարվում պետության լիիրավ քաղաքացիներ: Հույների կողմից բոլոր օտարներին տրված «**բարբարոս**» հավաքական անվանումը այդ մտայնության դրսևորումն է: Նույնը՝ նաև Իտալիայում, որտեղ հռոմեացիները միայն տևական պայքարից հետո ստիպված եղան հռոմեական քաղաքացիություն շնորհել իրենց լեզվակից իտալիկներին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր էին վաղ պետականությունների սոցիալական հենարանը: Ինչի՞ վրա էր խարսխված ազատ բնակչության իրավահավասարությունը: Վերհանե՛ք համայնքի դերը հին հասարակություններում:
2. Ովքե՞ր էին համարվում տվյալ պետության քաղաքացիներ: Ի՞նչ առանձնահատկություններ կարող եք նշել Արևելքի ու Արևմուտքի երկրների միջև այս տեսանկյունից:
3. Ներկայացրե՛ք կախյալ բնակչության խմբերը հին հասարակություններում: Ի՞նչ դեր էին խաղում ստրուկները Հին աշխարհում:
4. Ինչո՞ւ էր վաղ հասարակություններին բնորոշ սեփականի և օտարի խիստ հակադրությունը: Բերե՛ք այդպիսի հակադրության պատմական օրինակներ:

§ 2. ԳԻՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիրը: Գիրը քաղաքակրթության կայացման կարևորագույն բաղադրիչն է, որը ստեղծվեց Ք.ա. IV հազարամյակում: Որոշակի պատկերների միջոցով մտքի փոխանցումը համակարգված տեսք ընդունեց առաջին պետություններում: Հին Արևելքում գոյություն ունեին գրի մի քանի կենտրոններ՝ Շումեր, Էլամ, Եգիպտոս, Հնդկաստան և Չինաստան:

Միջագետքում հնագույն գրահամակարգը **նախաշումերական պատկերային գիրն էր**: Այն ուներ մոտ 2000 պատկերանշան, որոնց հիմնական մասը **գաղափարագրեր** են: Յուրաքանչյուր պատկեր արտահայտում էր մեկ բառիմաստ կամ գաղափար: Առաջին պատկերագիր տեքստերը կազմվել են **Ք.ա. մոտ 3200 թ.**: Պահպանված տեքստերի ընդհանուր քանակը հասնում է ավելի քան 6 հազարի:

Շումերական պատկերագիրն ի վիճակի չէր արտահայտելու լեզվի բառերի ողջ հնչյունական կազմը: Այդ պատճառով Ք.ա. 2700–2500 թթ. ընթացքում պատկերային գիրն ապրեց բովանդակային և արտաքին փոփոխություններ: Նշաններն աստիճանաբար պարզեցվեցին, և քանի որ տեքստերը հիմնականում գրում էին եղեգնյա ձողիկներով հում կավե աղյուսակների վրա, որոնք թողնում էին սեպաձև հետք, պարզեցված պատկերանշանային գիրը ստացավ **սեպագիր** կամ **բևեռագիր** անվանումը: Այժմ արդեն յուրաքանչյուր սեպախումբ, գաղափարագիր արժեքից բացի, արտահայտում էր առանձին հնչյուններ: Նոր սեպագիրը թույլ էր տալիս լիարժեք արտահայտելու լեզվի հնչյունական կազմը:

Ք.ա. III հազարամյակի երկրորդ կեսից շումերերենն աստիճանաբար իր տեղը սկսեց զիջել աքքադերենին և հետագայում դադարեց խոսակցական լեզու լինելուց: Շումերերենը պահպանվեց որպես դպրության լեզու: Աքքադերենը դարձավ տիրապետող, ապա և միջազգային լեզու: Պատահական չէ, որ աքքադական սեպագիրն ունեցավ աննախադեպ լայն տարածում՝ դուրս գալով Միջագետքի սահմաններից: Այս գրահամակարգն օգտագործվում էր Սիրիայում,

Շումերական արծանագրություն

Էլամական արծանագրություն

Փոքր Ասիայում, Իրանական բարձրավանդակում, Հայկական լեռնաշխարհում:

Աքքադական սեպագիրն ուներ առավել կիրառական շուրջ 600 սեպանշան, որոնք արտահայտում էին մոտ 3000 վանկ և բառ: Այս գրահամակարգի հիման վրա հետագայում ձևավորվեցին ասորեստանյան, բաբելոնյան, խեթական, խուռիական, էլամական, ուրարտական, հին պարսկական սեպագիր գրահամակարգերը: Իսկ Ուգարիտում սեպագրի հիման վրա ստեղծվեց հնչյունային գիր՝ բաղկացած 31 սեպանշաններից:

Սեպագիրը բարդ գրահամակարգ էր, պահանջում էր տևական ուսուցում, և գրիչները պետք է քաջ տիրապետեին սեպանշանների բազմիմաստությանը, որպեսզի կարողանային օգտվել գրից: Իսկ սեպագրին տիրապետել կարելի էր՝ սովորելով հատուկ դպրոցներում՝ **արձանագրության տներում**: Այստեղ, բացի գրից, սովորեցնում էին շումերերեն, աքքադերեն, վայելչագրություն և այլն: Միջագետքյան տարբեր կենտրոններից հայտնաբերվել են հազարավոր տեքստեր ընդգրկող ամբողջ արխիվներ:

Եգիպտոսում ստեղծվեց գրային մեկ այլ համակարգ՝ **հիերոգլիֆային գիրը,** որի հնագույն օրինակները Ք.ա. XXXI դարով են թվագրվում:

Հին եգիպտական գիրը հնչյունագաղափարագրային համակարգ է: Այն ուներ առավել կիրառական մոտ 700 պատկերանշան, որոնց թիվը հետագայում հասավ շուրջ 5000–ի: Գրության մեջ ձայնավորները չէին նշվում, այդ պատճառով հատուկ անունների և բառերի ճշգրիտ հնչողությունը դեռևս հայտնի չէ:

Հնագույն գրահամակարգերից է նաև **չինական հիերոգլիֆային գիրը,** որն օգտագործվում է մինչ օրս: Չինական գիրը նույնպես հնչյունագաղափարագրային համակարգ է: Այն լայն տարածում ստացավ Ք.ա. XVI–XI դդ.: Մեզ են հասել տասնյակ հազարավոր տեքստեր՝ գրված բրոնզե և ոսկրե իրերի վրա: **Չինաստանում** թղթի արտադրության և տպագրության ի հայտ գալով հայտնվեցին **տպագիր գրքեր:** Չինական գիրը վերջնականապես կանոնակարգվեց Ցին հարստության օրոք: Չինական գիրը հսկայական ազդեցություն ունեցավ նաև հարևան երկրների՝ Ճապոնիայի և Կորեայի հիերոգլիֆային գրահամակարգերի վրա: Չինացիները գրում էին վերից վար՝ սկսած աջ կողմից, թեև հանդիպում են նաև գրության այլ ուղղություններ:

Հնդկաստանում ևս գիրը անցել է զարգացման երկարատև փուլ: Ք.ա. III հազարամյակում Մոհենջոդարոյի և Խարապպայի մշակույթի կրողներն ունեին պատկերային գիր, որը բաղկացած էր շուրջ 400 նշաններից: Առ այսօր այդ գիրը վերծանված չէ:

Արդեն Ք.ա. I հազարամյակում Հնդկաստանում ձևավորվում է այբբենական գիրը՝ **բրահմին**: Բրահմին միասնական գիր չէր, այլ ուներ տասնյակ տեղական տարբերակներ: Մաուրյան հարստության շրջանում արամեական այբուբենի ազդեցության տակ բրահմին կատարելագործվում է և հետագայում լայն կիրառություն ստանում:

Սեպագրից, եգիպտական և չինական հիերոգլիֆային գրից զատ Հին Արևելքում կիրառվել են նաև այլ գրահամակարգեր՝ **խեթա–լուվիական հիերոգլիֆային** գիրը, **արամեական** և **փյունիկյան հնչյունագիրը**, **նախաէլամական պատկերային** և **գծային էլամերեն** գրերը և այլն:

Իսկ Արևելյան Միջերկրականում նախքան այբբենական գրի ստեղծումը՝ Ք.ա. II հազարամյակում, ստեղծվեց վանկագիր–հնչյունագիր գիրը՝ այսպես կոչված **գծային գիրը,** որն ուներ երկու տարբերակ՝ **Ա** և **Բ:** Սրանցից երկրորդը ներկայացնում էր հունարենի վաղ բարբառներից մեկը, իսկ առաջինի լեզուն առ այսօր պարզ չէ: Գծային Ա գիրը ստեղծվել և կիրառվել է մինոսյան դարաշրջանի Կրետեում:

Արդեն **Ք.ա. I հազարամյակի սկզբներին Հունաստան** մուտք գործեց **այբբենական գիրը,** որը ձևավորվեց Արևելամիջերկրածովյան ավազանի երկրներում կիրառվող գրային համակարգերի ազդեցության տակ: Փոքր Ասիայի հունական պոլիսների սերտ կապերը մի կողմից՝ Փոյուգիայի, մյուս կողմից՝ փյունիկեցիների հետ նպաստեցին հունական աշխարհում այբբենական գրի ներդրմանը:

Հին Իտալիայում Ք.ա. I հազարամյակի սկզբներին սկսեց լայնորեն կիրառվել էտրուսկյան այբբենական գիրը: Այն հետագայում փոխ առան հռոմեացիները: Դա էլ դարձավ լատինական այբուբենի հիմքը:

Գրականությունը: Գեղարվեստական ժանրի ստեղծագործությունների հիմքը դրվել է դեռևս վաղ եգիպտական և շումերական դարաշրջաններում:

Եգիպտական գրականության հնագույն օրինակները թվագրվում են Հին թագավորության դարաշրջանով: Եգիպտական գրականության ժանրերից են առասպելը, օրհներգը, աղոթքը, հմայությունը, հեքիաթը, պատմվածքը, ինքնա-

կենսագրությունը, սիրային քնարերգությունը, խրատը և այլն:

Շումերական դարաշրջանից ևս պահպանվել են գեղարվեստական ժանրի հարյուրավոր նմուշներ: Դրանց շարքում կան առասպելներ, ինչպիսին է, օրինակ, շումերական աշխարհաստեղծման առասպելը, վիպերգեր և հերոսապատումներ, աղոթքներ և աստվածներին ուղղված օրհներգեր, արքաների փառաբանումներ, սիրային երգեր, ինքնակենսագրություններ, առակներ, ասացվածքներ և անգամ օրորոցային երգեր: Վերոհիշյալ ստեղծագործությունները հիմնականում գրված են չափածո:

Շումերական գրականության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Ուրուկի արքա **Գիլգամեշի** կյանքին նվիրված ընդարձակ վիպական պոեմը: Դրա ազդեցությունը մեծ էր հինարևելյան հասարակությունների վրա և լայն տարածում գտավ նաև Միջագետքից դուրս:

Ք.ա. II հազ. երկրորդ կեսից սկսվում է աքքադերեն գրականության ծնունդը: Այդպիսի ստեղծագործություններից էին բաբելոնյան աշխարհաստեղծման առասպելը, գուշակային, աստղագիտական տեքստերի ժողովածուն և այլն: Ի հայտ են գալիս աստվածներին նվիրված չափածո քնարական բանաստեղծություններ, աղոթքներ: Գրականության ասպարեզում նորույթ էր աստվածաբանական թեմաներով երկխոսությունների կամ մենախոսությունների հանդես գալը:

Հունահռոմեական աշխարհում գեղարվեստական գրականության սկիզբը թվագրվում է Ք.ա. VIII դարով ի դեմս **Հոմերոսի** «**Իլիական**» և «**Ոդիսական**» էպիկական պոեմների: Սրանք **Հեսիոդոսի** ստեղծագործությունների հետ միասին («**Թեոգոնիա**», «**Աշխատանք և օրեր**») հունական գրականության հնագույն նմուշներն են:

Հունական գրականությունն ուներ իր առանձնահատկությունը՝ պայմանավորված թատրոնի գոյությամբ: Գրականությունն ու թատրոնը կազմում էին մի ամբողջություն, և գրականությունը մասամբ կոչված էր սպասարկելու թատրոնին: Ըստ այդմ՝ առաջնային դեր ստացան **ողբերգությունն** ու **կատակերգությունը**:

Հին հունական ողբերգության հիմնադիրը **Էսքիլեսն** է, որին հետևեցին **Սոֆոկլեսը** և **Էվրիպիդեսը**: Կատակերգությունը ծնունդ առավ Ք.ա. VI–Vդդ.: Քաղաքական կատակերգության հեղինակը **Արիստոֆանեսն էր**:

Հին հունական արձակն ի հայտ եկավ Ք.ա. V–IV դարերում ի դեմս պատմագրության (**Հերոդոտոս**, **Թուկիդիդես**, **Քսենոփոն**), քանի որ պատմությունը հնում ընկալվում էր իբրև գեղարվեստական ստեղծագործության ժանր: Գեղարվեստական արձակը ներկայանում էր նաև փիլիսոփայական երկխոսության (**Պլատոն**, **Արիստոտել**), հռետորական արվեստի և ճարտասանության տեսքով (**Լիսիաս**, **Դեմոսթենես**, **Իսոկրատես**):

Հունաստանի նվաճումը նախ Մակեդոնիայի, ապա Հռոմի կողմից հունական գրականության անկման պատճառ դարձավ: Գրականության մեջ սկսեցին գերիշխել ընտանեկան և կենցաղային թեմաները: Այս և սիրային թեմաներով ծնունդ առավ, այսպես կոչված, **Նոր կատակերգությունը** (**Մենանդրոս**):

Իր բազմազանությամբ հունականին չէր զիջում հռոմեական գրականությունը, թեև այն կրում էր հունական գրականության մեծ ազդեցությունը: Հռոմեական գրականությունը վկայված է Ք.ա. IVդ. վերջերից: Հիմնական ժանրերից էին պոեմը (**Վերգիլիոս**), ողբերգությունը (**Սենեկա Կրտսեր**), կատակերգությունը (**Պլավտոս**, **Տերենտիոս**), պոեզիան (**Հորացիոս**, **Մանիլիոս**), արձակը (**Կիկերոն**, **Սալյուստիոս**, **Պետրոնիոս**, **Սենեկա Ավագ**) և այլն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է ստեղծվել գիրը: Որո՞նք էին գրի կենտրոնները Հին Արևելքում: Ի՞նչ տարբերություն կար շումերական պատկերագրի և սեպագրի միջև: Որտե՞ղ էր տարածված աքքադական գրահամակարգը:
2. Ո՞ր դարին են պատկանում հնագույն հիերոգլիֆային գրերը, և մինչև ե՞րբ դրանք գոյատևեցին: Քանի՞ պատկերանշան ուներ այն: Հին չինական գիրը ե՞րբ վերջնականապես կանոնակարգվեց: Նշե՛ք հնդկական գրի առանձնահատկությունները:
3. Ներկայացրե՛ք Հին աշխարհի գրականության հիմնական ուղղությունները, նշանավոր ստեղծագործությունները և հեղինակներին:

§3. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Բժշկագիտությունը: Բժշկագիտությունը հին քաղաքակրթություններում գիտության առավել զարգացած ուղղություններից էր: Սակայն դրան զուգահեռ ամենուրեք լայնորեն տարածված էր գերբնական միջամտությամբ՝ մոգությամբ բուժումը:

Եգիպտացիները քաջածանոթ էին մարդու մարմնի ներքին կառուցվածքին, ինչին հասել էին մարդու կամ կենդանիների մարմինների **զմռսման (մումիացման)** շնորհիվ: Բժշկագիտական գրվածքներում միայն անատոմիային վերաբերող տերմինների թիվն անցնում է 200–ից: Եգիպտական տաճարներին կից գործում էին «Կյանքի տներ», որոնցում ձեռք էին բերում գիտելիքներ բժշկությունից:

Բժշկության մեջ օգտագործում էին տարբեր բույսեր և պտուղներ, հանքային աղեր, կենդանիների ոսկորներ և այլն:

Միջագետքում ևս բժշկությունն ուներ զարգացման որոշակի մակարդակ, ինչի վկայությունը բժշկագիտական մեծաթիվ տեքստերն են: Միջագետքի բնակիչները տարբերակում էին բնական պատճառներից ծագած հիվանդությունները որևէ արարքի համար որպես աստվածային պատժի հետևանք համարվող հիվանդություններից: Որպես բուժման միջոց առաջարկվում էին ինչպես գիտական, այնպես էլ մոգական բուժամիջոցներ: Հաճախ հիվանդի բուժմանը բժիշկն ու մոգը ձեռնամուխ էին լինում համատեղ: Հիվանդությունների տարածման կանխարգելման նպատակով հիվանդը մեկուսացվում էր: Որոշ դեպքերում հիվանդության օջախից այլ վայրեր էին տեղափոխում բնակչության մեծաթիվ զանգվածներ:

Ք.ա. VII դ. սկսած՝ Հունաստանում ձևավորվեցին բժշկագիտական դպրոցներ: Առաջին բժշկագիտական աշխատությունը հեղինակել է **Ալկմայոնը**: Նրան հաջորդած **Էմպեդոկլեսը**, **Հիպոկրատեսը** և այլք հսկայական ձեքբերումներ արձանագրեցին բժշկագիտության բնագավառում: Հիպոկրատեսը մշակեց ախտորոշագիտության կարևոր հարցեր, ստեղծեց ուսմունք կանխագուշակության մասին և համարվում է բժշկական աշխարհագրության նախահայրը:

Հունական բժշկագիտական միտքը մեծ ազդեցություն ունեցավ հռոմեական բժշկության վրա: Բժշկագիտությունը Հռոմում ունեցավ մեծ նվաճումներ: Հռոմեացիները սկսեցին օգտագործել նոր դեղամիջոցներ և վիրահատական գործիքներ: Նրանք առկա բուժման համար առանձնացրեցին հատուկ կառույցներ՝ հիվանդանոցներ (հոսպիտալներ): Հռոմեացիները մեծ ուշադրություն էին դարձնում բնակչության առողջապահության խնդիրներին:

Մաթեմատիկան և աստղագիտությունը: Մաթեմատիկայի զարգացմանը նպաստեց կոթողային ճարտարապետությունը: Այդպիսի շինությունների կառուցումը պահանջում էր բարդ հաշվարկներ:

Հին եգիպտացիներին հայտնի էին **թվաբանությունը**, **հանրահաշիվը**, **երկրաչափությունը** և **եռանկյունաչափությունը**: Եգիպտացի մաթեմատիկոսները կազմում էին զանազան խնդիրներ պարունակող հանրահաշվի տեքստեր, դպրոցական գրառումներ և այլն: Նրանք առաջինը օգտագործեցին հաշվարկի տասական համակարգը և կոտորակը:

Հին եգիպտացիները մեծ ձեռքբերումներ ունեն օրացույցի և աստղագիտության բնագավառներում: Նրանք հետևում էին երկնային մարմինների շարժմանը, տարին բաժանում հատվածների: Եգիպտացիների տարին ուներ երեք երկրագործական եղանակ՝ վարարում, հունձ, երաշտ՝ ընդհանուրը 12 ամիս՝ յուրաքանչյուրը 30–ական օրով, որին վերջում գումարում էին հավելյալ 5 օր: Ամիսը բաժանվում էր երեք «շաբաթների»՝ յուրաքանչյուրը 10–ական օրից:

Միջագետքյան մաթեմատիկան նույնպես բավական բարձր աստիճանի էր հասել: Նրանք ծանոթ էին բազմապատկմանը, հակադարձ մեծություններին, թվերի քառակուսիներին և խորանարդներին և այլն: Մաթեմատիկական տեքստերի մի մասը պարունակում է աշակերտներին ուղղված խնդիրներ:

Ընդհանուր առմամբ, սակայն, մաթեմատիկական գիտելիքները ինչպես Եգիպտոսում, այնպես էլ Միջագետքում ունեին էմպիրիկ, կիրառական բնույթ և չհասան տեսական ընդհանրացումների մակարդակի:

Մաթեմատիկայի և ընդհանրապես բնագիտության զարգացումը Հունաստանում կապված է **միլեթյան դպրոցի** հետ, որի հիմնադիրը **Թալես Միլեթցին էր** (Ք.ա. 624–548): Մաթեմատիկայի, երկրաչափության, աշխարհագրու-

թյան, աստղագիտության բնագավառում խոշոր ձեռքբերումներ ունեցան **Պյութագորասը**, **Դեմոկրիտը**, **Անաքսիմենեսը** և այլք: Հունական աշխարհում մաթեմատիկան ձևավորվեց որպես համակարգված գիտություն: Նրանց ձեռքբերումների շարքում են առաջին իռացիոնալ թվերի ստացումը, շրջանի քառակուսացման, անկյան եռատման, խորանարդի կրկնապատկման խնդիրները և այլն:

Հաջողություններ արձանագրվեցին նաև Հնդկաստանում և Չինաստանում: Հնդիկ գիտնականները ստեղծեցին իռացիոնալ և բացասական թվերով հանրահաշիվը: Նրանց ձեռքբերումներից էր արդի տասական դիրքային թվարկության համակարգը՝ իր թվանշաններով, որոնք սովորաբար հայտնի են «արաբական» անվամբ:

Մաթեմատիկայի հետ անխզելիորեն կապված էր աստղագիտությունը, որի համար գիտնականները կիրառում էին մաթեմատիկական մեթոդներ: Բաբելոնյան աստղագետները գրեթե ճշգրիտ հաշվարկել են տարվա տևողությունը՝ 365 օր, 5 ժամ, 41 րոպե և 4,16 վայրկյան, ինչն ընդամենը 7 րոպե և 17 վայրկյանով էր սխալ: Նրանք կանոնավոր հետևում էին երկնային մարմինների շարժմանը, Արևի և Լուսնի խավարումներին: Բաբելոնում և այլ քաղաքներում կային աստղագիտական դպրոցներ:

Հունաստանում աստղագիտության խոշոր ներկայացուցիչներն էին **Էրատոսթենեսը**, **Արիստոտելը** և այլք: **Հիպարքոսը** (Ք.ա. II դ.) կազմեց աստղացուցակ, որը պարունակում է շուրջ հազար աստղերի երկնային դիրքաթվերը (կոորդինատները) և պայծառությունների գնահատականները: Այն օգտագործվում է նաև այսօր:

Հռոմեական շրջանի ճանաչված աստղագետ էր **Պտղոմեոսը** (Ք.հ. IIդ.): Նա զարգացրեց տիեզերքի երկրակենտրոն կառուցվածքի մասին տեսությունը: Մինչև XVI դարը այն գերիշխում էր գիտության մեջ:

Իրավական միտքը: Գրավոր օրենքներ ստեղծելու փորձեր Միջագետքում կատարվեցին դեռ շումերական դարաշրջանում, սակայն դրա բարձրակետը Բաբելոնի արքա Համմուրապիի օրենսգիրքն էր: Օրենքները վերաբերում էին կյանքի ամենատարբեր բնագավառներին, պատիժներ էին սահմանում բռնության, սեփականության իրավունքի խախտման, կեղծիքի և խարդախության համար և այլն:

Հունաստանում իրավունքի պատմության կարևոր դրվագներից է Ք.ա. VII դ. **Դրակոնի** կողմից իրականացված միջոցառումը, երբ Աթենքում գրի առնվեցին օրենքները: Մինչ այդ պահը Աթենքում, ինչպես նաև ողջ Հունաստանում առաջնորդվում էին **սովորութային իրավունքի** կանոններով: Դրակոնի օրենքներով վերացվեց արյան վրեժը, սահմանազատվեց կանխամտածված սպանությունը ոչ կանխամտածվածից, խստորեն սահմանվեց մասնավոր սեփականության իրավունքը: Դրակոնի օրենքները հետո վերաշարադրվեցին Աթենքի արքոնտ **Սոլոնի** կողմից: Նրա կարևոր բարեփոխումներից էր նաև **ատենական՝ների դատարանի** ստեղծումը:

Հին Հռոմում կար իրավունքի ավելի զարգացած համակարգ: Հռոմեական իրավունքի սկիզբը **Տասներկու տախտակների** օրենքներն են (Ք.ա. 450–449 թթ.): Դրանք վերաբերում են դատարանակազմությանը, քրեական, քաղաքացիական և ընտանեկան իրավունքին, մասնավոր սեփականությանը և այլն:

Հռոմեական իրավունքը ստորաբաժանվում է **հանրայինի** և **մասնավորի**: Մասնավոր իրավունքի հիման վրա ձևավորվեց **քաղաքացիական իրավունքը**: Դրա հիմնական հասկացություններից հայտնի են սեփականության իրավունքը, պարտավորությունների իրավունքը, ժառանգման իրավունքը և այլն:

Հռոմեական իրավական մտքի ձեռքբերումներից էր իրավունքի՝ որպես առանձին գիտության սահմանումը և իրավաբանի հաստատության ստեղծումը: Արդի իրավագիտության բազմաթիվ տերմիններ և հասկացություններ, ինչպես նաև դատարանում երդվելը ժառանգվել են հռոմեական դարաշրջանից:

Փիլիսոփայություն և պատմագիտություն: Փիլիսոփայական մտքի ձևավորման ասպարեզում մեծ է հունական քաղաքակրթության դերը: Այստեղ ներկայացված էին տարբեր փիլիսոփայական ուղղություններ:

Առաջինը **միլեթյան դպրոցն էր** (Ք.ա. VI դ.), որի հիմնադիրն էր **Թալես Միլեթցին**: Սրանք աշխարհի նյութական նախահիմք էին համարում որևէ տարր՝ **ջուրը**, **օդը** կամ **ապեյրոնը** (անվերջ, անորոշ սկզբնանյութ):

Հաջորդը **Պյութագորասի** տեսությունն էր (Ք.ա. VI դ.), ըստ որի՝ բոլոր իրերի կեցության սկզբունքը **թիվն** էր: Թվի շնորհիվ է աշխարհն ընկալվում որպես օրինաչափություն, տիեզերական կարգուկանոնի հիմք:

Պլատոնը Սոկրատեսի համընդհանուր բա-

նականության սկզբունքը վերափոխեց **օբյեկտիվ իդեալիզմի** ուսմունքի: Պլատոնը գաղափարները հռչակեց հավերժական, գերագույն գոյեր: Գլխավորը «բարիքի գաղափարն է», որից ներքև են մյուս գաղափարները, իսկ զգայական և նյութական աշխարհը գաղափարների ստվերներն են:

Պլատոնի աշակերտ **Արիստոտելի** գոյաբանական ուսմունքը տատանվում է իդեալիզմի և մատերիալիզմի միջև:

Հռոմեական փիլիսոփայությունը գերազանցապես զարգանում էր հունականի ազդեցության պայմաններում:

Փիլիսոփայության պես, պատմագիտական միտքը առավել մեծ զարգացում ապրեց հունահռոմեական աշխարհում:

Հունաստանում պատմական բնույթի առաջին գործերը գրվել են Ք.ա. VI–Vդդ. **լոգոգրափոսների** կողմից: Նրանք ներկայացնում էին իրենց քաղաքների, առասպելական հերոսների մասին տեղեկություններ: Լոգոգրափոսներից հայտնի է **Հեկատեոս Միլեթցին** (Ք.ա. 546–480 թթ.):

Պատմահայր **Հերոդոտոսը** (Ք.ա. 485–425 թթ.) հիմք դրեց ընդհանրացնող ուսումնասիրություններին: Նրա «**Պատմության**» մեջ, հույն–պարսկական պատերազմների հետ մեկտեղ ներկայացվում են տեղեկություններ տարբեր երկրների պատմության մասին: Հետագայի պատմիչների աշխատությունները նվիրված էին համահունական նշանակության իրադարձություններին:

Վաղ հռոմեական պատմագրությունը ձևավորվեց **տարեգրությունների** հիման վրա: Միայն Ք.ա. II դարից է սկսվում բուն հռոմեական պատմագրության ծնունդը, որի ձևավորման վրա մեծ էր հունական ազդեցությունը: Հռոմում գործում էին շատ հույն պատմագիրներ՝ **Պոլիբիոսը**, **Դիոդորոս Սիկիլիացին, Ապիանոսը** և այլք:

Հռոմեացի պատմագիրներից խոշոր ներդրում ունեն **Տիտոս Լիվիոսը**, **Տերենտիոս Վառոնը**, **Սալյուստիոսը**, **Պոմպեոս Տրոգոսը** և այլք:

Բացի ընդհանուր պատմագիտական ստեղծագործություններից, հանդես են գալիս պատմահուշագրական (**Հուլիոս Կեսար**) և պատմակենսագրական ժանրերը (**Պլուտարքոս**, **Սվետոնիոս**):

Հարցեր և առաջադրանքներ

1. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ բժշկագիտությունը Եգիպտոսում բարձր մակարդակի հասավ: Բուժման ի՞նչ ձևեր էին տարածված Եգիպտոսում, բացի գիտական բժշկությունից: Ի՞նչ է հայտնի Միջագետքի և հունահռոմեական աշխարհի բժշկության մասին:
2. Մաթեմատիկայի ո՞ր ճյուղերին էին ծանոթ եգիպտացիները, միջագետքցիները, հույները: Ի՞նչ ձեռքբերումներ ունեին եգիպտացիները օրացույցի և աստղագիտության բնագավառներում:
3. Ե՞րբ է կազմվել պահպանված հնագույն օրենքների ժողովածուն: Ո՞ր բնագավառներին էին վերաբերում օրենքները: Ներկայացրե՛ք հունական և հռոմեական իրավունքի նվաճումները:
4. Ի՞նչ ձեռքբերումներ ունեցան հունական և հռոմեական փիլիսոփայությունն ու պատմագիտությունը:

§ 4. ԿՐՈՆ

Արևելքի կրոնական համակարգերը: Կրոնական հավատալիքները ձևավորվել են որպես մարդու կողմից բնության երևույթների ընկալման արդյունք: Պետականությունների հանդես գալու հետ միաժամանակ մարդու ստեղծած ոգիները վերածվում են հստակ գործառույթներով օժտված աստվածների: Պետությունների ամրապնդման փուլում աստվածները միավորվում են, և հանդես են գալիս դիցարանները: Վերջիններս ստեղծվում էին աշխարհիկ կառույցի օրինակով, որտեղ պետության վարչական կենտրոնի նախկին աստվածը հանդես էր գալիս որպես գլխավոր հովանավոր:

Եգիպտոսում երկար ժամանակ գործում էին տեղական՝ նոմային դիցարաններ: Օրինակ՝ Հերակլեոպոլիսի գլխավոր աստվածն էր **Ատումը**՝

Հերա

Վեներա

Միներվա

Արտեմիս

նախաստեղծ–արարիչ աստվածը, որից սերում էին մյուս աստվածները:

Միավորված պետության ի հայտ գալով ձևավորվեց նաև համաեգիպտական դիցարանը: Առաջ մղվեցին այն քաղաքները ներկայացնող աստվածները, որոնց շուրջն ընթացել էր միավորումը: Օրինակ՝ Միջին թագավորության Արևի աստված **Ռան** նույնացվեց Թեբեի գլխավոր աստված **Ամոնի** հետ և սկսեց պաշտվել **Ամոն–Ռա** անունով:

Եգիպտացիների մոտ արմատավորված էին մեռյալների պաշտամունքը և պատկերացումը հանդերձյալ կյանքի մասին: Ըստ նրանց՝ մարդը մահից հետո կարող էր դառնալ **Օսիրիս**, այսինքն՝ վերածնվեր. Օսիրիսը մեռնող և հարություն առնող աստվածություն էր, Անդրաշխարհի տիրակալը: Օսիրիսի կինն էր **Իսիդան**՝ սիրո և մայրության աստվածուհին: Նրանց որդին՝ **Հորը**, մարմնավորում էր Երկինքը: Վերջինս, ըստ եգիպտացիների, ի դեմս փարավոնի՝ ապրում էր Երկրում:

Մինչև Ք.ա. III հազարամյակի վերջերը Միջագետքում գոյություն չուներ միասնական դիցարան: Ամեն քաղաք ուներ սեփական դիցարանը՝ հովանավոր աստծո գլխավորությամբ: Դրանցից մի քանիսն ունեին համաշումերական նշանակություն՝ առաջին սերնդի աստվածների հայր **Անը**, աստվածների մայր **Կին** և այլն: Շումերական դիցարանը համակարգվեց Ուրի III հարստության շրջանում, երբ Միջագետքը միավորվեց մեկ պետության մեջ:

Ասորեստանի և Բաբելոնիայի վերելքին զուգահեռ առաջ մղվեց **Աշուր** և **Մարդուկ** աստվածների պաշտամունքը, որոնք էլ ստանձնեցին շումերական աշխարհաստեղծման առասպելների գլխավոր դերը:

Այսպիսով՝ միջագետքյան կրոնապաշտամունքային համակարգի հիմքում ընկած էր շումերական կրոնը, որը հետագայում փոփոխվելով պահպանվեց սեմախոս բնակչության մոտ: Շումերական աստվածները ստացան սեմական անվանումներ:

Աքեմենյան Իրանի կրոնի՝ **զրադաշտականության** հիմքում ընկած էր աստվածային և երկրային աշխարհները սահմանող բարձրագույն կարգը, որի մարմնավորողը **հավերժական հուրն էր**: Զրադաշտականությունը դուալիստական ուսմունք է, որի առանցքը Աստծո և Դևի, Բարու և Չարի, Լույսի և Խավարի պայքարն է: Այն մարմնավորվում է ի դեմս երկու կերպարների՝ բարի և ստեղծարար ոգի **Ահուրամազդայի** և նրա հակառակորդ **Ահրիմանի**: Ահուրամազդան Երկնքի և Երկրի, մարդու և մարդկային երջանկության արարիչն էր: Ահուրամազդան նաև երկրի հովանավորն էր:

Հին Հնդկաստանի հնդարիական կրոնը ձյուղավորված կառույց էր: Աստվածները բաժանվում էին երկու խմբի՝ **դայվաներ** և **ասուրաներ**: Նրանք մարդակերպ էին, կային նաև աստվածացված գետեր և կենդանիներ:

Հնդարիական հավատալիքների վրա է հիմնված հետագայում ձևավորված բազմաստված **բրահմայական** կրոնը: Բրահմայականության հիմքում ընկած է **հոգու վերամարմնավորման** գաղափարը: Մահից հետո մարդու հոգին մարմնավորվում է կենդանու, բույսի կամ այլ մարդու մեջ: Դա կրկնվում է այնքան ժամանակ, քանի դեռ հոգին չի մաքրվել և միաձուլվել **համընդհանուր հոգու** հետ: Բրահմայականության շարունակությունը **հինդուիզմն է**:

Ըստ չինական առասպելաբանության՝ աստվածները մարդկանց սովորեցրին կրակ ստանալ, ծանոթացրին դեղաբույսերին, պատրաստեցին առաջին գործիքները: Գերագույն աստված **Դին** անձրևի, կայծակի և քամու տիրակալն էր: Նրան շրջապատում էին արքայի՝ **վանի** մահացած նախնիները:

Չինական կրոնը փոփոխությունների ենթարկվեց **կոնֆուցիականության** ի հայտ գալով: Ըստ վերջինիս՝ Երկինքը և երկնային կամքը որոշում են մարդկանց գործողություններն ու վարքը, նրանց հասարակական դիրքը: Մարդիկ բաժանվում էին երկու խմբի՝ «վեհանձն այրերի» և «մանր մարդկանց»: Առաջինները կոչված էին կառավարելու և իշխելու, երկրորդները դատապարտված էին ծառայելու:

Հունահռոմեական աշխարհի կրոնական համակարգը: Հին հույները ունեին դիցաբանական հարուստ համակարգ: Այստեղ առաջին աստվածներից էին **Ուրանոսը, Գեան**, նրանց որդի **Քրոնոսը** և տասներկու տիտանները: Քրոնոսին և մյուսներին տապալելով՝ իշխանությունն իր ձեռքն է վերցնում նրա որդի **Զևսը**:

Նոր դիցարանի գլխավոր աստված Զևսը երկնքի և ամպրոպի աստվածն էր: Մյուսները ներկայացնում էին բնության որևէ երևույթ կամ վերացական հասկացություն. **Պոսեյդոնը** ծովերի աստվածն էր, **Հերան**՝ մայրության, **Ապոլոնը**՝ Արևի և արվեստների, և այլն: Աստվածներն ապրում էին **Օլիմպոս** լեռան վրա (այդ պատճառով նրանք կոչվում են «օլիմպիական»):

Վաղ Հռոմի պաշտոնական դիցարանի ձևավորման գործում մեծ դեր ունեին էտրուսկներն ու հույները: Էտրուսկյան և հունական աստվածների օրինակով հռոմեացիներն իրենց աստվածներին սկսեցին պատկերել մարդակերպ: Հռոմեական աստվածներից շատերն ունեին էտրուսկյան ծագում՝ **Յուպիտերը**, **Յունոնան**, **Միներվան, Սատուրնոսը** և այլն:

Հռոմում պաշտամունքային հարցերը տնօրինում էին քրմական կոլեգիաները: Բարձրագույն քրմական իշխանությամբ էին օժտված նաև կոնսուլները, իսկ հետագայում՝ կայսրը, որը նաև գերագույն քուրմն էր: Կայսերական շրջանում մեծ տարածում գտավ կայսեր անձի պաշտամունքը: Աստվածացված կայսրերի արձանները տեղադրում էին տաճարներում և հասարակական վայրերում:

Բազմաստվածության ավարտը. համաշխարհային կրոններ: Արդի միաստվածական կրոնների ծագումը երկարատև գործընթաց էր՝ պայմանավորված պետականության և կրոնական հավատալիքների զարգացմամբ:

Միաստվածության դրսևորումներ կային Ասորեստանում՝ սկսած Սարգոն II–ից, երբ սկսեց բացարձակացվել գերագույն՝ Աշուր աստծո պաշտամունքը: Վերջինս արդեն ինքնուրույն ներկայացնում էր ողջ դիցարանը: Իսկ Բաբելոնիայում Ք.ա. VI դ. փորձ արվեց բացարձակացնել Լուսնի **Սին** աստծո պաշտամունքը:

Միաստվածության մյուս դրսևորումն էր **հուդայականությունը**, որը Ք.ա. I հազ. սկզբներին վերածվեց միաստվածային կրոնի: Այն հիմնված է **Յահվե** աստծո և հրեաների նախահայր **Աբրահամի** միջև «կնքված» պայմանագրի վրա: Դրանով **Իսրայելի որդիները** մերժեցին կուռքերի պաշտամունքը և պարտավորվեցին կատարել Յահվեի կամքը: Հուդայականության հիմնական էությունը Յահվեի՝ որպես միակ աստծո հանդեպ հավատն է, **մեսիայի** (փրկչի) գալստյան և աշխարհի վերջի մոտեցման մասին ուսմունքները:

Միաստվածության հնդկական տարբերակն էր **բուդդայականությունը**, որը ծագել է Ք.ա. I հազարամյակում: Հետագայում այն ներթափանցեց Չինաստան՝ ավելի ուշ վերածվելով համաշխարհային կրոնի: Բուդդայական դավանանքի հիմքը **նիրվանայի** միջոցով փրկության հասնելու գաղափարն է: Կյանքը տառապանք է, որից կարելի է փրկվել՝ հետևելով նիրվանա տանող ճանապարհին, խեղդելով ցանկություններն ու կիրքը: Հասնելով նիրվանա՝ մարդը դադարում է վերածնվելուց և ազատվում տառապանքներից:

I հազարամյակի սկզբներին Պաղեստինում ծագեց **քրիստոնեական վարդապետությունը**, որը արագորեն տարածվեց հարևան երկրներում: Քրիստոնեության հիմնադիրը **Հիսուս Քրիստոսն է**:

Քրիստոնեության հիմքում ընկած էին տարբեր արևելյան կրոններից (մեռնող–հարություն առնող աստվածություն, հուդայականության մեսիական ուսմունքը և այլն), ինչպես նաև անտիկ փիլիսոփաների ուսմունքներից:

Քրիստոնեության գլխավոր գաղափարներն են՝ հավատն առ Աստված, առ Հիսուս Քրիստոս՝ որպես Աստծո Որդի, և առ Սուրբ Հոգի, Քրիստոսի երկրային առաքելությունը և նրա հարությունը, Քրիստոսի մոտալուտ երկրորդ գալուստը, ահեղ դատաստանը և երկնային թագավորության հաստատումը:

Վաղ քրիստոնեական համայնքները պարզ կառուցվածք ունեին: Չկար կարգավորված պաշտամունք, չէր մշակվել միասնական դավանաբանություն: Դավանաբանական վեճերին վերջ տալուն էր միտված 325 թ. հրավիրված Նիկեայի եկեղեցաժողովը, որն ընդունեց **Հավատո հանգանակը** կամ **Հավատամքը**: Դրանով հաստատվեց **Հայր Աստծո** և **Որդի Աստծո** միագո էությունը, և դատապարտվեց **արիոսականությունը**:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք կրոնի առաջացման պատմական պայմանները: Ի՞նչ նշանակություն ձեռք բերեց կրոնը պետության համար:
2. Համեմատեք Եգիպտոսի, Շումերի, Իրանի, Հնդկաստանի և Չինաստանի կրոնական համակարգերը. ինչ նմանություններ ու տարբերություններ կարող եք նշել:
3. Ներկայացրեք հունահռոմեական աշխարհի կրոնական առանձնահատկությունները:
4. Վերհանեք միաստվածային կրոնների առաջացման նախադրյալները: Թվարկեք Հին աշխարհում ստեղծված համաշխարհային կրոնները:

§ 5. ԱՐՎԵՍՏ

Արևելյան երկրներ: Հին եգիպտական ճարտարապետության մասին պատկերացումները գլխավորապես հենվում են պաշտամունքային կառույցների վրա: Եգիպտական ճարտարապետության և շինարարական տեխնիկայի գլուխգործոցը Գիզայի մեծ բուրգերն են՝ Կահիրեից ոչ հեռու: Եգիպտոսում հաշվվում է շուրջ 100 բուրգ, որոնց մեծ մասը կառուցվել է Հին և Միջին թագավորությունների դարաշրջանում:

Եգիպտական տաճարային ճարտարապետության մեջ իրենց ծավալներով և շքեղությամբ առանձնանում են երկու համալիրներ: Դրանցից առաջինը Ամոն աստծո տաճարն է **Կառնակում՝ Լուքսոր** քաղաքի մոտ: Այն բաղկացած է ընդհանուր պարսպով շրջապատված չորս խոշոր և պարսպից դուրս գտնվող բազմաթիվ փոքր տաճարներից՝ 20 հազ. քառ. մ ընդհանուր մակերեսով: Տաճարի սյունազարդ մեծ սրահն ունի մի քանի մակարդակ՝ մինչև 21 մ բարձրությամբ 134 հսկայական սյուներով: Այստեղ կանգնեցված երկու կոթողներն ունեն 30 մ բարձրություն, յուրաքանչյուրը՝ շուրջ 1000 տոննա քաշ:

Երկրորդը Լուքսորի (նախկին՝ Թեբեի) տաճարային համալիրն է, որի կառուցումն ավարտվեց Ռամզես II–ի օրոք: Գլխավոր տաճարն աչքի է ընկնում 24 մ բարձրությամբ հսկայական սյուներով՝ պատված Ռամզեսի և հետագա փարավոնների արշավանքների դրվագներով: Տաճարի մուտքի մոտ վեր էին խոյանում Ռամզեսի վեց հսկա արձանները, ինչպես նաև գրեթե 25 մ բարձրությամբ գրանիտե զույգ կոթողներ, որոնցից մեկը կանգուն է մինչ օրս:

Խոշոր տաճարներից է նաև Ռամզես III–ի կառուցած տաճարը **Մեդինեթ-Աբուում**՝ Լուքսորի մոտ: Տաճարաշինության նոր ձևերից են ժայռափոր կառույցները: Դրանց շարքում հատկապես նշանավոր է Ռամզես II–ի տաճարը **Աբու-Սիմբելում**՝ փարավոնի 20 մ բարձրության 4 հսկա արձաններով:

Եգիպտական պալատական համալիրները իրենց չափերով չեն զիջել տաճարներին: Օրինակ՝ փարավոն Ամենհոտեպ IV–ի (Էխնաթոն)՝ Ախետաթոնում կառուցած պալատի արևելյան ճակատն ունեցել է 700 մ երկարություն:

Եգիպտական շինությունները զարդարվում էին բարձրաքանդակներով, սրահներում դրվում էին աստվածների, փարավոնների արձաններ, պատերը նկարազարդ էին: Դրանցում գլխավոր դերակատարը արքան էր. նպատակն էր արտահայտել փարավոնի անձի գերազանցությունը հպատակների նկատմամբ և հավասարությունը աստվածների հետ:

Միջագետքում կոթողային ճարտարապետությունը սկսվում է շումերական առաջին քաղաքների հետ միասին: Դրա արտահայտությունը կանոնավոր հատակագծով տաճարային, պալատական համալիրներն ու **զիկկուրատներն** են:

Առաջին զիկկուրատը կառուցվել է **Ուրուկ** քաղաքում **Ք.ա. XXXI–XXIX դդ.:** Այս տիպի լավ պահպանված կառույցներից է Ուրի III հարստության արքա Ուր Նամուի և նրա որդի Շուլգիի եռահարկ զիկկուրատը Ուրում: Այն ուներ 20 մ բարձրություն և զբաղեցնում էր 2,8 հազ. քառ. մ տարածք: Նշանավոր է Բաբելոնի Մարդուկ աստծո տաճարը, որի զիկկուրատն ուներ 91 մ բարձրություն (հայտնի «**Բաբելոնյան աշտարակը**»):

Տաճարներն ու պալատները սովորաբար ուղ-

ղանկյուն կամ քառանկյուն էին: Միջագետքյան ճարտարապետության առանձնահատկությունը բացարձակ համաչափության շեշտումն էր:

Աքքադական դարաշրջանի արվեստը հիմնականում ներկայացված է քանդակագործությամբ և կնիքագործությամբ: Նշանավոր է Նինվեից գտնված աքքադական արքայի բրոնզե գլուխը, ինչպես նաև Աքքադի արքա Նարամսինի կոթողը:

Միասնական պետականության հաստատմամբ արվեստում արձանագրվեցին փոփոխություններ, պատկերագրությունը ենթարկվեց կանոնակարգման՝ ձեռք բերելով միօրինակություն: Պահպանված օրինակները հիմնականում արքաների և այլ կառավարիչների քանդակներ են՝ ստատիկ, հանդիսավորությամբ օժտված, նախորդ շրջանի համեմատությամբ՝ պակաս դինամիկ, հույզերից զուրկ:

Միջագետքյան քանդակագործությունը իր բարձրակետին հասավ նորասորեստանյան տերության շրջանում: Պալատական սրահները պատվում էին արքաների հաղթարշավները և նրա առօրյան ներկայացնող հարյուրավոր բարձրաքանդակներով: Դրանք երբեմն ունեին մինչև 4 մ բարձրություն և ձգվում էին տասնյակ մետրեր:

Աքեմենյան Իրանի ճարտարապետության վաղ փուլի գլխավոր հուշարձանը **Պասարգադքն** է՝ իր ժամանակաշրջանի համար աննախադեպ ընդարձակ, չորս կողմից պարտեզներով շրջապատված պալատական մի համալիր: Պասարգադքի բնութագրական կառույցներից են համալիրի հանդիսավոր մուտքը, գահանիստ պալատը, «ընդունելությունների սրահը» և Կյուրոսի դամբարանը:

Իրանական ճարտարապետության հաջորդ հուշարձանը Դարեհ I–ի հիմնադրած **Պերսեպոլիսի** հուշարձանախումբն է: Այն 450x300 մ մակերեսով արհեստական հարթակի վրա կառուցված ընդարձակ պալատական համալիր է: Սրահի սյուները վեր են խոյանում գրեթե 20 մ՝ պսակվելով կենդանակերպ խոյակներով:

Աքեմենյան արվեստի մյուս՝ առավել լավ ներկայացված ճյուղը քանդակագործությունն է: Դրա վկայությունն են Դարեհ I–ի, նրա մերձավորների և գերեվարված արքաների պատկերները՝ փորագրված Բեհիսթունի ժայռի վրա: Պալատական համալիրները զարդարված էին հարյուրավոր բարձրաքանդակներով՝ ի ցույց դնելով արքաների հզորությունը:

Արևմտյան երկրներ: Հին հունական ճարտարապետությունը անցել է մի քանի փուլեր՝ Կրետե–միկենյանից մինչև հելլենիստական:

Միկենյան ճարտարապետությանը բնորոշ են լավ ամրացված քաղաքները՝ կառուցված **կիկլոպյան** շարվածքով, նաև պալատները: Այդպիսիք հայտնաբերվել են Միկենքում, Պիլոսում, Տիրինթոսում: Դրանք ունեին հանդիսավոր սրահներ, բնակելի, օժանդակ շինություններ, արհեստանոցներ և այլն:

Դասական շրջանի քաղաքաշինության հիմնական տարրերն էին **ակրոպոլիսը**՝ միջնաբերդ–սրբավայրը, և **ագորան**՝ քաղաքի հասարակական և առևտրական կենտրոնը: Դրանց



Ուր Նամուի զիկկուրատը. Ուրուկ, Ք.ա. XXXI–XXIX դդ.

շուրջը սփռված էին քաղաքային թաղամասերը: Ք.ա. VI դ. վերջերից քաղաքային ճարտարապետությանը բնորոշ դարձավ ուղիղ, իրար խաչաձև հատվող փողոցներով հատակագծումը:

Պաշտամունքային հիմնական կառույցը տաճարն էր: Տաճարի վաղագույն ձևերը ուղղանկյուն տաճարներ էին՝ ճակատային սյուներով:

Տաճարների և սյունազարդ շինությունների կառուցումը քարից նպաստեց **ճարտարապետական օրդերների** (հենահեծերի) կիրառության մեծացմանը: Սկզբնականը **դորիական օրդերն** էր, որն աչքի է ընկնում պարզությամբ և խստությամբ: Այդ օրդերով է կառուցված Աթենքի **Պարթենոնը**: Ավելի ուշ ծագեցին **հոնիական** և **կորնթական օրդերները**: Վերջինս ամենաշքեղն է՝ ոճավորված տերևազարդ խոյակով: Այն լայն տարածում գտավ հելլենիստական դարաշրջանում:

Հունական ճարտարապետության բնորոշ դրսևորումն է **թատրոնը**: Դրանցից ամենավաղը Դիոնիսոսի թատրոնն է Աթենքում, որը տեղավորում էր 17 հազար հանդիսական:

Ճարտարապետության հետ զուգահեռ ծաղկում ապրեց նաև քանդակագործությունը: Հայտնի քանդակագործներ էին **Ֆիդիասը**, **Լիսիպոսը**, **Պրաքսիտելեսը** և այլք: Բոլոր տաճարների ներսը և արտաքին պատերը զարդարված էին քանդակներով և արձաններով:

Հռոմեական ճարտարապետության ձևավորման գործում մեծ էր էտրուսկյան ճարտարապետության դերը:

Ք.ա. III–I դդ. հռոմեական ճարտարապետությունը բնութագրվում է ծավալուն քաղաքաշինությամբ: Կատարելագործվեցին հասարակական և պաշտամունքային կառույցների գլխավոր տիպերը՝ **բազիլիկը** (եռամաս երկայնական ընդարձակ սրահ), որ սովորաբար կառուցվում էր քաղաքային **ֆորումի** տարածքում, և **թերմը**: Թերմը բազմագործառույթ կառույց էր՝ հասարակական բաղնիք, որ նախատեսված էր նաև

Կոստանդիանոս I կայսեր հաղթակամարը. Հռոմ

հանգստի, ժողովների համար և այլն: Դիոկղետիանոս կայսեր թերմը կարող էր տեղավորել շուրջ 3 հազար մարդ:

Հռոմեական ճարտարապետությունը մեծ վերելք ապրեց կայսերական շրջանում: Շինությունները աչքի էին ընկնում վիթխարի չափերով: Հռոմեացիներն առաջինը շինարարության մեջ օգտագործեցին **բետոնը**: Այս ձեռքբերումները թույլ տվեցին ստեղծել այնպիսի կառույցներ, ինչպիսիք էին **ամֆիթատրոնները** և ջրանցույցները (**աքվեդուկները**): Ամֆիթատրոններից խոշորագույնը Հռոմի **Կոլիզեումն** է: Այն տեղավորում է շուրջ 50 հազար հանդիսական:

Կայսերական շրջանում ճարտարապետությունը դառնում է կայսեր անձի և կայսրության պետական գաղափարախոսության ցուցադրության ձևերից մեկը: Այս երևույթի դրսևորումն էին միաթռիչք կամ եռաթռիչք թաղակապ **հաղթակամարը** և **հաղթակոթողը**, որոնք զարդարվում էին բարձրաքանդակներով (Սեպտիմիոս Սևերոսի, Կոստանդիանոսի հաղթակամարները, Տրայանոսի հաղթակոթողը և այլն):

Հարցեր և առաջադրանքներ

1. Արվեստի ի՞նչ նշանավոր գործեր են ստեղծել հին եգիպտացիները: Ի՞նչ կառույցներով արտահայտվեց կոթողային ճարտարապետությունը Միջագետքում:
2. Որո՞նք են Աքեմենյան Իրանի ճարտարապետության նշանավոր կոթողները: Ի՞նչ գիտեք դրանց մասին:
3. Համառոտ ներկայացրեք հին հունական ճարտարապետության ու քաղաքաշինության հիմնական կառույցները: Թվարկեք հին հույն քանդակագործների անուններ:
4. Որո՞նք են հռոմեական ճարտարապետության և շինարարական արվեստի նշանավոր ձեռքբերումները: Ո՞ր կոթողներն են բնորոշ կայսերական շրջանի հռոմեական ճարտարապետությանը:

ԳԼՈՒԽ Դ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՎԱՐՏԸ

§ 1. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Հունաստանի նվաճումը Մակեդոնիայի կողմից: Պելոպոնեսյան պատերազմներից հետո հունական պոլիսային աշխարհը ապրեց խոր ճգնաժամ: Պատերազմների հետևանքով մեծ քանակությամբ մարդիկ զրկվել էին իրենց հողակտորներից, որը սոցիալական լուրջ ընդվզումների առիթ էր դարձել: Սկսել էր խախտվել պոլիսի քաղաքացու գլխավոր հատկանիշը՝ սեփական հողակտորի առկայությունը: Աստիճանաբար վերանում էր պոլիսային համակարգի մյուս գլխավոր առանձնահատկությունը՝ քաղաքացիների համերաշխությունը:

Ճգնաժամը դրսևորվեց պոլիսների, ինչպես նաև նրանց և Աքեմենյան տերության փոխհարաբերություններում: Ք.ա. IV դարի քաղաքական կյանքի հիմնական առանձնահատկությունը արտաքին կողմնորոշման անկայունությունն էր:

Առաջատար պոլիսներից ոչ մեկը ի վիճակի չէր կայուն դեր ապահովելու իր համար: Իրենց խնդիրները լուծելու համար նրանք հաճախ դիմում էին Աքեմենյան տերությանը:

Այս իրավիճակում հունական գործերում նախաձեռնությունը անցավ հզորացող Մակեդոնիային: Վերջինիս արքա **Փիլիպոս II-ը (Ք.ա. 359-336 թթ.)** ստեղծեց ամուր պետականություն և հզոր բանակ: Տարիների ընթացքում ներքաշվելով հունական գործերի մեջ՝ ի վերջո նա օգտագործեց հարմար առիթը՝ նվաճելու հունական պոլիսները:

Ք.ա. 338 թ. Բեոտիայի **Քերոնեա** բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում մակեդոնացիները հաջողության հասան: Հունական պոլիսների նվաճումը ամրագրվեց **Ք.ա. 337 թ.** Կորնթոսում հավաքված համահունական վեհաժողովում: Այնտեղ ստեղծվեց հունական պոլիսների միություն՝ Մակեդոնիայի առաջնայնությամբ: Հայտարարվեց համընդհանուր խաղաղություն, արգելվեցին պատերազմները: Փիլիպոսը կոչ արեց պոլիսներին միավորվելու ընդդեմ հույների վաղեմի թշնամի պարսիկների:

Աքեմենյան տերության նվաճումը: Փիլիպոսը չհասցրեց իրականացնել իր ծրագիրը: Այն վիճակված էր նրա որդի Ալեքսանդրին:

Ք.ա. 334 թ. Ալեքսանդրի բանակը (30000 հետևակ և 5000 հեծյալ) ափ իջավ պատմական Տրոյայից ոչ հեռու և **Գրանիկոս գետի** մոտ ջախջախեց Դարեհ III-ի փոքրասիական սատրապների զորքը: Հաջորդ գարնանը Կիլիկիայում՝ **Իսոս** քաղաքի մոտ, նա պարտության մատնեց Դարեհի գլխավորած գերակշիռ ուժերին: Այնուհետև նա շարժվեց հարավ՝ ճանապարհին նվաճելով Արևելյան Միջերկրականի սիրիական և փյունիկյան քաղաքները, իսկ **Ք.ա. 332 թ.** առանց դիմադրության մտավ Եգիպտոս:

Եգիպտոսում Ալեքսանդրը պատրաստվեց նոր արշավանքի դեպի Աքեմենյան տերության կենտրոնական շրջաններ: **Ք.ա. 331թ.** Հյուսիսային Միջագետքում՝ **Գավգամելա** քաղաքից ոչ հեռու, տեղի ունեցավ վճռական ճակատամարտ մակեդոնական և պարսկական բանակների միջև: Չնայած թվական զգալի առավելությանը՝ Դարեհի փախուստը մարտադաշտից կանխորոշեց նրա պարտությունը:

Հաղթանակից հետո Ալեքսանդրը առանց լուրջ դիմադրության տիրացավ Միջագետքին և հասավ սկզբում Շոշ, այնուհետև՝ Դարեհի մայրաքաղաք Պերսեպոլիս: Դարեհը փորձեց ապաստան գտնել Պարթևստանում, սակայն ճանապարհին սպանվեց իր մերձավորների կողմից: Դարեհի մահից հետո Ալեքսանդրն արդեն կարող էր իրեն համարել նրա ժառանգորդը, սակայն դեռևս անհրաժեշտ էր նվաճել Աքեմենյան տերության արևելյան մարզերը:

Մակեդոնացիներին մեծ դժվարությամբ հաջողվեց **Ք.ա. 329-327 թթ.** հպատակեցնել **Բակտրիան** և **Սոգդիանան**: Արշավանքի ավարտին Ալեքսանդրը շարժվեց դեպի Հնդկաստան, սակայն նրան վիճակված չէր նվաճել այն: Առաջին հաղթանակից հետո տևական պատերազմ-

ներից հոգնած նրա զինվորները հրաժարվեցին շարունակել արշավանքը և պահանջեցին հետ դառնալ: Այսպիսով՝ շուրջ տասնամյա արշավանքների արդյունքում նա տիրացավ Աքեմենյան տերությանը:

Հելլենիստական պետությունները: **Ք.ա. 323 թ.՝** Ալեքսանդրի մահվան պահին, նրա ստեղծած պետությունը ներառում էր Աքեմենյան տերությունից ավելի մեծ տարածք: Իր կյանքի վերջին երկու տարիներին նա զբաղված էր իր նորաստեղծ տերության կազմակերպման հոգսերով: Սակայն ժամանակը չբավարարեց ամուր վարչաքաղաքական և տնտեսական համակարգ ստեղծելու համար: Ալեքսանդրից հետո նրա տերությունը արագորեն քայքայվեց:

Առաջին տարիներին Ալեքսանդրի զորավարները (**դիադոխներ**, հուն. «ժառանգորդներ»), համաձայնության եկան պահպանելու տերության տարածքային ամբողջականությունը: Վերջինս պետք է բաժանվեր սատրապությունների, որտեղ կառավարելու էին նրանց շարքերից ընտրված սատրապները: Սկզբում կարճ ժամանակով իշխանությունը անցավ մակեդոնական հեծելազորի հրամանատար և Ալեքսանդրի մանկահասակ որդու խնամակալ **Պերդիկայի** ձեռքը: Մակեդոնիան և Հունաստանը տրվեցին **Անտիպատրոսին** և **Կրատերոսին**, Թրակիան՝ **Լիսիմաքոսին**, Փոքր Ասիան՝ **Անտիգոնոսին** և **Էվմենեսին**, Եգիպտոսը՝ **Պտղոմեոսին,** և այլն:

Այս իրավիճակը չէր կարող երկար շարունակվել, քանի որ Ալեքսանդրի զորավարները միայն ձևականորեն էին ենթարկվում Պերդիկային: Վերջինիս փորձերը՝ ամրապնդելու կենտրոնական իշխանությունը, հանդիպեցին դիադոխների դիմադրությանը: **Ք.ա. 321 թ.** նա սպանվեց իր մերձավորների կողմից: Հակասությունները ավելի խորացան՝ հաճախ վերածվելով խոշոր պատերազմների:

Շուտով նրանց միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որն ամրագրեց տարածքների նոր վերաբաժանումը: **Ք.ա. 301 թ. Սելևկոսը,** Մակեդոնիայի արքա Կասանդրոսը և Լիսիմաքոսը պարտության մատնեցին Անտիգոնոսին, որից հետո սկսեցին ձևավորվել ապագա հելլենիստական պետությունների սահմանները: Դրանց շարքում առավել խոշորը Սելևկոսի պետությունն էր: Նա իրեն ենթարկեց նախկին Աքեմենյան տերության արևելյան շրջանները: Հետագայում հելլենիստական պետությունների սահմանները այլևս նշանակալից փոփոխություններ չկրեցին:

Այսպիսով՝ Ալեքսանդրի մահից հետո մի քանի տասնամյակում ձևավորվեց հելլենիստական պետությունների համակարգը, որը որոշ փոփոխություններով շարունակեց գոյատևել մինչև Հռոմի ներթափանցումը Արևելք:

Հելլենիզմ: Ալեքսանդրի արշավանքներով սկսվեց և հետագայում ձևավորվեց համաշխարհային պատմության մի կարևոր դարաշրջան, որը ստացել է «**հելլենիստական**» անվանումը: Այն արդյունք էր երկու տարբեր քաղաքակրթությունների (արևելյան և արևմտյան) միջև դարերի ընթացքում տեղի ունեցած փոխշփումների: **Պատմության մեջ առաջին անգամ վերացան Արևելքի և Արևմուտքի միջև առկա քաղաքական և հոգևոր–մշակութային սահմանները:**

Ալեքսանդրի պատկերացմամբ՝ իր պետությունը կարող էր հաստատուն լինել միայն նվաճողների և նվաճվածների միջև սերտ հարաբերությունների հաստատման դեպքում: Եկվոր հույներն ու մակեդոնացիները տեղական ժողովուրդների հետ պետք է այնքան սերտանային, որ հետագայում միավորվեին և կազմեին մեկ ժողովուրդ՝ «պարսկահույներ» անվանումով: Ալեքսանդրը շատ պարսիկների նշանակեց բարձրագույն պետական պաշտոնների: Արքայի աջակցությամբ հազարավոր հույներ և մակեդոնացիներ ամուսնացան պարսկուհիների հետ:

Արևելյան և արևմտյան մշակույթների ու ավանդույթների միջև շփման եզրեր ստեղծելու և սերտաճելու նպատակով նա հատուկ ուշադրություն էր դարձնում քաղաքաշինությանը: Ալեքսանդրը իր տերության մայրաքաղաք դարձրեց **Բաբելոնը:**

Հելլենիստական պետությունների ծնունդը կարևորագույն հետևանքներ ունեցավ Արևելյան քաղաքակրթությունների հետագա զարգացման վրա: **Հելլենիստական պետությունները արևելյան միապետության և հունական պոլիսային համակարգի միաձուլում էին:** Դրանք աչքի էին ընկնում կենտրոնացված ուժեղ արքայական իշխանությամբ և քաղաքների ինքնավարությամբ:

Հելլենիստական աշխարհի կարևոր բնորոշ առանձնահատկությունը տեղական ավանդական և եկվոր հունամակեդոնական մշակույթների օրգանական միաձուլումն էր: Երկու մշակութային տարրերի փոխներգործությունը հանգեցրեց նոր իրողությունների: Այն արտացոլվեց կյանքի բոլոր բնագավառներում՝ կենցաղից մինչև նյութական և

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՀԵՏՆՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱԿԵԴՈՆԻԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊՈՂՈՄՈՍՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՍՈՐԻՔ
ՊԱՐԹԵՎԻԱ
ՄԻԹՐԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈԳԴԻԱՆԱ
ԲԱԿՏՐԻԱ
ՀՆԴԿԱՍՏԱՆ
ԱՐԱԲԱԿԱՆ ԾՈՎ
ԿԱՍՊԻԱԿԱՆ ԾՈՎ
ԷՐԻԴԱՆՈՍ գետ
Էրիդու տաճար
Բաբելոն
Սուսա
Պերսեպոլիս
Ալեքսանդրիա
Ալեքսանդրիա-Արաքոսիա
Ալեքսանդրիա-Օքսիանա
Ալեքսանդրիա-Էսխատա
Ալեքսանդրիա-Դարբանդ
Ալեքսանդրիա-Արիանա
Ալեքսանդրիա-Պրոֆթասիա
Ալեքսանդրիա-Ուրանոպոլիս
Ալեքսանդրիա-Ուրանոպոլիս
Ալեքսանդրիա-Ուրանոպոլիս

§ 2. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ I–V ԴԱՐԵՐՈՒՄ

Օգոստոսի պրինցիպատը: Ակցիումի ճակատամարտից և Եգիպտոսի նվաճումից հետո Օկտավիանոսը անցավ իր իշխանության ամրապնդմանը: Նա քայլ առ քայլ իր ձեռքը վերցրեց պետական կառավարման ղեկը:

Ծերակույտականների նոր ցուցակում Օկտավիանոսի անունը առաջինն էր, որտեղից էլ նրա տիտղոսը («Ծերակույտի ղեկավար, առաջնորդ»). այսուհետև նա կոչվում էր **պրինցեպս**: Իսկ Ք.ա. **27 թ.** նա ստացավ պատվավոր **օգոստոս՝** «բարձրացյալ» մակդիրը, որն ընդգծում էր Օկտավիանոսի՝ որպես պետության առաջին դեմքի անձը: Այսուհետև նա սկսում է կոչվել «Իմպերատոր Կեսար Օգոստոս, աստվածայինի որդի»:

Օկտավիանոսը ստացավ ցմահ տրիբունի պաշտոն, որը ապահովում էր անձի անձեռնմխելիություն, ինչպես նաև Ծերակույտի, կոմիցիաների ու մագիստրատների որոշումների վրա արգելք (վետո) դնելու իրավունք էր տալիս:

Նա յուրացրեց գործադիր մի շարք առանցքային պաշտոններ: Առաջինը բարձրագույն զինվորական իշխանությունն էր, որը նախկինում իրականացնում էին կոնսուլները: Օկտավիանոսը **Ք.ա. 19 թ.** ստացավ ցմահ կոնսուլի պաշտոն: Նրա ձեռքն անցավ պետության արտաքին քաղաքականությունը: Սրանց ավելացավ «մեծ պոնտիֆեքս» տիտղոսը, որով նրան տրվեց գերագույն կրոնական իշխանություն:

Այնուհանդերձ պահպանվեցին գոյություն ունեցող օրենսդիր և գործադիր մարմինները՝ Ծերակույտը և մագիստրատները: Միայն թե Ծերակույտն ընդունում էր Օգոստոսի առաջարկները օրենքների նախագծեր մշակելիս, իսկ կոմիցիաները և մագիստրատուրաները նրանից հանձնարարականներ էին ստանում:

Օգոստոսը սկսեց ձևավորել նաև համակայսերական վարչական աշխատակազմ: Բանակը նույնպես կրեց փոփոխություններ: Ստեղծվեց մշտական, վարձու հիմունքներով գործող բանակ (շուրջ 250 հազար թվակազմով):

Այսպիսով՝ Օգոստոսը կարողացավ ստեղծել կառավարման այնպիսի համակարգ, որը պետությանը բերեց տևական խաղաղություն, իսկ իրեն՝ անսահմանափակ իշխանություն: Օգոստոսից սկիզբ առավ Հռոմի պատմության մի նոր փուլ, որը ստացել է **պրինցիպատ** կամ **Վաղ կայսրություն** անվանումները:

Վաղ կայսրությունը: Օգոստոսից սկսվեց Հուլիոս–Կլավդիոսների հարստությունը: Պրինցիպատի շրջանում իշխանության ժառանգման կարգը աչքի էր ընկնում անկայունությամբ: Սովորաբար կայսրին հաջորդում էր արքայատոհմի՝ նրա կողմից որդեգրված ներկայացուցիչը: Այս համակարգը, որ բացատրվում է հանրապետական ավանդույթներ ունեցող Հռոմում ժառանգական իշխանության գաղափարի թույլ գիտակցմամբ, գոյատևեց նաև հաջորդ հարստությունների օրոք: Կայսրերը սոցիալական ամուր հենարան չունեին, և ժամանակ էր պետք, որպեսզի մարդիկ ընկալեին միապետության գաղափարը:

Օկտավիանոսին փոխարինեց նրա որդեգիր **Տիբերիոսը** (14–37 թթ.): Կայսերական իշխանության ամուր հենարան ստեղծելու գործում մեծ էր **Կլավդիոսի** (41–54 թթ.) ներդրումը: Վերջինս ստեղծեց իսկական կայսերական կառավարման աշխատակազմ: Մեծ քանակությամբ նախկին ստրուկներ նշանակվեցին պետական բարձր պաշտոնների՝ որպես հակակշիռ Ծերակույտի վերնախավի: Կլավդիոսը գործուն էր նաև արտա-



Կայսր Վեսպասիանոս

Կայսր Տիբերիոս

քին քաղաքականության ասպարեզում: Նվաճվեցին Բրիտանիայի մեծ մասը, Թրակիան և Մավրիտանիան: Կլավդիոսը պրովինցիաների տասնյակ հազարավոր բնակիչների հռոմեական քաղաքացիություն շնորհեց: Դրա նպատակը կայսեր սոցիալական հենարանի մեծացումն էր և նվաճված երկրները Հռոմի հետ ավելի սերտորեն կապելը:

Հարստության վերջին ներկայացուցիչ **Ներոնի** օրոք իրավիճակը ապակայունացավ: Պետական միջոցների անհարկի վատնումները գրեթե սպառեցին գանձարանը: Երկրում ծավալվեց ահաբեկչություն քաղաքական հակառակորդների նկատմամբ, ընկավ կայսեր վարկը: Ստեղծված իրավիճակում նա ինքնասպան եղավ:

Պրովինցիաներում տեղակայված լեգեոններից շատերում կայսրեր հռչակվեցին դրանց հրամանատարները: Նրանց միջև պայքարը վերածվեց պատերազմի, որն ավարտեց **Վեսպասիանոսի** հաղթանակով: Նա հռչակվեց կայսր (69–79 թթ.)՝ հիմնելով **Ֆլավիոսների հարստությունը:**

Ֆլավիոսների կառավարման շրջանը աչքի ընկավ ինչպես կայսերական իշխանության ամրապնդմանն ուղղված ջանքերով, այնպես էլ ակտիվ արտաքին քաղաքականությամբ: Վեսպասիանոսը վերահսկողություն սահմանեց հարկերի գանձման և ֆինանսների ծախսման նկատմամբ: Կրճատվեցին նույնիսկ արքունիքի ծախսերը:

Կայսր **Դոմետիանոսը** հատուկ ուշադրություն էր դարձնում հյուսիսային սահմանների անվտանգությանը: Նրա օրոք Հռենոսից մինչև Դանուբ գետն ընկած շրջանում կառուցվեց սահմանային ամրությունների համատարած շղթա ընդդեմ գերմանական ցեղերի:

Ֆլավիոսներին փոխարինած **Անտոնինոսների հարստության** շրջանում կայսրությունը իր վերջին փորձը կատարեց անցնելու տարածքային նվաճումների:

Առաջինը **Տրայանոսն** էր (98–117 թթ.), ով նվաճեց կայսրության համար լուրջ վտանգ ներկայացնող **Դակիան** (այժմ՝ Ռումինիա): Դակիան վերածվեց հռոմեական պրովինցիայի, որի բնակչությունը հետագա տասնամյակներում կորցրեց իր էթնիկ դիմագիծը, այդ թվում՝ լեզուն: Նրա հաջորդ ձեռնարկումը հաջող պատերազմն էր՝ ընդդեմ պարթևների: Կայսրը գրավեց Միջագետքը և պարթևների մայրաքաղաք Տիզբոնը:

Նրա հաջորդը՝ **Հադրիանոսը,** շարունակեց կայսրության սահմանների ամրապնդման գործը: Մասնավորապես Բրիտանիայում կառուցվեց կայսեր անունը կրող ամրությունների շղթան, որը ձգվում էր կղզու արևմուտքից արևելք:

Եվրոպական տիրույթների անվտանգությունը հարստության վերջին ներկայացուցիչ **Մարկոս Ավրելիոսի** (161–180 թթ.) գլխավոր խնդիրն էր: Նա մեծ դժվարությամբ կարողացավ ժամանակավորապես կանխել գերմանական ցեղերից եկող վտանգը:

Ուշ կայսրություն: III դարում Հռոմեական կայսրությունը մեծ կորուստներ կրեց Եվրոպայում և Արևելքում: Եվրոպայում մեծ ակտիվություն էին ցուցաբերում հատկապես գերմանական ցեղերը: Իսկ Գալլիայում սկսվեց հակահռոմեական խոշոր ապստամբություն: Բարբարոսների առաջխաղացումը սպառնում էր բուն Իտալիային: Այս իրավիճակում կայսր հռչակվեց **Դիոկղետիանոսը** (284–305 թթ.):

Դիոկղետիանոսն անցկացրեց ռազմավարչական բարեփոխումներ, որոնց նպատակն էր ապահովել կայսրության արդյունավետ կառավարումը: Կայսրությունը բաժանվեց երկու մասի՝ արևելյան (կենտրոնը՝ **Նիկոմեդիան** Փոքր Ասիայում) և արևմտյան (կենտրոնը՝ **Միլանը**), որոնցից յուրաքանչյուրը կառավարում էին **օգոստոս** տիտղոսն ունեցող անձինք: Արևելքը Դիոկղետիանոսը վերցրեց իրեն, իսկ արևմուտքում նշանակվեց **Մաքսիմիանոսը**: Օգոստոսներն ունեին մեկական տեղակալներ՝ **կայսրեր**, որոնց նստավայրերը առավել վտանգավոր սահմանամերձ շրջաններում էին: Կառավարման այս համակարգը կոչվեց **քառապետություն**:

Կայսրությունը բաժանվեց 12 **դիոցեզների**, որոնք էլ իրենց հերթին՝ **պրովինցիաների**: Վերջիններս տարածքով համեմատաբար փոքր էին, որտեղ քաղաքացիական և ռազմական գործառույթները տարանջատվեցին:

Այսպիսով՝ Դիոկղետիանոսի օրոք ավարտվեց պրինցիպատը, և հիմք դրվեց կառավարման նոր եղանակին՝ **դոմինատին** (լատին.՝ «տեր» բառից): Դրա էությունն այն էր, որ ստեղծվեց ռազմական միապետություն՝ մեկ անձի անսահմանափակ իշխանությամբ: Կայսերական իշխանությունը աստվածացվում էր: Կայսրության բոլոր քաղաքացիները համարվում էին կայսրի, այլ ոչ պետության հպատակները:

Դիոկղետիանոսին փոխարինած **Կոստանդիանոսը 330 թ.** մայրաքաղաք հռչակեց Բոսֆորի ափին գտնվող Բյուզանդիոն քաղաքը, որը վերանվանվեց Կոստանդնուպոլիս: Կոստանդիանոսի կարևորագույն ձեռնարկումներից էր **325 թ. Նիկեայի ժողովում** քրիստոնեական կրոնի պարտադիր դոգմաների ընդունումը: Խոշոր քաղաքնե-

ում ստեղծվեցին եպիսկոպոսություններ, որոնց առաջնորդները ստացան **պատրիարք** (հայրապետ) տիտղոսը: Իսկ Հռոմի և Ալեքսանդրիայի պատրիարքները կոչվում էին նաև **պապեր**:

Արևմտյան կայսրության անկումը: Ք.ա. IV դարում բարբարոսները ակտիվացան կայսրության հյուսիսային սահմաններում: Այստեղ շարունակվում էր գերմանական ցեղային միությունների (**ֆրանկներ, սաքսեր, ալեմաններ, վանդալներ**) ձևավորման գործընթացը:

Բարբարոսների ճնշումը կայսրության վրա ուժեղացավ՝ կապված արևելքից **հոների** գալստյան հետ: Վերջիններս **375 թ.** ջախջախեցին գոթերին, որոնք ստիպված էին ապաստան խնդրել Արևելյան կայսրության կայսր **Վաղեսից**՝ զինծառայության դիմաց: Ստանալով խոստացված օգնությունը՝ նրանք ապստամբեցին և շարժվեցին դեպի Կոստանդնուպոլիս: **378 թ. Ադրիանապոլսի** մոտ գոթերը պարտության մատնեցին կայսերական զորքին. կայսրը զոհվեց ճակատամարտում:

Հաջորդ՝ **Թեոդոսիոս** կայսրը, այլևս չկարողանալով պահպանել վերահսկողությունը կայսրության նկատմամբ, **395 թ.** այն բաժանեց երկու մասի: Արևելյան մասում կայսր հռչակվեց նրա ավագ որդի **Արկադիոսը**, իսկ արևմուտքում՝ կրտսերը՝ **Հոնորիոսը**: Այսպիսով՝ Հռոմեական կայսրությունը բաժանվեց երկու ինքնուրույն կայսրությունների:

Այս իրադարձությունից հետո Արևմտյան կայսրությունը արագորեն սկսեց անկում ապրել: V դարի սկզբներին բարբարոսների ճնշման տակ Իտալիա վերադարձվեցին բոլոր լեգեոնները: Սրանով ավարտվեց կայսրության տիրապետությունը Ալպերից հյուսիս: **410 թ.** վեստգոթերը՝ **Ալարիխի** գլխավորությամբ, գրավեցին և ավերեցին Հռոմը: Միայն Ալարիխի մահից հետո վեստգոթերը հեռացան Գալլիա:

Արևմտյան կայսրության վերջին ռազմաքաղաքական ձեռնարկումը հոների արշավանքի դեմ դիմադրության կազմակերպումն էր: **451 թ.** Գալլիայում՝ **Կատալաունյան դաշտում,** հռոմեական–գերմանական–գալլական բանակը պարտության մատնեց հոներին: Իսկ **476 թ.** Իտալիայում տեղակայված գերմանական վարձու զորքերի հրամանատար **Օդոակրը** գահընկեց արեց վերջին կայսր **Հռոմուլոս Ավգուստուլոսին**, որով Արևմտյան կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Օկտավիանոսն ինչպե՞ս հասավ միանձնյա կառավարման: Ի՞նչ փոփոխություններ կատարեց Օգոստոսը կառավարման համակարգում և բանակում:
2. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Կլավդիոսը կայսերական իշխանության ամրապնդման նպատակով:
3. Ո՞րն էր Հռոմեական կայսրության՝ III դարում ունեցած տարածքային կորուստների գլխավոր պատճառը:
4. Ռազմավարչական ի՞նչ բարեփոխումներ անցկացրեց Դիոկղետիանոս կայսրը: Ի՞նչ էր քառապետությունը: Ինչո՞վ էր տարբերվում դոմինատը պրինցիպատից: Ո՞րն էր դոմինատի էությունը:
5. Ինչո՞ւ Կոստանդիանոսը մայրաքաղաքը տեղափոխեց Բյուզանդիոն: Վերհանե՛ք Նիկեայի տիեզերական ժողովի նշանակությունը:
6. Ինչո՞ւ Թեոդոսիոս կայսրը երկու մասի բաժանեց կայսրությունը: Որո՞նք էին Արևմտյան Հռոմեական կայսրության անկման պատճառները:

§ 3. ՀՌՈՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Գալլիայի հռոմեականացման սկիզբը: Ալպյան լեռներից այն կողմ ընկած եվրոպական ընդարձակ տարածաշրջանը Հռոմի արտաքին քաղաքականության տեսադաշտում հայտնվեց Կեսարի գալլական արշավանքների ժամանակ: Այս բազմազգ և բազմամշակույթ տարածքը Հռոմի համար կենսական մեծ նշանակություն ուներ երկու առումներով: Նախ՝ այն Հռոմին անմիջա-

կանորեն սահմանակից էր, և ոչ միշտ էր հնարավոր զսպել հյուսիսից հաճախակի Ալպյան լեռնանցքները հաղթահարող և Իտալիան ասպատակող ռազմատենչ ցեղերին: Երկրորդ՝ Եվրոպան Իտալիային առավել մոտ գտնվող նյութական և մարդկային պաշարների անսպառ աղբյուր էր, նաև շուկա, որը կարելի էր օգտագործել: Հյուսիսի բարբարոսների դեմ հուսալի արգելապատնեշը նաև հետագա առաջխաղացման համար հենակետ էր:

Կեսարի արշավանքներից անմիջապես հետո սկսվեց **Գալլիայի** յուրացումը՝ այսպես կոչված **«հռոմեականացումը»,** որը սկզբում իրականացվում էր համեմատաբար խաղաղ եղանակով:

Պատերազմներից մի քանի տարի անց Գալլիան բաժանվեց երկու վարչական շրջանների՝ **Գալլիա** և **Բելգիա**: Կեսարը և նրա հաջորդները չվերացրին գալլական ցեղերի ավանդական հասարակական–քաղաքական կառուցվածքը: Նախկինի պես ցեղերը արքայիկների և ցեղապետերի իշխանության տակ էին, որոնք պարտավոր էին ապահովել բնակչության հնազանդությունը Հռոմի հանդեպ և հավաքել հարկերը: Հռոմին հավատարիմ ցեղերը ստացան արտոնություններ և հողեր, իսկ նրանց մի մասին տրվեց նույնիսկ հռոմեական քաղաքացիություն: Կեսարը հանդուրժող էր նաև գալլերի ավանդական պաշտամունքների հանդեպ: Գալլ հոգևորականները՝ **դրուիդները,** շարունակում էին իրականացնել իրենց գործունեությունը՝ չնայած այն հանգամանքին, որ տաճարներում և սրբավայրերում պահվող հարստության զգալի մասը բռնագրավվեց: Քաղաքներում և որոշ շրջաններում լատիներենը հայտարարվեց պաշտոնական հաղորդակցության լեզու: Գալլիայում մտցվեց հռոմեական դրամական համակարգը, ընդ որում՝ միայն հռոմեական իշխանություններին իրավունք վերապահվեց հատելու ոսկե դրամ:

Գալլիայի յուրացումով սկսվեց Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի պատմության որակական նոր փուլ: Նախկինում Հռոմի և Ալպերից հյուսիս բնակվող ժողովուրդների փոխհարաբերություններում գերակշռող հակամարտությունը իր տեղը զիջեց խաղաղ հարաբերություններին: Ժամանակակից Ֆրանսիայի, Շվեյցարիայի և Բելգիայի կելտերը ներառվեցին Հռոմի վարչաքաղաքական համակարգ և, շնորհիվ նրա հետ համակողմանի միասնացման, բռնեցին քաղաքակրթության ճանապարհը:

Այդ գործընթացը շարունակվեց կայսրության շրջանում, երբ, **ի դեմս կելտական աշխարհի, զգալիորեն ընդլայնվեցին քաղաքակրթության տարածման սահմանները:** «Բարբարոսական ծայրագավառը» տեղափոխվեց Հռենոս գետից արևելք՝ սկսվելով հետագայի Գերմանիայից և շարունակվելով դեպի Արևելյան Եվրոպա: Կայսրության շրջանում այդ «բարբարոսներն» էին արդեն իրենց վրա զգում հռոմեականացման միտումները:

Հռոմեական Գալլիան: Գալլիայի հռոմեականացման գործընթացը շարունակվեց կայսրության շրջանում: Հռոմեական իշխանությունները ձգտում էին մարդկային և նյութական պաշարներով արտակարգ հարուստ այս տարածքը ներառել կայսրության քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային համակարգ: Առաջին հերթին կարգավորվեց Գալլիայի նկատմամբ իրականացվող հարկային համակարգը: Օգոստոսից սկսած՝ 15 տարին մեկ անգամ կատարվում էր գույքագրում և, դրան համապատասխան, հարկի չափի սահմանում: Գալլիայում իրականացվող յուրաքանչյուր տնտեսական գործարք ենթակա էր հարկման:

Գալլիայի կարևոր ռազմավարական կենտրոններում և գերմանական ցեղերին հարող սահմանային կետերում տեղադրվեցին հռոմեական կայազորներ: Դեռևս Կեսարի արշավանքներից մի քանի տարի անց հռոմեական զինվորների թիվը այստեղ հասավ շուրջ 100 հազարի: Մոտավորապես այդքան էլ հռոմեացի վերաբնակիչների հողեր տրամադրվեցին: Տասնյակ հազարավոր հռոմեացի առևտրականներ և այլ զբաղմունքի տեր անձինք մշտապես Գալլիայում էին: Սրանով հռոմեացիները ձգտում էին իրենց համար ստեղծել սոցի-

Գալլերի առաջնորդը հանձնվում է Հուլիոս Կեսարին

ալական ամուր հենարան՝ այն նույն քաղաքականությունը, որ իրականացնում էին Արևելքում:

Շարունակվեց Գալլիայի միասնացումը կայսրության քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային համակարգին: Այդ նպատակով հնազանդ ցեղերի ազնվականությանը տրվում էին արտոնություններ, նույնիսկ հռոմեական քաղաքացիություն: Մասնավորապես, կայսր Կլավդիոսը **48 թ.** Գալլիայի բնակիչներին շնորհեց հռոմեական Ծերակույտում ընտրվելու իրավունք:

Հռոմեական տիրապետությունը Գալլիայում ունեցավ դրական հետևանքներ նաև տնտեսության ասպարեզում:

Առաջինը Գալլիայի տնտեսության շարունակական վերելքն էր հատկապես գյուղատնտեսության բնագավառում: Կտրուկ աճեցին նախկինում անմշակ հողերի յուրացման ծավալները: Երկրագործությունը, մասնավորապես հացահատիկի մշակումը վերածվեց Գալլիայի տնտեսության հիմքի: Աճեց խոշոր քաղաքների և բնակավայրերի թիվը: Հիմնվեցին բարեկարգ ճանապարհներ: Պրովինցիաներ տարբեր միջոցներով ներթափանցում էր հռոմեական մշակույթը: Զգալի վերելք ապրեցին հանքարդյունաբերությունը, արհեստագործությունը և առևտուրը:

Հռոմեականացման գործընթացի առավել կարևոր ուղղությունը լատիներենի ներդրումն էր Գալլիայում: Գալլական ազնվականության վերնախավը արագ յուրացրեց լատիներենը՝ փորձելով նմանվել նվաճողներին՝ դրանից բխող հետևանքներով: Ք.հ. I դարում գալլական քաղաքների բնակչության խոսակցական լեզու, ի տարբերություն գյուղական շրջանների, գերազանցապես լատիներենն էր: Լատիներենը դասավանդվում էր դպրոցներում, այն պաշտոնական լեզու էր բանակում, որտեղ ծառայում էին շատ գալլեր: Լատիներենի ներդրմանը նպաստեց այն հանգամանքը, որ գոյություն չուներ միասնական կելտերենը, այլ կային ընդամենը բարբառներ: Բացի այդ, կելտերը չունեին սեփական գիր և օգտվում էին լատինական այբուբենից: Դրա հետևանքով արդեն կայսրության վերջին փուլում լատիներենը դարձավ Գալլիայի բնակչության մեծ մասի լեզուն:

Հռոմեականացման քաղաքականության արդյունքում Գալլիան աստիճանաբար կորցրեց իր ազգային–մշակութային նկարագիրը: Հռոմին մոտ գտնվող կամ տնտեսական և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող շրջանները միասնացան կայսրության կյանքի հետ:

Հռոմի քաղաքականությունը Արևելքում: Հռոմի արևելյան քաղաքականությունը էականորեն տարբերվում էր եվրոպականից: Ք.ա. I դարում Արևելքում Հռոմի նվաճումների պահին այստեղ ապրում էին պետականության և ընդհանրապես քաղաքակրթության հնագույն ավանդույթներ ունեցող ժողովուրդներ: Վերջապես՝ այստեղ կային ռազմաքաղաքական և տնտեսական խոշոր ներուժ ունեցող պետություններ՝ **Պարթևստանը** և **Մեծ Հայքը**, որոնք իրենք էին ձգտում ընդարձակելու սեփական ազդեցության ոլորտը: Հռոմը ստիպված էր հաշվի նստել Արևելքում տիրող իրավիճակի հետ:

Արևելքում Հռոմի քաղաքական հետաքրքրությունները տարածվում էին **երեք տիպի տարածքների** վրա:

Առաջինը Առաջավոր Ասիայի արևմուտքում գտնվող շրջաններն էին, որոնք դեռևս Առաջին եռապետության ժամանակ վերածվել էին հռոմեական պրովինցիաների (**Արևմտյան Փոքր Ասիա, Սիրիա, Պաղեստին, Եգիպտոս**): Այստեղ հիմնվում էին հռոմեական գաղութներ, որոնց բնակիչները հիմնականում հողատերեր, առևտրականներ և արհեստավորներ էին: Սրանք կազմում էին պրովինցիաների բնակչության արտոնյալ խավը: Ինչպես և Եվրոպայում, այստեղ էլ իրականացվում էր հռոմեականացման քաղաքականությունը: Հռոմը այստեղ հենվում էր նաև տեղական ազնվականության վրա, որը ժամանակի ընթացքում սկսում էր հռոմեականանալ:

Երկրորդ տիպի շրջաններն էին կազմում Հռոմից կախյալ քաղաքական միավորները՝ Պոնտոսը, Կապադովկիան, Կոմմագենեն և այլք: Սրանց արքաները ճանաչել էին Հռոմի գերիշխանությունը և վայելում էին **կիսանկախ կարգավիճակ**՝ հարկի վճարման և ինքնուրույն արտաքին քաղաքականություն չվարելու պայմաններով: Այս երկրները միաժամանակ արգելապատնեշային տարածքների դեր էին կատարում մի կողմից՝ Հռոմի, մյուս կողմից՝ Պարթևստանի և Մեծ Հայքի միջև:

Երրորդ խմբի մեջ էին մտնում անկախ և հզոր պետությունները՝ Մեծ Հայքը և Պարթևստանը: Հռոմը հնարավորություն չուներ ուղղակի ծավալման միջոցով իր տիրապետությունը հաստատելու նրանց վրա: Նրանց հետ հարաբերություններում, սկսած Օկտավիանոսից, գերիշխում էր դիվանագիտական պայքարի քաղաքականությունը, որն իրականացվում էր ներքին հակասությունների օգտագործման միջոցով: Հռոմը

ձգտում էր այստեղ ստեղծել հռոմեամետ ուժեր, աջակցում էր Պարթևստանում և Մեծ Հայքում ոչ հռոմեամետ արքաների դեմ ծավալվող պայքարին: Այդ քաղաքականությունը լիուլի դրսևորվեց Հռոմեական կայսրության գոյության ողջ ընթացքում, երբ պայքարը հանուն Հայաստանի նկատմամբ ազդեցության հաճախ հանգեցնում էր տևական պատերազմների: Այդ էր պատճառը, որ Արևելքում Հռոմը ի վիճակի չէր լայնորեն ծավալվելու կամ վարելու հռոմեականացման քաղաքականություն, ինչպիսին կատարում էր դեռևս գերազանցապես տոհմատիրական փուլում գտնվող Եվրոպայում:

Այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ Հռոմը փորձեր էր կատարում ընդարձակելու իր տիրապետության շրջանակները: Սակայն հաջողությունները կարճատև էին, ինչպես եղավ կայսր Տրայանոսի պարթևական արշավանքի ժամանակ: Նույնիսկ պարթևական մայրաքաղաք Տիզբոնի նվաճումը հնարավորություն չտվեց երկար ժամանակով հաստատվելու Միջագետքում: Հետագա դարերում էլ հռոմեա–պարթևական և հռոմեա–սասանյան հակամարտությունը շարունակվեց, սակայն առանց էական հաջողությունների կողմերից որևէ մեկի համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էին հռոմեացիները մեծ ուշադրություն դարձնում Ալպյան լեռներից հյուսիս ընկած եվրոպական տարածաշրջանին:
2. Գալլիայի հռոմեական յուրացումը ի՞նչ նշանակություն ունեցավ Եվրոպայի պատմության մեջ: Ք. հ. I–III դարերում Եվրոպայի ո՞ր մասն էր համարվում «բարբարոսական ծայրագավառ»:
3. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Հռոմը Արևելքում: Ներկայացրե՛ք երեք տիպի տարածքներն Արևելքում՝ ըստ Հռոմի արտաքին քաղաքականության: Ի՞նչ գիտեք հռոմեա–հայ–պարթևական հարաբերությունների մասին:

§ 4. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Պարթևական պետությունը: Սելևկյան տերությունը հազիվ մի քանի տասնամյակ պահպանեց իր լայնածավալ տերության արևելքը: Արդեն Ք.ա. III դարի կեսերին սելևկյաններից անջատվեցին և պետություններ ստեղծեցին **Բակտրիան** և **Պարթևստանը**: Պարթևական պետության հիմնադիրը **Արշակն** էր, որի անունով էլ արքայատոհմը սկսեց կոչվել **Արշակունի**: Սկզբնապես փոքր Պարթևստանը ստիպված էր ծանր պայքար մղել Սելևկյանների դեմ:

Պարթևստանի վերելքը կապված էր **Միհրդատ I–ի** (Ք.ա. 171–138) անվան հետ: Մի շարք արշավանքների արդյունքում պարթևների իշխանությունը տարածվեց արևելքում մինչև Հինդուքուշի լեռներ, իսկ արևելքում՝ Եփրատ գետը: Սակայն այնուհետև նոր սպառնալիք ստեղծվեց՝ ի դեմս արևելքից արշաված **թոխարների**: Պարթևական արքաներ **Հրահատ II–ը** և **Արտավան I–ը** զոհվեցին թոխարների դեմ պատերազմում: Միայն **Միհրդատ II–ին** հաջողվեց կանգնեցնել հակառակորդին: Արքան նույնիսկ փորձ կատարեց մերձենալու Հռոմի հետ՝ դեսպան ուղարկելով Սուլլայի մոտ:

Պարթևական պետության հզորացմանը ծանր հարված հասցրեց **Մեծ Հայքի արքա Տիգրան Մեծը**՝ նրանից զավթելով զգալի տարածքներ: Սակայն Տիգրանի անհաջողությունը Հռոմի դեմ պատերազմում կրկին խթանեց պարթևների ակտիվությունը: **Ք.ա. 53 թ. Խառանի** ճակատամարտից հետո պարթևները գրավեցին ամբողջ Սիրիան: Պարթևական արքա **Հրահատ IV–ը** պարտության մատնեց Մարկոս Անտոնիոսին նրա՝ Ք.ա. 36 թ. արևելյան արշավանքում: Այս պահից պարթևա–հռոմեական հարաբերություններում հաստատվեց երկարատև խաղաղություն: Պարթևստանը այս շրջանում վերածվեց Առաջավոր Ասիայի հզոր տերության, որի հետ Հռոմը ստիպված էր մշտապես հաշվի նստել:

Պարթևստանը նոր փորձության ենթարկվեց կայսր Տրայանոսի օրոք արևելքում վերսկսված Հռոմի ակտիվության շրջանում: **116 թ.** Տրայանոսը գրավեց Սելևկիան և պարթևների մայրաքաղաք Տիզբոնը: Միայն կայսեր մահը փրկեց պարթևներին հետագա կորուստներից: Պարթևական վերջին արքա **Արտավան V–ը** հռոմեացիներից հետ նվաճեց Միջագետքը, սակայն մի քանի տարի անց՝ **226 թ.,** Պարթևական պետությունը անկում ապրեց Սասանյանների ապստամբության հետևանքով: Սասանի որդի **Արտաշիրի** բարձրացրած ապստամբությունը ավարտվեց հաջողությամբ. պարթևական վերջին արքա Արտավան V–ը սպանվեց:

Պարթևական պետությունը քաղաքակրթական տարբեր աստիճանների վրա գտնվող երկրների միություն էր: Բուն Պարթևստանը և իրանալեզու շրջանները բաղկացած էին արքայատոհմի անդամների կողմից կառավարվող կիսանկախ մարզերից, որոնց կառավարիչները հաճախ իշխում էին ժառանգաբար (Ատրպատական, Ֆարս, Էլամ): Այս կառավարիչներն ունեին սեփական զորք, զգալի ինքնուրույնություն, իսկ ոմանք նույնիսկ սեփական դրամ էին հատում: Տերության առավել զարգացած շրջանը արևմուտքն էր (Միջագետք և Սիրիա), որոնք հելլենիստական քաղաքակրթական կենտրոններ էին:

Պարթևստանի կառավարման համակարգը լիովին արտացոլում էր տերության բազմաշերտ կառուցվածքը: Գոյություն չուներ պետական կառավարման միասնական համակարգ: Հաճախ պահպանվում էին նվաճված երկրում նախկին ժամանակներից մնացած կառավարման մարմինները:

Պարթևական արքաները հաշվի էին նստում տերության կազմում գտնվող երկրների առանձնահատկությունների ու ավանդույթների հետ: Արքայական իշխանության թուլության, ծանր պատերազմների շրջանում տերության ինքնուրույն միավորները սկսում էին դրսևորել կենտրոնախույս միտումներ: Այսպես՝ 58 թ. անկախացավ Վրկանիան, որի արքան նույնիսկ դեսպանություն ուղարկեց Հռոմ: III դարի սկզբին տերության կազմից դուրս եկավ **Ֆարսը,** որի արքան ընդունեց **շահ** («արքա») տիտղոսը:

Հնդկաստանը Մաուրյան հարստության շրջանում: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից մի քանի տարի անց նվաճողների դեմ սկսվեց ապստամբություն՝ **Մաուրյան տոհմի** ներկայացուցիչ **Չանդրագուպտայի** գլխավորությամբ: Նա վտարեց մակեդոնացիներին, իսկ **Ք.ա. 305 թ.** պարտության մատնեց Հնդկաստան արշաված Սելևկոս I–ի զորքերին: Նորաստեղծ պետության կենտրոնական մասը ընդգրկում էր **Մագադիան**՝ Գանգեսի հովտում, որի մայրաքաղաքն էր **Պատալիպուտրան**: Չանդրագուպտային փոխարինեց որդին՝ **Աշոկան (Ք.ա. 268–231),** որի օրոք Մաուրյան պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին:

Պետությունը տարածվում էր գրեթե ողջ թերակղզու վրա՝ ընդգրկելով նաև Հնդկաստանից արևմուտք զգալի տարածքներ: Աշոկան ստեղծեց պետական կառավարման այնպիսի համակարգ, որն ապահովում էր ահռելի տերության կառավարումը: Տերությունը բաժանվեց 5 փոխարքայությունների, որտեղ կառավարում էին արքայատոհմի անդամները: Արքային կից գործում էր արքայական խորհուրդը, որի անդամները բարձրագույն ազնվականության ներկայացուցիչներն էին: Արքան իր մերձավորների հետ հաճախ շրջում էր երկրով, որպեսզի անձամբ վերահսկի փոխարքաների գործունեությունը:

Պետությունն ամրապնդելու ճանապարհին կարևոր խնդիր էր տերության տարբեր շրջանների բնակչության միջև հոգևոր կապերի սերտացումը, քանի որ յուրաքանչյուր երկիր ուներ իր սեփական կրոնապաշտամունքային համակարգը: Չվերացնելով մյուս կրոնները՝ Աշոկան համապետական կրոն հռչակեց **բուդդայականությունը**:

Մաուրյան պետությունը Աշոկայից հետո սկսեց թուլանալ: Նախկին ինքնուրույն պետությունները սկսեցին դուրս գալ տերության կազմից:

Մաուրյան տերությունը Հնդկաստանի պատմության մեջ առաջին համահնդկական պետությունն էր, որի արքաները փորձում էին ստեղծել մեկ միասնական քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային համակարգ:

Չինաստանը Ցին կայսրության շրջանում: Ք.ա. V–III դարերում Չինաստանը բաժանված էր մի շարք խոշոր և մանր թագավորությունների՝ **Հան, Չժաո, Ցան, Ցին** և այլն: Ընդհուպ մինչև Ք.ա. III դարը սրանցից Ցին պետությունը երկրորդական դեր ուներ: Արքաների հիմնական մտահոգությունը երկիրը բարեփոխումների միջոցով ներսից ամրապնդելն էր: Այդ ասպարեզում կարևոր նշանակություն ունեցան բնակչության բաժանումը 20 գույքային խմբերի, բանակի վերակազմավորումը (նոր զորամասերի ստեղծում, մարտավարման նոր եղանակ և այլն), հարկային համակարգի բարելավումը:

Ք.ա. IV դարի վերջերից Ցինի արքաները սկսեցին նվաճողական պատերազմներ: **Ք.ա. 221 թ.** Ցինի արքա **Ին Զժենը** հաղթեց վերջին հակառակորդներին՝ Յան և Ցի պետություններին: Նա ընդունեց Հուանդի տիտղոսը և այդուհետև սկսեց կոչվել **Ցին Շի Հուանդի՝** «Ցինի առաջին կայսր» (Ք.ա. 246–210 թթ.): Հետագայում կայսրը գրավեց նաև Չինաստանի հարավային մասը՝ ընդհուպ մինչև Հարավ–չինական ծով, իսկ հյուսիսում վտարեց քոչվոր հոներին: Քոչվորների առջև պատնեշ ստեղծելու նպատակով նա կառուցեց Չինական մեծ պարիսպը՝ շուրջ 5000 կմ երկարությամբ:

Ցին Շի Հուանդին կատարեց վարչական բարեփոխումներ՝ կայսրությունը բաժանելով 40 մարզերի: Կայսրը ձգտում էր ստեղծել միասնական ժողովուրդ՝ միասնական կառավարման համակարգով: Արգելվեց տարբեր մարզերի բնակիչներին իրենց անվանել ըստ տվյալ մարզի նախկին անվան (օրինակ՝ վեյցի, յանցի և այլն): Երկրի ներքին շրջաններում գտնվող քաղաքների պարիսպները քանդվեցին, պահպանվեցին միայն սահմանամերձ շրջանների ամրությունները: Մասնավոր անձանց ձեռքում գտնվող զենքն առգրավվեց: Արգելվեց նաև կրել ժառանգական տիտղոսներ. բոլոր քաղաքացիները հավասար էին օրենքի առջև: Մտցվեցին միասնական օրենսդրություն և գերագույն վերահսկողական ծառայություն, որը պետք է վերահսկեր վարչական աշխատակազմին և ենթարկվում էր անձամբ կայսրին: Բնակչության պատկանելությունը գույքային խմբերին որոշվում էր ըստ գույքի և պետության հանդեպ ծառայության աստիճանի:



Մաուրյան արքա Աշոկայի հիմնած բուդդայական տաճարի ավերակները. Սարնատխ

Կայսրը մեծ նշանակություն էր տալիս տերության տարածքում ցամաքային և գետային ճանապարհաշինությանը: Շինարարական աշխատանքները մեծ չափեր ընդունեցին: Մտցվեցին կշռի, երկարության, ծավալի միասնական միավորներ, ինչպես նաև միասնական դրամ: Կատարվեց նաև գրային համակարգի բարեփոխում: Հիերոգլիֆային գիրը պարզեցվեց, որպեսզի հեշտացվի դրա կիրառումը: Ժամանակակից չինական գրի հիմքում ընկած է այդ շրջանի գրային համակարգը:

Այսպիսով՝ Ցին Շի Հուանդին արմատական բարեփոխումներ իրականացրեց տերության հասարակական–քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային բնագավառներում, որոնց նպատակն էր ստեղծել միասնական ամուր պետականություն: Դա ծանր հարված էր տոհմատիրական կարգերին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ և ո՞վ հիմնադրեց Պարթևական պետությունը: Ո՞ւմ օրոք վերելք ապրեց Պարթևստանը: Ք.ա. I դարի առաջին կեսին ո՞վ ծանր հարված հասցրեց Պարթևների տերությանը: Ի՞նչ արդյունք ունեցան այդ նույն դարի երկրորդ կեսի հռոմեա–պարթևական բախումները: Ե՞րբ անկում ապրեց Պարթևստանը:
2. Ներկայացրե՛ք Պարթևստանի հասարակական կյանքի առանձնահատկությունները: Ինչպի՞սի էր կառավարման համակարգը:
3. Ո՞վ գլխավորեց մակեդոնացիների դեմ պայքարը Հնդկաստանում Ք.ա. IV դ. վերջին: Ո՞ւմ օրոք Մաուրյան պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Կառավարման ի՞նչ համակարգ նա ստեղծեց: Ո՞ր կրոնը դարձավ համապետական:
4. Ցին արքաների պատերազմները ի՞նչ արդյունքներ տվեցին Ք.ա. III դ. վերջին:
5. Ի՞նչ է նշանակում Ցին Շի Հուանդի կայսեր անունը: Վերհանե՛ք նրա բարեփոխումների բովանդակությունը և նշանակությունը:

§ 5. ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ՆՈՐ ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Չինաստանը Հան հարստության օրոք: **Ցին Շի Հուանդին** միայն մի քանի տարով կարողացավ պահպանել իր ստեղծած տերությունը: Ցինի, ինչպես նաև նախկինում անկախ պետությունների ազնվականությունը դժգոհ էր կայսեր անսահմանափակ իշխանությունից: Կայսեր մահից հետո սկսվեցին պալատական խլրտումներ և հուզումներ, որոնք վերածվեցին քաղաքացիական պատերազմի: Ապստամբների առաջնորդներից **Լյու Բանը Ք.ա. 202 թ.** իրեն հայտարարեց կայսր: Նրանով սկսվեց Ավագ Հան հարստության կայսրությունը:

Քաղաքացիական պատերազմի ավարտին տերությունը նյութական և մարդկային խոշոր կորուստներ էր կրել: Ավերվել էին բնակավայրերը, ոռոգողական կառույցները, երկրում սով էր տիրում: Պատմիչ **Սիմա Ցյանի** հավաստմամբ՝ մայրաքաղաքներում և խոշոր քաղաքներում 10 բնակչից մնացել էր հազիվ 1–2–ը: Կայսրն իրականացրեց տնտեսության ապակենտրոնացում: Համայնքներին վերադարձվեցին նրանց արոտավայրերը, անտառները և ջրամբարները, որոնք պետականացվել էին Ցին Շի Հուանդիի ժամանակ:

Կայսրը վերականգնեց պետական կառավարման քայքայված մարմինները: Նա մեծացրեց գյուղական համայնքների մասնակցությունը տեղական կառավարման մարմինների աշխատանքներին: Տեղերում կայսերական վարչակազմի ղեկավարին կցվեցին ընտրովի համայնքապետեր, որոնք պետք է զբաղվեին ոստիկանական և ֆինանսական գործառույթներով:

Կայսրը սկզբում ստիպված էր հանդուրժել չինական նախկին պետություններում իշխող արքաների ժառանգական իրավունքները: Վերջիններս, որ կոչվում էին **վան** («կառավարիչ, արքա»), շարունակեցին տիրել իրենց տարածքներում: Սակայն վաները շուտով սկսեցին ինքնուրույն քաղաքականություն վարել: Այդ էր պատճառը, որ հետագայում Լյու Բանը վերացրեց վաների արտոնությունները, իսկ մի մասին մահապատժի ենթարկեց:

Լյու Բանից հետո վաների կենտրոնախույս միտումներն ուժեղացան: **Ք.ա. 154 թ.** կայսրին մեծ դժվարությամբ հաջողվեց ճնշել 7 վաների ապստամբությունը: Վաներին ջախջախիչ հարված հասցրեց միայն **Ու Դի** կայսրը (Ք.ա. 140–87 թթ.): Վերջինիս կառավարման հետ է կապված Չինաստանի տնտեսության զգալի վերելքը:

Ընդարձակվեց ոռոգման համակարգը, աճեց մշակովի հողատարածությունների քանակը: Պետական մենաշնորհ մտցվեց աղի, երկաթի, գինու արտադրության բնագավառում:

Առևտրադրամական հարաբերությունները ներթափանցեցին տերության կյանքի բոլոր բնագավառներ: Պետական գանձարանի եկամուտներն ընդարձակելու նպատակով **Ք.ա. 123 թ.** թույլատրվեց պետական պաշտոնների առք ու վաճառքը: Զգալիորեն աճեց բնակչության թվաքանակը: Մարդահամարի տվյալներով՝ Չինաստանի բնակչությունը այս շրջանում հասնում էր շուրջ 60 միլիոնի:

Կատարելագործվեց նաև պետական կառավարման համակարգը: Տերությունը բաժանվեց 13 մարզերի, վերջիններս՝ 83 ավելի մանր շրջանների: Մարզերից յուրաքանչյուրում կառավարում էր կայսեր նշանակած փոխարքան: **Ք.ա. 136 թ.** սահմանվեց օրենք պետական պաշտոնյաների վերաբերյալ: Վերջիններս պաշտոնավարման անցնելուց առաջ պարտավոր էին քննություն հանձնել, որի արդյունքներով ստանում էին համապատասխան դասային աստիճաններ:

Կայսրը վերակազմավորեց նաև բանակը, քանի որ Չինական մեծ պարսպից հյուսիս ապրող քոչվոր հոները հաճախ ասպատակում էին տերության հյուսիսային շրջանները և երբեմն նույնիսկ հասնում մայրաքաղաք:

Չեզոքացնելով հոների սպառնալիքը՝ կայսրն ինքը անցավ գործուն քաղաքականության: Արևմուտքում կայսերական բանակը հասավ մինչև Ֆերգանայի հովիտ՝ Կենտրոնական Ասիայում, որով Չինաստանը անմիջական կապ հաստատեց Առաջավոր Ասիայի պետությունների հետ: Բացվեց **Մետաքսի ուղին,** որը խոշոր եկամուտներ էր ապահովում պետական գանձարանի համար:

Հան տերության վերելքը, սակայն, ուղեկցվում էր նաև բացասական երևույթներով: Պետական խոշոր ծախսերը փոխհատուցվում էին հարկերի ավելացմամբ: Բնակչության համար հատկապես ծանր էր 3–80 տարեկան անձանց վրա շնչահարկի սահմանումը: Հաճախ մարդիկ ստիպված էին ընտանիքներով հեռանալ իրենց բնակավայրերից:

Ք.հ. 8 թ. իշխանությունը զավթեց մանկահասակ կայսեր խնամակալ **Վան Մանը**, ով իրեն հայտարարեց **Մին** հարստության կայսր: Իր համար սոցիալական հենարան ապահովելու նպատակով նա խոստացավ բոլոր կարիքավորներին հող տրամադրել: Սակայն կայսրը ստիպված էր ավելացնել հարկերը (բերքի 1/10 մասը), որը ծանր հարված էր բնակչության բոլոր խավերի համար:

Վան Մանի դիրքերը վտանգվեցին հոների ակտիվության հետևանքով: Վերջիններս արևմուտքում գրավեցին Մետաքսի ուղին, և կայսրը պարտություն կրեց նրանց դեմ պատերազմում: Իսկ երկրում սկսվեցին ապստամբություններ: Հատկապես լուրջ էր «Կարմրահոնքերի» ապստամբությունը: Հան արքայատոհմի ներկայացուցիչներից **Գուան Ու Դին** շուտով ճնշեց ապստամբությունը և իրեն կայսր հայտարարեց: Նրանով Չինաստանում սկսվեց Կրտսեր Հան հարստությունը:

Գուպտաների տերությունը: Մաուրյան պետության տրոհումից հետո Հնդկաստանում կային տասնյակ պետություններ: Ք.ա. II դարում Հնդկաստանի հյուսիս–արևմուտքը գրավվեց Բակտրիայում և ժամանակակից Աֆղանստանի տարածքում գտնվող քուշանական թագավորության կողմից: Քուշանների տիրապետությունը համեմատաբար թույլ էր: Հնդկական մշակույթը և հատկապես բուդդայական կրոնը այս շրջանում զգալի վերելք ապրեցին: Քուշանական արքա **Կանիշկայի** օրոք բուդդայականությունը նույնիսկ տարածվեց ողջ տերությունում: Զգալի առաջընթաց ապրեց քուշանների տիրապետության տակ գտնվող հնդկական տարածքների տնտեսությունը:

Ք.հ. II դարից սկսած՝ Հնդկաստանի շատ շրջաններ փաստացի անկախացան քուշաններից, և այստեղ ստեղծվեցին անկախ պետություններ (**Գանգեսի հովիտը, Ռաջաստանը, Փենջաբը** և այլն): Հնդկական պետություններից հատկապես աչքի էր ընկնում **Մագադհան**, որի կառավարիչ **Գուպտան** III դարում ստեղծեց խոշոր պետություն:

Պատերազմների արդյունքում Գուպտաները ստեղծեցին հզոր պետություն: Նվաճված պետություններում Գուպտաները վերացնում էին տեղական արքայատոհմերի իշխանությունը և նրանց փոխարեն նշանակում իրենց մերձավորներին: Գուպտաների պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին **Չանդրագուպտա II–ի** (380–415) օրոք: Նա նվաճեց Հնդկաստանի արևմուտքը՝ դուրս գալով Արաբական ծովափ, որով անմիջական կապ ստեղծվեց Առաջավոր Ասիայի երկրների հետ: Նրա կառավարման շրջանում տերությունը հասավ իր առավելագույն չափերին: Աննախընթաց վերելք ապրեցին տնտեսությունը և մշակույթը: Չանդրագուպտան հովանավորում էր գիտնականներին, գրողներին և արվեստագետներին: Արքայի կառավարման շրջանը հետագայում կոչվեց **«Գուպտաների ոսկեդար»:**

Չանդրագուպտայի հետնորդների օրոք տերությունը սկսեց դժվարություններ կրել, որ առաջին հերթին կապված էր արքայատոհմի անդամների միջև ծավալված գահակալական պայքարի հետ: Երկրի թուլացմանը նպաստեցին նաև պար-



Չինական մեծ պարիսպը

բերաբար Հնդկաստան արշավող հոների դեմ մղվող պատերազմները: Հաջորդ դարում Գուպտաների պետությունը մասնատվեց մանր թագավորությունների: Կրկին սկսվեց Հնդկաստանի քաղաքական մասնատվածության փուլը, որը տևեց երկար ժամանակաշրջան:

Հնդկաստանի մշակույթը Գուպտաների օրոք: Գուպտաների շրջանում Հնդկաստանը ապրեց իր մշակութային առավելագույն վերելքը: Այն ժամանակվա քաղաքակիրթ աշխարհում Հնդկաստանը հայտնի էր որպես զարգացած և իմաստուն մարդկանց երկիր:

Հնդկական գիտության զարգացածության վառ վկայությունն է փիլիսոփայական տարբեր ուղղությունների առկայությունը: Այս շրջանում գիտական սուր պայքար էր ընթանում նյութապաշտական և գաղափարապաշտական ուղղությունների միջև: **Չարվակա** ուղղության հետևորդները գտնում էին, որ աշխարհում նյութն է միակ իրականը, իսկ գիտելիքի միակ աղբյուրը զգացական ընկալումն է: Աշխարհը բաղկացած է չորս նյութերից՝ օդ, կրակ, ջուր և հող: Մահվանից հետո մարմինը կրկին վերածվում էր սկզբնական նյութի: Գիտակցությունը գոյություն ունի միայն կենդանի մարմնում, այդպիսով՝ հոգին անմահ չէ: Այդ պատճառով նրանք չէին ընդունում հոգու տեղափոխումը մարմնից մարմին, ինչպես նաև դրախտի և դժոխքի գաղափարը:

Հնդիկները անգերազանցելի էին հատկապես **մաթեմատիկայի** և **աստղագիտության** ասպարեզում: Նրանց է պատկանում «արաբական» կոչվող թվերի հայտնագործությունը: Նրանք գիտեին քառակուսի արմատը, երկու անհայտով հավասարումները, սինուսների աղյուսակը և այլն: Նրանց կարծիքով՝ երկրագունդը կլոր է և պտտվում է իր առանցքի շուրջը, այն ունի

Չանդրագուպտայի մետաղադրամը

ձգողական ուժ, մոլորակները դասավորված են Երկրից շատ հեռու:

Գուպտաների շրջանում ձևավորվեց և լայն կիրառություն ստացավ Հնդկաստանի բազմաթիվ լեզուներից **սանսկրիտը**: Դրանով են գրված նշանավոր «Մահաբհարատա» և «Ռամայանա» վիպերգությունները: Հնդկական բարոյախրատական բնույթի գրականության ազդեցության տակ է ստեղծվել արաբական «Հազար ու մի գիշերը»:

Հին հնդկական գրականության խոշորագույն գործիչ **Կալիդասան** (IV–V դդ.) ապրել է հենց այս շրջանում: Նա դրամատիկ ստեղծագործությունների անգերազանցելի վարպետ էր:

Աննախադեպ նվաճումների հասավ նաև հնդկական կոթողային ճարտարապետությունը: Գուպտաների օրոք են կառուցվել բուդդայական խոշորածավալ տաճարները՝ **ստուպաները**:

Գուպտաների օրոք Հնդկաստանում ստեղծված մշակութային արժեքները գոյատևեցին նաև հետագայում՝ ամուր հիմք ստեղծելով միջնադարյան և նոր շրջանի հնդկական մշակույթի զարգացման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ և ե՞րբ հիմնադրեց Հան հարստությունը Չինաստանում: Ի՞նչ հետևանքներ ունեցավ քաղաքացիական պատերազմը: Թվարկե՛ք կայսր Լյու Բանի ձեռնարկած միջոցառումները դրությունը կարգավորելու համար:
2. Հան հարստության օրոք Չինաստանի առաջընթացի մասին վկայող ի՞նչ փաստարկներ կարող եք նշել: Որո՞նք էին Հան հարստության անկման պատճառները:
3. Ինչպիսի՞ն էր Հնդկաստանի քաղաքական վիճակը Մաուրյան պետության անկումից հետո: Որտե՞ղ և ե՞րբ ստեղծվեց Գուպտաների պետությունը:
4. Ինչպե՞ս է կոչվում Չանդրագուպտա II–ի կառավարման շրջանը և ինչո՞ւ: Որո՞նք էին Գուպտաների տերության մասնատման գլխավոր պատճառները:
5. Այս ժամանակի Հնդկաստանը հայտնի էր որպես զարգացած, իմաստուն մարդկանց երկիր. ի՞նչն էր նման գնահատականի հիմքը: Թվարկե՛ք հնդկական մշակույթի նվաճումները:

ՄԱՍ 2 ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԳԼՈՒԽ Ա ԱՆՅՈՒՄ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ



§ 1. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Միջնադարյան քաղաքակրթության ձևավորման ուղիները: Միջնադարյան քաղաքակրթության ձևավորումը բարդ ու երկարատև գործընթաց էր: Եթե Եվրոպայում անտիկ քաղաքակրթությունը հիմնականում զարգանում էր Հին Հունաստանում և Հռոմում, ապա միջնադարի քաղաքակրթությունը ընդգրկում է ողջ Եվրոպան:

Միջնադարին անցման ժամանակ Եվրոպայում գոյություն ունեին երկու տարբեր հասարակություններ՝ **ուշ անտիկ** և **բարբարոսական:** Առաջինը ներառում էր Հռոմեական կայսրության սահմաններում բնակվող ժողովուրդներին, իսկ երկրորդը՝ բարբարոսական ցեղերին (գերմանացիներ, սլավոններ, կելտեր): Իրավիճակը փոխվեց, երբ գերմանական ցեղերի մի մասը տարաբնակվեց Արևմտահռոմեական կայսրության սահմաններում: Սա Եվրոպայի հետագա ճակատագրի համար մեծ նշանակություն ունեցավ: Երբ կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց, փոխվեց Եվրոպայի քաղաքական քարտեզը: Կայսրության զբաղեցրած տարածքներում և Եվրոպայի մնացած մասերում կազմավորվեցին ավատատիրական տիպի պետություններ: Եվրոպայում միջնադարի քաղաքակրթությունը ձևավորվում էր ինչպես երկու հասարակությունների (հռոմեական և բարբարոսական) բախման և փոխներգործության, այնպես էլ նրանցից որևէ մեկի բացակայության պայմաններում: Արդյունքում միջնադարը առաջանում էր համադրման և ներքին ճանապարհներով:

Ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջանում (IV–VII դդ.) բարբարոսական ցեղերի տեղաշարժերը նախորդ տեղաշարժերից տարբերվում էին ոչ միայն իրենց չափերով, այլև բնույթով: Այժմ տեղաշարժերին մասնակցում էին ավելի մեծ քանակությամբ մարդիկ: Նրանք չէին բա-

վարարվում կայսրության սահմանամերձ շրջաններն ասպատակելով, այլ տարաբնակվում էին նրա տարածքներում: Այսպես՝ արևմտյան գոթերը նախ հաստատվեցին Հարավային Գալլիայում և Իսպանիայում, վանդալները՝ Հյուսիսային Աֆրիկայում, ֆրանկները՝ Գալլիայում, արևելյան գոթերը, ապա և լանգոբարդները՝ Իտալիայում, անգլոսաքսերը՝ Բրիտանիայում: Չնայած, որ նվաճված շրջաններում գերմանացիները կազմում էին բնակչության ընդամենը 2–10%–ը, սակայն սկսեցին գործուն դեր խաղալ նոր տարածքների սոցիալ–քաղաքական կյանքում: Այսպես՝ Արևմտյան Եվրոպայի մի շարք շրջաններում (Գալլիա և Իսպանիա) միջնադարը առաջացավ գերմանական տոհմացեղային հասարակության և ուշ Հռոմեական հասարակության փոխներգործության և համադրման արդյունքում:

Նոր հասարակության առաջացման համար անհրաժեշտ էին որոշակի պայմաններ: Դրանցից կարևորը եկվոր գերմանացիների և տեղաբնիկների թվական հարաբերակցությունն էր: Չնայած գերմանացիները կարողացել էին նվաճված տարածքներում իրենց ձեռքը վերցնել քաղաքական իշխանությունը, սակայն եթե նրանք թվաքանակով անհամեմատ քիչ լինեին, ապա կձուլվեին տեղաբնիկների մեջ:

Հռոմեագերմանական համադրման մյուս նախապայմանը կապված էր գերմանացիների տարաբնակեցման բնույթի հետ: Գալլիայում, Իսպանիայում, Իտալիայում հաստատված գերմանական ցեղերը սովորաբար զբաղեցնում էին ազատ հողատարածքները, իսկ անհրաժեշտության դեպքում տեղաբնիկներից վերցնում էին մշակելի հողերի և արոտավայրերի մի մասը: Այս դեպքում գերմանացիները և տեղաբնիկները ապրում էին սերտ հարևանությամբ կամ խառը բնակչություն ունեցող գյուղերում:

Այն դեպքում, երբ գերմանացիները ապրում էին մեկուսի, տեղաբնիկների հետ տնտեսական կապերը թույլ էին կամ բացակայում էին, հետևաբար նոր հասարակության ձևավորումն ու զարգացումը դանդաղում էր:

Միջնադարյան քաղաքակրթության առաջացման ժամանակ հասարակությունները զարգացման տարբեր աստիճանների վրա էին: Կախված նրանից, թե հասարակությունը զարգացման որ աստիճանից էր անցնում միջնադարին, ներքին ճանապարհը ստորաբաժանվում է երկու ուղու: Առաջին դեպքում (Բյուզանդիա, Իրան, Հնդկաստան, Չինաստան) միջնադարը ձևավորվում էր անկում ապրող անտիկ և արևելյան հասարակարգի ներսում: Երկրորդ դեպքում (Գերմանիա, Բրիտանիա, Արաբական թերակղզի) միջնադարը ծնվեց քայքայվող տոհմացեղային հասարակարգի ներսում:

Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Միջնադարը ներառում է ավատատիրական հարաբերությունների ձևավորման, զարգացման և անկման փուլերը, ուստի այն հաճախ անվանում են **ավատատիրական քաղաքակրթություն:** Երբեմն անվանում են նաև երկրագործական հասարակություն, քանի որ բնակչության հիմնական զանգվածը զբաղվում էր երկրագործությամբ:

Միջնադարի մարդը շրջակա միջավայրը հիմնականում օգտագործում էր գյուղատնտեսական աշխատանքների համար: Հողն օգտագործում էր որպես ցանքատարածություններ, արոտավայրեր, այգիներ: **Բնակավայրի հիմնական ձևը գյուղն էր:** Տունը ծառայում էր ոչ միայն որպես բնակատեղի, այլև անհրաժեշտ ապրանքներ արտադրելու տեղ: Այս ամբողջը միասին կազմում էին մարդու սոցիալական միջավայրը:

Սոցիալական շերտավորման արդյունքում ազատ մարդկանց զանգվածից անջատվեց տոհմացեղային ավագանին, որն իր ձեռքում կենտրոնացրեց հսկայական հողատարածքներ և անասունների հոտեր: Այժմ տնտեսություն կազմակերպելու համար նրանց անհրաժեշտ էր շահագործել ուրիշի աշխատանքը: Քանի որ ստրուկները սակավաթիվ էին, աշխատուժ կարող էին դառնալ աղքատացած, բայց դեռևս ազատ մարդիկ: Տոհմացեղային ավագանին աշխատում էր նրանց կտրել հասարակական աշխատանքից (զինվոր, ժողովրդական ժողովի անդամ) և դարձնել կախյալ մարդիկ:

Հողի սեփականության ավատատիրական իրավունքը սովորաբար ձևավորվում էր երկու ճանապարհով: Առաջինը տեղի էր ունենում գյուղական համայնքի ներսում: Գյուղացու հողը ժառանգաբար անցնում էր հորից որդուն, իսկ VI դ.՝ նաև աղջկան: Այդ հողը կարելի էր վաճառել, նվիրել, պարտքի դիմաց գրավ դնել: Աղքատացած գյուղացին իր հողը վաճառում էր կամ գրավ դնում: Այսպես՝ հողերը կենտրոնանում էին մի խումբ մարդկանց ձեռքում, որոնք հետո մտնում էին ավատատերերի դասակարգի մեջ: Նրանք իրենց հողը մշակելու համար տարբեր պայմաններով հանձնում էին գյուղացիներին:

Հողային սեփականության առաջացման երկրորդ ճանապարհը ծառայության դիմաց հող

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԾ ԳԱՂԹԸ

շնորհելն էր, որը կոչվում էր **բենեֆիցիում:** Թագավորը կամ խոշոր հողատերը ծառայության դիմաց հող էր շնորհում իրենց նվիրված մարդկանց: Սրանք ևս մտնում էին ավատատերերի դասակարգի մեջ: Ավատատիրոջ հողը սովորաբար բաժանվում էր երկու մասի՝ **տերունական** (դոմեն) հող և այն հողը, որը մշակելու համար հանձնում էին գյուղացուն: Այսպես ձևավորվեցին ավատատիրական հասարակության **երկու հիմնական դասակարգերը՝** աշխարհիկ և հոգևոր ավատատերերը և գյուղացիները:

Ավատատիրական աստիճանակարգությունը: Ավատատիրական հասարակությունը առանձին փակ խմբերից (գյուղացիներ, աշխարհիկ և հոգևոր ավատատերեր) բաղկացած հասարակարգ էր: Յուրաքանչյուր խմբի համար սահմանված էին որոշակի իրավունքներ և պարտականություններ: Մարդը դրանք կարող էր իրականացնել միայն իր կոլեկտիվի միջոցով: Գյուղացին հողակալման իրավունքը իրականացնում էր գյուղական համայնքի միջոցով՝ որպես նրա անդամ: Ավատատերը հողի և նրա վրա ապրող գյուղացու նկատմամբ ունեցած պայմանական սեփականության իրավունքը իրականացնում էր վասալական կապերի միջոցով:

Ստացած հողում գյուղացին վարում էր ինքնուրույն տնտեսություն: Նա, որ մշակում էր ավատատիրոջ հողը, չէր համարվում այդ հողի սեփականատեր, սակայն այն ժառանգություն թողնելու իրավունք ուներ: Գյուղացու տնտեսական կախվածությունը հողատիրոջից արտահայտվում էր հարկեր վճարելով:

Ավատատերերի դասակարգը բաղկացած էր աշխարհիկ և հոգևոր ավատատերերից, որոնք վաղ միջնադարում կազմում էին **բնակչության 1–2%–ը:** Ավատատերերի դասակարգը իր հերթին բաղկացած էր դասերից:

Աստիճանակարգության ամենավերին աստիճանին կանգնած էր **թագավորը՝** որպես բոլոր ավատատերերի **գերագույն սենյոր:** Աստիճանակարգության երկրորդ աստիճանը զբաղեցնում էին թագավորի անմիջական վասալները: Դրանք խոշոր հողատերերն էին՝ **դուքսերը, կոմսերը, արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները** և **վանահայրերը:** Նրանք իրենց պատկանող տարածքներում հավաքում էին հարկերը, զբաղվում դատական և վարչական գործունեությամբ: Նրանք դրամ հատելու և պատերազմներ վարելու իրավունք ունեին: Ավատատիրական սանդուղքի երրորդ աստիճանը զբաղեցնում էին սրանց վասալները՝ **բարոնները**: Սրանցից ներքև կանգնած էին ավելի մանր ավատատերերը՝ **ասպետները,** որոնցով ավարտվում էր աստիճանակարգությունը:

Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրներում, բացի Անգլիայից, աստիճանակարգության ներսում հարաբերությունները կարգավորվում էին *«Իմ վասալի վասալը իմ վասալը չէ»* սկզբունքով: Անգլիայում բոլոր ավատ ստացողները, անկախ նրանից, թե ումից են ստացել, համարվում էին թագավորի վասալները:

Սենյոր–վասալ հարաբերությունները կարգավորվում էին հողի շնորհումով: Հողը վասալին տրվում էր ծառայության համար: Ավատատիրական սովորույթի համաձայն՝ վասալը պարտավոր էր տարվա ընթացքում 40 օր ծառայել սենյորին: Վասալի պարտականություններից էին պաշտպանել սենյորի պատիվը և արժանապատվությունը, նրա ընտանիքը և մասնակցել նրա մղած պատերազմներին:

Ավատի ստացման ժամանակ վասալը հավատարմության երդում էր տալիս, որի խախտման դեպքում սենյորը իրավունք ուներ ավատը հետ վերցնելու:



Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ ուղիներով է ձևավորվել միջնադարյան քաղաքակրթությունը Եվրոպայում: Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում «ժողովուրդների մեծ գաղթը»: Ինչո՞վ էր այն տարբերվում բարբարոսական ցեղերի նախորդ տեղաշարժերից:
2. Ինչո՞ւ են միջնադարն անվանում ավատատիրական քաղաքակրթություն: Միջնադարում ո՞րն էր բնակավայրի հիմնական ձևը: Ինչպե՞ս էր ձևավորվում հողային սեփականության ավատատիրական իրավունքը:
3. Սոցիալական ի՞նչ խմբերից էր բաղկացած ավատատիրական հասարակությունը: Ներկայացրեք ավատատիրական աստիճանակարգությունը: Ո՞րն էր դրա սկզբունքը: Ի՞նչ պարտականություններ ուներ վասալը սենյորի նկատմամբ:

§ 2. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Թագավորական իշխանության կազմակերպումը: Մինչև Ժողովուրդների մեծ գաղթը Արևմտյան Եվրոպայում կար մեկ պետություն՝ Հռոմեական կայսրությունը:

Տոհմացեղային հասարակարգում ապրող գերմանացիների մոտ պետությունը սկսեց սաղմնավորվել IV–V դդ.: Այդ ժամանակ գերմանական ցեղերի քաղաքական կազմակերպման հիմնական ձևերն էին **ժողովրդական ժողովը, ավագների խորհուրդը, ռազմական առաջնորդը:**

Ժողովրդական ժողովը քննարկում էր ցեղի համար կարևորություն ներկայացնող հարցեր: Նրան մասնակցում էին զենքի ունակ բոլոր ազատ տղամարդիկ: Ավագների խորհուրդը ուներ միայն դատական իրավունքներ: Ռազմական առաջնորդը, որն ուներ սեփական զորաջոկատ, օժտված էր միայն ռազմական իշխանությամբ: Հասարակության զարգացմանը զուգահեռ կառավարման այս ձևերը ձեռք էին բերում նոր բովանդակություն:

Պետության կազմավորման համար անհրաժեշտ էր, որ ռազմական առաջնորդը յուրացներ թագավորական իշխանությանը հատուկ իրավունքներ: Ռազմական առաջնորդից մինչ թագավոր գործընթացը արագացավ՝ կապված ցեղային միության առաջացման հետ: Ցեղային միությունը ներառում էր մի քանի հարյուր հազար մարդ և զբաղեցնում էր մեծ տարածք: Այս պատճառով անհնար էր ցեղային միության՝ զենքի ունակ բոլոր անդամներին հրավիրել ժողովրդական ժողովի: Այսպես ժողովրդական ժողովը բաժանվեց երկու մասի: Մեկը ցեղի ժողովրդական ժողովն էր: Սակայն նա կորցնում էր իր քաղաքական նշանակությունը, քանի որ իրավունք չուներ որոշումներ ընդունելու ցեղային միության անունից: Մյուսը ռազմական առաջնորդի գլխավորությամբ հրավիրվող ժողովն էր: Դրան մասնակցում էին ցեղային միության այն ներկայացուցիչները, որոնք մտնում էին առաջնորդի անձնական զորաջոկատի մեջ, և ցեղային առաջնորդները: Այս ժողովի ընդունած որոշումները պարտադիր էին ցեղային միության համար:

Ավագների խորհուրդը դառնում էր ռազմական առաջնորդին կից խորհուրդ: Այսպես՝ **ռազմական առաջնորդը իր ձեռքում էր կենտրոնացնում իշխանությունը և դառնում էր թագավոր:** Ձևավորվեց նաև թագավորական իշխանության ժառանգականության սկզբունքը: Թագավորն էր տնօրինում երկրի հողային ֆոնդը և դրա բաշխման իրավունքը: Հարկային և դատական համակարգը ևս ամբողջովին ենթարկվում էր թագավորին: Այսպիսով՝ թագավորը իր ձեռքում կենտրոնացնում է օրենսդիր, ռազմական, դատական և ֆինանսական ամբողջ իշխանությունը: Թագավորական իշխանության կազմակերպումը հանդիպում էր խոշոր հողատերերի և ցեղային առաջնորդների դիմադրությանը: Թագավորը ստիպված էր կառավարման որոշ գործառույթներ հանձնել նրանց: Արդյունքում նոր կազմավորվող թագավորական իշխանությունը թույլ էր, ուստի չկարողացավ ստեղծել կենտրոնաձիգ կառավարում ունեցող պետություն:

Ֆրանկական թագավորությունը: Ֆրանկները ապրում էին Հռենոս գետի ստորին հոսանքում և ծովափնյա շրջաններում: Նրանց ցեղային միությունը բաժանվում էր երկու ճյուղի՝ **սալիական** և **ռիպուարական:**

Արևմտահռոմեական կայսրության անկումից հետո ֆրանկներն անցան Հռենոսը և սկսեցին Գալլիայի նվաճումը: Նրանց ղեկավարում էր սալիական ֆրանկների առաջնորդ **Քլոդվիգը** (486–511 թթ.) **Մերովեի** տոհմից: Այս պատճառով նոր հիմնադրված պետության առաջին կառավարիչները կոչվում էին Մերովինգներ: **486 թ. Սուասոն** քաղաքի մոտ ֆրանկները պարտության մատնեցին գալլա–հռոմեացիներին և գրավեցին Հյուսիսարևելյան Գալլիան: Մինչև VI դ. կեսերը ֆրանկները կարողացան գրավել նախկին հռոմեական Գալլիա պրովինցիան: Այստեղ ապրում էր շուրջ 6–8 մլն գալլա–հռոմեացի: Նվաճման ընթացքում ֆրանկները սովորաբար զբաղեցնում էին ազատ հողատարածքները, իսկ երբեմն տեղաբնիկներից վերցնում էին հողերի մի մասը: Այս դեպքում ֆրանկները և տեղաբնիկները ապրում էին հարևանությամբ կամ խառը բնակչություն ունեցող գյուղերում:

496 թ. Քլոդվիգն ընդունեց քրիստոնեություն: Ձգտելով հասնել միանձնյա իշխանության՝ Քլոդվիգը ոչնչացրեց ֆրանկական ցեղերի այն առաջնորդներին, որոնք իշխանության համար պայքարում էին իր դեմ: Այսպես՝ մոտ **500 թ.** առաջացավ ֆրանկների թագավորությունը: Քլոդվիգը դարձավ Ֆրանկական թագավորության միակ կառավարիչը: Այժմ նրան ենթարկվում էր ոչ թե մեկ ցեղային միություն, այլ Գալլի-

այի ողջ բնակչությունը: Նրա իշխանությունը ժառանգական էր: Ժողովրդական ժողով այլևս չէր հրավիրվում: Երկրի կառավարումը Քլոդվիգը կենտրոնացրեց իր ձեռքում, իսկ կառավարման կենտրոնը դարձավ արքունիքը:

Սակայն հետագայում պետության մի շարք մարզեր այլևս չէին ենթարկվում Մերովինգներին: Երկրի իրական կառավարումը անցավ **մայորդոմներին,** ուստի Մերովինգների արքայատան վերջին ներկայացուցիչները ստացան «ծույլ թագավորներ» անվանումը: Մայորդոմը սկզբում թագավորական կալվածքների կառավարիչն էր և նշանակվում էր թագավորի կողմից: Օգտվելով թագավորական իշխանության թուլացումից՝ նրանք իրենց ձեռքում կենտրոնացրին երկրի փաստական կառավարումը: Նրանք Մերովինգների տոհմից թագավոր էին ընտրում և կառավարում նրա անունից:

Սալիական դատաստանագիրքը: Ավատատիրական հարաբերությունների և թագավորական իշխանության ձևավորմանը զուգահեռ անհրաժեշտություն էր դառնում կարգավորել հասարակության ներսում առաջացած նոր հարաբերությունները: Որոշ ժամանակ նրանք ապրում էին իրենց սովորութային իրավունքի նորմերով: Օգտվելով օրենսդիր իշխանություն ունենալու իր իրավունքից՝ Քլոդվիգը կարգադրեց գրի առնել սալիական ֆրանկների սովորութային իրավանորմերը: Այսպես կազմվեց **Սալիական դատաստանագիրքը:**

VI–IX դարերում օրենսգիրքը լրացվում էր ֆրանկական թագավորների ընդունած օրենքներով: Սալիական դատաստանագիրքը Գալլիայի բնակչությանը բաժանում էր ֆրանկների և տեղաբնիկների: Չնայած իրավական տեսակետից օրենսգիրքը ֆրանկների մեջ ոչ մի սահմանաբաժանում չէր կատարում, և բոլորը համարվում էին ազատ մարդիկ, սակայն իրավանորմեր կային սոցիալական և գույքային շերտավորման մասին: Այսպես՝ զինվորի սպանության համար նրա հարազատներին վճարում էին 600 սոլիդ, ազատ ֆրանկի համար՝ 200, իսկ կիսազատի համար՝ 100:

Դատաստանագիրքը տեղական բնակչությանը բաժանում էր երեք խավի՝ խոշոր հողատերեր, մանր հողատերեր և հողազուրկ մարդիկ, որոնք տարբեր պայմաններով հողը մշակում էին ուրիշի հետ: Ավատատիրական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ ֆրանկների և գալլա–հռոմեացիների միջև գոյություն ունեցող տարբերությունները վերանում էին: Քլոդվիգի հաջորդների օրոք տեղական բնակչությանը սկսեցին ընդգրկել զինվորական ծառայության մեջ: Հողահարկ և գլխահարկ սկզբից վերցնում էին միայն գալլա–հռոմեացիներից, իսկ հետագայում՝ նաև ֆրանկներից:

Կարլոս Մարտելի ռազմական բարեփոխումները: Պիրենեյան թերակղզին նվաճած արաբները VIII դ. սկզբին սկսեցին հարձակվել նաև Ֆրանկական թագավորության վրա: **732 թ. Պուատիեի** մոտ մայորդոմ **Կարլոս Մարտելը** ծանր պարտության մատնեց արաբներին: Այս հաղթանակի համար ժամանակակիցները նրան տվեցին Մարտել (Մուրճ) անվանումը: Արաբների դեմ տարած հաղթանակը մեծ նշանակություն ունեցավ, քանի որ կանգնեցվեց նրանց արշավանքները Արևմտյան Եվրոպա: Շուտով արաբներից ազատագրվեց նաև Հարավային Գալլիան: Սակայն արաբական արշավանքների վտանգը չվերացավ, քանի որ նրանք հաստատվել էին Իսպանիայում:

Կարլոս Մարտելը գիտակցում էր, որ արաբների դեմ հաջող պայքարելու համար անհրաժեշտ է ունենալ մշտական մարտունակ հեծելազոր, մինչդեռ ֆրանկական բանակը կազմված էր հիմնականում հետիոտն աշխարհազորից: Հեծյալ բանակ ստեղծելու համար Կարլոս Մարտելը անցկացրեց ռազմական բարեփոխումներ: Ծառայություն կատարելու համար նա զինվորին հող էր տրամադրում այնտեղ ապրող գյուղացիների հետ միասին: Զինվորը սպառազինության ծախսերը և ապրուստի միջոցները ստանում էր գյուղացիների վճարած հարկերից: Զինվորական ծառայության դիմաց հողը սկզբում տրվում էր ցմահ (բենեֆիցիում), ապա ժառանգաբար (ավատ): Վերջին դեպքում ժառանգը պարտավոր էր կատարել նույն ծառայությունները, ինչի դիմաց հողը ստացել էր հայրը:

Մեծաքանակ հեծելազոր ստեղծելու համար Կարլոս Մարտելը բռնագրավեց անհնազանդ հողատերերին և եկեղեցուն պատկանող հողերի մի մասը: Այս ճանապարհով նա ոչ միայն ընդարձակեց ֆրանկական պետության սահմանները, այլև ժամանակավորապես ուժեղացրեց կենտրոնական իշխանությունը: Օգտագործելով այս հանգամանքը՝ նրա որդի և հաջորդ մայորդոմ **Պիպին Կարճահասակը** որոշեց գահընկեց անել Մերովինգներին և յուրացնել թագավորական տիտղոսը: **751 թ. Սուասոն քաղաքում** Պիպինը հռչակվեց թագավոր: Ֆրանկական պետությունում իշխանությունն անցավ Կարոլինգներին: Այս անվանումը առաջացել է հետագայում՝ արքայատան ամենանշանավոր ներկայացուցիչ Կարլոս Մեծի անունից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Գերմանացիների մոտ ե՞րբ սկսեցին կազմավորվել պետություններ: Ինչպե՞ս ձևավորվեց թագավորական իշխանությունը:
2. Ո՞ր տարածքներն էին զբաղեցնում ֆրանկները: Ո՞ր տոհմին էին պատկանում Ֆրանկական պետության առաջին կառավարիչները:
3. Ե՞րբ ֆրանկներն ընդունեցին քրիստոնեություն: Ինչո՞ւ էին Մերովինգների վերջին ներկայացուցիչներին անվանում «ծույլ թագավորներ»:
4. Ի՞նչ էր կոչվում ֆրանկների սովորույթային իրավանորմերի ժողովածուն: Օրենսգրքի վրա ի՞նչ ազդեցություն ուներ հռոմեական իրավունքը:
5. Ի՞նչ նշանակություն ունեցավ Պուատիեի ճակատամարտը: Ներկայացրե՛ք Կարլոս Մարտելի անցկացրած ռազմական բարեփոխումները: Ե՞րբ իշխանությունն անցավ Կարոլինգներին:

§3. ՊԱՅՔԱՐ ԱՐԵՎՄՏԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կարլոս Մեծի կայսրությունը: Արևմտահռոմեական կայսրության անկումից հետո կայսերական գահը թափուր էր մնացել: Նրա ժառանգման և միասնական կայսրության վերականգնման համար պայքար սկսեց Բյուզանդիան: Սակայն արաբա–բյուզանդական երկարատև հակամարտությունը ստիպեց Բյուզանդիային հրաժարվել այս ծրագրից: Կայսրության ժառանգության համար պայքար սկսեց Պիպին Կարճահասակի որդի **Կարլոս Մեծը** (768–814 թթ.):

Կարլոս Մեծ

Նախկին Արևմտահռոմեական կայսրության տարածքներից միայն Գալլիա պրովինցիան էր պատկանում Ֆրանկական թագավորությանը: Կայսրության վերաստեղծման համար Կարլոս Մեծը պետք է նվաճեր նաև մյուս տարածքները և ձեռնադրվեր կայսերական թագով: Ֆրանկական թագավորության ընդարձակման համար նա կազմակերպեց 50 արշավանք, որոնցից 30–ը անձամբ ինքն էր գլխավորում:

Կարլոս Մեծը շարունակեց պատերազմները Իտալիայում հաստատված լանգոբարդների դեմ: Նա երկու արշավանք կազմակերպեց լանգոբարդների դեմ և Հյուսիսային Իտալիան միացրեց իր թագավորությանը: Նա երկարատև պատերազմ սկսեց նաև Իսպանիայում հաստատված արաբների դեմ: Վերջիվերջո ֆրանկներին հաջողվեց արաբներից խլել Հյուսիսարևելյան Իսպանիան՝ Բարսելոնա քաղաքով: Կարլոս Մեծի պատերազմներից ամենատևականը Սաքսոնիայի նվաճումն էր, որը ձգվեց ավելի քան 30 տարի (772–804 թթ.): Այնուհետև նա նվաճեց Բավարիան:

Նվաճումների արդյունքում Ֆրանկական թագավորությունը իր տարածքով մոտավորապես համապատասխանում էր նախկին Արևմտահռոմեական կայսրությանը:

Կարլոս Մեծը հաջողությամբ լուծեց իր ծրա-

գիրը: Մնում էր հարմար առիթ կայսերական թագով թագադրվելու համար: Նման առիթ ներկայացավ, երբ Լևոն III պապը հռոմեական ավազանու հալածանքներից խուսափելու համար ապաստանեց կայսեր մոտ: Վարձահատույց լինելու համար պապը համաձայնեց Կարլոսին թագադրելու կայսերական թագով: **800 թ.** Կարլոսը ժամանեց Հռոմ, և Ս. Պետրոսի տաճարում պապը նրան թագադրեց:

Կայսրությունը բաժանված էր առանձին շրջանների, որոնք ղեկավարում էին կոմսերը: Նրանք հավաքում էին հարկերը և ղեկավարում աշխարհազորը: Կոմսերի գործունեությունը վերահսկելու համար Կարլոսը հաճախ իրեն նվիրված մարդկանց ուղարկում էր կոմսություններ:

Կայսրը անցկացրեց նաև դատական բարեփոխումներ: Մինչ այդ դատավորն ընտրվում էր կոմսության ժողովրդական ժողովում: Սա ֆրանկների տոհմացեղային հասարակարգից մնացած ժառանգություն էր: Կայսրը վերացրեց այս կարգը: Դատավորը դառնում էր նշանակվի պաշտոնյա և ենթարկվում էր կոմսին:

Կարլոս Մեծն անցկացրեց նաև ռազմական բարեփոխում: Նա գյուղացիներին ազատեց զինվորական ծառայությունից, քանի որ նրանք հնարավորություն չունեին ձեռք բերելու ձի և սպառազինություն: Հետիոտն աշխարհազորը պահպանեց իր գոյությունը, սակայն ծառայության էին կանչում ավելի շատ հողատարածք ունեցող գյուղացուն: Այսպես՝ զինվորական ծառայությունը դառնում էր ավատատերերի դասակարգի արտոնությունը:

Վերդենի դաշնագիրը: Կարլոս Մեծի հիմնադրած կայսրությունը ամուր չէր, այն պահպանվում էր զենքի և կայսեր անձնական հեղինակության շնորհիվ:

Տերության տարբեր մարզերի միջև տնտեսական և քաղաքական կապերը թույլ էին կամ բացակայում էին: Այս պատճառով Կարոլինգյան տերությունը տրոհվեց: Արդեն Կարլոս Մեծի որդի **Լյուդովիկոս Բարեպաշտը 817 թ.** կայսրությունը բաժանեց իր որդիների միջև: Նա իրեն վերապահեց միայն կայսեր տիտղոսը: Սակայն այս բաժանումը կողմերին չբավարարեց, և նրանց միջև սկսվեցին պառակչական պատերազմներ: Վերջապես՝ **843 թ.** Լյուդովիկոսի որդիները հավաքվեցին **Վերդեն քաղաքում** և կայսրության նոր բաժանման դաշնագիր ստորագրեցին: Վերդենի դաշնագիրը հիմք դրեց արդի **Ֆրանսիայի, Գերմանիայի** և **Իտալիայի** կազմավորմանը:



Օտտոն I–ը Քրիստոսին է ընծայում տաճարի մանրակերտը. փղոսկրյա տախտակ, X դար

Դաշնագրով Ֆրանկական տերությունը բաժանվեց երեք մասի: Լյուդովիկոսի կրտսեր որդի **Կարլոսը** ստացավ Արևմտաֆրանկական թագավորությունը, որը ներառում էր ապագա Ֆրանսիայի հիմնական տարածքը: Մյուս որդին՝ **Լյուդովիկոս Գերմանացին,** ստացավ Ալպերից հյուսիս և Հռենոսից արևելք ընկած հողերը՝ Արևելաֆրանկական (Գերմանիա) թագավորությունը: Կայսերական տիտղոսը տրվեց Լյուդովիկոսի ավագ որդուն՝ **Լոթարին:** Նրա պետության մեջ մտան Իտալիան և այն տարածքները, որոնք ընկած էին Ֆրանսիայի և Գերմանիայի միջև:

Սրբազան հռոմեական կայսրություն: **911 թ.** Գերմանիայում դադարեց Կարոլինգյան արքայատունը և թագավոր ընտրվեց ցեղային դուքսերից մեկը՝ Կոնրադ I Ֆրանկոնացին: Նա փորձեց ամրապնդել թագավորական իշխանությունը, ուստի դուքսերի և թագավորի միջև պայքար սկսվեց, որն ավարտվեց վերջինիս պարտությամբ: Նրա մահից հետո ցեղային դուքսերի միջև նորից պայքար սկսվեց իշխանության համար: Ի վերջո՝ թագավոր ընտրվեց Սաքսոնիայի դուքս **Հենրիխ I–ը** (919–936 թթ.): Այսպես՝ **919 թ.** Եվրոպայում ծնվեց **Գերմանական (Տևտոնական) թագավորությունը:** Այդ ժամանակ նորաստեղծ պետության համար մեծ վտանգ էին ներկայացնում հունգարները: Նրանք անընդհատ ասպատակում ու թալանում էին

Հենրիխ I

Գերմանիան: Հունգարների դեմ պայքարելու համար դուքսերը հավաքվեցին Հենրիխ I–ի շուրջը, և 933 թ. գերմանացիները առաջին անգամ պարտության մատնեցին հունգարներին: Նրանց դեմ պայքարը շարունակեց Հենրիխ I–ի որդի **Օտտոն I–ը** (936–973 թթ.): 955 թ. հունգարները ծանր պարտություն կրեցին և դադարեցրին իրենց արշավանքները Գերմանիա:

Հունգարների դեմ տարած հաղթանակով Գերմանիան դարձավ ժամանակի Արևմտյան Եվրոպայի ամենաուժեղ պետությունը: Օտտոն I–ը որոշեց թագադրվել Հռոմ քաղաքում, վերականգնել Կարլոս Մեծի տերությունը և յուրացնել կայսեր տիտղոսը: Նորից պայքար սկսվեց Արևմտահռոմեական կայսրության ժառանգության համար:

Օտտոնը 951 թ. ձեռնարկեց առաջին արշավանքը Իտալիա, սակայն Հռոմ չհասավ: Նա գրավեց Լոմբարդիան, ամուսնացավ Իտալիայի թագավորության օրինական ժառանգորդուհու հետ և իրեն հռչակեց Իտալիայի թագավոր:

Օտտոնը **962 թ.** կազմակերպեց երկրորդ արշավանքը: Այս անգամ նա հասավ **Հռոմ** և **թագադրվեց որպես կայսր:** Այսպես առաջացավ գերմանական կայսրությունը, որը հետագայում ստացավ Սրբազան հռոմեական կայսրություն անվանումը: Օտտոնի և պապի միջև պայմանագիր կնքվեց, ըստ որի՝ **պապը ընդունում էր կայսեր գերիշխանությունը:** Օգտվելով սրանից՝ Օտտոնի հաջորդները փորձում էին Արևմտյան Եվրոպայում ստեղծել միասնական քրիստոնեական կայսրություն՝ Ախեն և Հռոմ մայրաքաղաքներով: Կայսրությունը պետք է բաղկացած լիներ ինքնուրույն թագավորություններից, որոնց թագավորները ընդունելու էին կայսեր գերիշխանությունը: Սակայն այս ծրագիրը չիրագործվեց:

Սրբազան հռոմեական կայսրության տարածքը մեծ էր, իսկ կառավարելը՝ դժվար: Անհրաժեշտ էր գտնել կառավարման նոր ձևեր և միջոցներ: Այս նպատակով Օտտոնը որոշեց կառավարմանը մասնակից դարձնել նաև եկեղեցուն: Այս ճանապարհով նա փորձում էր հաղթահարել նաև ցեղային դուքսերի անջատողական ձգտումները և ամրապնդել կենտրոնական իշխանությունը: Այդ ժամանակ եկեղեցին միակ կազմակերպությունն էր, որ կայսրության տարածքում ուներ իր կառույցները՝ վանքերը, եկեղեցիները:

Եկեղեցին կառավարման մեջ ներգրավելու նպատակով Օտտոնը սկսեց հողեր և լայն արտոնություններ շնորհել նրան: Նա հոգևորականներին պաշտոնների էր նշանակում և կառավարման որոշ գործառույթներ հանձնում էր նրանց: Եկեղեցիներին և վանքերին տրված հողերում արգելվում էր որևէ դատարանի գործունեություն, բացի եկեղեցականից: Հաճախ հոգևորականները ստանում էին նաև կոմսությունը կառավարելու իրավունք և կոմսի տիտղոս: Այսպես՝ **եկեղեցին դառնում է գործադիր իշխանություն իրականացնող մարմին:**

Օտտոնը հոգևորականներին ներգրավում էր նաև ռազմական ծառայության մեջ: Իրենց հերթին եպիսկոպոսները և վանահայրերը ռազմական ծառայության դիմաց հողեր էին շնորհում իրենց վասալներին: Այսպես՝ եկեղեցին ամբողջովին ենթարկվեց կայսրին, ուստի ստացավ «**կայսերական եկեղեցի**» անվանումը:

Արևմտյան Եվրոպայում քրիստոնյա կայսրություն ստեղծելու համար գերմանական կայսրերը պետք է յուրացնեին նաև բարձրագույն հոգևոր իշխանություն: Կայսրը միաժամանակ պետք է լիներ և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր իշխանության կրող: Կայսրերը սկսեցին իրենց համարել Քրիստոսի փոխանորդ երկրի վրա և կառավարել նրա անունից:

Գերմանական կայսրերի վարած քաղաքականությունը հանդիպեց պապականության դիմադրությանը: Պապերը իրենք էին իրենց համարում Աստծո փոխանորդ երկրի վրա և պահանջում էին, որ աշխարհիկ միապետները ենթարկվեն իրենց:

Շուտով կայսրության և պապականության միջև պայքար սկսվեց այն բանի համար, թե բարձրաստիճան հոգևորականներին պաշտոնների նշանակելու իրավունքը ում է պատկանում:

Դա հայտնի է «**պայքար ինվեստիտուրայի**» համար անվանումով:

Ինվեստիտուրա (շնորհում) էր կոչվում այն արարողությունը, երբ սենյորը ավատը հանձնում էր վասալին: Եպիսկոպոսի և վանահոր համար ինվեստիտուրան ընդգրկում էր ոչ միայն հողի տրամադրումը, այլև հոգևոր կոչում շնորհելը (հոգևոր ինվեստիտուրա): Եկեղեցական իրավունքի համաձայն՝ հոգևոր ինվեստիտուրայի իրավունքը պատկանում էր հոգևոր իշխանությանը, սակայն մինչև XI դ. կեսերը այն իրականացնում էին կայսրերը: Պապականությունը մտադիր չէր հաշտվել այս իրողության հետ և սկսեց վիճարկել ինվեստիտուրայի իրավունքը:

Ինվեստիտուրայի համար մղվող պայքարը սուր բնույթ ընդունեց **Հենրիխ IV կայսրի** (1056–1106 թթ.) և **Գրիգորիոս VII պապի** (1073–1085 թթ.) միջև: Սկզբում նրանց հարաբերությունները ջերմ էին: Սուրբ երկիր խաչակրաց արշավանք կազմակերպելու և ղեկավարելու ցանկություն ունեցող պապը կայսրին հանձնարարեց իր փոխարեն կառավարել եկեղեցին: Սակայն երբ կայսրը Իտալիայում երեք եպիսկոպոս նշանակեց, պապը դժգոհեց: Կայսրը պահանջեց, որ նա հրաժարվի պաշտոնից: Գրիգորիոս VII–ը բանադրանքի ենթարկեց կայսրին և հպատակներին ազատեց նրան տված հավատարմության երդումից: Հենրիխը որոշեց հանդիպել պապին և թողություն խնդրել: Նրանց հանդիպումը տեղի ունեցավ Իտալիայի **Կանոսա** ամրոցում: Մինչև հանդիպումը կայսրը, հանելով թագավորական նշանները, ոտաբոբիկ երեք օր կանգնեց ամրոցի առաջ: Խնդրած թողությունը նա ստացավ ծնկաչոք վիճակում:

Ինվեստիտուրայի համար պայքարն ավարտվեց միայն **1122 թ.,** երբ ստորագրվեց **Վորմսի համաձայնագիրը:** Կայսրության տարբեր շրջանների համար եպիսկոպոսների և վանահայրերի ընտրության տարբեր կարգ սահմանվեց: Գերմանիայում եպիսկոպոսին և վանահորը ընտրում էին հոգևորականների ժողովում: Աշխարհականներից ժողովին պետք է մասնակցեր միայն կայսրը կամ նրա ներկայացուցիչը: Ընտրությունից հետո հաջորդաբար կատարվելու էր աշխարհիկ և հոգևոր ինվեստիտուրան: Կայսրը հանձնում էր **գայիսոնը՝ աշխարհիկ ինվեստիտուրա** (եպիսկոպոսի կամ վանահոր իրավունքը եկեղեցական հողի նկատմամբ): Ապա կատարվում էր **հոգևոր ինվեստիտուրան** (եպիսկոպոսին կամ վանահորը հանձնում էին հոգևոր իշխանության խորհրդանիշները՝ **գավազանը** և **մատանին**):

Իտալիայում և Բուրգունդիայում եպիսկոպոսի կամ վանահոր ընտրությունը տեղի էր ունենալու առանց աշխարհիկ անձի ներկայության:

Վորմսի համաձայնագիրը մեծ հարված հասցրեց «կայսերական եկեղեցուն», քանի որ Իտալիայի և Բուրգունդիայի եկեղեցիները այլևս չէին ենթարկվում կայսեր իշխանությանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչը ստիպեց Բյուզանդիային հրաժարվել Արևմտահռոմեական կայսրության ժառանգման համար պայքարից: Ո՞վ հանդես եկավ այդ ծրագրով: Ե՞րբ Կարլոս Մեծը կայսր հռչակվեց: Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց նա:
2. Ինչո՞ւ Կարլոս Մեծի ստեղծած պետությունը երկար կյանք չունեցավ: Ե՞րբ ստորագրվեց Վերդենի դաշնագիրը, ո՞ր պետությունների հիմքը դրվեց դրանով:
3. Ե՞րբ է ծնունդ առել գերմանական թագավորությունը: Ե՞րբ սկզբնավորվեց Սրբազան հռոմեական կայսրությունը, որո՞նք էին դրա մայրաքաղաքները:
4. Պետական կառավարման համակարգում ի՞նչ փոփոխություն մտցրեց Օտտոն I–ը: Ինչո՞ւ եկեղեցին ստացավ «կայսերական» անվանումը: Ո՞րն էր Սրբազան հռոմեական կայսրության կայսրերի և Հռոմի պապերի միջև ծագած հակամարտության գլխավոր պատճառը:
5. Ի՞նչ է ինվեստիտուրան: Ե՞րբ և ի՞նչ ավարտ ունեցավ ինվեստիտուրայի համար պայքարը: Ի՞նչ հետևանք ունեցավ Վորմսի համաձայնագիրը:

§4. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Քրիստոնեության տարածումը Արևմտյան Եվրոպայում: Հռոմեական հասարակության ներսում տեղի ունեցած տեղաշարժերի արդյունքում ճգնաժամի մեջ հայտնվեց նաև գաղափարախոսությունը: Բազմաստվածությունը այլևս ի վիճակի չէր բացատրելու տեղի ունեցած փոփոխությունները, ուստի անվստահություն էր առաջանում նրա նկատմամբ: Նա իր տեղը զիջում էր քրիստոնեությանը:

Քրիստոնեությունը Հռոմեական կայսրության պետական կրոն դառնալու գործում մեծ դեր խաղաց Կոստանդիանոս I կայսրը: Չնայած ինքը քրիստոնեություն ընդունեց մահվանից առաջ, սակայն ճիշտ էր հասկացել նրա դերը կայսրության ժողովուրդների համախմբման գործում: Արդեն գիտեք, որ 313 թ. կայսրը հրատարակեց Միլանի հրովարտակը, ըստ որի՝ քրիստոնեությունը հեթանոսության հետ ստացավ հավասար իրավունքներ, իսկ 381 թ. քրիստոնեությունը հռչակվեց կայսրության պետական կրոն:

Արդեն IV դ. վերջին քրիստոնեությունը տարածվել էր կայսրության համարյա բոլոր շրջաններում: Քրիստոնյա քարոզիչները սկսեցին նոր կրոնը քարոզել գերմանացիների, կելտերի և սլավոնների մոտ: IV դ. 40–ական թվականներին եպիսկոպոս **Վուլֆիլը** սկսեց քրիստոնեություն տարածել գոթերի շրջանում: Նա Աստվածաշունչը թարգմանեց գոթերեն:

V դ. կեսերին քրիստոնեությունը Իռլանդիա ներթափանցեց Բրիտանիայից, որով ավարտվեց Արևմտյան Եվրոպայի քրիստոնեացումը:

Տոհմացեղային հասարակարգում գտնվող բարբարոսները քրիստոնեությունն ընդունում էին վերևից, ուստի երկար ժամանակ շարունակում էին ապրել հեթանոսական սովորույթներով ու պատկերացումներով: Բարբարոսական թագավորները սովորաբար քրիստոնեությունն ընդունում էին քաղաքական նպատակներով: Դա ավելի ուժեղ Աստծուց ակնկալվող օգնության հույսն էր և թագավորական տիտղոս յուրացնելու ցանկությունը. *«Չկա ուրիշ իշխանություն, բացի Աստծո տվածից»:*

Իր ազդեցությունը հավատացյալների շրջանում ուժեղացնելու համար եկեղեցին վերցրեց հեթանոսական որոշ սովորույթներ:

Պապականության առաջացումը: Քրիստոնեական ուսմունքի կարևորագույն խնդիրներ լուծելու համար սովորաբար հրավիրվում էր տիեզերական ժողով, որին մասնակցում էին եկեղեցական բոլոր թեմերի ղեկավարները: Ժողովներին զուգահեռ՝ համաքրիստոնեական խնդիրներ լուծելու դեր ստանձնեցին նաև առանձին եպիսկոպոսական աթոռներ: Ավանդույթի համաձայն՝ այդ աթոռները հիմնադրել էին Քրիստոսի առաքյալները և նրանց հաջորդները: Նրանք պահպանել էին քրիստոնեական հավատքի մաքրությունը, ուստի տարաձայնությունների դեպքում անհրաժեշտ էր դիմել նրանց: Այս աթոռները հետագայում վերածվեցին պատրիարքությունների: Նրանց մեջ գլխավորը Հռոմի եպիսկոպոսն էր, որը հետագայում ստացավ **պապ** անվանումը: Ըստ ավանդույթի՝ Հռոմի թեմը հիմնադրել էր առաքյալների գլխավոր Պետրոսը: Հռոմի պապի իշխանության ամրապնդումը կապված էր այն բանի հետ, որ Հռոմը կայսրության մայրաքաղաքն էր, ուստի նրա եպիսկոպոսը պետք է գերիշխող դիրք ստանար մյուս եպիսկոպոսների նկատմամբ: Պապը իր բարձր դիրքը փորձում էր հիմնավորել նաև նրանով, որ այստեղ են քարոզել և թաղվել երկու մեծ առաքյալները՝ **Պողոսը** և **Պետրոսը:** Արդեն Նիկեայի առաջին տիեզերական ժողովը հաստատեց **Հռոմի** եպիսկոպոսի բարձր դիրքը Արևելքի երեք (**Անտիոք, Երուսաղեմ, Ալեքսանդրիա**) աթոռների հետ միաժամանակ:

Պապականությունը աշխատում էր տիեզերական եկեղեցում ստեղծել միապետական կառավարման համակարգ: Այս ուղղությամբ մեծ գործունեություն ծավալեց **Լևոն I Մեծ պապը** (440–461 թթ.): Նա իրեն համարում էր Պետրոս առաքյալի ժառանգորդ և նրա տեղապահ Երկրի վրա: Սակայն Հռոմի աթոռի հետ հավասար իրավունքներ ստացան Արևելքի չորս (Անտիոք, Երուսաղեմ, Ալեքսանդրիա, Կոստանդնուպոլիս) պատրիարքությունները: Արդեն Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովը սահմանեց, որ քրիստոնեական եկեղեցին պետք է կառավարեն հինգ տիեզերական պատրիարքները: Հռոմի աթոռի բարձր դիրքը հաստատվեց միայն Արևմուտքի համար:

Բարբարոսական թագավորությունների առաջացումը և թագավորական եկեղեցու ձևավորումը խախտեցին պապականության և Արևմտյան Եվրոպայի եպիսկոպոսական թեմերի փոխհարաբերությունները: V դ. վերջից մինչև VIII դ. Հռոմի պապին ենթարկվում էին միայն Միջին և Հարավային Իտալիայի եպիսկոպոսները: Բարբարոսական թագավորություններում եկեղեցին ենթարկվում էր թագավորին: Իտալիայից դուրս առաջին եկեղեցին, որն ուղղակի ենթարկվեց Հռոմի աթոռին, անգլոսաքսոնական եկեղեցին էր: Սա կապված էր այն բանի հետ, որ Բրիտանիայում քրիստոնեությունը քարոզում էին Հռոմից ուղարկված քարոզիչները: Այստեղ կազմակերպված եկեղեցու գլուխ կանգնեց արքեպիսկոպոսը, որը բարձր էր եպիսկոպոսից: Արքեպիսկոպոսին ընտրում և ձեռնադրում էր պապը: Եկեղեցու կազմակերպման այս ձևը պապականությունը տարածեց Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում:

Յուրաքանչյուր պետությունում եկեղեցու գլուխ կանգնած էր արքեպիսկոպոսը, որը ենթարկվում էր պապին: Այսպես՝ Արևմտյան Եվրոպայի (բացի Իսպանիայից) բոլոր եկեղեցիները ենթարկվեցին Հռոմի աթոռին:

Պապականության դիրքերը ամրապնդվեցին հատկապես Կարոլինգների կառավարման շրջանում: Թագավորական տիտղոսին ձգտող Պիպին Կարճահասակը սերտ հարաբերություններ հաստատեց Հռոմի հետ: 751 թ. պապի օժանդակությամբ նա հռչակվեց թագավոր: Պապականությանը վարձահատույց լինելու համար նա արշավանք կազմակերպեց Իտալիա և **756 թ. Միջին Իտալիան նվիրեց Հռոմի աթոռին:** Այսպես առաջացավ **պապի աշխարհիկ պետությունը:**

800 թ., երբ Լևոն III պապը Հռոմում Կարլոս Մեծին թագադրեց կայսր, պապականությունը յուրացրեց նաև կայսրերին թագադրելու իրավունքը:

Հերետիկոսական շարժումները: XII դ. Արևմտյան Եվրոպայի բնակչության կրոնական գիտակցության մեջ որոշակի փոփոխություններ էին տեղի ունենում: Նախորդ շրջանում քրիստոնեությունը ընկալվում էր որպես ուժեղ Աստծո կրոն, և հավատացյալները կարծում էին, որ որոշակի գործողություններ կատարելու դեպքում Աստված նրանց կպաշտպանի չար ուժերից և կօգնի ինչպես երկրային, այնպես էլ երկնային կյանքում: XII դ. դրան ավելացավ նաև այն, որ հավատացյալը փորձում էր գտնել դեպի Աստծուն տանող ճանապարհը: Նրանք աշխատում էին Սուրբ Գրքի հետ շփվել ոչ թե եկեղեցու միջնորդությամբ՝ քարոզների ժամանակ, այլ ինքնուրույն: Գրագիտության տարածման շնորհիվ ավելի շատ մարդիկ սկսեցին կարդալ Աստվածաշունչը: Կրոնական գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունների արդյունքում առաջանում էին գաղափարներ, որոնք չէին համապատասխանում եկեղեցու պաշտոնապես ընդունված կանոններին, ուստի համարվում էին **հերետիկոսություն:** Հավատացյալները գալիս էին այն եզրակացության, որ հոգևորականները վաղուց մոռացել են աղքատ ապրելու և Քրիստոսին ծառայելու կոչումը:

Հարավային Ֆրանսիայում XII դ. վերջին տարածվեց վալդենսների հերետիկոսությունը: Այն իր անունը ստացավ Լիոնի առևտրական **Պիեռ Վալդոյի** անունից: Նա հրաժարվեց իր ամբողջ ունեցվածքից և ընտրեց Աստծուն տանող իր անձնական ճանապարհը, այլ ոչ թե այն, ինչ քարոզում էր եկեղեցին: Նա ապրում էր աղքատության մեջ, ինչպես առաքյալները, թափառաշրջիկի կյանք էր վարում:

Կաթոլիկ եկեղեցու քննադատության մեջ ավելի հեռու գնացին **կատարները:** Եկեղեցին համարում էին սատանայի ստեղծածը, իսկ Հռոմի պապին՝ նրա փոխանորդը: Գոյություն ունեցող «կեղտոտ» եկեղեցուն նրանք հակադրում էին իրենց

Հերետիկոսների ողջակիզում

«մաքուր» եկեղեցին (հուն. կատարներ՝ մաքուրներ), որը հիմնված էր ձգնակեցության և Աստծուն ճիշտ ծառայելու գաղափարների վրա: Նրանց ստեղծած եկեղեցու գլուխ կանգնած էին դաստիարակները՝ կատարները, որոնք ունեցվածք չունեին և վարում էին ձգնավորական կյանք, որոնց գլխավոր կենտրոնը Ալբի քաղաքն էր, այդ պատճառով նրանց սկսեցին անվանել ալբիգոյներ: Շուտով սրանց միացավ նաև վալդենսների մի մասը, որոնց ևս սկսեցին անվանել **ալբիգոյներ:** 1209 թ. Ինոկենտիոս III պապը խաչակրաց արշավանք կազմակերպեց ալբիգոյների դեմ: Ալբիգոյյան պատերազմները շարունակվեցին քսան տարի և ավարտվեց հերետիկոսների պարտությամբ:

Հերետիկոսական գաղափարների լայն տարածումը Արևմտյան Եվրոպայում ստիպեցին պապականությանը դիմել նաև ծայրահեղ միջոցների, որոնցից էին խաչակրաց արշավանքները և **ինկվիզիցիայի** (հավատաքննության) հիմնադրումը: Վերջինս ստեղծվեց XIII դ. 30–ական թվականներին և ենթարկվում էր պապին: Բոլոր եպիսկոպոսական թեմերում մտցվեց հատուկ պաշտոն՝ **պապական ինկվիզիտոր,** որը միանձնյա քննում էր բոլոր այն դատական գործերը, որոնք վերաբերում էին հերետիկոսներին: Պատժամիջոցը, որը սովորաբար կիրառում էր ինկվիզիցիան, խարույկի վրա այրելն էր (աուտո–դա–ֆե «հավատո գործ»):

Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմական ի՞նչ պայմաններ նպաստեցին քրիստոնեության արագ տարածմանը Հռոմեական կայսրությունում: Ե՞րբ այն հռչակվեց կայսրության պետական կրոն:
2. Ինչո՞ւ էր Հռոմի եպիսկոպոսը ձգտում դառնալու քրիստոնեական եկեղեցու մեջ գերիշխող: Որո՞նք էին Քաղկեդոնի տիեզերական ժողովի հաստատած բարձր աթոռները:
3. Ի՞նչ դեր խաղացին Կարոլինգները Հռոմի պապի աշխարհիկ իշխանության ստեղծման գործում:
4. Փաստերով հիմնավորե՛ք, որ եկեղեցին դարձավ ավատատիրական հասարակարգի բաղկացուցիչը:
5. Որո՞նք էին Եվրոպայում հերետիկոսության առաջացման պատճառները XII–XIII դարերում: Թվարկե՛ք ժամանակի հերետիկոսական շարժումները: Ի՞նչ միջոցների դիմեց պապականությունը դրանց դեմ պայքարում:

§ 5. ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Կրթական համակարգը: Արևմտահռոմեական կայսրության անկումը, բարբարոսական արշավանքները, անընդմեջ պատերազմները պատճառ դարձան, որ V–VII դդ. մշակույթը անկում ապրի: Սակայն ավատատիրական հարաբերություններին զուգահեռ սկսեց ձևավորվել և զարգանալ նաև միջնադարի մշակույթը:

Վաղ միջնադարը ժառանգություն ստացավ երեք տիպի մշակույթներ, որոնց փոխներգործության արդյունքում էլ ձևավորվեց ավատատիրական մշակույթը: Դրանք էին **հռոմեական մշակույթը, բարբարոսական մշակույթը** և **քրիստոնեությունը:** Այս բոլորը միմյանց միավորեցին քրիստոնեական եկեղեցին և լատիներենը:

Վաղ միջնադարը անտիկ աշխարհից ժառանգեց նրա կրթական համակարգը, որը հայտնի էր «յոթ ազատ արվեստներ» անվանումով: Այն միջնադարին հարմարեցնելու առաջին փորձը V դ. կատարեց **Մարկիանոս Կապելան:** Նա մշակեց այն առարկաների ցանկը, որոնք ընկած էին անտիկ կրթական համակարգի հիմքում: Դրանք էին քերականությունը, դիալեկտիկան (տրամախոսություն), ճարտասանությունը, թվաբանությունը, երկրաչափությունը, երաժշտությունը, աստղաբաշխությունը: VI դ. կրթական գործի կազմակերպիչներ **Բոեցիոսը** և **Կասիոդորը** յոթ ազատ արվեստները բաժանեցին երկու մասի՝ Եռյակ (քերականություն, դիալեկտիկա, ճարտասանություն) և Քառյակ: Առաջինը նախատեսված էր ուսուցման նախնական աստիճանի, իսկ երկրորդը՝ ավելի բարձր աստիճանի համար:

Կասիոդորը Հարավային Իտալիայում գտնվող

իր կալվածքում հիմնեց դպրոց, որը դարձավ մշակութային յուրօրինակ կենտրոն: Այն իր մեջ ներառում էր բուն դպրոցը, արհեստանոցը, մատենադարանը: Կրթական գործի կազմակերպման այս ձևը օրինակ դարձավ բոլոր այն վանքերի համար, որտեղ դպրոցներ էին բացվում:

Վաղ միջնադարում դպրոցները բաժանվում էին երեք խմբի՝ վանական, տաճարային և ծխական:

Պատմագրությունը: Բարբարոսական արշավանքների և բարբարոսական թագավորությունների կազմավորման շրջանում սկսվեց նաև ազգային ինքնագիտակցության ձևավորումը: Պատմական հայրենիքը թողած և Արևմտյան Եվրոպայի այս կամ այն տարածքում հայտնված և թագավորություններ ստեղծած գերմանական ցեղերը փորձում էին հիմնավորել իրենց նվաճումները և ներկայությունը որպես անհրաժեշտություն: Այս ժամանակ էլ ստեղծվեցին առաջին գրավոր պատմությունները, որտեղ շարադրված էր ոչ թե հռոմեացիների, այլ գերմանացիների պատմությունը:

Վաղ միջնադարում պատմությունը սովորաբար շարադրում էին ժամանակագրության տեսքով: Սկզբում նշում էին թվականը, ապա տեղի ունեցած իրադարձությունը: Ժամանակագրությունը սովորաբար սկսում էին արարչագործությունից, ապա հեղինակը համառոտ շարադրում էր մինչև իր ապրած ժամանակաշրջանը և առավել մանրամասն նկարագրում էր իր ապրած ժամանակաշրջանի իրադարձությունները և դեպքերը:

Վաղ միջնադարի Արևմտյան Եվրոպայի առաջին պատմիչը Կասիոդորն էր: Նա գրել է 12 գրքերից բաղկացած «Գոթերի պատմությունը» աշխատությունը, որը մեզ է հասել ոչ թե ամբողջությամբ, այլ համառոտագրված: Այն 551 թ. կրճատված տարբերակով վերաշարադրել է **Յորդանը:** Այնուհետև մեկը մյուսի հետևից շարադրվեցին գերմանական տարբեր ժողովուրդների պատմությունները: **Գրիգորիոս Տուրացին** (VI դ.) շարադրեց «Ֆրանկների պատմությունը», **Իսիդոր Սևիլիացին** (VII դ.)՝ «Գոթերի, վանդալների և սվևների թագավորների պատմությունը»:

Գրականությունը: Վաղ միջնադարի եվրոպական գրականությունը գերմանական մշակույթի ազդեցությունը ավելի շատ էր կրում: Բանավոր ժողովրդական ստեղծագործության առաջին նմուշները գերմանացիների մոտ հանդես են եկել Ք.հ. I դ.: Դա հին հեթանոսական պոեզիան է, որտեղ նկարագրված են ժողովրդի կենցաղը և աշխարհայացքը: Աստվածներին նվիրված երգերում գերմանացիները փառաբանում էին նրանց, որպեսզի օգնություն ստանային:

Վաղ միջնադարի գրականության մեջ մեծ տեղ է գրավում հերոսական վիպերգը (էպոսը): Գերմանական ցեղերից յուրաքանչյուրն ուներ իր հերոսական վիպերգը: Անգլոսաքսոնական վիպերգը գրի առնվեց 1000 թ. հին անգլերենով: Այն նվիրված էր Դանիայի թագավոր **Բեովուլֆին,** որը պայքարում էր ծովային հրեշի դեմ:

Վաղ միջնադարում տեղի ունեցած նշանավոր պատմական իրադարձությունները ավելի շատ արտացոլված են ֆրանսիական «Երգ Ռոլանդի մասին» և իսպանական «Երգ իմ Սիդի մասին» վիպերգերում:

Ֆրանսիական հերոսական վիպերգը նվիրված է Կարլոս Մեծի 778 թ. Իսպանիա կատարած արշավանքին: Այն անհաջող էր, և ֆրանկները ստիպված վերադառնում էին: Ռոնսևալի կիրճում ֆրանկների վերջապահ գունդը՝ Ռոլանդի հրամանատարությամբ, մարտի մեջ մտավ թշնամու դեմ, և բոլորը զոհվեցին:

Պատմական դեմքերի և իրադարձությունների առասպելականացումը տեղ է գտել նաև Գերմանիայում ստեղծված «Երգ Նիբելունգների մասին» վիպերգում:

Վաղ միջնադարի մարդու աշխարհընկալումը: Վաղ միջնադարի մարդու աշխարհընկալումը ձևավորվում էր քրիստոնեության ազդեցությամբ: Քրիստոնեությունը գտնում էր, որ ժամանակի մեջ մարդու գոյությունն ունի սկիզբ և վերջ: Սկիզբը կապված էր արարչագործության, իսկ վերջը՝ Քրիստոսի երկրորդ գալստյան և Ահեղ դատաստանի հետ: Մարդն իր ապրելաձևը կազմակերպում էր այնպես, որ արժանանա փրկության: Այստեղից էլ՝ անվստահության զգացմունքի ձևավորումը, որն անընդհատ ազդում էր մարդու գիտակցության և գործողությունների վրա: Նյութական անապահով վիճակը, անբավարար գիտելիքները, կախվածությունը բնության երևույթներից մարդուն անզոր և անվստահ էին դարձնում: Նյութական միջոցների անբավարարության պատճառով **վաղ միջնադարի մարդը սոցիալական միջավայրն ընկալում էր որպես յուրայինի (համայնք)** և **օտարի (համայնքից դուրս):** Յուրային համարում էր այն համայնքի ունեցվածքը, որտեղ նա ապրում և աշխատում էր: Մնացած բոլոր մարդիկ, այդ թվում՝ օտարերկրացիները և նույնիսկ հարևան համայնքի բնակիչներն ու

նրանց ունեցվածքը համարվում էին օտար:

Վաղ միջնադարի մարդը հասարակության մեջ հանդես չէր գալիս որպես առանձին անհատ, այլ ներկայանում էր որպես որևէ **խմբի անդամ:** Մարդը հասարակության մեջ իր տեղը զբաղեցնում էր իր խմբի միջոցով: Որոշակի պատժառներով մարդուն խմբից հեռացնելը նշանակում էր նրա լիակատար օտարում հասարակությունից, քանի որ նա ստանում էր **լքյալի** կարգավիճակ և չէր ընդունվում մյուս խմբերի կողմից: Այսպիսի օրինակ է ասպետին իր խմբից հեռացնելը: Սա կատարվում էր այն դեպքում, երբ ասպետը սպանում էր գերուն՝ չսպասելով նրա համար սահմանված փրկագնի ստացմանը:

Գյուղացուն ևս արտաքսում էին խմբից, եթե պարբերաբար խախտում էր համայնքի կազմակերպման նորմերը, և նա դառնում էր լքյալ: Համայնքը իր վրա էր վերցնում նրա ընտանիքը պահելու հոգսը: Նույն կարգը կիրառվում էր նաև հոգևորականի նկատմամբ: Նրան կարգալույծ էին անում և հեռացնում խմբից, ուստի նա դառնում էր լքյալ:

Վաղ միջնադարում ֆիզիկական աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը դրական էր: Այսպես՝ բենեդիկտյան միաբանության կանոններում տեղ էր գտել «Աղոթք և աշխատանք» կանոնը: Հետագայում ֆիզիկական աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը փոխվեց: Ֆիզիկական աշխատանքը վերապահվեց հասարակության ստորին շերտերին: Առավել հարգալից դարձավ մտավոր և ռազմական գործունեությունը, որի կրողներն էին վանականները և ասպետները:

Վաղ միջնադարի մարդու աշխարհընկալման մեջ կարևոր էր նաև տարածության ընկալումը: Մարդը Երկիր մոլորակը պատկերացնում էր սկավառակի տեսքով, որը ծածկված էր երկնքով: Երկրի կենտրոնը համարվում էր Երուսաղեմը, որտեղ Քրիստոսի շիրիմն էր:

Վաղ միջնադարում ժամանակի չափման միասնական համակարգ գոյություն չուներ: Օրը բաժանվում էր երկու մասի՝ ցերեկ և գիշեր: Եթե հանցագործությունը կատարվել էր գիշերը, ապա պատիժը ավելի խիստ էր, քանզի գտնում էին, որ գիշերը պատկանում է սատանային և տեսիլքներին:

Այսպիսով՝ վաղ միջնադարի մարդու աշխարհայացքը ձևավորում էին քրիստոնեությունը, շրջակա միջավայրը և հասարակական հարաբերությունները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր մշակույթների փոխներգործության արդյունքում ձևավորվեց ավատատիրական մշակույթը:
2. Կրթական համակարգում ինչ փոփոխություններ մտցրին Բոեցիոսը և Կասիոդորը:
3. Ո՞ր տիպի պատմագրական աշխատանքներն էին տարածված վաղ միջնադարում: Ո՞վ էր Արևմտյան Եվրոպայի առաջին պատմիչը, ինչ աշխատություն է գրել:
4. Ներկայացրեք վաղմիջնադարյան գրականության ձեռքբերումները:
5. Փորձեք վերհանել վաղմիջնադարյան մարդկանց աշխարհընկալման բնորոշ կողմերը:
6. Վաղ միջնադարում հասարակության մեջ մարդն ինչ տեղ էր զբաղեցնում: Ինչո՞ւ փոխվեց ֆիզիկական աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը:

§ 6. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ V–VIII ԴԱՐԵՐՈՒՄ

Բյուզանդական քաղաքակրթության ձևավորումը: Ինչպես գիտենք, 330 թ. Կոստանդիանոս Մեծ կայսրը Հռոմեական կայսրության մայրաքաղաքը տեղափոխեց Արևելք: Բյուզանդիոն քաղաքի տեղում կառուցված նոր մայրաքաղաքը նրա անունով կոչվեց Կոստանդնուպոլիս: 395 թ. բաժանումից հետո Արևելահռոմեական կայսրության կազմի մեջ մտան Բալկանյան թերակղզին, Փոքր Ասիան, Հյուսիսային Միջագետքը, Հայաստանի մի մասը, Եգիպտոսը, Ղրիմ թերակղզու մի մասը: Արևմտահռոմեական կայսրության անկումից հետո Արևելահռոմեա-

կանը մնաց որպես երբեմնի միասնական կայսրության իրավահաջորդ: Այս պատճառով կայսրությունը շարունակում էին անվանել Հռոմեական: Միայն XIV դ. սկսեցին օգտագործել Բյուզանդիա (Բյուզանդիոն) անվանումը:

Արևմուտքի հետ համեմատած՝ Բյուզանդիան ուներ մի շարք առանձնահատկություններ: Այստեղ ապրում էին հույներ, հայեր, ասորիներ, հրեաներ, եգիպտացիներ, որոնք զարգացման մակարդակով ավելի բարձր էին, քան Արևմուտքի բնակիչները:

Բյուզանդիայի կազմի մեջ մտան երկրագործական հին քաղաքակրթություն ունեցող տարածքներ: Հողը հիմնականում մշակում էին ազատ գյուղացիները, որոնք միավորված էին համայնքի մեջ:

V–VI դդ. Բյուզանդիայի քաղաքները անկում չապրեցին, ինչպես դա եղավ Արևմուտքում: Այս ժամանակաշրջանում արհեստագործությունը և առևտուրը Արևելքում վերելք էին ապրում: Բյուզանդիայում էին այնպիսի նշանավոր քաղաքներ, ինչպիսիք էին **Կոստանդնուպոլիսը, Ալեքսանդրիան, Անտիոքը, Բեյրութը, Եփեսոսը:** Արհեստագործությունը հիմնականում կենտրոնացած էր քաղաքներում:

Անցումը ավատատիրական հարաբերության Բյուզանդիայում տեղի էր ունենում ներքին ճանապարհով: Ստրկատիրության թույլ զարգացումը կարևոր նախապայման էր, որպեսզի ավատատիրական հարաբերությունները հաստատվեն առանց խոր ճգնաժամի և ցնցումների, ինչպես դա եղավ Արևմուտքում: Բյուզանդիան բարբարոսների հարվածներից չկործանվեց, ուստի պետությունը կարողացավ օրենքներով կարգավորել անցումը ավատատիրության: Այս գործում մեծ էր **Հուստինիանոս կայսեր** (527–565 թթ.) դերը: Անտիկ շրջանից Բյուզանդիան ժառանգություն ստացավ հելլենականությունը, հռոմեականությունը և քրիստոնեությունը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորմանը զուգահեռ անհրաժեշտ էր դրանք հարմարեցնել նոր պայմաններին: Հուստինիանոս կայսրը իր առջև խնդիր դրեց այս ամենը միավորելու մեկ համակարգում և ստեղծելու միասնական պետություն, օրենսդրություն, դավանանք: Այս նպատակով նա ստեղծեց «Քաղաքացիական իրավունքի հավաքածու» օրենքների ժողովածու: Բյուզանդիան դանդաղորեն դառնում էր ավատատիրական տիպի միապետություն:

Կայսերական իշխանությունը: Հռոմեական կայսրության ազդեցությունը Բյուզանդիայում ավելի շատ զգացվում էր օրենսդրության և պետական կառավարման մեջ: Ուշ Հռոմեական կայսրության օրենքները մասամբ պահպանվել էին և մտան Հուստինիանոսի օրենսդրության մեջ:

Կայսերական իշխանությունը կազմակերպվում էր այնպես, ինչպես Հռոմեական կայսրությունում: Բարձրագույն օրենսդիր, ռազմական և դատական իշխանությունը պատկանում էր կայսրին: Նա իրեն հռչակեց քրիստոնյա աշխարհի առաջնորդ:

Կայսեր իշխանությունը ժառանգական չէր: Իշխանության անցումը նոր միապետին պայմանավորված էր նաև Ծերակույտի դիրքորոշումից: Այս պատճառով կենդանության օրոք կայսրերը աշխատում էին իշխանությունը փոխանցել որդիներից մեկին:

Հսկայածավալ կայսրության կառավարումը կենտրոնացված էր կայսերական արքունիքում և բաժանված էր մի քանի տասնյակ գերատեսչությունների: Սրանցից կարևորագույներն էին հարկային, ռազմական և արտաքին հարաբերությունները կարգավորող գերատեսչությունները:

Պետության կառավարման գործում մեծ դեր էր խաղում կայսեր կից սրբազան խորհուրդը: Նրա մեջ մտնում էին կայսրին առավել նվիրված մարդիկ:

Պետության տարածքը բաժանված էր պրովինցիաների (շրջաններ), որտեղ քաղաքացիական և ռազմական իշխանությունները տարանջատված էին: Կայսրը նշանակում էր պրովինցիայի կառավարչին, որը տեղում իրականացնում էր վարչական, դատական և ֆինանսական գործառույթներ: Ռազմական իշխանությունը (զորքի հավաքագրում, ուսուցում, սահմանների պաշտպանություն) կայսեր նշանակած հրամանատարի ձեռքում էր: Ի տարբերություն Արևմտահռոմեական կայսրության՝ Բյուզանդիայում բանակը հավաքագրվում էր հիմնականում ազատ գյուղացիներից: Հզոր էր նաև բյուզանդական ռազմական նավատորմը, որը մրցակից չուներ Սև և Միջերկրական ծովերում: Բյուզանդական արագընթաց նավերը, որոնք բաղկացած էին 200–300 հոգանոց անձնակազմից, անհրաժեշտության դեպքում ծովափնյա շրջաններ էր տեղափոխում հեծյալ և հետևակ զինվորներ:

Քրիստոնեական եկեղեցու կազմակերպումը: 381 թ. թվականին Կոստանդնուպոլսի երկրորդ տիեզերական ժողովում պատրիարքական աստիճան ստացավ Կոստանդնուպոլսի աթոռը և Հռոմից հետո դասվեց երկրորդ տե-

ղում. «Կոստանդնուպոլիսը նոր Հռոմն է»: Այսպես Կոստանդնուպոլսի աթոռը գերիշխող դիրք ստացավ Արևելքի մյուս պատրիարքությունների շարքում: Այս կարգը իր վերջնական հաստատումը ստացավ **Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովում** (451 թ.): Այսպես՝ Կոստանդնուպոլսի պատրիարքության ենթակայության տակ հայտնվեցին Բյուզանդիայում գտնվող բոլոր եկեղեցիները: Բալկանյան թերակղզում միայն Իլիրիայի թեմն էր ենթարկվում Հռոմի պապին:

Արևելքում, բացի բյուզանդական եկեղեցուց, կային նաև այլ եկեղեցիներ (հայկական, եգիպտական և ասորական), որոնք չէին ընդունում Կոստանդնուպոլսի պատրիարքության գերակայությունը և կազմեցին քրիստոնեության Արևելյան ուղղափառ ուղղությունը:

Արաբա–բյուզանդական հակամարտությունը: Պարսկա–բյուզանդական երկարատև պատերազմների և ավատատիրական հարաբերությունների սկզբնավորման փուլի հետ կապված՝ Բյուզանդիան հայտնվել էր ճգնաժամի մեջ: Այդ ժամանակ էլ պատմության ասպարեզ մտավ նրա համար մի նոր վտանգավոր թշնամի՝ արաբները: Պարտության մատնելով Սասանյան Իրանին՝ արաբները ձեռնամուխ եղան Բյուզանդիայի նվաճմանը: **637 թ. Յարմուկ գետի** ափին արաբները ծանր պարտության մատնեցին բյուզանդացիներին և սկսեցին կայսրության արևելյան պրովինցիաների նվաճումը: Շուտով արաբները գրավեցին Պաղեստինը, Ասորիքը, Հյուսիսային Միջագետքը, Եգիպտոսը, Հյուսիսային Աֆրիկան: Հուստինիանոս կայսեր ժամանակաշրջանի հետ համեմատած՝ կայսրության տարածքը կրճատվեց երեք անգամ: Արաբները ստեղծեցին նաև ռազմական ուժեղ նավատորմ, որի օգնությամբ գերիշխող դիրք գրավեցին Միջերկրական ծովում և առափնյա շրջաններում:



Պարսկա–բյուզանդական մարտի մի դրվագ

Արաբական նվաճումները բացասական հետևանքներ ունեցան կայսրության հետագա ճակատագրի համար: Բյուզանդիան զրկվեց կենսական նշանակություն ունեցող տարածքներից: Արևելյան պրովինցիաների կորուստը հանգեցրեց նրան, որ այստեղ ապրող հայերի, ասորիների դերը կայսրության կյանքում նվազում էր: Մյուս կողմից՝ համապատասխանաբար ուժեղանում էր հույների դերը: Հաշվի առնելով այս իրավիճակը՝ Հերակլես կայսրը լատիներենի փոխարեն հունարենը դարձրեց պաշտոնական լեզու: Լատիներեն **կայսր** տիտղոսի փոխարեն սկսեցին օգտագործել հունարեն **վասիլևս (բասիլևս)** անվանումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր տարածքներն էր ընդգրկում Բյուզանդիան: Ի՞նչ ուղիով ընթացավ Բյուզանդիայի անցումը ավատատիրական հարաբերություններին:
2. Ներկայացրե՛ք Վաղ Բյուզանդիայի պետական կառավարման համակարգը գծակարգի տեսքով: Ի՞նչ առանձնահատկություններ կարող եք նշել:
3. Ինչպե՞ս ձևավորվեց քրիստոնեական եկեղեցու կառույցը Բյուզանդիայում: Արևելքի եկեղեցիներից որո՞նք չէին ընդունում Կոստանդնուպոլսի պատրիարքի գերակայությունը:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցան արաբական նվաճումները Բյուզանդիայի համար VII դարի կեսերին: Ինչո՞ւ հունարենը դարձավ կայսրության պաշտոնական լեզու:

ԳԼՈՒԽ Բ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

§1. ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

Արշավանքների պատճառները: Խաչակրաց արշավանքները արևմտաեվրոպական երկրների ռազմական արշավանքներն էին Միջերկրական ծովի արևելյան ափերը գրավելու համար: Դրանք իրագործվում էին կրոնական պատերազմների քողի տակ, քանի որ եվրոպացիները Արևելք էին մեկնում Տիրոջ գերեզմանը մուսուլմաններից ազատագրելու և այստեղ ապրող հեթանոսներին քրիստոնեացնելու համար: Իրականում արշավանքները ունեին նաև այլ պատճառներ ու նպատակներ:

Արևմտյան Եվրոպայում գործում էր մայորատի (ավագության) համակարգը, երբ հողը և պաշտոնը անցնում էր ավագ որդուն: Ավատատերերի կրտսեր որդիները իրենք պետք է լուծեին իրենց համար տուն և ապրուստի միջոցներ ձեռք բերելու խնդիրը: Հողի համար ավատատերերի միջև անընդհատ պատերազմներ էին տեղի ունենում: Բայց սա բավարար չէր: Այդ ժամանակ Արևմտյան Եվրոպայում տարածվել էր, թե իսկական հարստության աղբյուրը Արևելքում է:

Խաչակրաց արշավանքների կազմակերպման մեջ մեծ դեր խաղաց հռոմեակաթոլիկական եկեղեցին: Նրա գործադրած ջանքերի շնորհիվ արշավանքներին տրվեց կրոնական պատերազմների բնույթ: Եկեղեցին հավատացյալներին հորդորում էր մեկնել Արևելք, գրավել Երուսաղեմ քաղաքը և ազատագրել Տիրոջ գերեզմանը: Արշավանքների միջոցով պապականությունը աշխատում էր իրեն ենթարկել բյուզանդական եկեղեցին և կաթոլիկություն տարածել Արևելքում: Պապականության այս ձգտումներին նպաստեց այն, որ այդ ժամանակ ծանր իրավիճակում գտնվող Բյուզանդիան օգնություն խնդրեց Արևմտյան Եվրոպայից: **1071 թ. Մանազկերտի ճակատամարտում** նրանք ծանր պարտության մատնեցին բյուզանդացիներին և գրավեցին Ասորիքը, Պաղեստինը և Փոքր Ասիայի մի մասը: Բալկանյան թերակղզի ներթափանցած պեչենեգները սպառնում էին Կոստանդնուպոլսին: Ալեքսիոս I–ը օգնության համար դիմեց **Ուրբանոս II պապին: Կլերմոն քաղաքում 1095 թ.** հրավիրված եկեղեցական ժողովում պապը հավատացյալներին կոչ արեց մեկնել Արևելք: Սկսվեց խաչակրաց առաջին արշավանքը:

Ուրբանոս II պապի ճառը. Կլերմոն, 1095 թ. նոյեմբերի 27

Ռիչարդ I Առյուծասիրտ

Առաջին և երկրորդ արշավանքները: Ուրբանոս II պապի կոչին առաջինը արձագանքեցին գյուղացիները: **1096 թ. գարնանը** Արևմտյան Եվրոպայի տարբեր շրջաններում հավաքվեցին շուրջ հիսուն հազար գյուղացիներ և շարժվեցին Կոստանդնուպոլիս: Մայրաքաղաքը բարոյալքված և սանձարձակ գյուղացիներից փրկելու համար Ալեքսիոս I կայսրը կարգադրեց նրանց անցկացնել Բոսֆորի մյուս ափը՝ Փոքր Ասիա: Այստեղ թյուրք–սելջուկները առաջին իսկ ճակատամարտում պարտության մատնեցին խաչակիրներին:

1096 թ. աշնանը Ֆրանսիայից, Գերմանիայից և Իտալիայից Արևելք շարժվեցին ասպետները: Շուտով նրանք հասան Կոստանդնուպոլիս: Ալեքսիոս I–ը որոշեց խաչակիրների ռազմական ուժերը օգտագործել թյուրք–սելջուկների և արաբների դեմ պայքարելու համար: 1097 թ. խաչակիրները Փոքր Ասիայում պարտության մատնեցին սելջուկներին: **1098 թ.** նրանք գրավեցին **Եդեսիան** և **Անտիոքը,** իսկ 1**099 թ.՝ Երուսաղեմը:**

Խաչակիրները գրաված տարածքներում ստեղծեցին իրենց պետությունը՝ Երուսաղեմի թագավորությունը: Առաջին թագավոր ընտրվեց **Գոթֆրիդ Բուլյոնցին,** որը կրում էր «Տիրոջ գերեզմանի պահապան» տիտղոսը: Խաչակրաց պետությունը բաղկացած էր **Երուսաղեմի թագավորությունից, Եդեսիայի կոմսությունից, Անտիոքի դքսությունից** և **Տրիպոլիի կոմսությունից:** Պետության տարածքը բաժանված էր բարոնությունների, որտեղ կառավարում էին բարոնները: Բարոնությունները բաժանված էին ավատների, որոնք զինվորական ծառայության դիմաց տրվում էին ասպետներին:

Խաչակրաց պետությունը անկայուն քաղաքական կազմավորում էր: Պետության արևելյան սահմանը, որը ձգվում էր շուրջ 1200 կմ, միշտ ենթարկվում էր մուսուլմանների հարձակումներին: Հարավից Երուսաղեմի թագավորությանը սպառնում էր Եգիպտոսը, իսկ հյուսիսից՝ Իկոնիայի սուլթանությունը:

Խաչակրաց տիրույթները պաշտպանելու և Արևելքում կաթոլիկություն տարածելու համար պապականությունը այստեղ հիմնեց նոր եպիսկոպոսություններ և ստեղծեց նոր տիպի՝ հոգևոր–ասպետական միաբանություններ: Ստեղծվեցին 14 եպիսկոպոսություններ, որոնք ենթարկվում էին Երուսաղեմի կաթոլիկ պատրիարքին: Պապականության հովանու ներքո ստեղծվեց երեք հոգևոր–ասպետական միաբանություն՝ **Հիվանդախնամների, Տաճարականների** և **Տևտոնական:** Միաբանության անդամը և՛ ասպետ էր, և՛ վանական: Դառնալով միաբանության անդամ՝ ասպետը վանականի համար նախատեսված երեք երդում էր տալիս՝ կուսակրոնության (հրաժարվել ամուսնությունից), աղքատության (արգելվում էր հարստություն կուտակել), հնազանդության (ենթարկվել միաբանության ավագին): Միաբանության գլուխ կանգնած էր **մեծ մագիստրոսը:** Միաբանությունները ենթարկվում էին միայն պապին:

Խաչակրաց երրորդ արշավանքը: Արևելքում խաչակիրների հաջողությունները ժամանակավոր էին: XII դ. սկզբին մուսուլմանական իշխանությունները սկսեցին համախմբվել ընդդեմ խաչակիրների: Մոսուլի կառավարիչ Զանգին կոչ արեց մահմեդականներին դուրս գալու սրբազան պատերազմի: **1144 թ.** նա գրավեց **Եդեսիա** քաղաքը: Այս առիթով կազմակերպվեց երկրորդ խաչակրաց արշավանքը (1147–1149 թթ.), որը գլխավորում էին Ֆրանսիայի թագավոր **Լյուդովիկոս VII–ը** և Գերմանիայի կայսր **Կոնրադ III–ը:** Արշավանքը հաջողություն չունեցավ:

Խաչակիրների դրությունը հատկապես ծանրացավ XII դ. երկրորդ կեսին, երբ սկսեց հզորանալ Եգիպտոսը: Քուրդ զորավար **Սալահ ադ Դինը** (Սալադին) դարձավ Եգիպտոսի սուլթան և գրավեց Ասորիքի ու Միջագետքի մի մասը: **1187 թ.** նա պարտության մատնեց խաչակիրներին: Այնուհետև Սալադինը գրավեց Ակրան, Բեյրութը և Երուսաղեմը:

Խաչակրաց **երրորդ** արշավանքին **(1189–1192)** մասնակցում էին ասպետական երեք բանակներ, որոնց ղեկավարում էին Անգլիայի թագավոր **Ռիչարդ I Առյուծասիրտը,** Ֆրանսիայի թագավոր **Ֆիլիպ II Օգոստոսը** և Գերմանիայի կայսր **Ֆրիդրիխ I Շիկամորուսը:** Գերմանացի խաչակիրները գրավեցին Իկոնիա քաղաքը, սակայն Պաղեստին չհասան: Նրանք հետ դարձան այն բանից հետո, երբ կայսրը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում: Անգլիացիները և ֆրանսիացիները արշավանքի դուրս եկան գերմանացիներից մեկ տարի հետո: Նրանք Միջերկրական ծովով շարժվեցին Ասորիք: Ճանապարհին Ռիչարդ I–ը գրավեց Կիպրոս կղզին և այստեղ ստեղծեց Կիպրոսի թագավորությունը: Ափ իջնելով Ասորիքում՝ խաչակիրները գրավեցին Ակրա քաղաքը, որը դարձավ Երուսաղեմի թագավորության մայրաքաղաքը: Շուտով ֆրանսիացիները հետ դարձան, քանի որ սրվել էին անգլա–ֆրանսիական հարաբերությունները: Ռիչարդ I–ը ստիպված եղավ Սալադինի հետ հաշտության պայմանագիր կնքել: Վաճառականներին և ուխտավորներին թույլատրվեց երեք տարի այցելել Երուսաղեմ:

Խաչակրաց հաջորդ արշավանքները: Խաչակրաց երրորդ արշավանքից հետո պարզ դարձավ, որ խաչակրաց տիրույթների ճակատագիրը արդեն կախված է Եգիպտոսից: Այս պատճառով **Ինոկենտիոս III** պապը (1198–1216 թթ.) կոչ արեց խաչակրաց արշավանք կազմակերպել դեպի Եգիպտոս: Խաչակիրները որոշեցին հավաքվել Վենետիկում և այնտեղից ծովով շարժվել Եգիպտոս: Վենետիկի կառավարիչ Էնրիկո Դանդոլոն խաչակիրներին Եգիպտոս հասցնելու համար պահանջեց 85 հազար մարկ արծաթ (մոտ 20 տ արծաթ): Սակայն խաչակիրները այդքան գումար չունեին: Վենետիկի կառավարիչը նրանց առաջարկեց գումարի փոխարեն գրավել Դալմաթիայի ափին գտնվող Զադար նավահանգիստը, որը Վենետիկի առևտրական մրցակիցն էր: 1202 թ. խաչակիրները գրավեցին Զադար քաղաքը, որով սկսվեց **չորրորդ** խաչակրաց արշավանքը

Սալահ ադ Դին

(1202–1204 թթ.): Այնուհետև վենետիկցիները կարողացան համոզել արշավանքի առաջնորդներին շարժվել դեպի Կոստանդնուպոլիս: Արշավանքը սկսվեց այն պատրվակով, որ խաչակիրները պետք է վերականգնեն տապալված Իսահակ II Անգելոսի իշխանությունը, որի որդին օգնության խնդրանքով դիմել էր պապին: **1204 թ.** խաչակիրները գրավեցին Կոստանդնուպոլիսը: Բյուզանդիայից խլված տարածքների վրա ստեղծվեց խաչակրաց պետություն՝ **Լատինական կայսրությունը:** Բյուզանդիայի փոքրասիական տիրույթներում հույները ստեղծեցին Նիկեայի և Տրապիզոնի կայսրությունները: Բյուզանդական կայսրությունը ժամանակավորապես դադարեց գոյություն ունենալուց:

Հետագայում կազմակերպվեցին ևս չորս խաչակրաց արշավանքներ, սակայն դրանք արդյունքներ չտվեցին: Խաչակիրները մեկը մյուսի հետևից կորցնում էին իրենց տիրույթները: 1268 թ. եգիպտացիները գրավեցին Անտիոքը, իսկ **1291 թ.** խաչակիրները կորցրին իրենց վերջին հենակետը Արևելքում՝ **Ակրան:** Սուրբ Երկիր խաչակրաց արշավանքների դարաշրջանը ավարտվեց:

Խաչակրաց արշավանքների հետևանքները: Խաչակրաց արշավանքները իրենց անմիջական նպատակներին չհասան: Դրանք դարձան տասնյակ հազարավոր մարդկանց մահվան պատճառ ոչ միայն Արևելքում, այլև Արևմուտքում: Արշավանքների ընթացքում ավերվեցին և կործանվեցին բազմաթիվ մշակութային արժեքներ, պալատներ, գրադարաններ: Ամենից շատ տուժեց Կոստանդնուպոլիսը: Սակայն արշավանքները որոշակի ազդեցություն ունեցան **Արևելք–Արևմուտք** փոխհարաբերությունների վրա: Աճեցին Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող ապրանքափոխանակության ծավալները: Արևմտյան Եվրոպայից Արևելք սկսեցին արտահանել որոշ ապրանքներ, մասնավորապես մահուդ, որը խթանում էր արհեստագործության զարգացումը:

Ապրելով Արևելքում՝ եվրոպացիները ծանոթացան հողագործական նոր մշակաբույսերի և դրանց մի մասը՝ ձմերուկ, ծիրան, բրինձ, կիտրոն, սկսեցին աճեցնել Եվրոպայում:

Խաչակրաց արշավանքների ընթացքում թուլացան բյուզանդացիների և արաբ առևտրականների դիրքերը միջերկրածովյան առևտրում: Դրա փոխարեն բարձրացավ Վենետիկի և Ջենովայի առևտրական դերը:

Խաչակրաց արշավանքների արդյունքում խորացան նաև Արևելք–Արևմուտք հակասությունները: Ի պատասխան խաչակրության՝ մուսուլմանական աշխարհում ձևավորվեց Սրբազան պատերազմի գաղափարախոսություն:

Կոստանդնուպոլսի գրավումը ավելի խորացրեց բյուզանդական և հռոմեակաթոլիկական եկեղեցիների միջև գոյություն ունեցող հակասությունները:

Ընդհանուր առմամբ՝ խաչակրաց արշավանքները նպաստեցին Արևմտյան Եվրոպայի տնտեսության և մշակույթի զարգացմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին խաչակրաց արշավանքների նախադրյալները: Ի՞նչ դեր խաղաց շարժման կազմակերպման գործում կաթոլիկ եկեղեցին: Ե՞րբ սկսվեց շարժումը:
2. Ի՞նչ կառուցվածք ուներ Արևելքում խաչակիրների ստեղծած պետությունը: Ի՞նչ տիտղոս էր կրում Գոթֆրիդ Բուլյոնցին: Ի՞նչ նպատակով Արևելքում հիմնվեցին հոգևոր–ասպետական միաբանություններ: Թվարկե՛ք դրանք:
3. Ներկայացրե՛ք խաչակրաց հաջորդ արշավանքները և դրանց արդյունքները: Ինչո՞ւ խաչակիրները Եգիպտոս արշավելու փոխարեն 1204 թ. գրավեցին Կոստանդնուպոլիսը:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ խաչակրաց շարժումը Արևմուտքի և Արևելքի համար. ներկայացրե՛ք դրական և բացասական հետևանքները:

§ 2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԴԱՍԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Գյուղատնտեսությունը: Արևմտաեվրոպական երկրներում տնտեսության գլխավոր ճյուղը ինչպես նախորդ շրջանում, այնպես էլ դասական միջնադարում մնում էր գյուղատնտեսությունը: Լայնորեն տարածվեց խոպան հողերի ու անտառների մաքրումը, որոնց հաշվին ընդարձակվում էին մշակելի հողերն ու արոտավայրերը: Դա նպաստում էր ոչ միայն տնտեսության աճին, այլև նրան, որ նոր հողերում հաստատված գյուղացիները հարկերը սովորաբար վճարում էին դրամով: Հարկերի վճարման այս ձևը բարձրացնում էր աշխատանքի արտադրողականությունը և ինքնուրույն տնտեսություն վարելու գյուղացու ձգտումը: Աշխատանքի արտադրողականությունը առավելապես աճում էր գյուղացիական տնտեսություններում, քանի որ իր հողաբաժնում գյուղացին ավելի լավ էր աշխատում, քան ավատատիրոջ հողում:

Ավատատերը սովորաբար հողի մի մասը չէր բաժանում գյուղացիներին: Սա կոչվում էր տերու-

նական հող: Գյուղացին ստացած հողի դիմաց պարտավոր էր մշակել նաև այս հողը: Սակայն նա չէր մշակում այն ջանասիրությամբ և խնամքով, ինչպես իր հողը, ուստի այստեղից ավելի քիչ բերք էր ստացվում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ավատատերը ժառանգական հողակալության սկզբունքով այս հողերը ևս սկսում է բաժանել գյուղացիներին: Ստացած հողի դիմաց գյուղացին պարտավոր էր ավատատիրոջը հարկ վճարել բնամթերքով կամ դրամով: Երկու դեպքում էլ գյուղացին շահագրգռված էր հողը լավ մշակելու, քանի որ բերքի մի մասը ինքնուրույն էր տնօրինում:

Այդ ժամանակ հողագործության մեջ լայնորեն տարածվեցին եռադաշտային համակարգը և հացահատիկային մշակույթների լավագույն տեսակները: Եզների հետ միաժամանակ որպես քաշող ուժ սկսեցին օգտագործել ձիեր:

Միջնադարյան քաղաքների առաջացումը: Ավատատիրական հասարակության սոցիալ–տնտեսական հիմնական կառույցներն էին համայնքը, ավատը և քաղաքը: Վերջինս առաջացավ դասական միջնադարում: Քաղաքը դանդաղորեն վերափոխեց հասարակարգի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը:

X–XI դդ. Արևմտյան Եվրոպայի տնտեսական կյանքում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ: Արհեստագործության մեջ, որը հիմնականում կենտրոնացած էր գյուղում, նկատվում էր արտադրողականության աճ: Կատարելագործվում էին արհեստի առանձին ճյուղեր՝ մետաղագործությունը, զինագործությունը, կտավագործությունը, մահուդագործությունը:

Արհեստի մասնատումը նոր ճյուղերի, արհեստագործական տեխնիկայի կատարելագործումը պահանջում էին, որ արհեստավորը ունենա որոշակի գիտելիքներ և մասնագիտական հմտություններ: Գյուղացին միաժամանակ չէր կարող զբաղվել և՛ հողագործությամբ, և՛ արհեստագործությամբ: Անհրաժեշտ էր, որ արհեստագործությունը անջատվեր գյուղատնտեսությունից և դառնար արտադրության ինքնուրույն ճյուղ: Գյուղացի արհեստավորը թողնում էր գյուղը և հաստատվում այնպիսի վայրում, որը նպաստավոր էր արհեստով զբաղվելու համար:

Արևմտյան Եվրոպայի տարբեր շրջաններում քաղաքներն առաջացան տարբեր ժամանակ: VIII–IX դդ. քաղաքները՝ որպես արհեստի և առևտրի կենտրոններ, առաջացան Հյուսիսային Իտալիայում (**Վենետիկ, Ջենովա, Ֆլորենցիա**) և Հարավային Ֆրանսիայում (**Մարսել, Թուլուզ**): X–XI դդ. միջնադարյան քաղաքներ առաջացան Եվրոպայի մյուս երկրներում:

Արևմտաեվրոպական քաղաքները չափերով շատ փոքր էին: Սովորաբար այնտեղ բնակվում էր 1–5 հազար մարդ: Մինչև XV դ. 20–30 հազար բնակիչներ ունեցող քաղաքները համարվում էին մեծ քաղաքներ: Այդ ժամանակ միայն մի քանի քաղաքներ (**Միլան, Փարիզ, Կոստանդնուպոլիս, Կորդովա**) ունեին 80–100 հազար բնակչություն:

Քաղաքի բնակչությունը հիմնականում զբաղվում էր արտադրությամբ և փոխանակությամբ: Ի տարբերություն վաղ միջնադարի շրջիկ վաճառականների՝ ձևավորվում է վաճառականների նոր խավ, որը զբաղվում էր ներքին և արտաքին առևտրով: Համալսարանների և այլ կրթական կենտրոնների առաջացումից հետո ձևավորվում է նաև մտավորականների խավ:

Քաղաքը առաջանում էր ավատատիրոջ հողի վրա, ուստի պարտավոր էր ենթարկվել նրան: Հողատերը իր ձեռքում էր կենտրոնացնում քաղաքի կառավարումը: Ավելի շատ եկամուտներ ստանալու ավատատիրոջ ձգտումը հանդիպում էր քաղաքացիների դիմադրությանը: Սկզբում քաղաքացիները պայքարում էին հարկերը թեթևացնելու համար: Հետագայում նրանք իրենց առջև դրեցին քաղաքական նպատակներ՝ ձեռք բերել ինքնավարություն: Քաղաքացիները աշխատում էին իրենց ձեռքը վերցնել քաղաքի կառավարումը, իրենց միջավայրից ընտրել քաղաքային խորհուրդը և նրա ղեկավարին՝ քաղաքագլխին: Քաղաքացիների և ավատատիրոջ միջև տեղի ունեցող պայքարի ընթացքում ձևավորվում է քաղաքային ինքնավարությունը:

Ինքնակառավարվող քաղաքը ուներ սեփական դատարան, աշխարհազոր և ֆիննաններ: Ինքնավարություն ստանալուց հետո քաղաքը պարտավորվում էր ամեն տարի ոչ մեծ գումար

Վաշխառուներ

վճարել ավատատիրոջը և նրա վարած պատերազմի ժամանակ ռազմաջոկատ տրամադրել:

Արհեստը և առևտուրը: Միջնադարի քաղաքի արտադրության հիմքը արհեստն էր: Արհեստավորը ևս մանր արտադրող էր: Այսպիսի արտադրության նպատակը ոչ թե շահույթ ստանալն էր, այլ գոյության միջոցներ ստեղծելը:

Արևմտյան Եվրոպայում միջնադարյան արհեստի բնորոշ առանձնահատկությունը նրա **համքարային** կազմակերպումն էր: Քաղաքում սովորաբար որոշակի մասնագիտության արհեստավորները միավորվում էին առանձին միություններ՝ համքարությունների մեջ: Համքարությունները առաջացան որպես մանր ապրանք արտադրողների կազմակերպություններ իրենց արտադրությունը, եկամուտները ավատատերերից և քաղաք եկած նոր արհեստավորների մրցակցությունից պաշտպանելու համար: Համքարության գլխավոր խնդիրը արտադրության և վաճառքի նկատմամբ վերահսկողության սահմանումն էր:

Համքարությունում միավորված արհեստավորներն ունեին արհեստանոց և աշխատանքային գործիքներ: Արհեստանոցում արհեստավորին սովորաբար օգնում էին նրա ընտանիքի անդամները, մեկ կամ երկու ենթավարպետ և մի քանի աշակերտներ: Համքարության անդամ էր միայն արհեստանոցի տեր վարպետը: Վարպետը, ենթավարպետը և աշակերտը համքարային աստիճանակարգության մեջ զբաղեցնում էին տարբեր աստիճաններ: Աշակերտը կարող էր մի քանի տարի սովորելուց հետո դառնալ ենթավարպետ, իսկ հետո՝ վարպետ:

Համքարությունը խստորեն հետևում էր, որ յուրաքանչյուր վարպետ արտադրի այնքան և այնպիսի որակի արտադրանք, ինչպիսին որոշված էր նրա համար: Համքարության կանոնադրությունը սահմանափակում էր նաև վարպետի մոտ աշխատող ենթավարպետների և աշակերտների թվաքանակը, արգելում էր գիշերները և տոնական օրերին աշխատելը:

Ապրանքային արտադրության զարգացումը քաղաքում և գյուղում նպաստեց առևտրի զարգացմանը: Աստիճանաբար շուկա էին գալիս նաև գյուղացիները, իսկ քաղաքից գյուղ էին բերում արհեստագործական արտադրանք ու այնպիսի ապրանքներ, որոնք գյուղում չէին արտադրում: Առաջանում էին տեղական շուկաներ, որոնք գնալով ընդարձակվում էին և ընդգրկում տարբեր շրջաններ:

Դասական միջնադարում դեռևս մեծ դեր էր խաղում արտաքին առևտուրը: XI–XV դդ. եվրոպական առևտուրը առավելապես կենտրոնացած էր երկու շրջաններում: Դրանցից մեկը **Միջերկրական ծովն** էր, որն իրար էր կապում Եվրոպան Արևելքի հետ: Սկզբում Արևելք–Արևմուտք առևտրում գլխավոր դերը պատկանում էր արաբական և բյուզանդական վաճառականներին, իսկ խաչակրաց արշավանքների շրջանից՝ Վենետիկի, Ջենովայի, Մարսելի առևտրականներին: Եվրոպական առևտրի մյուս շրջանն ընդգրկում էր **Բալթիկ** և **Հյուսիսային ծովերը:**

Առևտրականները ևս, ինչպես արհեստավորները, միավորվում էին հատուկ կազմակերպությունների մեջ: Դրանք կոչվում էին **գիլդիաներ:** Սովորաբար գիլդիայի մեջ մտնում էին այն վաճառականները, որոնք զբաղվում էին միևնույն ապրանքի առևտրով: Երբեմն միավորվում էին նաև տարբեր քաղաքների առևտրականները: Այսպես առաջացավ **Հանզան,** որը միավորում էր գերմանական և արևմտասլավոնական քաղաքների վաճառականներին:

Առևտրականները մեծ դեր էին խաղում քաղաքի կյանքում, քանի որ նրանք քաղաքի ամենահարուստ մարդիկ էին, և սովորաբար նրանց ձեռքին էր քաղաքի կառավարումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն էր ավատատիրական հասարակությունում տնտեսության գլխավոր ճյուղը: Ինչո՞ւ էր գյուղացին պակաս արտադրողականությամբ աշխատում տերունական հողի վրա: Ինչպե՞ս փոխվեց այդ իրավիճակը:
2. Միջնադարյան քաղաքների առաջացման ի՞նչ նախադրյալներ կարող եք նշել: Թվարկե՛ք ժամանակի նշանավոր, ինչպես նաև մեծ քաղաքները: Սոցիալական ո՞ր խավերն էին կազմում քաղաքային բնակչությունը: Քաղաքների ինքնավարությունը ինչպե՞ս էր ձևավորվում:
3. Ի՞նչն էր բնորոշ միջնադարյան քաղաքների արհեստներին: Ո՞րն էր համքարության գլխավոր խնդիրը:
4. Ո՞րն էր առևտրի զարգացման գլխավոր պատճառը: Եվրոպական երկրների առևտուրը ո՞ր շրջաններում էր կենտրոնացած XI–XV դարերում: Ի՞նչ է գիլդիան:

§ 3. ԴԱՍԱՅԻՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Ավատատիրական հասարակության դասերի ձևավորման ավարտը: Միջնադարի մտածողները գտնում էին, որ հասարակությունը բաղկացած է երեք դասերից, և յուրաքանչյուր մարդ պատկանում է դրանցից որևէ մեկին: Առաջին դասը (աղոթողներ) կազմում էին **հոգևորականները**, երկրորդը (կռվողներ)՝ **ավատատերերը**, երրորդը (աշխատողներ)՝ **գյուղացիները** և **քաղաքացիները,** այսինքն՝ նյութական բարիքներ ստեղծողները:

XI դ. Արևմտյան Եվրոպայում ավատատերերի դասակարգը առանձնացել էր հասարակության մյուս դասերից և դարձել էր արտոնյալ խումբ, որին պատկանելը որոշվում էր միայն ծնունդով: Հողի սեփականության իրավունքը պատկանում էր միայն նրանց, ուստի գործում էր «առանց սենյորի հող չկա» իրավանորմը:

Հողային սեփականության հիման վրա ձևավորվում էր նաև ավատատերերի քաղաքական իշխանությունը: Քաղաքական աստիճանակարգության մեջ նրանց զբաղեցրած աստիճանը կախված էր հողատարածքի չափերից և կարգավիճակից, այսինքն՝ ինչի համար էին այդ հողը ստացել:

Հոգևորականությունը առաջին դաս կոչվելու իր իրավունքը բացատրում էր նրանով, որ իրենք միջնորդ են Աստծո և մարդու միջև: Ավատատիրական հասարակության մեջ եկեղեցին ևս խոշոր հողատեր էր: Եկեղեցու և հոգևորականների կարիքները բավարարելու համար պետությունը եկեղեցուն հանձնեց հսկայական հողատիրույթներ: Առանձին անձինք ևս հոգու փրկության և մեղքերի թողության համար եկեղեցուն հողեր էին նվիրում:

Արևմտյան Եվրոպայի բոլոր բնակիչները պարտավոր էին եկեղեցուն հարկ վճարել՝ բերքի մեկ տասներորդ մասը, որը կոչվում էր տասանորդ: Եկեղեցին դարձավ ավատատեր: Հոգևոր ավատատերերը ներառվեցին ավատատիրական աստիճանակարգության մեջ: Նրանք ևս ունեին իրենց վասալները: Ռազմական ծառայությունից բացի, բարձրաստիճան հոգևորականները զբաղվում էին պետության կառավարման գործերով: Գոյություն ուներ նաև առանձին հոգևոր աստիճանակարգություն (նվիրապետություն): Այն գլխավորում էր պապը և ուներ ինը աստիճան:

Քաղաքների, արհեստի և առևտրի առաջացումը, քաղաքների պայքարը սենյորների դեմ հիմք դարձան քաղաքային դասի ձևավորման համար: Նոր դասի հիմնական տնտեսական զբաղումունքը արհեստն էր և առևտուրը: Քաղաքային դասն ուներ մի շարք արտոնություններ, մասնավորապես անձնական ազատություն, մասնակցություն քաղաքի կառավարմանը, նրանց դատում էին միայն քաղաքային դատարանում:

Գույքային և սոցիալական անհավասարություն կար նաև **քաղաքային դասի** ներսում: Աստիճանաբար ձևավորվում էր հարուստների խավը, որի անդամներին XIV–XV դդ. սկսեցին անվանել **բյուրգերներ:** Մինչդեռ սկզբում բոլոր քաղաքացիներին էին անվանում բյուրգերներ:

Ավատատիրական հասարակության հիմնական դասերի ձևավորումից հետո թագավորը ստիպված էր երկիրը կառավարել նրանց հետ համատեղ: Այսպես ձևավորվեց նոր տիպի պետություն՝ դասային միապետություն:

Անգլիական խորհրդարանը: XIII դ. Անգլիայի քաղաքական զարգացումը, քաղաքների աճը, ներքին տնտեսական կապերի զարգացումը տանում էին դեպի պետության հետագա կենտրոնացում: Դրանում հատկապես շահագրգռված էին ասպետները, քաղաքացիները և գյուղացիները՝ բարոնների կամայականություններից ազատվելու համար: Սակայն պետության կենտրոնացումը Անգլիայում տեղի ունեցավ քաղաքական երկարատև պայքարի, մասնավորապես քաղաքացիական պատերազմի միջոցով:

Քաղաքական պայքարի առաջին շրջանը կապված էր **Հովհան Անհողինի** կառավարման հետ (1199–1216 թթ.): Նա բռնագրավում էր իրեն ոչ ցանկալի բարոնների հողերը, ձերբակալում և մահապատժի էր ենթարկում նրանց: Դժգոհությունը թագավորից էլ ավելի մեծացավ, երբ անգլո–ֆրանսիական պատերազմում Անգլիան պարտություն կրեց և հրաժարվեց Ֆրանսիայում գտնվող իր տարածքների մեծ մասից: Հովհան Անհողինը հակամարտության մեջ մտավ նաև Ինոկենտիոս III պապի հետ և պարտություն կրեց: Նա ստիպված իրեն ճանաչեց պապի վասալը: Սա խորացրեց դժգոհությունը, որը վերածվեց զինված ապստամբության: **1215 թ.** ապստամբները մտան Լոնդոն և թագավորին ներկայացրին իրենց պահանջները՝ **Ազատություններ-**

րի մեծ հրովարտակը: Հովհան Անհողինը ստորագրեց հրովարտակը, որը բաղկացած էր **63 հոդվածներից:** Սա միջնադարյան **Անգլիայի Սահմանադրությունն** էր: Թագավորը պարտավորվում էր վասալներից չվերցնել սահմանված հարկից ավելին, չխառնվել բարձրաստիճան հոգևորականների ընտրություններին: Հրովարտակի կատարումը հսկելու համար ստեղծվեց 25 բարոններից կազմված խորհուրդ:

Սակայն Հովհան Անհողինի որդին՝ Հենրիխ III–ը, հրաժարվեց հրովարտակի պահանջները կատարելուց: Անգլիայում սկսվեց քաղաքացիական պատերազմի նոր փուլ: Հենրիխ III–ը պարտություն կրեց: Ապստամբների առաջնորդ **Սիմոն դը Մոնֆորը 1265 թ.** Լոնդոնում հրավիրեց ժողով, որին, բացի բարոններից, մասնակցում էին նաև յուրաքանչյուր կոմսությունից երկու ասպետ և խոշոր քաղաքներից երկու քաղաքացի: Այս ներկայացուցչական ժողովն էլ ստացավ **Խորհրդարան** անվանումը: Չնայած ապստամբությունը պարտություն կրեց, իսկ Մոնֆորը սպանվեց, խորհրդարանը շարունակեց իր գոյությունը: Թագավորը անձամբ բարոններին, արքեպիսկոպոսներին, եպիսկոպոսներին, վանահայրերին հրավիրում էր խորհրդարան: Ասպետների և քաղաքացիների ներկայացուցիչներն ընտրվում էին տեղական ժողովներում:

XIV դ. խորհրդարանը բաժանվեց երկու պալատի (ատյան)՝ **Վերին** (Լորդերի) և **Ստորին** (Համայնքների): Առաջինում նիստեր էին անում բարոնները և հոգևորականները, իսկ երկրորդում՝ ասպետներն ու քաղաքացիները:

Գլխավոր շտատներ: Ֆրանսիայում թագավորական իշխանության ուժեղացման հետևանքով պայքար սկսվեց արքունիքի և պապականության միջև: **Ֆիլիպ IV Գեղեցիկը** (1285–1314) սահմանափակեց ֆրանսիական եկեղեցու դատական և գույքային իրավունքները: Սա առաջացրեց Բոնիֆացիոս VIII պապի դժգոհությունը: Ֆիլիպ IV–ը արգելեց նաև Ֆրանսիայից ոսկու և արծաթի արտահանումը պապական արքունիք: Հակասություններն ավելի խորացան, երբ պապը հայտարարեց, որ աշխարհիկ իշխանությունը պետք է ենթարկվի հոգևոր իշխանությանը: Սակայն այս ժամանակ Ֆրանսիայում թագավորական իշխանությունը բավական ուժեղ էր իր իրավունքները պաշտպանելու համար: Հասարակության աջակցությունը ստանալու համար Ֆիլիպ IV–ը **1302 թ.** հրավիրեց **Գլխավոր շտատներ,** որտեղ ներկայացված էին երեք դասեր (շտատներ)՝ հոգևորականներ, ազնվականներ, քաղաքացիներ: Յուրաքանչյուր քաղաք ուղարկել էր երկու ներկայացուցիչ:

Ֆիլիպ IV Գեղեցիկ

Դասային միապետությունը Ֆրանսիայում ուներ մի շարք առանձնահատկություններ: Գլխավոր շտատներում երեք դասերը նիստեր էին անում առանձին–առանձին, և նրանցից յուրաքանչյուրը կազմում էր առանձին պալատ: Առաջին պալատը կազմված էր հոգևորականներից, երկրորդը՝ միջին ու մանր ավատատերերից: Դուքսերը և կոմսերը սովորաբար շտատների նիստերին չէին մասնակցում, այլ մնում էին թագավորի հետ: Երրորդ պալատը ընդգրկում էր քաղաքային դասի ներկայացուցիչներին: Յուրաքանչյուր պալատ ուներ մեկ ձայն: Օրենք ընդունելու համար անհրաժեշտ էր, որ երեք ձայներից երկուսը քվեարկեին նույն ձևով:

Գլխավոր շտատները հրավիրվում էին թագավորի նախաձեռնությամբ և քննարկում էին նրան ֆինանսական աջակցություն ցույց տալու հարցը: Գլխավոր շտատների առաջացումով Ֆրանսիայում ավարտվեց պետության նոր տիպի՝ դասային միապետության կազմավորումը:

Դասային միապետություն առաջացավ նաև Սրբազան հռոմեական կայսրությունում, սակայն ներկայացուցչական մարմնի՝ Ռայխստագի դերը շատ թույլ էր: Սկզբում նրան մասնակցում էին միայն իշխանները, ապա՝ քաղաքի ներկայացուցիչները, իսկ XIV դ.՝ մանր ու միջին հողատերերը:

Դասային ներկայացուցչական միապետություն առաջացավ նաև **Իսպանիայում:** Ներկայացուցչական մարմինը կոչվում էր **Կորտեսներ:** Սրանք ավելի վաղ առաջացան, քանի որ երեք դասերն էլ գործուն մասնակցում էին Ռեկոնկիստային:

Ազգային պետությունների ձևավորումը: Վաղ միջնադարում սկսվեց ժամանակակից Եվրոպայի ժողովուրդների կազմավորումը: Ժողովուրդների մեծ գաղթը, նորմանների և քոչվորների տեղաշարժերն անընդհատ փոխում էին մարդկանց տարաբնակեցման սահմանները: Տեղաշարժերի հետևանքով տեղաբնիկների հետ բնակություն էին հաստատում տարբեր ցեղեր և ժողովուրդներ: Այսպես Անգլիայում, տեղաբնիկ կելտերից բացի, բնակություն հաստատեցին գերմանացիները և նորմանները: XI դ. սկսած էթնիկական տարբեր խմբերի տեղաշարժերը Եվրոպայում հիմնականում դադարեցին: Սկսվեց տարբեր ցեղերի և ժողովուրդների միավորման և առանձին ժողովուրդների ձևավորման երկարատև գործընթացը: Որևէ ժողովրդի կազմավորման կարևորագույն նախապայմաններից մեկը լեզվի ձևավորումն է: Նրա շնորհիվ է ստեղծվում միատարր մշակութային միջավայր: Այսպես՝ մինչև XI–XII դդ. Անգլիայում գոյություն ունեին տարբեր լեզուներ: Շուտով Լոնդոնի բարբառի հիման վրա ձևավորվեց անգլերենը: Այն դարձավ գրական և խոսակցական լեզու ամբողջ Անգլիայի համար:

Եվրոպայի այն երկրներում, որտեղ տեղի էր ունենում ժողովուրդների կազմավորման գործընթացը, զուգահեռաբար ձևավորվում էին **ազգային պետություններ:** Նման պետության մեջ բնակչության բացարձակ մեծամասնությունը խոսում էր նույն լեզվով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ դասերից էր կազմված միջնադարյան հասարակությունը: Քաղաքական աստիճանակարգության հիմքում ի՞նչն էր դրված: Ինչպե՞ս էին հիմնավորում հոգևորականները առաջին դաս կոչվելու իրենց իրավունքը: Ե՞րբ ձևավորվեց քաղաքային դասը: Ովքե՞ր էին բյուրգերները:
2. Ե՞րբ ընդունվեց Ազատությունների մեծ հրովարտակը և ի՞նչ էր այն սահմանում: Ո՞ւմ նախաձեռնությամբ և ե՞րբ գումարվեց Անգլիայի խորհրդարանը:
3. Ի՞նչ պայմաններ նպաստեցին Ֆրանսիայում դասային միապետության ստեղծմանը: Ո՞վ և ե՞րբ հրավիրեց Գլխավոր շտատները:
4. Ազգային պետությունների ձևավորումը Եվրոպայում ե՞րբ է սկսվել, ո՞րն էր դրանց առաջացման գլխավոր նախապայմանը:

§ 4. ԴԱՍԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ: ՎԱՂ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Կրթական համակարգը: XI դ. Արևմտյան Եվրոպայում սկսվում է կրթական համակարգի վերելքը: Դպրոցները բաժանվում են երեք աստիճանների՝ **ծխական** (գյուղական), **տաճարային** (քաղաքի տաճարներին կից) և **վանական:** Բոլոր դպրոցները պատկանում էին եկեղեցուն, որը որոշում էր նրանց կրթական ծրագրերը և դասավանդվող առարկաների ցանկը:

Քաղաքների առաջացման, քաղաքային բնակչության աճի, արհեստի և առևտրի զարգացման հետ կապված՝ առաջանում էին **մասնավոր, համքարային** և **գիլդիական** դպրոցներ, որոնք եկեղեցու իրավասությունից դուրս էին, ուստի իրենք էին որոշում դասավանդվող առարկաների ծրագրերը և ցանկերը:

XII–XIII դդ. Արևմտյան Եվրոպայում սկսվեց տնտեսական և մշակութային կյանքի վերելքը: Արևելքի, մասնավորապես արաբական և բյուզանդական մշակույթների հետ ծանոթությունը փոփոխություններ առաջացրեց նաև կրթության բնագավառում: Տաճարային դպրոցները վերածվում էին համաքաղաքային դպրոցների, ապա՝ համալսարանների:

XIII դ. համալսարաններ բացվեցին Բոլոնի-

այում, Փարիզում, Օքսֆորդում: Արդեն XIV դ. Եվրոպայում կար շուրջ 60 համալսարան:

Համալսարանն ուներ իրավական, տնտեսական և վարչական ինքնավարություն, որը հատուկ հրովարտակով նրան էր շնորհում թագավորը կամ պապը:

Համալսարանն ուներ ֆակուլտետներ (բաժանմունքներ): «Կրտսեր» ֆակուլտետում, որտեղ սովորելը պարտադիր էր բոլոր ուսանողների համար, ուսումնասիրում էին «յոթ ազատ արվեստները»: Ապա գալիս էին «ավագ» ֆակուլտետները՝ իրավաբանական, բժշկական, աստվածաբանական:

Պատմական ավանդույթը: Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան ունի իր աշխարհընկալումը բնության, ժամանակի, տարածության, ինչպես և հասարակության մասին: Դասական միջնադարի մշակույթում կարևոր դեր էին խաղում պատմության վերաբերյալ պատկերացումները: Պատմությունը դեռևս գիտություն չէր, ուստի տարբեր ժանրերի պատմական աշխատությունները՝ ժամանակագրություններ, տարեգրություններ, թագավորների և սրբերի վարքեր գրելը բանահավաքների սիրելի զբաղմունքն էր: Սա գալիս էր նրանից, որ քրիստոնեությունը մեծ տեղ էր տալիս պատմությանը և գտնում էր, որ Աստվածաշնչում տեղ գտած իրադարձությունները պատմական հիմքեր ունեն: Միջնադարի ժամանակագիրները և տարեգիրները, որոնք իրենց աշխատությունները սկսում էին արարչագործությունից և հասցնում մինչև իրենց ապրած ժամանակաշրջանը, փորձում էին հասարակության պատմության տարբեր դարաշրջաններ համադրել իրար հետ:

Մեծ թվով ժամանակագրություններ հանդես եկան՝ կապված խաչակրաց արշավանքների հետ: Դրանց մեջ աչքի է ընկնում խաչակրաց առաջին արշավանքին նվիրված ժամանակագրությունը, որի հեղինակը վանահայր **Նոժանացին** է: Չորրորդ խաչակրաց արշավանքի հիմնական իրադարձությունները շարադրված են երկու ժամանակագրություններում, որոնք գրված են ֆրանսերենով: «Կոստանդնուպոլսի գրավումը» աշխատության հեղինակը արշավանքի առաջնորդներից **Վիլարդուենն** էր:

XIII դ. սկսում են հրապարակ գալ միավորված ժամանակագրություններ, այսինքն՝ միևնույն իրադարձության վերաբերյալ տարբեր հեղինակների գրառումները հավաքվում են մի ժամանակագրության մեջ: Այսպես ստեղծվեցին Ֆրանսիական մեծ ժամանակագրությունը, որն ընդգրկում էր Ֆրանսիայի պատմությունը մինչև XV դ., և **Սենտ Օլբանի** ժամանակագրությունը Անգլիայում:

XIII դ. երկրորդ կեսից հրապարակ է գալիս պատմության շարադրման նոր ժանր՝ պատմական հուշագրությունը: Դրանց մեջ առավել կարևոր է Լյուդովիկոս XI–ի խորհրդական **Ֆիլիպ դ'Կոմինի** «Հուշագրությունը»:

Սքոլաստիկա: XI–XIII դդ. տաճարային դպրոցներում և համալսարաններում ձևավորվում է սքոլաստիկան (հունարեն սքոլա՝ «դպրոց» բառից): Սքոլաստիկան կրոնական փիլիսոփայություն էր, որը դասավանդում էին համալսարանում:

XII դ. հայտնի սքոլաստ փիլիսոփան **Պետրոս Աբելյարն էր:** Նա գտնում էր, որ հավատի հետ կապված խնդիրները հասկանալու համար անհրաժեշտ է դիմել նաև բանականությանը: Հավատալու համար հարկավոր է հասկանալ: Նրա հակառակորդները գտնում էին, որ անհրաժեշտ է հավատալ, այլ ոչ թե քննարկել, քանի որ բանականությունը անզոր է աստվածային գաղտնիքներն իմանալու համար: Աբելյարը գտնում էր, որ աշխարհիկ գիտությունները, մասնավորապես անտիկ փիլիսոփայությունը օգտակար է ճշգրիտ գիտելիքներ ձեռք բերելու համար:

Աբելյարի գաղափարները եկեղեցու համար վտանգավոր էին, ուստի նրա հայացքները դատապարտվեցին, իսկ ինքը կյանքը ավարտեց վանքում: Սակայն Աբելյարի գաղափարները լայն տարածում գտան, ուստի եկեղեցին որոշեց դրանց մի մասը ներառել աստվածաբանության մեջ: Այս խնդիրը լուծեց XIII դ. ականավոր սքոլաստ **Թովմա Աքվինացին** իր «Աստվածաբանության հանրագումար» աշխատության մեջ: Այստեղ նա հավաքել էր միջնադարում կուտակված բոլոր գիտելիքները աշխարհի, Աստծո և մարդու մասին: Նա չմերժեց բանականության ճանապարհով ձեռք բերած գիտելիքների ճշմարտացիությունը, սակայն գտնում էր, որ դրանք երկրորդական կարգի գիտելիքներ են և պետք է ծառայեն հավատին:

Ճշմարիտ գիտելիքի ձեռքբերման այլ ճանապարհ առաջարկեց Աքվինացու ժամանակակից, Ֆրանցիսկյան միաբանության անդամ, անգլիացի պրոֆեսոր **Ռոջեր Բեկոնը,** որը դասավանդում էր Փարիզի և Օքսֆորդի համալսարաններում: Նրա կարծիքով՝ ճշմարտությունը գտնելու համար հավատը և բանականությունը բավարար չեն, անհրաժեշտ է դրան հասնել նաև փորձի միջոցով: Իր

ամբողջ գիտական կյանքը նա անցկացրեց քիմիական նյութեր ուսումնասիրելով և ֆիզիկայի բնագավառում փորձեր կատարելով: Նա Եվրոպայում առաջինը կազմեց վառոդի բաղադրագիրը, բացատրեց ծիածանը որպես անձրևի կաթիլներում արևի ճառագայթների բեկման երևույթ: Բեկոնի աշխատությունները բանադրվեցին, իսկ ինքը տասնչորս տարի անցկացրեց բանտում:

Վաղ վերածնունդը Իտալիայում: Քաղաքների և քաղաքային բնակչության առաջացմանը զուգահեռ Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում սկսեց ձևավորվել քաղաքային մշակույթը: Եթե եկեղեցական մշակույթում (գրականություն, արվեստ) թեմաները և կերպարները հիմնականում վերցվում էին Սուրբ գրքից, ապա քաղաքային մշակույթի համար հիմք էր ծառայում արտաքին աշխարհը: Քաղաքներում բացվում էին աշխարհիկ դպրոցներ, որոնք խախտում էին եկեղեցու դարավոր մենաշնորհը կրթության կազմակերպման բնագավառում: Ձևավորված աշխարհիկ մտավոր խավը փորձում էր մշակույթը դուրս բերել եկեղեցու վերահսկողությունից: Նրանք աշխատում էին ստեղծել կրթական նոր համակարգ, որը հիմնված լիներ աշխարհիկ գիտությունների, այլ ոչ թե աստվածաբանության վրա: Ձևավորված մշակութային նոր ուղղությունը ստացավ **Վերածնունդ** անվանումը: Նոր ուղղության խնդիրն էր ձևավորել համակողմանի զարգացած մարդ, որն ունակ էր հաճույք ստանալու բնությունից, արվեստից և մարդկային փոխհարաբերություններից: Նրան խորթ պետք է լիներ եկեղեցու քարոզած ճգնակեցությունը, որը պահանջում էր հրաժարվել երկրային կյանքի հաճույքներից հանուն անդրշիրիմյան կյանքի:

Մշակույթում նոր ուղղության ականավոր ներկայացուցիչներից մեկը Ֆլորենցիայի բանաստեղծ և քաղաքական գործիչ **Դանթե Ալիգիերին էր** (1265–1321 թթ.): Դանթեի ստեղծագործությունների թագն ու պսակը «Աստվածային կատակերգություն» պոեմն է: Դանթեն նկարագրում է անդրշիրիմյան կյանքը՝ դժոխքը՝ մեղավորների համար, դրախտը՝ անմեղների, քավարանը նրանց՝ ում համար Աստված դեռևս վճիռ չէր կայացրել:

Մինչև Վերածննդի մշակույթի երևան գալը միջնադարի մտածողները հիմնականում գրում էին Աստծո մասին, ուստի իրենց խնդիրը համարում էին Աստծու գործունեության պարզաբանումը և ճանաչումը: Վերածննդի գործիչները ուսումնասիրում էին ոչ միայն Սուրբ գիրքը, այլև անտիկ հեղինակներին, որոնց ուշադրության կենտրոնում հիմնականում մարդն էր: Սրա ազդեցությամբ Վերածննդի գիտնականները սկսեցին հետաքրքրություն դրսևորել մարդու և նրա երկրային կյանքի նկատմամբ: Այստեղից էլ այդ մշակույթի մյուս անվանումը՝ **հումանիզմ** (մարդասիրություն):



Ռոջեր Բեկոն

Առաջին հումանիստը իտալացի բանաստեղծ **Ֆրանչեսկո Պետրարկան** էր (1304–1374 թթ.): Նա քննադատում էր սքոլաստիկան, քանի որ, նրա կարծիքով, այնտեղ բավարար ուշադրություն չեն դարձնում մարդուն: Դրան հակառակ՝ նա բարձր էր գնահատում բանասիրությունը, ճարտասանությունը և պոեզիան, քանզի նրանց ուշադրության կենտրոնում մարդն է: Պետրարկայի գաղափարները շարունակեցին **Ջովաննի Բոկաչչոն** և **Կոլյուչո Սալյուտատին:** Բոկաչչոյի ստեղծագործություններից առավել ուշագրավը «Դեկամերոնն» է: Հեղինակի կարծիքով՝ մարդկային արժանապատվությունը պայմանավորված է ոչ թե ծնունդով, այլ բարոյական կատարելությամբ և փառավոր գործերով:

Վաղ վերածննդի մշակույթում ծաղկում ապրեցին նաև նկարչությունը, քանդակագործությունը, ճարտարապետությունը: Հարուստ քաղաքացիների համար կառուցում էին նրբաճաշակ պալատներ ու դղյակներ: Ճարտարապետները եկեղեցական շինությունները կառուցում էին աշխարհիկ ոճով: Դրանք արդեն նման չէին ռոմանական կամ գոթական ոճով կառուցված եկեղեցիներին, այլ շքեղ պալատներ էին հանդիսավոր արարողություններ կատարելու համար: Իտալի-

Բոտիչելի. «Գարուն»

այի ճարտարապետները նախագծում և կառուցում էին նոր տիպի շենքեր՝ քաղաքային պալատներ և ամառանոցներ:

Վաղ վերածննդի նշանավոր ճարտարապետը **Ֆ. Բրունելեսկին** էր (1377–1446 թթ.): Նա մաթեմատիկական և երկրաչափական հաշվարկների հիման վրա լուծեց Ֆլորենցիայի Մայր տաճարի գմբեթի կառուցման շինարարության հետ կապված բարդ խնդիրները: Անտիկ ճարտարապետության ոճը համադրեց ռոմանական և գոթական ճարտարապետության հետ և ստեղծեց ճարտարապետական նոր ոճ: Նա ղեկավարել է Պո գետի վրա կառուցվող ամբարտակի շինարարությունը:

Վերածննդի գեղանկարչության հիմնադիրը **Բ. Ջոտտոն** է (1266–1337 թթ.): Իր նկարներում նա վառ գույներով պատկերում է մարդկանց՝ իրենց ուրախություններով ու վշտերով: Նրա նկարներում պարզ երևում են մարդկանց դիմագծերը, կեցվածքը և դեմքի արտահայտությունը:

Վաղ վերածննդի ամենամեծ նկարիչը **Ս. Բոտիչելին էր** (1445–1510 թթ.): Նրա հայտնի նկարներից են «Գարունը» և «Վեներայի ծնունդը»: Նկարների թեման վերցված է անտիկ առասպելաբանությունից, սակայն կերպարները օժտված են իրական, մարդկային դիմագծերով և դիտողին գերում են իրենց նրբությամբ և քնքշությամբ:

Վաղ վերածննդի ամենանշանավոր քանդակագործը **Դոնաթելլոն** էր (1386–1466 թթ.): Նրան են պատկանում դիմանկարային բնույթի մի շարք քանդակներ: Դիմանկարային քանդակի երևան գալու շնորհիվ քանդակագործությունը առանձնացավ ճարտարապետությունից: Այժմ քանդակները տեղադրում էին ոչ միայն տաճարների և պալատների պատերին և տանիքներին, այլև հրապարակներում: Դոնաթելլոյի աշխատանքներից աչքի են ընկնում «Դավթի» և «Մարիա Մագթաղինացու» արձանները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կրթության ի՞նչ համակարգ էր գործում Եվրոպայում՝ սկսած XI դարից: Ի՞նչ տիպի դպրոցներ կային: Նշե՛ք միջնադարյան Եվրոպայի նշանավոր համալսարանները:
2. Ո՞ր գիտությունն էր առավել կարևորվում դասական միջնադարում. ինչո՞ւ: Պատմական բնույթի աշխատություններից ո՞ր տիպն էր տարածված՝ սկսած XII դարից:
3. Ի՞նչ է սքոլաստիկան: Ո՞վ էր Աբելյարը, ի՞նչ տեղ էր հատկացնում բանականությանը: Ներկայացրե՛ք Թովմա Աքվինացու գաղափարները: Ո՞վ էր Ռոջեր Բեկոնը, ի՞նչ գաղափարներ էր առաջ քաշում նա:
4. Ո՞րն էր մշակույթի նոր ուղղության խնդիրը: Նշե՛ք Վաղ վերածննդի մի քանի ականավոր ներկայացուցիչների և նրանց ստեղծագործությունները:

§ 5. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ IX–XV ԴԱՐԵՐՈՒՄ

Մակեդոնական (Հայկական) վերածնունդը: Ռազմավարչական բարեփոխումները, պատկերամարտական շարժումը, ավատատիրական հարաբերությունների ձևավորումը նախապատրաստեցին կայսրության վերելքը, որը սովորաբար անվանում են Մակեդոնական (Հայկական) վերածնունդ: Այն ժամանակագրորեն համընկնում է **Մակեդոնական արքայատան** կառավարման շրջանի (867–1056 թթ.) հետ: Վերելք ապրեցին գյուղատնտեսությունը, արհեստագործությունը և առևտուրը:

IX դ. կեսերից Բյուզանդիայում սկսվեց նաև քաղաքների վերելքը: Հին քաղաքների կողքին առաջացան նոր քաղաքներ: Քաղաքային բնակչության հիմնական զբաղմունքը արհեստն էր և առևտուրը:

Ավատատիրական տիպի միապետության հաստատմանը զուգահեռ կայսրությունում ձևավորվում էր կառավարման նոր համակարգ: Այն զգալիորեն բարդացել էր: Մակեդոնական արքայատան կառավարման տարիներին գերատեսչությունների քանակը հասել էր 60–ի: Ֆինանսական կառավարումը երեք գերատեսչությունների ձեռքին էր, որոնցից կարևորը հարկայինն էր: Մեծ դեր էր խաղում նաև արտաքին հարաբերությունների գերատեսչությունը:

Իր գոյությունը պահպանել էր նաև Ծերակույտը, սակայն այն մնացել էր որպես հռոմեական ժառանգություն, քանի որ կառավարման համակարգում ոչ մի դեր չէր խաղում: Պետության կառավարման գործում կարևոր էր կայսեր կից արքունական խորհրդի դերը:

Մակեդոնական կայսրերը որոշակի հաջողությունների հասան արտաքին քաղաքականության բնագավառում: Արաբական խալիֆայության թուլացման հետևանքով Բյուզանդիան հետ գրավեց Հյուսիսային Միջագետքը, Ասորիքը, Պաղեստինը և Փոքր Ասիայի արևելյան շրջանները: Օգտվելով արևելյան սահմաններում տիրող հանգիստ իրավիճակից՝ **Բարսեղ (Վասիլ) II կայսրը** (976–1025 թթ.) նվաճեց նաև Բուլղարական թագավորությունը: Ամբողջ Բալկանյան թերակղզին՝ մինչև Դանուբ գետը, կրկին մտավ կայսրության կազմի մեջ: Բյուզանդիան գրավեց նաև Հայաստանի և Վրաստանի մի մասը: Բացի ռազմական գործողություններից, մակեդոնական կայսրերը որոշեցին կենսագործել պատրիարք Փոթիոսի մշակած ծրագիրը: Նա գտնում էր, որ կայսրության սահմանները անվտանգ դարձնելու համար անհրաժեշտ էր այնտեղ բնակվող ոչ քրիստոնյա ժողովուրդներին դարձնել քրիստոնյա: Այս նպատակով Բուլղարիա, Մեծ Մորավիա, Ռուսիա ուղարկվեցին քարոզիչներ:

Մակեդոնական արքայատան կառավարման վերջին շրջանում Բյուզանդիան կրկին անկում ապրեց: XI դ. 30–80–ական թվականներին գահակալեց 10 կայսր, որոնցից 6–ը գահընկեց եղան: Այս ծանր պայմաններում Բյուզանդիայի համար հայտնվեցին նոր թշնամիներ՝ Արևելքում՝ թյուրք–սելջուկները, իսկ Բալկանյան թերակղզում՝ պեչենեգները:

Այս ժամանակ տեղի ունեցավ ևս մեկ իրադարձություն, որը խոր հետքեր թողեց կայսրության և հույն ժողովրդի ճակատագրի վրա: Օգտվելով կայսրության թուլացումից՝ պապականությունը իր ենթակայության տակ վերցրեց Հարավային Իտալիայում գտնվող հունական եկեղեցին: **1054 թ.** Կոստանդնուպոլիս ժամանած պապի դեսպանները պահանջեցին, որ Կոստանդնուպոլսի պատրիարքը հրաժարվի Բուլղարիայի և Իլիրիայի եկեղեցիներից: Ստանալով բացասական պատասխան՝ նրանք բանադրեցին պատրիարքին: Վերջինս իր հերթին բանադրեց դեսպաններին: Այսպես քրիստոնեական եկեղեցին պառակտվեց:

XI դ. երկրորդ կեսին կայսրության ճակատագիրը որոշվում էր Արևելքում: **1071 թ. Մանազկերտի** ճակատամարտում թյուրք–սելջուկները պարտության մատնեցին բյուզանդացիներին: Գերի ընկավ Ռոմանոս IV Դիոգենես կայսրը: Սելջուկները գրավեցին Հայաստանը և ամբողջ Փոքր Ասիան: Այստեղ նրանք հիմնեցին իրենց պետությունը՝ Իկոնիայի սուլթանությունը: Նույն ժամանակ նորմանները գրավեցին Բյուզանդիայի վերջին տիրույթները Հարավային Իտալիայում: Կայսրության դրությունը օրհասական էր: Պեչենեգները մոտեցել էին Բոսֆորի նեղուցի եվրոպական ափերին, իսկ սելջուկները՝ ասիականին:

Չորրորդ խաչակրաց արշավանքը և Բյուզանդիան: Բյուզանդական կայսրության վերելքի վերջին շրջանը կապված էր **Կոմնինոսների** կառավարման հետ (1081–1185 թթ.):

Նրանք կարողացան վերադարձնել Բյուզանդիայից խլված տարածքների մեծ մասը և վերականգնել կայսրության նախկին հզորությունը: Սակայն մոտ մեկ դար անց կայսրության դրությունը նորից սկսեց վատանալ: Հունգարները գրավեցին Դալմաթիան: Իրենց անկախությունը վերականգնեցին սերբերը և բուլղարները:

Ներքին պայքարից թուլացած Բյուզանդիան դարձավ խաչակրաց չորրորդ արշավանքի զոհ: 1204 թ. ապրիլի 13–ին խաչակիրները գրավեցին Կոստանդնուպոլիսը և ստեղծեցին իրենց պետությունը՝ **Լատինական կայսրությունը (1204–1261 թթ.)**: Այն կոչվում էր Լատինական, որովհետև այստեղ հաստատված կաթոլիկ եկեղեցում ժամերգությունը կատարվում էր միայն լատիներենով:

Հույն ժողովուրդը չհամակերպվեց այս իրավիճակի հետ և սկսեց պայքարել իր անկախության վերականգնման համար: **1261 թ.** Նիկեական կայսր **Միքայել VIII Պալեոլոգոսին** հաջողվեց գրավել Կոստանդնուպոլիսը և վերականգնել Բյուզանդական կայսրությունը: Սակայն Բյուզանդիան արդեն երբեմնի հզոր և ընդարձակ պետությունը չէր: Նրա կազմի մեջ չմտան **Տրապիզոնի կայսրությունը** և **Էպիրոսը**: Ծանր էր նաև Բյուզանդիայի արտաքին քաղաքական իրավիճակը: Վենետիկը և Սիցիլիան հակաբյուզանդական դաշինք կնքեցին: Բալկանյան թերակղզու հյուսիսում Բյուզանդիան անընդհատ բախվում էր սերբերի և բուլղարների հետ:

Բյուզանդական կայսրության անկումը: XIV դ. վերջին և XV դ. սկզբին Բյուզանդիան սկսեց անկում ապրել: Ժողովրդական ապստամբությունները, գահակալական կռիվները թուլացրին կենտրոնական իշխանությունը և բանակը, ուստի կայսրությունը չկարողացավ դիմագրավել թուրք–օսմաններին, որոնք դարձել էին նրա ամենավտանգավոր թշնամիները: **1331 թ.** թուրքերը գրավեցին **Նիկեա քաղաքը** և ավարտեցին կայսրության փոքրասիական տարածքների նվաճումը: **1352 թ.** թուրքերը անցան Դարդանելը և հաստատվեցին նեղուցի եվրոպական ափին: Ճանապարհը դեպի Բալկանյան թերակղզու խորքերը բաց էր: Սերբիայի թագավոր Ստեֆան Դուշանը հասկացավ թուրքական վտանգի էությունը և բանակցություններ սկսեց Հռոմի պապի հետ: Նա նույնիսկ համաձայնվեց, որ սերբական եկեղեցին միավորվի կաթոլիկ եկեղեցու հետ, եթե պապը խաչակրաց արշավանք կազմակերպի թուրքերի դեմ: Սակայն բանակցություններն ավարտվեցին անարդյունք: Շուտով թուրքերը գրավեցին Ադրիանապոլիսը և այն դարձրին Օսմանյան կայսրության մայրաքաղաք: Թուլացած և տրոհված Սերբիան ու Բուլղարիան չկարողացան կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը: **1389 թ. Կոսովոյի դաշտում** տեղի ունեցած ճակատամարտում սերբերը ծանր պարտություն կրեցին: Այս հաղթանակի շնորհիվ թուրքերը գրավեցին Բալկանյան թերակղզու արևելյան և հարավարևմտյան մասերը: Շուտով

Դելակրուա. «Խաչակիրների մուտքը Կոստանդնուպոլիս»

թուրքերը նվաճեցին նաև Բուլղարական թագավորությունը:

Թուրքական նվաճումների արդյունքում Բյուզանդիան կորցրեց իր տարածքների մեծ մասը:

1396 թ. թուրքերի դեմ կազմակերպված խաչակրաց արշավանքն ավարտվեց խաչակիրների ծանր պարտությամբ: Բյուզանդական կայսրը օգնության համար մեկնեց Արևմտյան Եվրոպա: Նրան ջերմ ընդունելություն ցույց տվեցին Միլանում, Հռոմում, Փարիզում, Լոնդոնում, սակայն նա օգնություն չստացավ: Օգտվելով սրանից՝ թուրքերը որոշեցին գրավել Կոստանդնուպոլիսը: Բյուզանդիայի կործանումը կես դարով հետաձգվեց այն պատճառով, որ **1402 թ.** Անկարայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը ծանր պարտություն կրեցին **Լենկ Թեմուրի** զորքերից:

1452 թ. թուրքերը նախապատրաստվեցին Կոստանդնուպոլսի գրավմանը: Նրանք մայրաքաղաքը շրջափակեցին և՛ ծովից, և՛ ցամաքից: Սուլթան **Մեհմեդ II-ը** Կոստանդնուպոլսի պարիսպների տակ հավաքեց շուրջ 200 հազար զինվոր: Թուրքական բանակն ուներ այն ժամանակվա համար առաջնակարգ հրետանի: Մայրաքաղաքի մեկ պաշտպանին ընկնում էր շուրջ 20 պաշարող: Չնայած բնակչության ցույց տված հերոսական դիմադրությանը՝ թուրքերը **1453 թ. մայիսի 29-ին** գրավեցին Կոստանդնուպոլիսը և երեք օր կողոպտեցին այն: Վերջին կայսր **Կոստանդին XI Պալեոլոգոսը** սպանվեց ճակատամարտում: Կոստանդնուպոլսի անկումով Բյուզանդական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց: Կոստանդնուպոլիսը դարձավ Օսմանյան կայսրության մայրաքաղաք և վերանվանվեց Ստամբուլ: Այնուհետև թուրքերը ձեռնամուխ եղան նախկին կայսրության մյուս տարածքների նվաճմանը: Նրանք գրավեցին Պելոպոնեսը, իսկ **1461 թ.՝ Տրապիզոնի կայսրությունը:**

Բյուզանդիայի և Բալկանյան թերակղզու մյուս երկրների թուրքական նվաճումը բացասական հետևանքներ ունեցավ այստեղ բնակվող ժողովուրդների ճակատագրի համար: Նրանց տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումը երկար ժամանակ կասեցվեց: Պապականությունը և Արևմտյան Եվրոպան պետք է հատուցեին Բյուզանդիայի նկատմամբ իրենց վարած քաղաքականության համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մակեդոնական արքայատան օրոք ի՞նչ ներքին և արտաքին հաջողություններ ունեցավ կայսրությունը:
2. Պարզաբանե՛ք XI դ. երկրորդ կեսին Բյուզանդիայի թուլացման պատճառները:
3. Ինչո՞ւ էր խաչակիրների՝ Բյուզանդիայում ստեղծած պետությունը կոչվում Լատինական կայսրություն: Ուրիշ ի՞նչ պետություններ ստեղծվեցին կայսրության տարածքում:
4. Ինչո՞ւ Բյուզանդիան չկարողացավ դիմագրավել թուրք օսմաններին: Ե՞րբ թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը: Որո՞նք էին օսմանյան նվաճումների հետևանքները:

§ 6. ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ V-XV ԴԱՐԵՐՈՒՄ

Բյուզանդական մշակույթի առանձնահատկությունները: Ավատատիրական հարաբերությունների հաստատմանը զուգահեռ՝ Բյուզանդիայում սկսեց ձևավորվել նաև վաղ միջնադարի մշակույթը: Այն մեծ ազդեցություն թողեց եվրոպական մշակույթի զարգացման վրա: Այսօր էլ աշխարհում ապրող քրիստոնյաների կեսը բյուզանդական մշակույթի ժառանգորդներ են: Բյուզանդիայում պահպանված անտիկ մշակույթը չմոռացվեց, այլ հարմարեցվեց միջնադարի պայմաններին: Բացի անտիկ հունահռոմեական մշակույթից, բյուզանդական մշակույթը իր մեջ ներառավ նաև կայսրության մեջ մտնող ժողովուրդների (հայեր, ասորիներ, եգիպտացիներ) մշակույթներից որոշ տարրեր: Սակայն, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի, որտեղ ստեղծվեցին միջնադարյան մշակույթի մի քանի տիպեր (ազգային մշակույթներ), Բյուզանդիայում ձևավորվեց մշա-

կութային մեկ տիպ՝ **բյուզանդական**: Եթե Արևմտյան Եվրոպայում վաղ միջնադարի մշակույթի հիմնական կենտրոնները վանքերն էին, Բյուզանդիայում մեծ էր նաև քաղաքների դերը: Բյուզանդիայի քաղաքները մնում էին որպես կրթության և մշակույթի կենտրոններ: Անտիկ հունահռոմեական մշակույթի ավանդների հիման վրա քաղաքներում զարգանում էին ճարտարապետությունը, կերպարվեստը:

Վաղ բյուզանդական մշակույթը: Վաղ միջնադարի բյուզանդական մշակույթում մեծ վերելք ապրեց պատմագրությունը: Այստեղ հունահռոմեական պատմագրության ավանդույթը կենսունակ էր և դրվեց ձևավորվող բյուզանդական պատմագրության հիմքում: Հունահռոմեական պատմագրության հեղինակությունը այնքան մեծ էր, որ բյուզանդական պատմիչները աշխատում էին նմանվել իրենց նախորդներին:

Վաղ Բյուզանդիայի առավել աչքի ընկնող պատմիչներից էին **Պրոկոպիոս Կեսարացին, Ագաթիոս Միրինեյացին**: Այս պատմիչները իրենց աշխատություններով փակում են անտիկ պատմագրության վերջին էջը: Սրանցից ամենանշանավորը Հուստինիանոսի ժամանակակից քաղաքական գործիչ Պրոկոպիոս Կեսարացին է: Իր «Պարսիկների, վանդալների և գոթերի հետ Հուստինիանոսի պատերազմների պատմությունը» աշխատության մեջ նա մանրամասն շարադրել է Հուստինիանոսի պատերազմները: Այս և «Կառույցների մասին» աշխատության մեջ նա փառաբանում է կայսրին, նրան ներկայացնում որպես արդարամիտ քրիստոնյա կառավարող: Սակայն իր «Գաղտնի պատմություն» աշխատության մեջ, որ գրվել էր մտերիմների համար, կայսրին ներկայացնում է որպես դաժան բռնակալ, որը մեղավոր է կայսրության բոլոր դժբախտությունների համար:

Քրիստոնեությունը մշակեց պատմական նյութի շարադրման նոր ժանր, որը դարձավ միջնադարի պատմագրության սեփականությունը: Դա ժամանակագրությունն էր, որն առաջացավ III–IV դդ.: Այս ժանրի հիմնադիրը **Եվսեբիոս Կեսարացին** էր:

Վաղ միջնադարում մեծ վերելք ապրեց նաև բյուզանդական գրականությունը: Այստեղ ձևավորվեց երկու հիմնական ուղղություն: Հունահռոմեական գրականության ավանդույթները պահպանվեցին և հարմարեցվեցին միջնադարի պայմաններին:

Քրիստոնեության ազդեցությամբ վաղ միջնադարում ձևավորվեց նաև եկեղեցական գրականություն: Քրիստոնեությունը գրականություն բերեց ևս երկու ժանր՝ վարքագրությունը և եկեղեցական պոեզիան: Առաջինը դառնում է բյուզանդական գրականության առաջատար ժանրերից մեկը:

Եկեղեցական պոեզիայի (օրհներգություն) թեման Աստվածաշունչն էր: Այստեղից վերցված փոքր հատվածը դառնում է պոեմի կամ բանաստեղծության հիմք: Եկեղեցական պոեզիայի նշանավոր դեմքը **Ռոմանոս Քաղցրաերգիչն** էր (VI դ.): Նա գրեց շուրջ 1000 օրհներգություն:

Վաղ միջնադարում վերելք է ապրում նաև ճարտարապետությունը: Բյուզանդական ճարտարապետները IV–V դդ. մշակում են քաղաքների կառուցման նոր հատակագիծ: Քաղաքի կենտրոնում հրապարակն էր, որի շուրջ կառուցում էին մայր եկեղեցին, հասարակական և վարչական շինությունները: Հրապարակից ճառագայթաձև բաժանվում էին փողոցները, որոնք քաղաքը բաժանում էին թաղամասերի:

Բարձր զարգացման է հասնում եկեղեցական ճարտարապետությունը: Բյուզանդական եկեղեցական ճարտարապետության նշանավոր հուշարձանը Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարն էր: Այն կառուցվել է 532–537 թթ. Հուստինիանոս կայսեր հրամանով: Նրա կառուցմանը մասնակցել է շուրջ 10 հազար մարդ: Տաճարը պսակված է հսկայական գմբեթով, որի տրամագիծը շուրջ 32 մ է:

Բյուզանդիայում ավելի վաղ, քան Արևմտյան Եվրոպայում եկեղեցիների և պալատների հատակը և պատերը սկսեցին զարդարել խճանկարներով: Խճանկարում պատկերը ստացվում էր գունավոր փոքր քարերի և ապակիների համադրումից: Հետագայում մեծ տարածում գտավ նաև որմնանկարչությունը: Բյուզանդական արվեստում ևս երկար ժամանակ պահպանվում էին անտիկ արվեստից ժառանգած ավանդույթները: Հետագայում գերակշռում են Աստվածաշնչի թեմաները: Եկեղեցիների և տաճարների ներսում խճանկարները և որմնանկարները արվում էին որոշակի կանոններով: Գմբեթի պատերին պատկերում էին Հիսուս Քրիստոսին՝ հրեշտակների հետ, իսկ նրանից ներքև՝ Մարիամ Աստվածածնին: Որոշ տաճարներում Մարիամ Աստվածածնից ներքև պատկերում էին ավետարանների հեղինակներին՝ Մատթեոսին, Մարկոսին, Ղուկասին և Հովհաննեսին:

Վաղ միջնադարում բյուզանդական մշակույթը ամենազարգացածն էր Եվրոպայում: Եվրո-

պայի տարբեր երկրներից մեծ թվով պատանիներ գալիս էին Կոստանդնուպոլիս՝ մաթեմատիկա, իրավունք, բժշկություն ուսանելու:

Դասական շրջանի մշակույթը: IX դ. բյուզանդական մշակույթը նորից վերելք ապրեց, որը շարունակվեց մինչև խաչակրաց չորրորդ արշավանքը: IX–XIII դդ. մշակութային վերելքը հայտնի է «Մակեդոնական» և «Կոմնինոսյան» վերածնունդներ անուններով: Այս ժամանակ կայսրության կրթական կյանքի կենտրոնը դառնում է Կոստանդնուպոլիսը: Այստեղ IX դ. բացվում է Մաղնավարի բարձրագույն դպրոցը, որտեղ աստվածաբանության հետ մեկտեղ դասավանդում էին աշխարհիկ գիտություններ: **1045 թ. Կոստանդնուպոլսում** բացվեց **համալսարան,** որն ուներ երկու ֆակուլտետ՝ իրավաբանական և փիլիսոփայական: Մայրաքաղաքում բացվեց նաև «Պատրիարքական ակադեմիա», որտեղ պատրաստում էին բարձրաստիճան հոգևորականներ:

Բյուզանդական մշակույթում առավել բարձր զարգացում ապրեցին բնական գիտությունները, մասնավորապես մեխանիկան, մաթեմատիկան, քիմիան: IX դ. Բյուզանդիայում սկսում են կիրառել հնդկական թվերը՝ արաբական գրությամբ: IX դարում է ստեղծագործել նշանավոր գիտնական Լևոն Մաթեմատիկոսը: Նրան մեծ համբավ բերեց լուսային հեռագրի հայտնագործումը: Դրա միջոցով ընդամենը մի քանի ժամ հետո մայրաքաղաքում իմանում էին արևելյան սահմաններում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Նա առաջին անգամ տառանիշերը օգտագործեց որպես պայմանական նշաններ:

IX–XIII դդ. մեծ վերելք էր ապրում նաև բյուզանդական գրականությունը: **Պատրիարք Փոթիոսը,** անտիկ հեղինակների 280 աշխատություններից անելով քաղվածքներ, կազմում է ժողովածու, որը կոչվում է «Բազմաթիվ գրքերի նկարագրություն»: Անտիկ գրողների կորած շատ աշխատություններ մեզ են հասել այս քաղվածքների շնորհիվ:

Արաբների դեմ մղված պայքարում բյուզանդացիների հերոսական սխրագործությունների մասին ժողովրդի հյուսած երգերի հիման վրա ստեղծվեց Դիգենիս Ակրիտասին նվիրված վիպերգը: Այստեղ փառաբանում են բյուզանդական ռազմիկի սխրագործությունները արաբների դեմ մղվող պայքարում և նրա սերը հիասքանչ Եվդոկիայի նկատմամբ:

Կոստանդին Ծիրանածին

Բարձր զարգացման հասավ պատմագրությունը: Պատմական տեղեկություններ են պահպանվել **Կոստանդին III Ծիրանածին** կայսեր «Պետության կառավարման մասին», «Թեմերի մասին» աշխատություններում:

Բյուզանդական պատմագրության աչքի ընկնող ներկայացուցիչներից է Միքայել Պսելոսը (XI դ.): Նրա ժամանակագրությունն ընդգրկում է Բյուզանդիայի 976–1077 թթ. պատմությունը: Նա մանրամասն շարադրում է այս շրջանի բյուզանդական կայսրերի գործունեությունը, բացասական գծերով ներկայացնում նրանց, ովքեր անկարող էին կառավարել երկիրը: «Կոմնինոսյան» վերածննդի պատմագրության մեջ աչքի ընկնող տեղ է զբաղեցնում **Աննա Կոմնինայի** «Ալեքսիադա» երկը: Աննա Կոմնինան Ալեքսիոս I Կոմնինոս կայսեր դուստրն էր, և «Ալեքսիադա» աշխատությունը կայսեր կենսագրությունն է: Աշխատության մեջ մանրամասն շարադրված են խաչակրաց առաջին արշավանքը և նորմանների դեմ Ալեքսիոս I–ի մղած պատերազմները:

1204 թ. կայսրության տրոհումից հետո բյուզանդական մշակույթը նորից անկում ապրեց: Կայսրության վերականգնումից հետո սկսվեց



Քրիստոսը առաքյալների հետ. սրբապատկեր, Կոստանդնուպոլիս, Ս. Սոֆիայի տաճար

մշակութային նոր վերելքը, որը հայտնի է «Պալեոլոգոսների վերածնունդ» անվանումով:

Այդ ժամանակ բյուզանդական մշակույթում մեծ զարգացում ապրեց փիլիսոփայությունը: Ճանաչողության մեջ հավատի առաջնության կարևորությունը պաշտպանում էր **Գեորգի Պալաման** (1297–1359 թթ.): Նա գտնում էր, որ մարդը ճանաչողության կարող է հասնել աղոթքի ժամանակ մտքի ճառագման ճանապարհով: Նրա ուսմունքի դեմ հանդես եկավ վանական **Վարլհամը** (XIII–XIV դդ.): Նա պաշտպանում էր հավատի նկատմամբ բանականության առաջնայնության գաղափարը և համարում էր, որ ճշմարիտ գիտելիք կարելի է ձեռք բերել միայն բանականության միջոցով:

XII–XV դդ. որոշակի զարգացում ապրեց նաև բյուզանդական պատմագրությունը:

XIV դ. բյուզանդական պատմագրության մեջ ձևավորվում է մի նոր ուղղություն՝ պատմական հուշագրությունը, որի նշանավոր ներկայացուցիչներից է **Հովհան VI Կանտակուզինոս** կայսրը: Բյուզանդական պատմագրության վերջին ներկայացուցիչը **Դուկասն** էր, որն իր «Պատմության» մեջ շարադրել է Բյուզանդական կայսրության վերջին օրերի պատմությունը:

Բյուզանդական մշակույթը ժառանգեցին հույները և այն դարձրին իրենց ազգային մշակույթը: Բյուզանդական մշակույթի ավանդույթները շարունակեցին ոչ միայն ուղղափառ (Բուլղարիա, Սերբիա, Ռուսիա), այլև եվրոպական այլ երկրներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ առանձնահատկություններ ուներ բյուզանդական մշակույթը:
2. Թվարկե՛ք վաղ միջնադարի պատմիչներին: Ի՞նչ աշխատություններ է գրել Պրոկոպիոս Կեսարացին:
3. Գրականության մեջ ի՞նչ հիմնական ուղղություններ առաջացան: Ո՞վ էր եկեղեցական պոեզիայի նշանավոր հեղինակը:
4. Ճարտարապետության ո՞ր ուղղությունները զարգացան Վաղ Բյուզանդիայում: Արվեստի ո՞ր ճյուղերը զարգացան այս շրջանում:
5. Ի՞նչ անուններով է հայտնի IX–XIII դարերի մշակութային վերելքը Բյուզանդիայում: Ի՞նչ բարձրագույն դպրոցներ են բացվել Բյուզանդիայում:
6. Ի՞նչ խնդիր էին քննարկում բյուզանդական փիլիսոփաները: Պատմագրության մեջ ի՞նչ նոր ուղղություն ձևավորվեց:

§ 7. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ

Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Հնագույն ժամանակներից Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում ապրում էին սլավոնական բազմաթիվ ցեղեր: Ժողովուրդների մեծ գաղթի ժամանակ նրանք տեղաշարժվեցին դեպի հարավ և արևմուտք: Հետագայում սլավոնների մի մասը շարժվեց Դնեպր գետից դեպի արևելք, իսկ մի քանի ցեղեր բնակություն հաստատեցին Բալկանյան թերակղզում: Տեղաշարժերի արդյունքում սլավոնները բաժանվեցին երեք մեծ խմբերի՝ արևմտյան, հարավային և արևելյան: Արևելյան սլավոնները հիմնականում բնակվում էին Արևելյան Եվրոպայի տափաստաններում և բաժանվում էին բազմաթիվ ցեղերի՝ **կրիվիչներ, վյատիչներ, պոլյաններ, դրևլյաններ:**

Սլավոնները զբաղվում էին նստակյաց հողագործությամբ, անասնապահությամբ և արհեստագործությամբ: Սոցիալական միջավայրի կազմակերպման հիմնական միավորը համայնքն էր, որը հողի ընդհանուր սեփականատերն էր: Համայնքը պարբերաբար մշակելի հողերի և արոտավայրերի մի մասը բաժանում էր գյուղացիական տնտեսությունների միջև: Գյուղացու մասնավոր սեփականությունն էին տունը և որոշակի քանակի մշակելի հողեր ու արոտավայրեր:

Ավատատիրական հարաբերությունների զարգացման սկզբնական փուլում գյուղացիները ուղղակի ենթարկվում էին միայն պետությանը և հարկեր էին վճարում: Հարկերի հավաքումը սկսվում էր նոյեմբեր ամսից և ավարտվում էր ապրիլին: Այդ ընթացքում իշխանը իր դրուժինայի

ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ (XIV–XVI ԴԴ.)

Հոգեպի-Օսորոգ
Արխանգելսկ
Սանկտ-Պետերբուրգ
Նարվա
Բրանդենբուրգ
Գդանսկ
Մեծ Նովգորոդ
Գերմանիայի կայսրություն
Գերմանիայի կայսրություն
Գերմանիայի կայսրություն

անդամների հետ շրջում էր իրեն պատկանող տարածքներում և հավաքում հարկերը: Հարկահավաքման այս ձևը կոչվում էր **պոլյուդիե:**

Ավատատիրական հարաբերությունների զարգացման հաջորդ շրջանում ձևավորվում է մասնավոր հողատիրույթը (վոտչինա), որն առաջանում էր տարբեր ճանապարհներով: Հարստացած համայնականները գնում էին աղքատ գյուղացիների հողերը և մասնավոր սեփականության իրավունքով իրենց ձեռքում կենտրոնացնում հսկայական հողատարածքներ: Հաճախ պետությունն ինքն էր մասնավոր սեփականության իրավունքով հող տրամադրում առանձին մարդկանց: Գոյություն ուներ նաև պայմանական հողատիրություն, երբ հողը հանձնվում էր որևէ ծառայության դիմաց ցմահ կամ ժառանգության իրավունքով: Սա նման էր Արևմտյան Եվրոպայում լայն տարածում գտած բենեֆիցիումին և ավատին:

Ավատատերը սովորաբար հողը բաժանում էր երկու մասի՝ տերունական և գյուղացիական: Երկրորդ մասը բաժանում էր առանձին հողակտորների և մշակելու համար հանձնում գյուղացիներին: Սրա դիմաց գյուղացին պարտավոր էր բնամթերքով կամ դրամով հարկեր վճարել: Հող ստացած գյուղացիների մի մասը հարկեր վճարելու փոխարեն պարտավոր էր մշակել տերունական հողը: Այդ հողում նրանք աշխատում էին շաբաթվա ընթացքում 2–3 օր:

Ավատատիրական պետության առաջացումը: Մինչև IX դ. կեսերը արևելյան սլավոնները ապրում էին տոհմացեղային հասարակարգում, և պետություն դեռևս չէր ձևավորվել: Ցեղի կառավարման հիմնական ձևերն էին ժողովրդական ժողովը (վեչե), ավագների խորհուրդը և ռազմական առաջնորդը (իշխան): Վեչեն քննարկում էր ցեղի կառավարման հետ կապված բոլոր կարևոր խնդիրները: Նրան մասնակցում էին զենք կրելու ունակ բոլոր տղամարդիկ: Ավագների խորհուրդը ուներ միայն դատական իրավունքներ և կարգավորում էր ցեղի ներսում տեղի ունեցած իրավախախտումները: Ռազմական առաջնորդը՝ իշխանը, սկզբում ընտրովի էր, իսկ հետագայում դարձավ ժառանգական:

Արևելյան սլավոնների հետագա տարաբնակեցման և ցեղային միությունների առաջացման հետևանքով կառավարման այս մարմինները այլևս ի վիճակի չէին իրականացնելու իրենց գործառույթները: Ցեղային միությունը ներառում էր հսկայական տարածքներ և մի քանի հարյուր հազար մարդ, և վեչե հրավիրելը դառնում էր անհնարին: Ցեղային միության առաջնորդը հրավիրում էր ժողով, որին մասնակցում էին առանձին ցեղերի առաջնորդներ և իր անձնական դրուժինան: Ավագների խորհուրդը դառնում էր ցեղային միության առաջնորդին կից խորհրդակցական մարմին:

Արևելյան սլավոնների մոտ վաղ ավատատիրական պետությունը առաջացավ **882 թ.,** երբ իշխան **Օլեգը** (882–912 թթ.) միավորեց Կիևը և Նովգորոդը: Նորաստեղծ պետության սահմանները հարավում հասնում էին Սև ծով, իսկ հյուսիսում՝ Բալթիկ ծով: Նրա տարածքը կազմում էր շուրջ մեկ միլիոն հարյուր հազար քառակուսի կիլոմետր, իսկ բնակչությունը՝ չորսուկես միլիոն: Պետության գլուխ կանգնած էր Կիևի Մեծ իշխանը: Իրեն ենթակա տարածքները նա կառավարում էր իր նշանակած մարդկանց կամ տեղական իշխանների միջոցով:

988 թ. իշխան Վլադիմիրը (980–1015 թթ.) ուղղափառ քրիստոնեությունը հռչակեց պետության պաշտոնական կրոն: Նա ամուսնացավ բյուզանդական կայսր Բարսեղ (Վասիլ) II–ի քրոջ՝ Աննայի հետ: Շուտով քրիստոնեությունը տարածվեց ողջ Ռուսիայում: Ռուսական եկեղեցու գլուխ կանգնած էր միտրոպոլիտը, որը ենթարկվում էր Կոստանդնուպոլսի պատրիարքին: Պետության և քրիստոնեության հետագա ամրապնդման համար անհրաժեշտ էր գրավոր օրենսդրություն: Այս խնդիրը լուծեց Մեծ իշխան **Յարոսլավ Իմաստունը** (1019–1054 թթ.), որը ստեղծեց ռուսական առաջին գրավոր օրենսգիրքը՝ «Ռուսկայա պրավդան»:

Հին Ռուսիան՝ որպես միասնական պետություն, չկարողացավ երկար գոյատևել: Օգտվելով կենտրոնական իշխանության թուլացումից՝ նախկին ցեղային իշխանները, որոնք իրենց ձեռքում կենտրոնացրել էին հսկայական հողատարածքներ և հարստություններ, այլևս չէին ենթարկվում Կիևի Մեծ իշխանին: Արդեն XII դ. կային 15, իսկ XIII դ.՝ 50 անկախ իշխանություններ: Մասնատված և իշխանների միջև երկարատև երկպառակչական պատերազմներից թուլացած Ռուսիան չկարողացավ դիմադրել մոնղոլներին: 1237–1241 թթ. Չինգիզ խանի թոռ Բաթուն նվաճեց Ռուսիայի մեծ մասը և հաստատեց մոնղոլ–թաթարական տիրապետություն: Այն սովորաբար անվանում են Ոսկե հորդայի տիրապետություն, քանի որ մոնղոլական կայսրության արևմտյան մասը, որին ենթարկվում էր Ռուսիան, կոչվում էր Ոսկե հորդա: Ռուսական իշխանությունները ճանաչում էին իրենց վասալական կախվածությունը և հարկեր

էին վաճառում: Իրենց տարածքները կառավարելու համար իշխանները Ոսկե հորդայի խանից հատուկ հրովարտակ էին ստանում:

XIII դ. Հյուսիսարևմտյան Ռուսիայի համար մեծ վտանգ էին ներկայացնում գերմանացի խաչակիրները և Շվեդիան: **1240 թ. Նևայի գետաբերանում** ափ իջան շվեդները, սակայն Նովգորոդի 19–ամյա իշխան Ալեքսանդրը պարտության մատնեց նրանց, որի համար ստացավ Նևսկի մականունը: **1242 թ. Չուդ լճի** վրա տեղի ունեցած ճակատամարտում նա պարտության մատնեց նաև գերմանացի խաչակիրներին:

Ռուսական միասնական պետությունը: XIV դ. սկզբին Ռուսիայի քաղաքական և տնտեսական կյանքի կենտրոնը դարձավ Մոսկվայի իշխանությունը: Ոսկե հորդայի խանները Մեծ իշխանի տիտղոսը սկսեցին շնորհել Մոսկվայի իշխաններին: Վերջիններս ստացան նաև ամբողջ Ռուսիայում հարկեր հավաքելու իրավունքը: Մոսկվայի իշխանությունը դարձավ այն ռազմաքաղաքական ուժը, որը կարող էր դիմագրավել Ոսկե հորդային: Այս գործում մեծ դեր խաղաց իշխան **Դմիտրին: 1380 թ. Դոն գետի** ափին՝ Կուլիկովոյի դաշտում նա պարտության մատնեց մոնղոլներին: Սա բարձրացրեց Մոսկվայի իշխանության հեղինակությունը և արագացրեց նրա շուրջ ռուսական հողերի միավորումը: Մոսկվայի իշխանությանը միացվեցին Ռոստովը, Նովգորոդը, Տվերը: Այս պատճառով **Իվան III–ը** սկսեց իրեն անվանել «Համայն Ռուսիո տիրակալ»: **1480 թ.** վերջնականապես տապալվեց Ոսկե հորդայի տիրապետությունը:

Երկրի քաղաքական միավորմանը զուգահեռ տեղի էր ունենում կենտրոնացված դասային միապետության ձևավորումը: Դրա ստեղծումը կապված է **Իվան IV Ահեղի** գործունեության հետ: 1547 թ. Իվանը թագադրվեց և ընդունեց **ցար** (կայսր) տիտղոսը: 1549 թ. նա Մոսկվայում հրավիրեց դասային ներկայացուցչական առաջին ժողովը՝ երկրային ժողովը: Նրան մասնակցում էին խոշոր հողատերեր (բոյարներ), ծառայության մեջ գտնվող ազնվականներ, բարձրաստիճան հոգևորականներ և քաղաքների ներկայացուցիչներ: Երկրային ժողովում սովորաբար քննարկում էին պետության արտաքին քաղաքականության, ֆինանսների և նոր ցարի ընտրության հետ կապված հարցեր: Կենտրոնական իշխանությունն ուժեղացնելու համար Իվան IV–ը ստեղծեց կառավարման համապետական մարմիններ՝ պրիկազներ, որոնց թիվը հասնում էր 20–ի: Նա անցկացրեց նաև ռազմական բարեփոխումներ: Մտցվեց զինվորական ծառայության նոր կարգ՝ ըստ ծագման (ավատատերեր) և ըստ հավաքագրման (գյուղացիներ, քաղաքացիներ): Իվան IV–ի օրոք ընդարձակվեցին Ռուսաստանի սահմանները: Նա գրավեց և Ռուսաստանին միացրեց Կազանը, Աստրախանը և Արևմտյան Սիբիրը:

Պետության և եկեղեցու հեղինակության ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեցավ միտրոպոլիտության փոխարեն պատրիարքության հիմնադրումը, որով ռուսական եկեղեցին այլևս չէր ենթարկվում Կոստանդնուպոլսի պատրիարքին:

XVI դ. վերջին – XVII դ. սկզբին Ռուսաստանը ենթարկվեց մի շարք փորձությունների: Այդ ժամանակաշրջանը (1598–1613 թթ.) հայտնի է «խառնակ ժամանակաշրջան» անունով, քանի որ Իվան IV–ի որդի Ֆյոդորի մահից հետո Ռուսաստանում սկսվեցին զահակալական կռիվներ, որոնց միջամտում էին Լեհաստանը և Շվեդիան: Լեհերը գրավեցին Մոսկվան, իսկ շվեդները՝ Նովգորոդը: Անկախության կորուստը ոտքի հանեց ժողովրդին, որոնք ապստամբեցին և ազատագրեցին Մոսկվան: 1613 թ. Մոսկվայում հրավիրվեց երկրային ժողով, որը նոր ցար ընտրեց **Միխայիլ Ռոմանովին** (1613–1645 թթ.): Այսպես Ռուսաստանում հաստատվեց Ռոմանովների արքայատունը, որը երկիրը կառավարեց մինչև 1917 թ.:

Ռուսական մշակույթը: Կիևյան Ռուսիայի առաջացումից և քրիստոնեության ընդունումից հետո սկսեց ձևավորվել և զարգանալ ռուսական մշակույթը: Քրիստոնեությունը ոչ միայն միավորեց նախկին ցեղային մշակույթները, այլև հնարավորություն տվեց, որ ռուսները ծանոթանան և յուրացնեն բյուզանդական մշակույթը: Դեռևս IX դ. կեսերին **Կոստանդին** (Կիրիլ) և **Մեֆոդիոս** եղբայրները ստեղծեցին սլավոնական այբուբենը, որը X դ. սկսում են օգտագործել նաև Հին Ռուսիայում:

Արևելյան սլավոնների միավորումը մեկ պետության մեջ բարձրացրեց նրանց ազգային ինքնագիտակցությունը: Այդ ժամանակ էլ հրապարակ եկավ առաջին գրավոր պատմությունը՝ Նեստորի «Անցած տարիների պատմությունը» տարեգրությունը: Հին Ռուսիայի պատմության վերաբերյալ կարևոր տեղեկություններ կան «Ասք Իգորի գնդի մասին» պատմական պոեմում: Այն նվիրված է 1185 թ. իշխան Իգորի՝ ղիչաղների դեմ կազմակերպած անհաջող արշավանքին, նրա գերությանը և փախուստին:

Ա. Ռուբլյով. «Երրորդություն»

Հին ռուսական մշակույթում զարգացավ նաև իրավունքը: Առաջին դատաստանագրքից՝ «Ռուսկայա պրավդայից» հետո, երբ ձևավորվում էր ռուսական կենտրոնացված պետությունը, ստեղծվեցին ևս երկու դատաստանագրքեր:

Մեծ վերելք ապրեցին նաև ճարտարապետությունը և որմնանկարչությունը: Քրիստոնեության ընդունումից հետո սկսում են կառուցել մեծ թվով վանքեր և եկեղեցիներ: Պահպանվել են XI դ. կառուցված Ս. Սոֆիայի տաճարները Կիևում և Նովգորոդում և Ս. Փրկչի տաճարը Չեռնիգովում: Տաճարների ներսի պատերը զարդարված են որմնանկարներով, որոնց հիմնական թեման Աստվածաշունչն է:

Կիևյան Ռուսիայի տրոհումը առանձին իշխանությունների և մոնղոլ–թաթարական տիրապետությունը խոչընդոտեցին մշակույթի հետագա զարգացմանը: Նրա վերելքը սկսվեց XIV դ. վերջից և կապված էր Մոսկվայի բարձրացման և ռուսական հողերի միավորման հետ: Մշակույթի զարգացմանը նպաստում էին նաև ազգային ինքնագիտակցության աճը և օտար տիրապետությունից ազատագրվելու ձգտումները:

Ավատատիրական մասնատվածության ժամանակաշրջանում գերակշռում է տեղական տարեգրությունը: Միասնական պետության առաջացմանը զուգահեռ նորից սկսեցին շարադրել տարեգրություններ, որտեղ գրանցվում էին ամբողջ երկրում տեղի ունեցող իրադարձությունները: Համառուսական տարեգրությունների առաջին հավաքածուն **Տրոիցկի տարեգրությունն** է:

XIV դ. վերջին և XV դ. մեծ վերելք ապրեց նաև ռուսական կերպարվեստը, որը կապված էր նշանավոր նկարիչներ **Ֆեոֆան Գրեկի** և **Անդրեյ Ռուբլյովի** ստեղծագործությունների հետ: Ազգությամբ հույն Ֆեոֆան Գրեկը Ռուսաստան բերեց բյուզանդական կերպարվեստի, մասնավորապես որմնանկարչության ավանդները և դրանց մեջ ներառելով նաև ռուսական որմնանկարչության ավանդները՝ ստեղծեց բարձրարժեք գործեր:

Բյուզանդական արվեստի ազդեցությամբ ռուսական կերպարվեստում մեծ զարգացում ստացավ սրբանկարչությունը (սրբապատկեր): Կերպարվեստի այս ճյուղի զարգացումը կապված էր Անդրեյ Ռուբլյովի գործունեության հետ: Նրա ստեղծած «Երրորդություն» սրբապատկերը համաշխարհային արվեստի գլուխգործոցներից է:

Ռուսական մշակույթի ձևավորումը և զարգացումը հիմք դարձան հաջորդ դարաշրջանի մշակույթի վերելքի համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ տարածքներում էին բնակվում սլավոնական ցեղերը: Ի՞նչ մեծ խմբերի էին բաժանվում սլավոնները:
2. Ե՞րբ և ինչպե՞ս առաջացավ արևելասլավոնական պետությունը: Ե՞րբ է քրիստոնեությունը պետական կրոն հռչակվել Ռուսիայում: Ինչո՞վ են նշանավորվել իշխաններ Վլադիմիրը և Յարոսլավ Իմաստունը:
3. Ինչո՞ւ մոնղոլներին հաջողվեց նվաճել Ռուսիայի մեծ մասը: Ի՞նչ իրադարձություններ տեղի ունեցան XIII դարում:
4. Ո՞ր իրադարձությունը նպաստեց Մոսկվայի իշխանության հեղինակության բարձրացմանը: Համառոտ ներկայացրե՛ք ռուսական միասնական պետության ստեղծման և «խառնակ ժամանակաշրջանի» պատմությունը:
5. Թվարկե՛ք ռուսական մշակույթի հիմնական ուղղությունները, գործիչներին, ստեղծագործությունները:

ԳԼՈՒԽ Գ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. ՀԻՆԴՈՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Հնդկաստանի բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր և արհեստագործությունը: Անասնապահությունը երկրորդական դեր ուներ: Գյուղական բնակչության կազմակերպման հիմնական միավորը համայնքն էր, որը միջնադարի սկզբում բաղկացած էր փոքր անհատական ընտանիքներից: Այժմ հողը ոչ թե նահապետական, այլ անհատական ընտանիքի սեփականությունն էր, որը արագացնում էր սոցիալական շերտավորումը: Աղքատացած գյուղացիները ստիպված էին իրենց հողերը գրավ դնել կամ վաճառել: Այսպես համայնքի ներսում առաջանում էին խոշոր հողատերեր և հողազուրկ ու սակավահող գյուղացիներ: Նրանք ստիպված էին հողաբաժին վարձակալել և բերքի կեսը տալ հողատիրոջը կամ աշխատում էին նրա հողում և որպես վճար ստանում բերքի մի մասը:

Ավատատիրական հողատիրությունը և նրա հիմքի վրա կազմակերպված սոցիալական աստիճանավորությունը Հնդկաստանում նման չէին Արևմտյան Եվրոպայում ձևավորված համակարգին: Այստեղ հիմնականում գերակշռում էր միջին և մանր հողատիրությունը: Հողի ավատատիրական սեփականությունը Հնդկաստանում հանդես էր գալիս հետևյալ ձևերով.

1. Թագավորական ընտանիքին պատկանող հողեր, որոնցից ստացվող եկամուտները ծախսում էին արքունիքը պահելու համար:
2. Պետական հողեր, որոնք չէր կարելի նվիրել և վաճառել: Այս հողերը սովորաբար տրվում էին զինվորական ծառայության դիմաց:
3. Զինվորական խոշոր ավատներ, որոնք տրվում էին ցմահ և պայմանով, որ ստացողը պահեր որոշ քանակությամբ զորք, ծառայեր միապետին և հարկեր վճարեր: Սա նման էր արևմտաեվրոպական բենեֆիցիումին:
4. Վանքապատկան հողեր: Հնդկաստանում կրոնական հաստատություններին պատկանում էր հողերի մեկ հինգերորդ մասը:
5. Խոշոր հողատերերը հաճախ բարեգործական հիմունքներով հողեր էին նվիրում իրենց պալատներում ապրող գիտության և մշակույթի գործիչներին:

Գյուղատնտեսությունից բացի, Հնդկաստանի բնակչության մի մասը զբաղվում էր արհեստագործությամբ և առևտրով: Այստեղ բարձր կատարելության էին հասել ոսկերչությունը, զինագործությունը, մետաքսե և բամբակե գործվածքների արտադրությունը: Հնդկաստանի բնակչությունը առևտուր էր անում հարևան և հեռավոր երկրների հետ: Այստեղից արտահանում էին համե-

Թաջ–Մահալ մզկիթ–դամբարանը Հնդկաստանում

մունքներ, թանկարժեք քարեր, զարդեր, գործվածքներ, անուշահոտ խեժեր:

Քաղաքական միջավայրի կազմակերպումը: Ողջ միջնադարի ընթացքում Հնդկաստանում միասնական պետություն չառաջացավ: Դա պայմանավորված էր նրանով, որ այստեղ ապրում էին զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող բազմաթիվ ցեղեր ու ժողովուրդներ: Մյուս կողմից՝ բնակլիմայական պայմանների պատճառով տարբեր շրջանների միջև տնտեսական ու մշակութային ամուր կապեր չստեղծվեցին: Այս ամենի պատճառով Հնդկաստանում ձևավորվում էին քաղաքական տարբեր կենտրոններ, և ժամանակ առ ժամանակ նրանցից որևէ մեկը կարողանում էր ընդարձակել իր տարածքները և հզորանալ: Նման պետական կազմավորումներից էր Հյուսիսային Հնդկաստանում առաջացած Գուպտաների պետությունը, որը գոյատևեց մինչև VI դ. սկիզբը, երբ քոչվոր ցեղերը ներխուժեցին Հնդկաստան և նվաճեցին այն:

1206 թ. Կենտրոնական Ասիայից ներթափանցած ցեղերը Հյուսիսային Հնդկաստանում ստեղծեցին մուսուլմանական հզոր պետություն, որը ստացավ **Դելիի սուլթանություն** անվանումը: Այն գոյատևեց մինչև 1526 թ.: Պետական կրոնը իսլամն էր՝ սուննի ուղղությամբ, իսկ լեզուն՝ պարսկերենը: Իրենց տիրապետությունը ամրապնդելու համար Դելիի սուլթանները հովանավորում էին իսլամի տարածումը: Կարևոր պաշտոնները՝ վեզիրից մինչև մարզերի կառավարիչները, տրվում էին միայն մուսուլմաններին: Դատական համակարգը հանձնվել էր մուսուլման հոգևորականությանը, և գործում էր մուսուլմանական իրավունքը՝ շարիաթը: Միայն քաղաքացիական մանր գործերը, որտեղ վիճող կողմերը տեղաբնիկներ էին, վճռվում էին սովորութային իրավունքով: Իսլամին պատկանելը որոշ արտոնություններ էր տալիս, և հնդիկների մի մասը ընդունեց իսլամը: Պետական հողերի մի մասը տրվում էր ծառայության դիմաց՝ որպես պայմանական սեփականություն:

Դելիի սուլթանության գոյության վերջին տարիներին սկսվեց եվրոպացիների ներթափանցումը Հնդկաստան: **1498 թ.** պորտուգալացիները Վասկո դա Գամայի առաջնորդությամբ ափ իջան Հնդկաստանի Կալկիկութ նավահանգստում: Շուտով նրանք գրավեցին Գոյա կղզին և այն դարձրին հենակետ Հնդկաստանը գրավելու համար:

Լենկ Թեմուրի թոռ Բաբուրը 1526 թ. պարտության մատնեց Դելիի սուլթանության զորքերին և հիմնադրեց **Մեծ մողոլի կայսրությունը:** Նորաստեղծ տերությունը իր հզորության գագաթնակետին հասավ **փադիշահ Աքբարի** կառավարման (1542–1602 թթ.) ժամանակ: Նա մայրաքաղաքը Դելիից փոխադրեց **Ագրա:** Պետության ամրապնդման նպատակով նա անցկացրեց մի շարք բարեփոխումներ, որոնցից կարևորը հարկայինն էր: Նրա հրամանով անցկացվեց հողերի ցուցակագրում, որոշվեց նրանց որակը և չափը: Բնամթերային հարկի փոխարեն մտցվեց դրամական հարկ, որի չափը կախված էր հողի որակից և մշակվող կուլտուրայի տեսակից: Առաջնորդվելով «մեկ թագավոր, մեկ կրոն» սկզբունքով՝ Աքբարը անցկացրեց կրոնական բարեփոխում: Միապետի իշխանությունը ամրապնդելու և կրոնական տարաձայնություններին վերջ տալու նպատակով նա փորձեց միավորել իսլամն ու հինդուիզմը և ստեղծել մեկ հավատք: Նրա հոչակած «աստվածային հավատքը» լայն տարածում չգտավ, բայց նրա հիմքի վրա ձևավորվեց նոր՝ հինդուիսլամական մշակույթ: Աքբարի մահից հետո Մեծ մողոլի տերությունը սկսեց թուլանալ և մասնատվել:

Պետական կարգը: Դասեր: Չնայած Հնդկաստանում երեք խոշոր պետությունները ստեղծվել էին տարբեր ժամանակներում և տարբեր էթնիկական խմբերի կողմից, սակայն որոշակի նմանություններ ունեին: Պետության գլուխ կանգնած էր միապետը, որի իշխանությունը անսահմանափակ էր և ժառանգական: Միապետին կից գոյություն ուներ արքունի խորհուրդ, որի մեջ մտնում էին աշխարհիկ խոշոր ավատատերերը և բարձրաստիճան հոգևորականները: Պետությունը բաժանված էր մարզերի, շրջանների և գյուղերի: Մարզերի կառավարիչներին՝ փոխարքաներին, նշանակում էր միապետը՝ կառավարող արքայատան անդամներից: Շրջանների կառավարիչներ էին դառնում տեղական ավատատիրական տոհմերի ներկայացուցիչները: Ստորին վարչական միավորը գյուղն էր, որի գլուխ կանգնած էր տանուտերը, իսկ կարևոր հարցեր քննարկելու համար հրավիրվում էր համայնքի անդամների ընդհանուր ժողով:

Միջնադարյան Հնդկաստանի կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ հասարակությունը բաժանված էր ոչ թե դասակարգերի ու դասերի, այլ կաստաների: Այս դեպքում կաստան մարդկանց միավորում էր ոչ միայն ըստ զբաղմունքի տեսակի, այլև այդ

զբաղմունքը գրավոր և սովորութային օրենքներով ամրագրվում էր որպես ժառանգական: Անցումը մի կաստայից մյուսին, ինչպես նաև ամուսնությունը տարբեր կաստաների ներկայացուցիչների միջև խստիվ արգելված էր: Հասարակությունը բաժանված էր չորս դասերի, որոնցից յուրաքանչյուրը բաժանված էր բազմաթիվ ենթադասերի: Այդ չորս դասերն էին՝ բրահմաններ (քրմեր), քշատրիներ (զինվորականներ), վայշիներ (առևտրականներ, արհեստավորներ, գյուղացիներ), շուդրաներ (ստրուկներ): Մարդու պատկանելությունը կաստային որոշվում էր նրա ծնունդով և ցմահ էր:

Կրոնը և մշակույթը: Միջնադարյան քաղաքակրթությանը սովորաբար յուրահատուկ էր միաստվածային կրոնը: Բացառությունների շարքում էր նաև հնդկական հասարակությունը, որը միջնադարում ևս պահպանեց իր հեթանոսական կրոնը՝ **հինդուիզմը:** Ավատատիրական հարաբերությունների առաջացման ժամանակ Հնդկաստանում ձևավորվեց միաստվածային կրոն՝ բուդդայականություն: Սակայն այն չդարձավ համահնդկական կրոն: Հինդուիզմը մնաց տիրապետող կրոն և վերափոխվեց ու հարմարվեց ավատատիրական հասարակությանը: Հինդուիզմի աստվածների գլուխ կանգնած էին երեք գլխավոր աստվածներ՝ **Բրահման** (աշխարհի արարիչը), **Վիշնուն** (աշխարհի պահապանը), **Շիվան** (բնության ուժերի մարմնավորողը):

Հնդկաստանի ավատատիրական մշակույթի կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ այստեղ չստեղծվեց միասնական մշակույթ: Ստեղծվեցին մշակութային մի քանի տիպեր՝ հինդու, իսլամական, հինդուիսլամական և բուդդայական:

Հնդկական մշակույթում առանձնահատուկ տեղ էր գրավում գեղարվեստական գրականությունը: V դ. նշանավոր գրողներից էր **Կալիդասան,** որի ստեղծագործությունների հիմնական թեման հնդկական առասպելները և ավանդություններն էին: Հնդկաստանի ամենանշանավոր բանաստեղծը, որն ապրում և ստեղծագործում էր Աքբարի արքունիքում, **Թուլուսի Դասն** էր: Հնդկական վիպերգի թեմաներով տասը գրքից բաղկացած նրա «Ռամայանա» պոեմը այնպիսի ժողովրդականություն էր վայելում, որ ընթերցվում էր հանդիսավոր տոնակատարությունների ժամանակ:

Զարգացում ապրեց նաև պատմագրությունը: Արքունական տարեգիրները գրանցում էին կարևորագույն դեպքերը և իրադարձությունները: Դրանց մեջ հատկապես առանձնանում է **Աբուլ–Ֆազլի** «Աքբար–նամե» ժամանակագրությունը:

Հնդկաստանի մշակույթում մեծ վերելք էին ապրում նաև ճարտարապետությունը, քանդակագործությունը և կերպարվեստը: Գուպտաների արքայից արքաները, Դելիի սուլթանները և Մեծ մողոլի շահերը, ինչպես նաև բազմաթիվ արքայիկներ կառուցում էին քաղաքներ, ամրոցներ, տաճարներ, պալատներ, մզկիթ–դամբարաններ: Դրանց ներսի պատերը զարդարում էին որմնանկարներով ու խճանկարներով, իսկ դրսից՝ քանդակներով: Արևելքի ճարտարապետության գլուխգործոցը **շահ Ջահանի** (1627–1658 թթ.) հրամանով Ագրայում կառուցված **Թաջ–Մահալ** կոչվող մզկիթ–դամբարանն է՝ ի հիշատակ շահի մահացած կնոջ: Շահ Ջահանի հրամանով կառուցված մյուս փառահեղ հուշարձանը **Դելիի մզկիթն էր:** Սա հայտնի է Մարգարտյա մզկիթ անունով: Այն ապշեցնում է ոչ միայն իր ճարտարապետական լուծումներով, դրսի պատերին արված զարդանախշերով և ներսի պատերի որմնանկարներով, այլև իր մեծությամբ: Մզկիթը իր օժանդակ շինություններով կարող է ներսում տեղավորել հարյուր հազար մարդ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Հնդկաստանի սոցիալական միջավայրը: Ի՞նչ ձևերով էր հանդես գալիս հողի ավատատիրական սեփականությունը Հնդկաստանում:
2. Ինչո՞ւ միջնադարյան Հնդկաստանում միասնական պետություն չառաջացավ:
3. Ի՞նչ կաստաներում էր ընդգրկված հնդկական հասարակությունը: Ինչպե՞ս էր որոշվում կաստայական պատկանելությունը:
4. Կրոնական ի՞նչ ուղղություններ էին տարածված Հնդկաստանում: Մշակութային ի՞նչ տիպեր ստեղծվեցին: Ինչո՞վ էր պայմանավորված մշակութային բազմազանությունը Հնդկաստանում: Համառոտ ներկայացրեք հնդկական մշակույթի հիմնական ուղղությունները, գործիչներին, ստեղծագործությունները:

§ 2. ՉԻՆԱՍՏԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Ք.հ. II–III դդ. Չինաստանում սկսում են ձևավորվել ավատատիրական հարաբերություններ, դանդաղորեն վերափոխվում է հասարակության սոցիալական կառուցվածքը: Նախկին խոշոր հողատերերը աշխատում էին իրենց տրված հողերը դարձնել մասնավոր սեփականություն, իսկ պետությունը փորձում էր պահպանել հողի գերագույն սեփականության իրավունքը: Այս պայքարը շարունակվեց ողջ միջնադարում:

Հողի նկատմամբ պետական սեփականության իրավունքը ամրապնդելու համար անցկացվեցին բարեփոխումներ, որոնք ստացան **հավասար դաշտերի** կամ **հողաբաժինների համակարգ** անվանումը: Յուրաքանչյուր աշխատունակ տղամարդ պետք է ունենար 40 մու (մեկ մու հողաբաժինը հավասար էր 0,06 հեկտարի), իսկ կինը, եթե համարվում էր ընտանիքի գլխավոր՝ 20 մու հողաբաժին: Ժամանակի ընթացքում հողաբաժնի չափերը փոխվում էին: Տղա երեխա ծնվելու պահից նրան սահմանված չափի հողաբաժին էր հասնում: Գյուղացիներին տրվում էր նաև փոքր հողակտոր՝ տուն կառուցելու և այգի–բանջարանոց ունենալու համար: Գյուղացին հիմնականում վճարում էր երկու տեսակի հարկեր՝ բնամթերքով և աշխատանքով:

Մասնավոր սեփականության իրավունքի վրա հիմնված խոշոր հողատիրության աճը կանխելու նպատակով պետությունը սահմանափակում էր դրանց չափերը: Այսպես՝ ամենախոշոր ավատատերը իրավունք ուներ որպես մասնավոր սեփականություն ունենալու 10000 մու հող, իսկ մանր ավատատերը՝ 500 մու: Այս հողերը համարվում էին ժառանգական: Ավատատերերի մեծ մասը մասնավոր սեփականության իրավունքով հողաբաժիններ քիչ ուներ: Նրանք սովորաբար օգտվում էին հողերի եկամուտներից, որը նրանց տրվում էր որպես աշխատավարձ: Հողաբաժինների չափերը ճիշտ սահմանելու համար պետությունը մտցրել էր պաշտոնների ինը աստիճաններ:

Սոցիալական միջավայրի կազմակերպման մեջ որոշակի դեր էին խաղում նաև քաղաքները: Դրանք ստեղծվում էին միայն պետական հողերի վրա: Այնտեղ հիմնականում ապրում էին արհեստավորներ, առևտրականներ և պետական պաշտոնյաներ:

Չինական ավատատիրական հասարակությունը բաղկացած էր սոցիալական տարբեր խմբերից, սակայն բոլորն ունեին մեկ ընդհանուր սյուզերեն (գերապետ)՝ պետությունը հանձին կայսեր:

Ավատատերերի դասակարգի ներսում սենյոր–վասալ աստիճանակարգություն, ինչպես Արևմտյան Եվրոպայում, գոյություն չուներ: Սոցիալական բարձրագույն խումբը կազմում էին տիտղոսավոր ազնվականները, որոնք մասնավոր սեփականության իրավունքով տնօրինում էին խոշոր հողատարածքներ: Սրանք պաշտոններ չէին զբաղեցնում: Երկրորդ խումբը կազմված էր պետական բարձրագույն պաշտոններ զբաղեցնողներից, որոնք մասնավոր սեփականության իրավունքով տնօրինում էին փոքր հողաբաժիններ, սակայն պաշտոնին համապատասխան՝ մեծ եկամուտներ էին ստանում: Հաջորդ սոցիալական խումբը բաղկացած էր միջին ու ստորին աստիճանների պաշտոնյաներից: Սոցիալական մյուս խումբը՝ «բարի ժողովուրդը», ներառում էր հարկատու գյուղացիներին, առևտրականներին, արհեստավորներին: Վերջին խումբը՝ «էժանագին ժողովուրդը», կազմված էր օրավարձու աշխատողներից և ստրուկներից, որոնք հարկեր չէին վճարում:

Հասարակության քաղաքական կազմակերպումը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորման նախօրյակին Չինաստանում հասարակությունը զարգացման տարբեր աստիճանների վրա էր: Սրանց միավորումը մեկ պետության մեջ բարդ խնդիր էր:

II դ. վերջին և III դ. սկզբին Հան կայսրությունը անկում ապրեց, որով ավարտվեց Չինաստանի հնագույն պատմությունը, և սկսվեց միջնադարը: Այդ ժամանակ Չինաստանում ստեղծվեցին երեք անկախ թագավորություններ, որ հայտնի է Եռաթագավորություն անվանումով: Օգտվելով պետության տրոհումից՝ Չինական պարսպից հյուսիս ապրող քոչվորական ցեղերը սկսեցին արշավել Չինաստան: Նրանց մի մասը բնակություն հաստատեց երկրի հյուսիսում, ուստի Չինաստանը բաժանվեց երկու մասի՝ Հարավային և Հյուսիսային: Դա մեծ ազդեցություն թողեց երկրի հետագա զարգացման վրա: **581 թ. զորավար Յանը** Չինաստանի հյուսիսում կազմակեր-

պեց պետական հեղաշրջում և գահընկեց արեց կայսրին: Նոր պետությունը ստացավ **Սույ** անվանումը: 589 թ. նա իրեն ենթարկեց նաև երկրի հարավը և հռչակվեց համաչինական կայսր: 618 թ. Չինաստանում հաստատվեց հաջորդ՝ **Տան արքայատոհմը:**

Այս ժամանակաշրջանում էլ Չինաստանում ձևավորվեց ավատատիրական տիպի միապետություն: Գերագույն իշխանությունը կայսեր ձեռքին էր, որն օժտված էր անսահմանափակ իրավունքներով և կոչվում էր երկնքի որդի: Նրա իշխանությունը ժառանգական էր: Կայսրին կից գոյություն ուներ կայսերական խորհուրդ, որի մեջ մտնում էին նրա ազգականները, ազդեցիկ պաշտոնյաները և նվիրված մարդիկ: Կայսրության գործադիր իշխանությունը կենտրոնացված էր արքունիքում, որտեղ ստեղծվել էին բազմաթիվ գերատեսչություններ: Առավել կարևորներն էին աստիճանների, հարկային, ծիսակարգություններին, ռազմական, դատական և հասարակական գերատեսչությունները: Դրանցից բացի, մայրաքաղաքում գոյություն ունեին պալատական վարչություններ՝ կայսերը, նրա ընտանիքին, պալատական շինություններին, հարեմներին և օտարերկրյա դեսպաններին սպասարկելու համար: Կար նաև վերահսկիչ տեսուչների պալատ, որը վերահսկում և ստուգում էր գործադիր իշխանության գործունեությունը: Երկիրը կառավարելու համար ստեղծվել էին ինը աստիճաններից բաղկացած պաշտոններ, որոնց ներսում գոյություն ունեին ևս 30 պաշտոններ: Պաշտոնի նշանակման միակ սկզբունքը քննություն հանձնելն ու գիտական աստիճան ստանալն էր: Կրթության բարձրագույն աստիճան և առաջին կարգի պաշտոն ստանալու համար թեկնածուն պետք է քննությունները հանձներ կայսերական արքունիքում:

Չինաստանի բնականոն կյանքի և նրա հետագա զարգացման վրա որոշակի ազդեցություն ունեցան մոնղոլական արշավանքները և մոնղոլական տիրապետության հաստատումը: **1215 թ.** մոնղոլները՝ **Չինգիզ խանի** գլխավորությամբ գրավեցին **Պեկին** քաղաքը, սակայն Չինաստանի նվաճումը ձգձգվեց: Միայն **1280 թ.** Չինգիզ խանի թոռ **Խուբիլայ Մեծ խանը** նվաճեց Չինաստանը և իրեն հռչակեց համաչինական կայսր: Նա մոնղոլական տերության մայրաքաղաքը տեղափոխեց Պեկին: Մոնղոլները բնակչությանը բաժանեցին չորս խմբերի: Առաջինի մեջ մտնում էին մոնղոլները, որոնք համարվում էին արտոնյալ: Նրանց համար գոյություն ունեին առանձին օրենքներ և դատարաններ: Երկրորդ

Չինգիզ խան

խմբի մեջ մտնում էին օտարերկրացիները, մասնավորապես Կենտրոնական Ասիայից տեղափոխված մուսուլմանները և շուրջ 5 հազար եվրոպացիներ: Սրանց տրվում էին զանազան արտոնություններ: Երրորդ խումբը ներառում էր Հյուսիսային Չինաստանի, իսկ չորրորդը՝ Հարավային Չինաստանի բնակիչներին: Շուտով Չինաստանում սկսվեց հակամոնղոլական շարժում, որը գլխավորում էր կրոնավոր **Չժու Յուանչժանը** (Տայցուն): **1386 թ.** ապստամբները գրավեցին Պեկինը, և Տայցունը իրեն հռչակեց կայսր ու դարձավ **Մին կայսրության** հիմնադիրը: Պաշտոնյաների գործունեությունը վերահսկելու համար նա ստեղծեց գաղտնի ոստիկանություն: Արդյունքում շուրջ 100 հազար մարդ մեղադրվեց դավաճանության և կաշառակերության մեջ ու մահապատժի ենթարկվեց:

Մինների կառավարման վերջին տարիներին իրավիճակը խիստ լարվել էր: Հարկերի աճը և արքունիքի վիթխարի ծախսերը քայքայում էին տնտեսությունը: Ծանր էր նաև երկրի արտաքին դրությունը: Չինաստանը երկար ժամանակ անհաջող պատերազմներ էր մղում մոնղոլների, մանջուրների և Ճապոնիայի դեմ: Օգտվելով սրանից՝ հյուսիսում բնակվող մանջուրական ցեղերը գրավեցին Չինաստանը և 1644 թ. հիմնադրեցին **Ցին կայսրությունը,** որը երկիրը կառավարեց մինչև 1912 թ.:

Մշակույթը: Միջնադարում Չինաստանում չձևավորվեց միասնական պետական կրոն, որն

իր ազդեցությունը թողեց չինական մշակույթի զարգացման վրա: Ավատատիրական հարաբերությունների ձևավորմանը զուգահեռ իր տիրապետող ազդեցությունը կորցնում էր նաև կոնֆուցիականությունը, սակայն նա պահպանեց տիրապետող դիրքերը կրթության, արվեստի և քաղաքական գաղափարախոսության բնագավառում:

Ավատատիրության հետ միասին Չինաստանում լայնորեն տարածվեց բուդդայականությունը, որը ներթափանցեց Հնդկաստանից: Նա արագորեն հարմարվեց նոր պայմաններին, իր մեջ ներառեց տեղական որոշ ծիսակարգեր:

Միջնադարյան Չինաստանում մեծ վերելք ապրեց կրթական համակարգը: Բացվեցին պետական և մասնավոր բազմաթիվ դպրոցներ: Մայրաքաղաքում բացվեց նաև ակադեմիա: Այստեղ աշխատող գիտնականները աշխատություններ էին գրում աշխարհագրության, բժշկության, պատմության, քիմիայի, աստղագիտության վերաբերյալ: Դեռևս VIII դ. արքունիքում սկսեցին **թերթ հրատարակել,** որտեղ տպագրում էին կայսերական հրամանները:

Միջնադարյան Չինաստանում զարգացում ապրեց **պատմագրությունը**: Պետական պաշտոն զբաղեցնելու համար թեկնածուն քննություն էր հանձնում նաև պատմությունից: Քաղաքական գործիչները երկրի կառավարման վերաբերյալ իրենց տեսակետները հիմնավորելու համար սովորաբար դիմում էին անցյալին: Միջնադարյան Չինաստանի նշանավոր պատմագիրներից էր **Օույան Սյուն** (XI դ.): Նրա «Հինգ դինաստիաների նոր պատմություն» և «Տան դինաստիայի նոր պատմություն» աշխատությունները կարևոր տեղեկություններ են պարունակում Չինաստանի և հարևան երկրների վերաբերյալ: XI դ. մյուս նշանավոր պատմագիրը Սիմա Գուան էր, որի ղեկավարությամբ մի խումբ պատմաբաններ ստեղծեցին «Կառավարմանը օգնող մեծ հայելի» պատմական աշխատությունը: Այստեղ ժամանակագրական սկզբունքով շարադրված է Չինաստանի պատմությունը:

Չինական արվեստի նմուշներ

Մեծ կաթսա

Վիշապ. ոսկի և արծաթ

Չինաստանում կատարվեցին մի շարք գյուտեր, որոնք առաջիններից էին մարդկության պատմության մեջ: Դրանցից ամենակարևորը **տպագրության գյուտն էր (VIII դ.)**: Հիերոգլիֆները փորագրում էին տախտակի վրա, ապա թանաք էին քսում և մի թերթ թուղթ դնում տպագրելու համար: Այս ճանապարհով նրանք 21 տարվա ընթացքում տպագրեցին կոնֆուցիական փիլիսոփաների 130 հատոր աշխատություններ: Չինաստանում կատարված նշանավոր գյուտերից էին նաև կողմնացույցի, լուցկու և հեծանիվի շարժական շղթայի գյուտերը: Նրանց կատարած մյուս նվաճումը վառոդի գյուտն էր, որի հիման վրա **1288 թ.** հնարեցին թնդանոթը: Մանջուրական տիրապետության և եվրոպացիների գաղութային համակարգի հաստատումից հետո չինական մշակույթը սկսեց անկում ապրել:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ են Չինաստանում ձևավորվել ավատատիրական հարաբերությունները: Սոցիալական ի՞նչ խմբերից էր բաղկացած չինական ավատատիրական հասարակությունը:
2. Որո՞նք էին Չինաստանի միավորմանը խոչընդոտող ներքին և արտաքին գործոնները:
3. Չինաստանում ի՞նչ կրոնական ուղղություններ էին տիրապետող:
4. Համառո՛տ ներկայացրեք չինական մշակույթի զարգացման հիմնական ուղղությունները, գործիչներին, ստեղծագործությունները: Ի՞նչ կարևոր գյուտեր կատարվեցին միջնադարյան Չինաստանում:

§ 3. ՃԱՊՈՆԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորման նախօրյակին ճապոնական հասարակությունը տոհմացեղային կարգերի քայքայման աստիճանում էր: Ավատատիրական հողային սեփականության ձևավորումը տեղի էր ունենում հողաբաժնային համակարգի պայմաններում: Ամբողջ հողը համարվում էր պետության սեփականություն, որի ներկայացուցիչն էր կայսրը: Յուրաքանչյուր գյուղացիական ընտանիք, անդամների թվին համապատասխան, ժամանակավոր օգտագործման համար վարելահող էր ստանում: Հողը տրվում էր վեց տարեկանից: Տղամարդուն տրվում էր երկու **տան** (մեկ տանը հավասար էր 0,12 հեկտար), իսկ կնոջը՝ դրա 2/3–ը: Հողի վերաբաժանում կատարվում էր վեց տարին մեկ անգամ: Յուրաքանչյուր ընտանիքի սեփականության իրավունքով հատկացվում էր տնամերձ հողատարածք՝ տուն կառուցելու և այգի հիմնելու համար: Հողագործությամբ զբաղվող գյուղացիները ստացան «բարի ժողովուրդ» անվանումը: Հող ստացած գյուղացիները պետք է պետությանը վճարեին հացահատիկի հարկ և տնայնագործական գործվածքներ: Նրանք պարտավոր էին նաև տարվա ընթացքում 100 օր աշխատել պետության համար:

Տոհմացեղային ավագանու հիման վրա ձևավորված ավատատերերը նույնպես հողաբաժիններ էին ստանում, սակայն դրանց մեծությունը կախված էր ոչ թե ընտանիքի անդամների քանակից, այլ զբաղեցրած պաշտոնից և տիտղոսից: Ավատատիրոջ հողաբաժինը միջին հաշվով 40 անգամ գերազանցում էր գյուղացու հողաբաժնին: Պաշտոնի համար հողը տրվում էր պաշտոնավարության ժամկետին համապատասխան, իսկ տիտղոսի համար՝ ցմահ:

Ճապոնիայում ավատատիրական տիպի հողատիրությունը առաջանում էր երկու ճանապարհով: Առաջին դեպքում կայսրը կամ խոշոր ավատատերը որևէ ծառայության դիմաց ցմահ օգտագործման իրավունքով հող էր տրամադրում: Մյուս դեպքում պետությունը թույլատրում էր, որ մասնավոր սեփականության իրավունքով մշակեն խոպան և լքյալ հողերը: Այս հողերը սովորաբար մշակում էին ստրուկի աշխատանքի միջոցով: VII դ. Ճապոնիայում ապրում էր շուրջ 6 միլիոն մարդ, որի 15%–ը ստրուկներ էին:

Տոկուգավա սյոգուն

Ճապոնիայում ավատատիրական դասակարգի ներսում, ըստ հողաբաժնի չափերի և զբաղեցրած պաշտոնի ու տիտղոսի, ձևավորվեցին երեք դասեր՝ արքունի, նահանգական և գավառական:

Միջնադարյան Ճապոնիայի առանձնահատկություններից մեկը ռազմական առանձին դասի կազմավորումն էր: Հողաբաժնի և իշխանության համար անընդհատ տեղի ունեցող պատերազմների ժամանակ խոշոր և միջին ավատատերերը ստեղծեցին առանձին զինված ուժեր, որոնք ստացան **սամուրայներ** անվանումը: Ռազմական ծառայության դիմաց սամուրայը տիրոջից ստանում էր առանձին հողաբաժին: Սամուրայների շրջանում ձևավորվեցին զինվորական վարվելակերպի կանոններ, որոնց գլխավոր գաղափարը տիրոջ նկատմամբ հավատարմությունն էր: Սամուրայները մշակեցին ինքնասպանության ազգային ձևը՝ **սեպպուկան** (խարակիրի), երբ սամուրայը անհավատարմության համար կամ տիրոջ մահից հետո ինքնասպանություն է գործում:

Կառավարման համակարգը: Ճապոնական հասարակությունը բաղկացած էր արյունակցական կլաններից, որոնցից յուրաքանչյուրը իր տարածքում անկախ էր: Կլանը կազմված էր առաջնորդից, քրմերից և շարքային ազատ անդամներից: Կլանից դուրս նրա հետ կապված էին կիսաազատները և ստրուկները: III դ. Ճապոնիայում սկսեցին ձևավորվել խոշոր ցեղային միություններ: Դրանցից ամենաուժեղը, որը կարողացավ իրեն ենթարկել Հոնսյու կղզու բոլոր ցեղերին, **յամատո** ցեղն էր: Հասարակության կլանային կառուցվածքը իր ազդեցությունը թողեց ձևավորվող ավատատիրական պետության կառավարման համակարգի վրա: Ձևավորվեց կառավարման կլանային աստիճանակարգություն, երբ աստիճաններից յուրաքանչյուրի վրա գտնվող կլանը իր ձեռքում էր կենտրոնացնում կառավարման որևէ բնագավառ: Այսպես՝ թագավորական իշխանությունը մի կլանի, քրմությունը՝ այլ կլանի, ռազմական գործը՝ մի ուրիշ կլանի ձեռքում էր: Արդյունքում իրական իշխանությունը սովորաբար հայտնվում էր ամենաուժեղ կլանի ձեռքում: Այսպես՝ 563–645 թթ. այն **Սոգա կլանի** ձեռքում էր, որն ընտրում էր կայսերը, նրան ամուսնացնում իրենց կլանին պատկանող կանանցից մեկի հետ և կառավարում երկիրը:

645 թ. Սոգա կլանի հակառակորդները կազմակերպեցին հեղաշրջում և կոտորեցին նրանց: Իշխանությունը անցավ Սումերագի կլանի ձեռքը, բայց երկիրը մինչև 1192 թ. կառավարում էին Ֆուձիվարի կլանի ներկայացուցիչները: Այս հեղաշրջման արդյունքում, որը հայտնի է «**Տայկայի հեղաշրջում**» անունով, ստեղծվեց ուժեղ և կենտրոնացված պետություն: Սրան մեծ չափով նպաստեց բուդդայականության հաստատումը որպես պետական կրոն: Երկրի կառավարման բարձրագույն մարմինը կայսեր կից խորհուրդն էր, որին ենթարկվում էին ութ գերատեսչություններ:

XII դ. Ճապոնիայում իշխանության համար պայքար սկսվեց Տայրա և Մինամոտո ռազմական կլանների միջև: Ի վերջո հաղթանակ տարան Մինամոտոները, և 1192 թ. կայսրը Յորիմոտոյին տվեց սյոգունի՝ զինվորական առաջնորդի տիտղոս: Կառավարման այս համակարգը ստացավ **սյոգունատ** անվանումը, երբ երկիրը կառավարում էին սյոգունները, որոնք կայսեր անունից օրենքներ էին ընդունում և հետևում դրանց իրագործմանը:

1274 թ. մոնղոլ Խուբիլայ Մեծ խանը Ճապոնիան նվաճելու համար մեծ նավատորմ ուղարկեց, սակայն ուժեղ թայֆունը ստիպեց մոնղոլներին նահանջել: 1281 թ. մոնղոլական 150–հազարանոց բանակը ափ իջավ Ճապոնիայում: Հիսուն օր տևած թեժ մարտերից հետո մի ուժեղ թայֆուն խորտակեց նավերի մի մասը, և մոնղոլները ստիպված նահանջեցին: Ճապոնացիները թայֆունը անվանեցին «կամիկաձե»՝ աստվածային քամի:

Խոշոր հողատիրության առաջացումը, սամուրայների ընդլայնվող ռազմական արտոնությունները հասցրին նրան, որ երկիրը բաժանվեց մի քանի տասնյակ ավատատիրական իշխանությունների, որոնց տիրակալները այնքան ուժեղ էին, որ իրենց անվանում էին թագավորներ: Երկրի քաղաքական վերամիավորման գործը իր ձեռքը վերցրեց մանր ավատատեր Օդա Նոբունագան: **1573 թ.** նա տապալեց սյոգունին և երկրի կառավարումը վերցրեց իր ձեռքը: Բուդդայականության հզորությունը և ազդեցությունը թուլացնելու նպատակով նա սկսեց հովանավորել քրիստոնյաներին: Այդ ժամանակ Ճապոնիայում կային 150 հազար քրիստոնյա, 200 վանք և 5 դպրոց: Սակայն նրա հաջորդները արգելեցին քրիստոնեության տարածումը: Օդայի հաջորդներից **Տոկուգավան 1603 թ.** իրեն հռչակեց սյոգուն, և Ճապոնիայում հաստատվեց Տոկուգավայի սյոգունատը, որը կառավարեց մինչև 1867–68 թթ.:

Վախենալով, որ քրիստոնեության հետագա տարածումը կխախտի հասարակության ներքին միասնությունը և կրոնական բախումների տեղիք կտա, **1612 թ.** քրիստոնեությունը օրենքից դուրս հայտարարվեց, և փակվեցին բոլոր վանքերը: Մահապատժի սպառնալիքի տակ ճապոնացիներին արգելվեց թողնել երկիրը: Միաժամանակ արգելվեց նաև օտարերկրացիների մուտքը Ճապոնիա: Բացառություն արվեց միայն չինացիներին և հոլանդացիներին, սակայն պայմանով, որ նրանց նավերը կայանեն միայն Նագասակի նավահանգստում: Այսպես Ճապոնիան ինքնամեկուսացվեց արտաքին աշխարհից:

Սամուրայների մենամարտ

Դոգա արձանիկ

Մշակույթը: Հնագույն ժամանակներից Ճապոնական կղզիներ բնակիչներ էին գալիս Կորեայից, Չինաստանից, Հարավարևելյան Ասիայից: Միջնադարում Ճապոնիան հաճախ ինքնամեկուսանում էր արտաքին աշխարհից: Այս ամենի արդյունքում այստեղ ձևավորվեց յուրօրինակ ազգային մշակույթ, որի վրա մեծ ազդեցություն ունեցավ Ճապոնացիների հեթանոսական կրոնը՝ **սինտոիզմը**, ինչպես նաև բուդդայականությունը և կոնֆուցիականությունը: Բուդդայականությունը Ճապոնիա բերեցին չինացի և կորեացի վերաբնակիչները VI դ.:

Ճապոնական մշակույթի զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ սեփական գրի՝ **հիրագանա** կոչվող հիերոգլիֆների ստեղծումը: Մինչ այդ պաշտոնական գրությունը չինարենն էր:

Պետության ձևավորմանը զուգահեռ անհրաժեշտություն առաջացավ պատմությունը գրի առնելու: **Տարեգրությունների** առաջին երկու ժողովածուները ստեղծվեցին VIII դ.: Դրանցից առաջինում գրի էին առնվել հին առասպելները և լեգենդները, իսկ երկրորդում՝ VI–VII դդ. դեպքերը և իրադարձությունները:

Միջնադարյան Ճապոնիայում մեծ զարգացում ապրեցին ճարտարապետությունը և քանդակագործությունը: Այստեղ մեծ էր չինական մշակույթի ազդեցությունը: Ճապոնական քաղաքները ևս կառուցվում էին չինական քաղաքաշինության սկզբունքներին համապատասխան: Այս սկզբունքով 710 թ. կառուցվեց առաջին մշտական մայրաքաղաք **Նարան:** Քաղաքի կենտրոնում կառուցվել էր պալատական թաղը, որն ամբողջովին պարսպապատված էր և ուներ մի քանի դարպասներ: Նրանից դուրս էր հիմնական քաղաքը, որը ևս ամբողջովին պարսպապատ էր: Նարայում կային յոթ բուդդայական վանքեր, որոնց մեջ գլխավորը «Օրենքի հաղթանակի տաճարն» էր: Այն կառուցվել էր 608 թ. և Ճապոնիայում հիմնված առաջին բուդդայական տաճարն էր:

Բարձր զարգացման հասավ նաև քանդակագործությունը, որի ամենանշանավոր գործը Նարայի բուդդայական վանքերից մեկում գտնվող Բուդդայի՝ բրոնզից ձուլված ոսկեզօծ արձանն է: Պատվանդանի բարձրությունը 7 մ է, իսկ արձանինը՝ 16 մ:

Ճապոնական մշակույթում իր ուրույն տեղն ուներ թատրոնը, մասնավորապես Կաբուկի կոչված թատրոնը: Սկզբնական շրջանում որպես դերասաններ խաղում էին միայն կանայք, իսկ հետագայում՝ նաև տղամարդիկ: Այն ձևավորվել էր թափառաշրջիկ ասմունքողների, պարողների և երգողների կատարումներից: Կաբուկին ներկայացում է, որը ներառում է պարեր, երաժշտություն, վառ հանդերձներ և դիմախաղ: Միջնադարում Ճապոնացիները ստեղծեցին բարձր զարգացած մշակույթ, որը հիմք դարձավ մշակույթի հետագա զարգացման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս ընթացավ ավատատիրական հողային սեփականության ձևավորումը Ճապոնիայում: Ավատատիրական դասակարգի ներսում ի՞նչ դասեր ձևավորվեցին:
2. Ներկայացրե՛ք կառավարման կլանային համակարգի էությունը: Ի՞նչ է սյոգունատը: Ի՞նչ սյոգունատներ են կառավարել Ճապոնիան: Ինչո՞ւ Ճապոնիան ինքնամեկուսացվեց:
3. Կրոնական ի՞նչ ուղղություններ էին տարածված Ճապոնիայում: Մշակույթի ո՞ր ուղղություններն էին զարգացած: Ձեր կարծիքով՝ ինչի՞ մասին է վկայում «Օրենքի հաղթանակի տաճարի» գոյությունը Նարայում:

§ 4. ԻՍԼԱՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Արաբական խալիֆայությունը: Ք. ա. II հազարամյակից սկսած՝ Արաբական թերակղզում ապրում էին սեմական լեզվախմբին պատկանող արաբական ցեղեր: Նրանց մի մասը բնակվում էր քաղաքներում և զբաղվում էր առևտրով ու արհեստագործությամբ, իսկ մեծ մասը ապրում էր օազիսներում և զբաղվում քոչվոր անասնապահությամբ ու հողագործությամբ: Թերակղզու վրայով էին անցնում Արևելքը Արևմուտքի հետ կապող քարավանային առևտրի կարևորագույն ճանապարհները, և բնակչության մի մասը ապրում էր այդ առևտրի հաշվին: Սակայն VI դ. Սասանյանների պետությունը կարողացավ առևտրական ճանապարհները տեղափոխել Իրան: Թերակղզու այն մասը, որն ապրում էր առևտրի հաշվին, զրկվեց գոյության միջոցներից և ստիպված պետք է զբաղվեր արհեստագործությամբ կամ գյուղատնտեսությամբ: Վերջին դեպքում պիտանի հողատարածքներ քիչ կային, ուստի դրանք պետք է նվաճվեին: Դրա համար անհրաժեշտ էր, որ թերակղզում ապրող տարբեր ցեղեր միավորվեին և ստեղծեին միասնական ուժեղ պետություն: Տոհմական հասարակարգի քայքայման փուլում գտնվող ցեղերի միավորումը կարող էր կատարվել միաստվածության շուրջ:

Այս խնդիրը լուծեց Մուհամմեդը (570–632 թթ.), որը արաբների համար ստեղծեց միաստվածային կրոն՝ իսլամը: Մեքքայում նա սկսեց քարոզել, որ գոյություն ունի միայն մեկ Աստված՝ Ալլահը, որի համար բոլոր հավատացյալները հավասար են: Նա քննադատում էր կեղծիքը, հարստությունը և հարուստներին կոչ էր անում իրենց ունեցվածքից բաժին հանել աղքատներին: Սակայն Մեքքայի հարուստ քաղաքացիները չընդունեցին այս քարոզները, և Մուհամմեդը 622 թ. իր կողմնակիցների հետ փախավ Յաթրիբ: Հավաքելով անհրաժեշտ քանակությամբ զինված ուժեր՝ նրանք 630 թ. գրավեցին Մեքքան: Այսպես ծնվեց մուսուլմանական առաջին պետությունը, որի ղեկավարը դարձավ Մուհամմեդը:

Նոր կրոն և միասնական պետություն ստեղծելուց անմիջապես հետո արաբները ձեռնամուխ եղան տարածքների նվաճմանը: Դրանք նվաճելու անհրաժեշտությունը տեղ է գտել իսլամի սուրբ գրքում՝ Ղուրանում: Այնտեղ ասվում էր, որ իսլամը պետք է դառնա բոլոր ժողովուրդների կրոն, իսկ դրա համար անհրաժեշտ է նվաճել իսլամ չդավանողների՝ անհավատների տարածքները, իսկ այնտեղ ապրողներին դարձնել իսլամադավան:



Մուսուլմանների կրոնական կենտրոն Մեքքան մեր օրերում

Առաջնորդվելով այս գաղափարներով՝ Մուհամմեդի հաջորդները՝ խալիֆաները, ձեռնամուխ եղան դրանց իրագործմանը: Շուտով նրանք գրավեցին Պաղեստինը, Ասորիքը, Միջագետքը, Պարսկաստանը: Մինչև VII դ. վերջերը արաբները նվաճեցին Մերձավոր Արևելքը, Եգիպտոսը, Թունիսը, իսկ VIII դ.՝ Հայաստանը, Կովկասը, Միջին Ասիան, Աֆղանստանը, Արևմտյան Հնդկաստանը, Իսպանիան: Նվաճումների արդյունքում առաջացավ միջնադարի ամենամեծ տերություններից մեկը՝ Արաբական խալիֆայությունը: Պետության գլուխ կանգնած էր **խալիֆան՝** Ալլահի առաքյալի տեղակալը: Առաջին չորս ընտրովի խալիֆաներից հետո խալիֆայի իշխանությունը դարձավ ժառանգական: Այս սկզբունքով խալիֆայությունը կառավարեցին **Օմայան** (661–750 թթ.) և **Աբասյան** (750–1258 թթ.) տոհմերը: Օմայանները խալիֆայության մայրաքաղաքը տեղափոխեցին Դամասկոս, իսկ Աբասյանները իրենց նստավայր ընտրեցին Բաղդադ քաղաքը:

Խալիֆան մեկ անձի մեջ միավորում էր աշխարհիկ և հոգևոր իշխանությունը, այսինքն՝ նա համարվում էր բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդը և խալիֆայության աշխարհիկ կառավարիչը: Նա ուներ երկու տեղակալներ՝ մեծ վեզիրը, որը նրանից հետո երկրորդ դեմքն էր և զբաղվում էր քաղաքացիական գործերով, իսկ գլխավոր կադին՝ դատական, կրթական և կրոնական բնագավառներով: Խալիֆայությունը սկզբում բաժանված էր երեք, Օմայանների օրոք՝ հինգ, իսկ հետագայում՝ ինը կուսակալությունների (փոխարքայություն): Ատրպատականը, Կովկասը, Միջագետքը, Փոքր Ասիայի արևելյան տարածքները միավորված էին մեկ փոխարքայության մեջ: Նրա ներսում ստեղծվել էր առանձին վարչական միավոր, որը կոչվում էր Արմինիա: Նրա մեջ մտնում էին Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը: Կառավարիչը, որի նստավայրը Դվինն էր, կոչվում էր ոստիկան, կարող էր լինել միայն արաբ. նրան նշանակում էր կուսակալը:

Իսլամի հիմնադիր Մուհամմեդը

Նոր նվաճումների և տերությունը պահպանելու համար խալիֆայությունը ստիպված էր մեծ ուշադրություն դարձնել ռազմական ուժերի կազմակերպմանը: Խալիֆայության տարածքում առանձնացվեցին քաղաքներ, որտեղ ապրող արաբները պարտավոր էին ծառայել բանակում, որի համար աշխատավարձ էին ստանում: Ստեղծվեցին նաև զինվորական շրջաններ: Երկիրը արդյունավետ կառավարելու համար արաբները վերականգնեցին և կատարելագործեցին փոստային ծառայությունը: Դամասկոսից, ապա Բաղդադից դեպի արևելք և արևմուտք ձգվող սահմաններում կառուցվեցին 900 փոստակայաններ:

Խալիֆայությունում հողի գերագույն սեփականատերը համարվում էր պետությունը, այսինքն՝ բոլոր հողերը պատկանում էին Ալլահին, իսկ նրա անունից դրանց տնօրինում էր խալիֆան: Գոյություն ունեին հողատիրության մի քանի ձևեր, որոնցից առավել տարածված էին համայնական հողերը, մասնավոր սեփականություն համարվող հողերը (մուլք), կառավարող տոհմին պատկանող հողերը (սավաֆի), հոգևոր հաստատություններին պատկանող հողերը (վակֆ), ծառայության համար տրվող հողերը (իկթա): Խալիֆայության մուսուլման բնակչությունը վճարում էր տասանորդ հարկ (ուշր), իսկ ոչ մուսուլմանները՝ խարաջ, որը կազմում էր բերքի մեկ երրորդից մինչև երկու երրորդը, և գլխահարկ (ջիզիե): Հարկեր էին վճարում նաև անասնապահությամբ, արհեստներով և առևտրով զբաղվողները: Այստեղ ևս հարկի չափը պայմանավորված էր կրոնական պատկանելությամբ:

Իրանի իսլամացումը: 226 թ. Սասանյան տոհմի ներկայացուցիչ Արտաշիրը գահընկեց արեց պարթևներին և իրեն հռչակեց շահնշահ՝ արքայից արքա: Այս շրջանում ձևավորվում էին ավատատիրական հարաբերություններ: Պետու-

թյան ամբողջ ազատ բնակչությունը բաժանված էր չորս դասերի՝ զինվորականներ, քրմեր, պաշտոնյաներ, իսկ չորրորդ դասի մեջ մտնում էին գյուղացիներ, արհեստավորներ և առևտրականներ: Տերության պաշտոնական կրոնը զրադաշտականությունն էր, որը աշխատում էր հարմարվել նոր պայմաններին, ուստի նրա ներսում առաջանում էին գաղափարական տարբեր հոսանքներ: Իրանում լայն տարածում էր գտել նաև քրիստոնեությունը: Սկզբում այն տարածում էին քրիստոնյա քարոզիչները, իսկ II դ. Իրանի կառավարողները ապաստան էին տալիս Հռոմեական կայսրությունում հալածվող քրիստոնյաներին՝ այն հույսով, որ դաշնակիցներ են ձեռք բերում: Իսկ երբ քրիստոնեությունը դարձավ կայսրության պետական կրոն, Սասանյանները սկսեցին հովանավորել նեստորականներին և միաբնակներին:



Կորդովայի մզկիթը. Իսպանիա

Ավատատիրական հարաբերությունների ձևավորման ժամանակ Սասանյանների տերությունը սկսեց թուլանալ: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար շահնշահ **Խոսրով I Անուշիրվանը** (531–579 թթ.) մի շարք բարեփոխումներ անցկացրեց, որոնք նպաստեցին ավատատիրական հարաբերությունների ամրապնդմանը: Դրանցից ամենակարևորը հարկայինն էր, որով վերացրեց բազմատեսակ հարկերը և մտցրեց երկու տեսակի հարկեր՝ հողահարկ և գլխահարկ: Նա անցկացրեց ռազմավարչական բարեփոխումներ: Այժմ տերության ռազմական ուժերը կենտրոնացված էին ոչ թե մեկ, այլ չորս մարդկանց ձեռքում, քանզի ստեղծվել էին զինվորական չորս շրջաններ, որոնցից յուրաքանչյուրը ուներ իր առանձին հրամանատարը: Տերության կառավարումը արդյունավետ դարձնելու համար նա այն բաժանեց չորս մարզերի, որոնք իրենց հերթին բաժանվում էին վարչական առանձին միավորների: Սակայն արաբների ներխուժումով տերության բնականոն զարգացումն ընդհատվեց: Մինչև 651 թ. արաբները կարողացան գրավել համարյա ողջ Իրանը:

Արաբական տիրապետության շրջանում էլ սկսվեց Իրանի իսլամացումը: Իրանի բնակչության մեծ մասը իսլամն ընդունեց շիա դավանանքով: Արաբական տիրապետության անկումից հետո Իրանը հայտնվեց սելջուկների, ապա՝ մոնղոլների տիրապետության տակ: Մոնղոլական տիրապետության անկումից հետո Իրանի տարածքում ստեղծվեցին մի շարք պետական կազմավորումներ: XV դ. երկրորդ կեսին Ատրպատականի Արդաբիլ քաղաքում մեծ ազդեցություն ձեռք բերեց Սեֆյանների տոհմը: Նրանց հաջողվեց իրենց շուրջ համախմբել թյուրքական քոչվորական մի քանի ցեղերի, որոնք ընդհանուր անունով կոչվում էին ղզլբաշներ (կարմրագլուխներ), քանի որ կրում էին 12 կարմիր շերտերով փաթաթված գլխաշոր: 1502 թ. ղզլբաշները Սեֆյանների առաջնորդ **Իսմայիլի** գլխավորությամբ գրավեցին Թավրիզը: Իսմայիլը հռչակվեց շահնշահ: Այսպես սկիզբ դրվեց **Սեֆյանների պետությանը** (1502–1736 թթ.):

Իսլամական մշակույթը: Դուրս գալով Արաբական թերակղզուց՝ արաբները հանդիպեցին ավելի զարգացած քաղաքակիրթ ժողովուրդների: Չնայած արաբները իրենց զարգացման մակարդակով զիջում էին նվաճված ժողովուրդների մի մասին, սակայն կարողացան նրանց մի հատվածին փոխանցել իրենց կրոնը, լեզուն և որոշ սովորույթներ: Պահանջվեց ընդա-

մենը երեք դար, որ ձևավորվի իսլամական մշակույթը և հասնի իր զարգացման բարձրակետին: Իսլամական մշակույթի ստեղծմանը մասնակցում էին ոչ միայն արաբները, այլև ուրիշ ժողովուրդներ, մասնավորապես մեծ դեր խաղացին պարսիկները: Իսլամական մշակույթը վերամշակեց և իր մեջ ներառեց զրադաշտական, հելլենական և քրիստոնեաբյուզանդական մշակույթների տարրեր:

Միջնադարյան իսլամական մշակույթը բաժանվում է երկու խոշոր փուլերի: Առաջինն ընդգրկում է **պարսկաարաբական շրջանը (VII–X դդ.)** և հայտնի է **Մուսուլմանական վերածնունդ** անունով: Մշակույթի զարգացման կարևոր կենտրոններ դարձան **Դամասկոսը, Բաղդադը, Ալեքսանդրիան:** Այս շրջանում ծաղկում էր ապրում ոչ միայն հոգևոր մշակույթը (իրավունք, աստվածաբանություն, գրականություն), այլև նյութականը՝ ճարտարապետություն, քաղաքաշինություն, նավագնացություն: Երկրորդ փուլն ընդգրկում է **արաբաիսպանական շրջանը (X–XIII դդ.),** երբ մշակութային կյանքի կենտրոնը տեղափոխվեց Արևմուտք: Մշակութային կյանքի կազմակերպման կարևոր կենտրոններ դարձան իսպանական քաղաքները՝ **Կորդովան, Տոլեդոն, Սևիլիան** և **Գրանադան:** Խալիֆայության տարածքում գոյություն ունեին 400–500 քաղաքներ, որոնք ոչ միայն տնտեսական և քաղաքական, այլև մշակութային կյանքի կենտրոններ էին:

VIII դ. արաբները չինացիներից սովորեցին թղթի արտադրությունը, ապա գրատպությունը: Նրանք հնդիկներից սովորեցին օգտագործել թվային համակարգը: Այստեղ նրանք ավելացրին «0» (զրո) նշանը, որը հնարավորություն տվեց ստանալու ցանկացած թվային մեծություն: Նրանց շնորհիվ հնդկական թվային համակարգը տարածվեց ողջ աշխարհում և ստացավ **արաբական** անվանումը:

Իսլամական միջնադարյան մշակույթը մեծ ազդեցություն թողեց համաշխարհային մշակույթի զարգացման վրա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ էին ապրում արաբական ցեղերը, ինչո՞վ էին զբաղվում: Ի՞նչ դեր և հետևանքներ ունեցավ իսլամը արաբների կյանքում:
2. Ինչպիսի՞ հասարակական հարաբերություններ էին Իրանում: Ի՞նչ դասերի էր բաժանված ազատ բնակչությունը: Կրոնական ի՞նչ ուղղություններ էին գերիշխող Իրանում: Ինչո՞ւ և ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց Խոսրով I–ը: Ե՞րբ Իրանը նվաճվեց արաբների կողմից:
3. Ո՞ր մշակույթներին բնորոշ գծեր ներառեց իսլամական մշակույթը և ի՞նչ խոշոր փուլերի է բաժանվում: Թվարկե՛ք իսլամական մշակույթի կարևոր կենտրոնները:

§ 5. ՔՈՉՎՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անհանգիստ քոչվորները: Հոները: Հնագույն ժամանակներից եվրասիական տափաստաններում՝ Բայկալ լճից մինչև Դոն գետն ընկած տարածքներում, ապրում էին քոչվորական տնտեսություն վարող զանազան ցեղեր: Քոչվորական տնտեսության հիմնական ճյուղը անասնապահությունն էր, և անասունների կերն ապահովելու համար քոչվորները անընդհատ տեղաշարժվում էին՝ իրենց հետ տանելով հոտերը: Տեղաշարժվող մարդիկ և անասունների հոտերը միասին կոչվում էին **հորդա:**

Միջնադարի նախօրյակին Եվրոպայի և Ասիայի հետագա ճակատագրի վրա առավել մեծ ազդեցություն ունեցան Բայկալ լճից մինչև Ուրալ գետն ընկած տարածքներում բնակվող թյուրքալեզու **հոների** տեղաշարժերը: Նրանք արշավանքներ կազմակերպեցին դեպի Չինաստան և Հնդկաստան ու ստեղծեցին իրենց պետությունները: IV դ. 70–ական թվականներին հոների այն մասը, որ հաստատվել էր մերձկասպյան տափաստաններում, շարժվեց դեպի Արևմուտք, որը դարձավ ժողովուրդների

մեծ գաղթի հիմնական պատճառը: Նրանք ջախջախեցին մերձսևծովյան շրջանում բնակություն հաստատած արևելյան գոթերին և 379 թ. առաջին անգամ ընդհարվեցին հռոմեացիների հետ:

Հոները հաստատվեցին **Պանոնիայում** (ժամանակակից Հունգարիա) և ստեղծեցին իրենց պետությունը, որն իր զարգացման գագաթնակետին հասավ Աթիլայի կառավարման ժամանակ (434–453 թթ.): Նրանք փորձեցին գրավել թուլացած Արևմտահռոմեական կայսրության տարածքները և **451 թ.** ներխուժեցին Գալլիա: Սակայն **Կատալաունյան դաշտում** տեղի ունեցած ճակատամարտում հռոմեացիները ծանր պարտության մատնեցին հոներին: Սա համարվում է համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցած կարևորագույն ճակատամարտերից մեկը, քանի որ որոշվեց ոչ միայն Գալլիայի, այլև Եվրոպայի հետագա ճակատագիրը:

452 թ. Աթիլան արշավեց Իտալիա, գրավեց մի շարք քաղաքներ, մասնավորապես Միլանը, սակայն վախենալով այստեղ բռնկված համաճարակից՝ հետ դարձավ: Նրա մահից հետո հոների տերությունը տրոհվեց: Հոները չկարողացան ճնշել հպատակ գերմանացիների ապստամբությունները, ուստի Պանոնիայից հեռացան դեպի Արևելք: Հետագայում նրանք ձուլվեցին թյուրքական այլ ցեղերի հետ և դուրս եկան պատմության թատերաբեմից:

Թյուրք–սելջուկները: Միջնադարում Եվրոպայի և Ասիայի երկրների ու ժողովուրդների ճակատագրերի վրա մեծ ազդեցություն թողեցին թյուրքալեզու քոչվորական ցեղերի տեղաշարժերը: Նրանք բնակվում էին Սիբիրի հարավային շրջաններում: Ժողովուրդների մեծ գաղթի շրջանում առանձին ցեղեր հայտնվեցին Փոքր Ասիայում: VII դ. վերջին թյուրքալեզու բուլղարները անցան Դանուբ գետը և հաստատվեցին Բալկանյան թերակղզում: Սակայն նրանք արագ ձուլվեցին տեղի սլավոնների հետ՝ պատմությանը հանձնելով միայն իրենց անվանումը:

Թյուրքալեզու ցեղերի ներթափանցումը Առաջավոր Ասիա մեծ չափերի հասավ XI դ., երբ թյուրք–օղուզները սելջուկյան տոհմի գլխավորությամբ գրավեցին Պարսկաստանը և շարժվեցին դեպի Արևմուտք: **1055 թ.** թյուրք–սելջուկները գրավեցին Արաբական խալիֆայության մայրաքաղաք Բաղդադը: Խալիֆան նրանց առաջնորդ Տուղրիլ բեկին շնորհեց «Արևելքի և Արևմուտքի սուլթան» տիտղոսը: Այսպես ստեղծվեց սելջուկների տերությունը: 1071 թ. նրանք ծանր պարտության մատնեցին Բյուզանդիային և ձեռնամուխ եղան Փոքր Ասիայի, Ասորիքի և Պաղեստինի նվաճմանը: Այդ ժամանակ նրանց թիվը կազմում էր շուրջ 1 միլիոն: XI դ. վերջին թյուրքական ցեղերը կարողացան նվաճել համարյա ողջ Փոքր Ասիան և **1075 թ.** այստեղ հիմնեցին իրենց պետությունը՝ **Իկոնիայի սուլթանությունը:** Իկոնիայի սուլթանները կրում էին Ռումի սուլթաններ անվանումը, այսինքն՝ հավակնում էին յուրացնել բյուզանդական կայսրերի իրավունքները: Նրանց հաջողվեց ձուլել Փոքր Ասիայում ապրող տեղական բնակչությանը, մասնավորապես հույների և հայերի մի մասին: Այսպես ձևավորվեց նոր ազգ, որը ստացավ **թուրք** անվանումը:

Իկոնիայի սուլթանությունում առաջացան հասարակության կազմակերպման յուրօրինակ կառույցներ: Պետության կառավարման գործում մեծ դեր էին խաղում պարսիկները, քանի որ թյուրք–սելջուկները կառավարման փորձ չունեին: Հույները և հայերը հիմնականում զբաղվում էին հողագործությամբ, արհեստներով և առևտրով: Թյուրք բնակչությունը երկար ժամանակ զբաղվում էր քոչվորական անասնապահությամբ: Ցեղի բոլոր անդամները, այդ թվում՝ կանայք, մշտապես զենք էին կրում հարևանների հարձակումներից պաշտպանվելու, իսկ հնարավորության դեպքում՝ նոր տարածքներ նվաճելու համար: Մոնղոլական արշավանքները այնպիսի հարված հասցրին Իկոնիայի սուլթանությանը, որ նա այլևս ուշքի չեկավ: Սակայն նրա փլատակների վրա ստեղծվեց մի այլ թուրքական պետություն՝ Օսմանյան կայսրությունը:

Մոնղոլական տերությունը: Հնագույն ժամանակներից Կենտրոնական Ասիայի տափաստաններում բնակվում էին քոչվոր անասնապահ մոնղոլական ցեղեր: Նրանք զբաղեցրել էին լայնարձակ տարածքներ՝ Բայկալ լճից մինչև Ենիսեյ գետ և Հարավային Սիբիրից մինչև Չինական մեծ պարիսպ: XI–XII դդ. մոնղոլական ցեղերի մոտ սկսվում են քայքայվել տոհմատիրական կարգերը և ձևավորվել վաղ ավատատիրական պետություն:

Մոնղոլական պետության ստեղծումը կապված է **Թեմուչինի** (1155–1227 թթ.) գործունեության հետ: Նա զենքի ուժով կարողացավ միավորել մոնղոլական տարբեր ցեղերի՝ նայմաններին, թաթարներին, և ստեղծեց մոնղոլական առաջին պետությունը: **1206 թ.** հրավիրվեց համամոնղոլական առաջին **ղուրուլթայը** (համագումար),

որին մասնակցում էին բոլոր ցեղերի ներկայացուցիչները: Այստեղ Թեմուչինը հռչակվեց համամոնղոլական տիրակալ՝ ստանալով **Չինգիզ խան** անունը: Նա անցկացրեց ռազմավարչական բարեփոխումներ, որոնց գլխավոր նպատակն էր ստեղծել մշտական և ուժեղ բանակ: Պետության ստորին վարչական միավորն ընտանիքների այն խումբն էր, որը պետությանը կարող էր տրամադրել 10 զինվոր: Այնուհետև գալիս էին այն միավորները, որոնք տրամադրում էին 100, ապա՝ 1000 և վերջապես՝ 10 հազար զինվոր: Սա հնարավորություն տվեց մոնղոլական բանակը հասցնելու մինչև 95 հազարի և ձեռնամուխ լինելու լայնածավալ տարածքների նվաճմանը: 1215 թ. նրանք գրավեցին Հյուսիսային Չինաստանը: 1221 թ. մոնղոլներին հաջողվեց տիրանալ համարյա ողջ Կենտրոնական Ասիային: Չինգիզ խանի հաջորդները գրավեցին նաև Ռուսիան, Իրանը, Հայաստանը, Միջագետքը և Փոքր Ասիայի մեծ մասը: 1258 թ. նրանք գրավեցին Բաղդադը: Աբասյանների խալիֆայությունը դադարեց գոյություն ունենալուց:

Մոնղոլական տերության տարածքը ձգվում էր Խաղաղ օվկիանոսից մինչև Միջերկրական ծով: Տերության գլուխ կանգնած էր մեծ խանը, որը սկզբում նստում էր **Կարակորումում**, իսկ XIII դ. վերջին՝ Պեկինում: Կայսրությունը բաժանված էր հինգ **ուլուսների** (փոխարքայություն): Չորրորդ ուլուսի մեջ մտնում էին Իրանը, Իրաքը, Հայաստանը, Կովկասը, Փոքր Ասիան: Մայրաքաղաքը Թավրիզն էր: Մոնղոլները սովորաբար նվաճված երկրներում կառավարումը թողնում էին տեղացիների ձեռքում այն պայմանով, որ նրանք կատարեին ռազմական և հարկային պարտավորություններ: Զենքի ուժով ստեղծված մոնղոլական կայսրությունը, որը ներառում էր զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող ժողովուրդներ, չէր կարող երկար գոյատևել և արդեն XIII դ. վերջին տրոհվեց անկախ պետությունների:

Օսմանյան կայսրությունը: Իկոնիայի սուլթանության թուլացման շրջանում նրա տարածքում առաջացան թուրքական մի շարք ինքնուրույն իշխանություններ, որոնցից մեկը, Փոքր Ասիայի արևմուտքում, հիմնադրեց **Օսման Բեյը** (1299–1326 թթ.): 1299 թ. նա իրեն անկախ հայտարարեց սելջուկյան սուլթանից և մոնղոլներից ու օգտվելով նպաստավոր պայմաններից՝ սկսեց նոր տարածքներ նվաճել: 1326 թ. նրանք գրավեցին լավ ամրացված Բրուսա բերդաքաղաքը, և

Սուլթան Մուրադ I

այն դարձրին մայրաքաղաք: Արդեն XIV դ. առաջին կեսին օսմանյան թուրքերը կարողացան գրավել Փոքր Ասիայի ռազմական և տնտեսական կարևոր շրջանները: 1352 թ. թուրքերն անցան Դարդանելի նեղուցը և սկսեցին Բալկանյան թերակղզու նվաճումը: Մուրադ I–ը (1359–1389 թթ.), որն ընդունել էր սուլթանի տիտղոս, գրավեց **Ադրիանապոլիս** քաղաքը և մայրաքաղաքը տեղափոխեց այնտեղ:

Նվաճումները շարունակելու և հպատակ ժողովուրդներին հնազանդության մեջ պահելու համար անցկացվեցին ռազմական բարեփոխումներ: Ստեղծվեց ենիչերիների կորպուսը, որը հավաքագրվում էր հպատակ քրիստոնյա ժողովուրդներից: Քրիստոնյա ընտանիքներից վերցնում էին ամուր և առողջ տղաներին ու երկար տարիներ ռազմական գործ սովորեցնում: Երբ լրանում էր նրանց 20 տարին, ուղարկում էին բանակ: Նրանք ընտանիք չունեին և ապրում էին զորանոցներում, իսկ գոյության միակ միջոցը պատերազմն էր և թալանը:

Օսմանյան թուրքերը շուտով գրավեցին Մակեդոնիան, Սերբիան, Բուլղարիան, իսկ 1453 թ.՝ Կոստանդնուպոլիսը: Այնուհետև նրանք նվաճեցին Միջագետքը, Ասորիքը, Պաղեստինը, Հյուսիսային Աֆրիկան, Ղրիմը և Կովկասի արևմտյան մասը: Օսմանյան կայսրությունը իր տարածքով համընկնում էր Արաբական խալիֆայության հետ:

Պետության գլուխ կանգնած էր բարձրագույն

Ենիչերի

իշխանությամբ օժտված սուլթանը, որը համարվում էր «Աստծո ստվերը երկրի վրա»: Նրանից հետո առաջին դեմքը համարվում էր մեծ վեզիրը, որը տնօրինում էր քաղաքացիական և ռազմական գործերը: Կարևոր հարցեր քննարկելու համար հրավիրվում էր Բարձրագույն խորհուրդ (դիվան), որի բոլոր անդամներին նշանակում էր սուլթանը:

Մեհմեդ II–ի օրոք ընդունվեց պետության առաջին օրենսգիրքը՝ «Կանուն–նամե», որը բաղկացած էր չորս մասերից, և օրինականացրեց ձևավորված ռազմաավատական համակարգը: Ավատը տրվում էր միայն ռազմական ծառայության դիմաց: XVI դ. Օսմանյան տերությունը բաժանված էր 16 մարզերի (էյալեթ, նահանգ), որոնց գլուխ կանգնած էին անսահմանափակ իշխանությամբ օժտված բեյլերբեյերը: Էյալեթները բաղկացած էին սանջակներից (շրջան): Այդ ժամանակ գոյություն ունեին 250 սանջակներ, որոնց կառավարիչները կոչվում էին սանջակբեյեր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր տարածքներում էին բնակվում քոչվոր ցեղերը, և ո՞րն էր նրանց հիմնական զբաղմունքը: Ովքե՞ր էին հոները. ե՞րբ և որտե՞ղ ստեղծեցին իրենց պետությունը: Ի՞նչ ճակատագիր ունեցան հոները:
2. Որտե՞ղ էին բնակվում թյուրքալեզու ցեղերը: Ներկայացրե՛ք Սելջուկյան տերության ստեղծման պատմությունը: Ե՞րբ է այն կործանվել:
3. Ի՞նչ տարածքներ էին զբաղեցնում մոնղոլական ցեղերը: Ե՞րբ և ո՞վ է ստեղծել մոնղոլական պետությունը: Ներկայացրե՛ք Մոնղոլական տերության տարածքը:
4. Ե՞րբ և ո՞վ է հիմնադրել Օսմանյան պետությունը: Ներկայացրե՛ք Օսմանյան պետության կառավարման համակարգը:

§ 6. ՄԻՆՉԿՈԼՈՒՄԲՈՍՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ

Մայաներ: Երբ եվրոպացիները հայտնվեցին Ամերիկայում, այստեղ ապրում էին շուրջ 15–20 մլն տեղաբնիկներ: Քանի որ սկզբում եվրոպացիները կարծում էին, թե Ամերիկան Հնդկաստանն է, տեղաբնիկներին անվանեցին հնդկացիներ: Սրանք զարգացման տարբեր աստիճանների վրա էին: Նրանց մի մասը ապրում էր տոհմացեղային հասարակարգի տարբեր փուլերում և զբաղվում էր որսորդությամբ ու ձկնորսությամբ, իսկ մյուսները, մասնավորապես **մայաները, ացտեկները, ինկերը** արդեն ստեղծել էին պետություններ և նստակյաց հողագործներ էին:

Մայաները բնակվում էին **Յուկատան թերակղզում:** Մայա ժողովուրդը բաղկացած էր մի քանի ցեղախմբերից: Այդ պատճառով նրանք ստեղծեցին ոչ թե մեկ միասնական պետություն, այլ մի շարք քաղաք–պետություններ: Նրանց քաղաքակրթությունը իր զարգացման բարձրակետին հասավ X–XVI դդ.: Սովորաբար քաղաքը՝ իր շրջակա գյուղական համայնքների հետ միասին, կազմում էր քաղաք–պետություն: Քաղաքի

կենտրոնում մայաները կառուցում էին բարձր բուրգ, որը շրջապատված էր լայնարձակ հրապարակով: Բուրգի գագաթին կառուցում էին տաճար:

Մայաները նստակյաց հողագործներ էին, և սոցիալական միջավայրի կազմակերպման հիմնական ձևը համայնքն էր, որը կազմված էր առանձին ընտանիքներից: Համայնքը համարվում էր հողի սեփականատերը, և ըստ շնչերի՝ հողը բաժանվում էր ընտանիքների միջև: Յուրաքանչյուր ընտանիք հողը մշակում և բերքը հավաքում էր ինքնուրույն, և սահմանված հարկերը վճարելուց հետո բերքի մնացած մասը մնում էր իրեն: Մայաները անասնապահությամբ չէին զբաղվում և ընտանի կենդանիներ չէին պահում: Միակ կենդանին, որ նրանք պահում էին, շունն էր, որի միսն օգտագործում էին որպես սննդամթերք: Միսը համարվում էր տոնական–ծիսակարգային ուտեստ, ուստի օգտագործում էին միայն այդ ժամանակ: Կենդանական ծագում ունեցող սննդամթերք ձեռք էին բերում որսորդությամբ և ձկնորսությամբ:

Մայաների հասարակության մեջ գոյություն ուներ սոցիալական և քաղաքական աստիճանակարգություն: Ամենավերին աստիճանին կանգնած էին քուրմ–թագավորը, զորահրամանատարները, քրմերը և նվաճված տարածքների կառավարիչները: Երկրորդ աստիճանը զբաղեցնում էին զինվորները: Հաջորդ աստիճանը զբաղեցնում էին գյուղացիները, առևտրականները և արհեստավորները, որոնք հարկեր էին վճարում, բայց ազատ էին: Ստորին աստիճանը զբաղեցնում էին ստրուկները:

Մայաները մինչկոլումբոսյան Ամերիկայում ապրող միակ ժողովուրդն էին, որոնց հաջողվել էր ստեղծել հիերոգլիֆային գիր: Ուսումնասիրելով Երկրի պտույտը Արեգակի շուրջը՝ մայա աստղաբաշխները և մաթեմատիկոսները ստեղծեցին օրացույց, որը բաղկացած էր 365 օրից: Այն ուներ 18 ամիս, յուրաքանչյուրը՝ 20 օր: Լրացուցիչ 5 օրը համարում էին վատ օրեր, ուստի մայաները աշխատում էին այդ օրերին ոչինչ չանել, նույնիսկ հաց չուտել: Մյուս՝ 360 օրերից բաղկացած օրացույցը կազմել էին կրոնական տոների, ծեսերի և գուշակությունների համար:

1526–1546 թթ. իսպանացիները նվաճեցին մայաների բոլոր քաղաք–պետությունները:

Ացտեկներ: XII դ. ացտեկները հաստատվեցին **Մեխիկոյի** հովտում: 1325 թ. այստեղ նրանք կառուցեցին իրենց մայրաքաղաք **Տենոչտիտլանը:** Այն ուներ 3 քառակուսի կիլոմետր տարածք, իսկ բնակչության թիվը հասնում էր 75 հազարի: Քաղաքն ուներ 4 թաղամաս, որոնք խորհրդանշում էին աշխարհի չորս կողմերը, և 20 փոքր թաղամասեր, որոնք խորհրդանշում էին ացտեկների բաժանումը 20 ցեղերի և 20 տոհմերի: Գրավելով շրջակա տարածքները՝ նրանք XV դ. սկզբին հիմնեցին իրենց պետությունը, որն իր հզորության գագաթնակետին հասավ **Մոնթեսումա II–ի** գահակալման (1502–1520 թթ.) ժամանակ:

Ացտեկների հիմնական զբաղմունքը նստակյաց հողագործությունն էր: Նրանք սովորել էին ոռոգել հողերը և չորացնել ճահիճները: Հիմնականում մշակում էին եգիպտացորեն, դդում, ծխախոտ, բամբակ, կակաո: Անասնապահությունը զարգացած չէր: Միակ ընտանի կենդանին շունն էր, որի միսն օգտագործում էին: Սակայն նրանք պահում էին ընտանի թռչուններ՝ հնդկահավ, սագ, բադ: Ացտեկների մոտ բարձր զարգացման էր հասել արհեստագործությունը, մասնավորապես ջուլհակությունը, ոսկերչությունը:

Ացտեկների հասարակության մեջ լայն տարածում ուներ ստրկությունը, ընդ որում՝ ստրուկներ ունեին ոչ միայն գյուղական համայնքները, այլև մասնավոր անձիք: Ստրուկների մեծ մասը նախկին ռազմագերիներն էին, սակայն ստրկացնում էին նաև պարտքերը չվերադարձնողներին: Աղքատները նույնպես կարող էին իրենց և երեխաներին վաճառել ստրկության:

Պետության գլուխ կանգնած էր գերագույն իշխանությամբ օժտված թագավորը: Հասարակության մեջ ձևավորվել էր սոցիալ–քաղաքական յուրօրինակ աստիճանակարգություն: Ամենավերին աստիճանին կանգնած էին ազնվականները՝ թագավորի գլխավորությամբ: Քաղաքներում բնակվելու իրավունք ունեին միայն նրանք: Հաջորդ աստիճանը զբաղեցնում էին գյուղացիները, առևտրականները և արհեստավորները, որոնք բնակվում էին գյուղերում և արվարձաններում:

Ացտեկների մոտ ամենահարգի զբաղմունքը ռազմական ծառայությունն էր: Հպատակներին հնազանդության մեջ պահելու և նոր տարածքներ գրավելու համար ացտեկները կանոնավոր և ուժեղ բանակի կարիք ունեին: Նրանք հավատում էին, որ պատերազմի դաշտում զոհվածները գնում են աստվածների հետ երկնքում ապրելու: Ացտեկների բանակը կազմված էր առանձին զորամասերից, որոնցից ամենահեղինակավորը արծվի զինվորներն էին և հովազի զինվորները: Առաջինի նշանը արծվի փետուր էր, իսկ երկրորդինը՝ հովազի մորթի:

ՄԻՆՉԿՈԼՈՒՄԲՈՍՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ

Ացտեկների առաջնորդ Մոնթեսուման

Ացտեկների կրոնական արարողությունների անբաժան մասն էր կազմում մարդկային զոհաբերությունը:

1519 թ. իսպանացի կոնկիստադոր Կորտեսը, որն ուներ 550 զինվոր, 16 ձի և 14 թնդանոթ, ափ իջավ Կենտրոնական Մեքսիկայում: Մոնթեսումա թագավորը մեծ քանակությամբ ոսկի և արծաթ նվիրեց նրան՝ կարծելով, որ կվերցնի և կհեռանա: Սակայն Կորտեսը չհեռացավ և իր զորքերի հետ մնաց մայրաքաղաքում: Վեց ամիս անց չդիմանալով իսպանացիների վայրագություններին՝ ացտեկները ապստամբություն բարձրացրին: Մոնթեսուման սպանվեց, սակայն իսպանացիները ևս վտարվեցին: Շուտով նրանք ացտեկներին թշնամի մի քանի ցեղերի հետ պաշարեցին մայրաքաղաքը և **1521 թ.** գրավեցին: Այսպես կործանվեց ացտեկների տերությունը:

Ինկեր: Ինկերի պետությունը ժամանակակից Պերուի և Բոլիվիայի լեռնային շրջաններում էր: **Ինկա** բառը սկզբում Կուսկոյի հովտում ապրող ցեղերից մեկի անվանումն էր: XV դ. ինկերը սկսեցին նվաճողական քաղաքականություն վարել, որի արդյունքում նրանց պետությունը չորս անգամ մեծացավ, իսկ բնակչության թիվը հասավ 6 միլիոնի: Պետության գլուխ կանգնած էր Բարձրագույն Ինկան, որին կոչում էին Սապա Ինկա: Այստեղից էլ պետությունը ստացավ Ինկեր անվանումը: Այն իր հզորության բարձրակետին հասավ **Սապա Ինկա Պաչակուտիի** (1438–1471 թթ.) կառավարման տարիներին: Ինկերի կայսրության մայրաքաղաքը **Կուսկոն** էր, որն ուներ շուրջ 200 հազար բնակչություն: Այստեղ էր ինկերի գերագույն աստծո՝ Արևի տաճարը: Ինկերի կրոնական կյանքում մեծ տեղ էր զբաղեցնում աստվածների համար կենդանիների զոհաբերությունը: Ի տարբերություն մայաների և ացտեկների՝ նրանք միայն ճգնաժամային (ջրհեղեղ, երաշտ, սով, համաճարակ) պահերին էին մարդկային զոհեր մատուցում: Քրմապետի գործառույթները իրականացնում էր Սապա Ինկան:

Ինկերի հասարակությունը բաղկացած էր առանձին ներփակ խմբերից՝ կաստաներից: Բոլոր ինկերը մտնում էին բարձրագույն կաստայի մեջ. նրանք չէին աշխատում և հարկեր չէին վճարում: Պետությունը նրանց հողատարածքներ էր տրամադրում և ստրուկներ՝ դրանք մշակելու համար: Ինկերի մեծ մասը զբաղվում էր զինվորական ծառայությամբ, իսկ մյուսները՝ կառավարման և կրոնական գործառույթներով: Հաջորդ

Մաչու–Պիկչու. ինկերի քաղաքը, Պերու

կաստայի մեջ մտնում էին նվաճված ցեղերի ազնվականները, որոնց հողերը մշակում էին գյուղացիները: Նվաճված ցեղերի գյուղացիները և արհեստավորները կազմում էին առանձին կաստա: Նրանք կարող էին տեղաշարժվել միայն կառավարության համաձայնությամբ: Պետությունն էր որոշում, թե նրանք երբ և ում հետ պետք է ամուսնանային, քանի որ ամուսնական զույգերին առանձին հողաբաժին էր հասնում:

Տնտեսության հիմքը հողագործությունն էր: Ինկերը մշակում էին 40 տեսակի բույսեր, մասնավորապես կարտոֆիլ, դդում: Բերքահավաքը հսկում էին հատուկ պաշտոնյաները, որովհետև բերքը հավասարապես բաժանվում էր բնակչությանը, իսկ մի մասը թողնվում էր պետությանը: Նույնը կատարվում էր նաև արհեստագործական արտադրանքի հետ, այդ պատճառով առևտուրը թույլ էր զարգացած: Հպատակ ցեղերին հնազանդության մեջ պահելու համար ինկերը ստեղծեցին մարտունակ բանակ: Բանակ զորակոչելու համար սահմանվել էր փորձաշրջան: Տղաների խմբին տանում էին ձյունապատ լեռան գագաթ և այնտեղ թողնում էին ինը օր առանց զենքի և սննդամթերքի: Ժամկետը լրանալուց հետո նրանց հետ էին բերում: Շատերը այդ փորձությանը չէին դիմանում և մահանում էին:

1532 թ. իսպանացի կոնկիստադոր **Պիսարոն** 130 հոգուց բաղկացած ջոկատով ափ իջավ ինկերի պետության հյուսիսում: Խաբեությամբ նա ձերբակալեց Սապա Ինկային և փրկագին պահանջեց: Նրան տվեցին 24 տոննա ոսկի և արծաթ, բայց նա Սապա Ինկային խեղդամահ արեց: Մինչև 1536 թ. իսպանացիները կարողացան գրավել ինկերի պետությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր էին հնդկացիները: Ինչո՞վ էին նրանք զբաղվում: Ի՞նչ գիտեք մայաների մասին: Ինչո՞վ էին մայաները տարբերվում մյուս հնդկացիներից:
2. Համառոտ պատմե՛ք ացտեկների մասին: Ներկայացրե՛ք ացտեկների հասարակության սոցիալական կառուցվածքն ու զբաղմունքը:
3. Ովքե՞ր էին ինկերը: Ներկայացրե՛ք ինկերի պետության կառուցվածքը: Համեմատե՛ք մինչկոլումբոսյան Ամերիկայի բնիկներին. նշե՛ք նրանց միջև եղած ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ Դ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՇԵՄԻՆ

§1. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՇԵՄԻՆ

Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և դրանց հետևանքները: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները, որոնք հիմնականում կատարվեցին XV դ. կեսերից մինչև XVIII դ. կեսերը, շրջադարձային ազդեցություն ունեցան համաշխարհային պատմության հետագա ընթացքի վրա:

Աշխարհագրական հայտնագործությունների սկիզբը դրեցին Պորտուգալիան և Իսպանիան: Ազատագրվելով արաբական տիրապետությունից՝ պորտուգալացիները XIV–XV դդ. նրանց դեմ պայքարը շարունակեցին Հյուսիսային Աֆրիկայում: Նրանց կատարած աշխարհագրական հայտնագործությունների առաջին փուլը կապված էր արքայազն **Էնրիկե Ծովագնացի** գործունեության հետ: Պորտուգալացիները հայտնագործեցին Կանարյան և Ազորյան կղզիները, իսկ 1486 թ. հասան Աֆրիկայի հարավում գտնվող Բարեհուսո հրվանդանը:

Դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհի որոնմանը սկսեցին մասնակցել նաև իսպանացիները: Այդ նպատակով նրանք 1492 թ. կազմակերպեցին արշավախումբ, որը ղեկավարում էր **Քրիստափոր Կոլումբոսը:** Սակայն արշավախումբը հայտնագործեց ոչ թե Հնդկաստան տանող ծովային ճանապարհը, այլ նոր մայրցամաք: Հետագայում այն կոչվեց Ամերիկա՝ ի պատիվ Ամերիգո Վեսպուչիի, որն առաջինը կարծիք հայտնեց, որ Կոլումբոսը հայտնագործել է նոր մայրցամաք: 1498 թ. պորտուգալացի ծովագնաց **Վասկո դա Գամայի** արշավախումբը, շրջանցելով Աֆրիկան, հասավ Հնդկաստան: 1519–1521 թթ. Մագելանի արշավախումբը կատարեց ծովային առաջին շուրջերկրյա նավարկությունը: Հետագայում կատարված հայտնագործություններից կարևոր էին Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայտնագործումները:

Մինչև աշխարհագրական մեծ հայտնագործությունները Արևմուտք–Արևելք ճանապարհները անցնում էին Միջերկրական ծովով և Առաջավոր Ասիայով: Թուրքական նվաճումների պատճառով առևտրական ճանապարհները փակվեցին, ուստի եվրոպացիները փորձեցին գտնել այլ ուղիներ: Արևելք տանող ծովային ճանապարհի հայտնագործումից հետո առևտրական ուղիները Միջերկրական, Հյուսիսային և Բալթիկ ծովերից տեղափոխվեցին Ատլանտյան, Հնդկական և Խաղաղ օվկիանոսներ: Եվրոպայի կապերը Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի հետ դարձան մշտական, բազմաբնույթ:

Հայտնագործված երկրները յուրացնելու համար եվրոպացիները դրանք վերածում էին գաղութների: Առաջին գաղութային կայսրությունները ստեղծեցին Պորտուգալիան և Իսպանիան: Հետագայում գաղութներ հիմնեցին նաև Հոլանդիան, Անգլիան և Ֆրանսիան: Գաղութներից Եվրոպա էին բերում գյուղատնտեսական մթերքներ, համեմունքներ, ոսկի, արծաթ: 1521–1660 թթ. Ամերիկայից Իսպանիա տեղափոխվեց 18 հազար տոննա արծաթ և 200 տոննա ոսկի: Տեղաբնիկների շահագործման և գաղութների թալանի արդյունքում Եվրոպայի առևտրականների ձեռքում մեծ քանակությամբ հարստություն կուտակվեց:

Աշխարհագրական մեծ հայտնագործություններն ունեցան նաև բացասական հետևանքներ, քանի որ եվրոպացիները կործանեցին մի շարք հին քաղաքակրթություններ և խախտեցին այդ երկրների ու ժողովուրդների բնականոն զարգացումը:

Սոցիալական միջավայրի վերակառուցումը: XVI դ. Եվրոպայի սոցիալական միջավայրի կազմակերպման հիմնական առանձնահատկությունն այն էր, որ տնտեսությունն ուներ անցումային բնույթ, այսինքն՝ հինը և ձևավորվող նոր երևույթները զուգահեռաբար գոյատևում էին: Աշխատանքի գործիքները, աշխատանքի կազմակերպման եղանակները, սեփականության ձևերը և արտադրողի գիտելիքները դեռևս պահպանում էին միջնադարի հիմ-

նական հատկանիշները: Սակայն սա երկրագործական քաղաքակրթության վերջին փուլն էր, ուստի նրա շրջանակներում ձևավորվում էին այն երևույթները, որոնց հիման վրա տեղի ունեցավ արդյունաբերական հեղաշրջումը:

Նոր երևույթների ձևավորումը ամենից առաջ կապված էր արտադրության կազմակերպման և ֆինանսավորման հետ: Աշխատանքի գործիքների կատարելագործումը կատարվում էր լեռնահանքային արդյունաբերության, մետաղագործության, նավաշինության, գրատպության, զենքի արտադրության բնագավառներում: Սակայն գյուղատնտեսությունը շարունակում էր մնալ տնտեսության առաջատար ճյուղը: Չնայած տեխնիկական նորամուծություններին՝ գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ դեռևս գերակշռում էր ձեռքի աշխատանքը, ուստի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր էին ոչ միայն աշխատուժի առկայությունը, այլև աշխատողի մասնագիտական հմտությունները: Մոտավոր հաշվումներով՝ Եվրոպայի բնակչությունը XVI դարի ընթացքում մոտ 100 միլիոնից հասավ 180 միլիոնի:

Արդեն XVI դ. Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում կարողացան հաղթահարել XIV դ. ճգնաժամը: Չնայած XVI դ. եռաղաշտային համակարգը հողագործության մեջ դարձավ տիրապետող, որը բարձրացրեց բերքատվությունը, սակայն Եվրոպայի երկրների մի մասը, մասնավորապես Իսպանիան և Նիդերլանդներն ստիպված էին հացահատիկ ներմուծել: Սա պարտադրում էր գտնել հողի մշակման արդյունավետ եղանակներ: Սրանց թվում էին գյուղատնտեսական գործիքների տեխնիկական կատարելագործումը և հողի պարարտացումը: Որպես պարարտանյութ հիմնականում օգտագործում էին գոմաղբը, որն իր հերթին խթանում էր անասնապահության զարգացումը:

XVI դ. արդյունաբերության մեջ ևս գերակշռում էր ձեռքի աշխատանքը: Լայն սպառման առարկաները՝ հագուստ, կոշիկ, արտադրում էին անհատ արհեստավորները: Աշխատանքի արտադրողականությունը այստեղ կապված էր աշխատանքի գործիքների կատարելագործման և աշխատանքի բաժանման հետ: XVI դ. արդեն հաշվվում էին շուրջ 100 արհեստներ: Համքարությունը շարունակում էր մնալ որպես արհեստի կազմակերպման հիմնական ձև: Սակայն նրա սահմանած կանոնները արտադրանքի տեսակի, որակի, չափի վերաբերյալ խոչընդոտում էին արտադրության հետագա զարգացմանը: Անհատ արհեստավորների կազմակերպած արտադրությունը այլևս չէր բավարարում հասարակության պահանջմունքները: Անհրաժեշտ էր կազմակերպել արտադրության նոր եղանակներ: Այդպիսին դարձավ մանուֆակտուրան (ձեռագործարանը): Դա ձեռնարկություն էր, որտեղ աշխատում էին վարձու բանվորներ և իրենց աշխատանքի դիմաց աշխատավարձ էին ստանում: Այստեղ ևս աշխատանքը հիմնականում ձեռքով էր կատարվում: Օգտագործում էին միայն այնպիսի պարզունակ մեխանիզմներ, ինչպիսիք էին ջրանիվը, ճախարակը և ջուլհակի հաստոցը:

Մանուֆակտուրային արտադրություն կազմակերպելու համար անհրաժեշտ էին դրամական մեծ միջոցներ: Այդ ժամանակ այդպիսի միջոցներ կային առևտրականների ձեռքին և կոչվում էին առևտրական կապիտալ: Նրանք իրենց մոտ կուտակված կապիտալի մի մասը հանեցին առևտրական շրջանառությունից և ներդրեցին գյուղատնտեսության ու մանուֆակտուրային արտադրություն կազմակերպելու մեջ: Սկզբում առաջանում էին լայն սպառման ապրանքներ արտադրող մանուֆակտուրաներ, իսկ հետագայում՝ նավաշինական, մետաղամշակման, լեռնարդյունաբերական, տպագրական:

Բացարձակ միապետությունը: XV դ. վերջին և XVI դ. սկզբին Արևմտյան Եվրոպայի երկրների քաղաքական միջավայրի կազմակերպման և կառուցվածքի մեջ տեղի ունեցան փոփոխություններ: Ֆրանսիայում, Անգլիայում և Իսպանիայում ավարտվում են քաղաքական վերամիավորման գործընթացները: Այն շրջաններում, մասնավորապես Գերմանիայում, Իտալիայում, որտեղ քաղաքական մասնատվածությունը պահպանվեց, ձևավորվում էին առանձին իշխանական կենտրոններ:

Սոցիալական և քաղաքական տեղաշարժերի արդյունքում ձևավորվեց նոր իշխանություն: Թագավորական իշխանությանը հաջողվեց ճնշել կենտրոնախույս խոշոր ավատատերերի դիմադրությունը և այն աստիճանի ուժեղանալ, որ պետության կառավարման համար շատ ժամանակ դասային ներկայացուցիչների ժողով չէր գումարվում: Հաստատվեց այնպիսի համակարգ, երբ միապետի անձնական իշխանությունը ոչնչով չէր սահմանափակվում: Պետության այս ձևը ստացավ **բացարձակ** (անսահմանափակ) **միապետություն** անվանումը: Դրա անհրաժեշտությունը և օրինականությունը հիմնավորում էին նրանով, որ թագավորական իշխանությունը աստվածային ծագում ունի, ուստի մի-

ապետի ինքնիշխանությունը անբաժանելի է: Չենթարկվել նրան նշանակում է չենթարկվել Աստծո կամքին:

Բացարձակ միապետության առաջացման հիմնական պատճառը միջնադարյան երեք դասերի (ազնվականներ, հոգևորականներ, քաղաքացիներ) ներսում կատարված փոփոխություններն էին: Ազնվականությունը՝ որպես ռազմաքաղաքական խավ, կորցրեց իր նշանակությունը: Նրա մեծ մասի գոյության հիմնական աղբյուրը բարձր վարձատրվող պաշտոններն էին, որոնց նշանակումը միապետի ձեռքում էր: Սա ստիպում էր ազնվականներին հնազանդորեն ենթարկվել միապետի կամքին: Հոգևորականների դերը պետության կառավարման գործում ևս փոխվեց: Կաթոլիկ եկեղեցու դիրքերի թուլացումը, եկեղեցու ենթարկումը պետությանը, Ռեֆորմացիան և աշխարհիկ մտավորական խավի առաջացումը կախման մեջ դրեցին հոգևորականներին միապետից: Պետության հովանավորության կարիքը ամենից շատ զգում էին առևտրականները և արդյունաբերողները, ուստի նրանք համախմբվեցին միապետի շուրջը: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ թագավորը յուրացրեց անսահմանափակ իշխանություն: Իրական իշխանությունը միապետի գլխավորությամբ կենտրոնացավ մի խումբ մարդկանց ձեռքում: Նրանք մտնում էին թագավորին կից գործող գաղտնի խորհրդի մեջ, որն էլ իրականացնում էր երկրի կառավարումը: Նա զբաղվում էր պետության արտաքին քաղաքականությամբ, ֆինանսներով, տնտեսությամբ, բանակով: Գաղտնի խորհրդի հիման վրա էլ հետագայում ձևավորվեց նախարարների խորհուրդը (կաբինետը):

Հարցեր և առաջադրանքներ

1. Որոնք էին աշխարհագրական մեծ հայտնագործությունների պատճառները: Ովքե՞ր սկզբնավորեցին այն: Ներկայացրե՛ք աշխարհագրական մեծ հայտնագործությունների դրական և բացասական հետևանքները:
2. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին նոր ժամանակների շեմին տնտեսության գլխավոր ճյուղերում: Աղյուսակի տեսքով ներկայացրե՛ք այդ փոփոխությունները:
3. Նոր ժամանակների սկզբին կառուցվածքային ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Արևմտյան Եվրոպայի ներքաղաքական կյանքում: Որո՞նք էին դրանց պատճառները և հետևանքները:

§ 2. ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ

Ռեֆորմացիան: XVI դ. Եվրոպայի մեծ մասում շարժում սկսվեց, որը հայտնի է Ռեֆորմացիա (վերափոխում) անունով՝ հռոմեակաթոլիկական եկեղեցում բարեփոխումներ անցկացնելու համար: Այն ոչ միայն քննադատում էր եկեղեցու արատները, այլև պահանջում էր վերափոխել եկեղեցին և նրա կառույցները: Ռեֆորմացիան սկսվեց **1517 թ. հոկտեմբերի 31-ին** Գերմանիայի Վիտենբերգ քաղաքում Մարտին Լյութերի 95 դրույթներով:

XVI դ. սկզբին Հյուսիսային Գերմանիայում ինդուլգենցիաների (մեղքերի թողության թղթեր) վաճառքը հանձնարարվել էր Դոմինիկյան միաբանության վանականներին, որոնց դեմ էլ հանդես եկավ Լյութերը: Նա գտնում էր, որ Հռոմի պապը իրավունք չունի մեղքերին թողություն տալու, քանի որ դրանք կարելի է քավել ոչ թե թուղթ գնելով, այլ տանջանքներով: Նրա կարծիքով՝ պապը իրավունք չունի խառնվելու աշխարհիկ իշխանության գործերին, իսկ եկեղեցին պետք է ենթարկվի պետությանը: Ռեֆորմացիայի կողմնակիցները հավատքի միակ աղբյուրը ճանաչեցին Աստվածաշունչը, իսկ կաթոլիկ եկեղեցին նրա հետ միաժամանակ ընդունում էր նաև տիեզերական ժողովների կանոնները և պապերի որոշումները: Ռեֆորմացիայի կողմնակիցները մերժում էին փրկության գործում եկեղեցու միջնորդի դերը և գտնում էին, որ Աստվածաշնչում տեղ գտած սկզբունքներին հետևող հավատացյալը կարող է հասնել փրկության:

Ժան Կալվին

Գրատպության գյուտը և ազգային լեզուների ձևավորումը հնարավորություն տվեցին Սուրբ գիրքը լատիներենից թարգմանելու և մեծ քանակությամբ տպագրելու, որպեսզի հավատացյալը ոչ թե եկեղեցու օգնությամբ, այլ ինքնուրույն ծանոթանա նրա հետ:

Շուտով Ռեֆորմացիան դարձավ հասարակական լայն շարժում, քանի որ նրան մասնակցում էին հասարակության բոլոր խավերը: 1521 թ. Սրբազան հռոմեական կայսրության կայսր Կարլոս V–ը Վորմս քաղաքում հրավիրեց Ռայխստագ, որտեղ Լյութերից պահանջեցին, որպեսզի հրաժարվի իր գաղափարներից, սակայն նա մերժեց: Երբ Կարլոս V–ը հրամանագիր հրապարակեց Լյութերի գաղափարները արգելելու մասին, Ռեֆորմացիայի կողմնակից իշխանները և քաղաքացիները բողոքեցին դրա դեմ: Այստեղից էլ Ռեֆորմացիայի կողմնակիցները ստացան բողոքականներ անունը: Այսպես Գերմանիայում առաջացավ բողոքական՝ լյութերական եկեղեցի: Հաստատվեց «Ում իշխանությունը, նրա էլ՝ հավատը» սկզբունքը, այսինքն՝ տարածքի իշխանն էր որոշում հպատակների հավատը:

Ռեֆորմացիոն շարժման երկրորդ կենտրոնը Շվեյցարիան էր, որտեղ շարժումը գլխավորում էր Ֆրանսիայից եկած **Ժան Կալվինը:** Նրա ջանքերով բարեփոխվեց Ժնևի եկեղեցին, և ստեղծվեց նոր՝ **կալվինական եկեղեցի:**

1534 թ. Անգլիայի Հենրիխ VIII թագավորը (1509–1547 թթ.) ստորագրեց պառլամենտի ընդունած «Գերագահության մասին ակտը»: Անգլիական եկեղեցու գլուխ կանգնեց թագավորը: Փակվեցին վանքերը, և բռնագրավվեց նրանց ամբողջ գույքը: Բարձրաստիճան հոգևորականներին պաշտոններում նշանակում էր պառլամենտը: Հոգևորականները պետությունից աշխատավարձ էին ստանում: Այսպես ստեղծվեց **անգլիական եկեղեցին:**

Ռեֆորմացիոն շարժումը հատկապես սուր բնույթ ընդունեց Ֆրանսիայում և վերածվեց երկարատև քաղաքացիական կռիվների, որը հայտնի է **Կրոնական** կամ **Հուգենոտյան պատերազմներ** անունով: Ժան Կալվինի գաղափարները Շվեյցարիայից թափանցեցին Ֆրանսիայի հարավային շրջանները: Կալվինականներին այստեղ անվանում էին հուգենոտներ (գերմաներեն՝ «համատեղ երդում տվածներ»):

1562 թ. կաթոլիկների և հուգենոտների միջև տեղի ունեցավ ընդհարում, որով Ֆրանսիայում սկսվեցին Հուգենոտյան պատերազմները (1562–1594 թթ.): Նրա բարձրակետը դարձավ **1572 թ. օգոստոսի 24–ի** գիշերը (Բարդուղիմեոսյան գիշեր), երբ Փարիզում սպանեցին շուրջ 3 հազար հուգենոտների: 1594 թ. հուգենոտների առաջնորդ **Հենրիխ Բուրբոնն** ընդունեց կաթոլիկություն և դարձավ Ֆրանսիայի թագավոր: Ֆրանսիայի միասնությունը ամրապնդելու համար Հենրիխ IV–ը 1598 թ. հրատարակեց **Նանտի էդիկտը:** Կաթոլիկությունը հռչակվեց պետական կրոն: Հուգենոտները դավանանքի ազատություն ստացան ամբողջ Ֆրանսիայում, բացի Փարիզից: Նրանց թույլատրվեց զբաղեցնել պետական պաշտոններ: Հետագայում **կարդինալ Ռիշելյոն** (1624–1642 թթ.) վերացրեց նրանց տրված բոլոր արտոնությունները:

Նիդերլանդական հեղափոխությունը: Հյուսիսային ծովի ափամերձ շրջաններում գտնվող Նիդերլանդները XV դ. մտնում էր Բուրգունդական դուքս Կարլոս Խիզախի իշխանության կազմի մեջ: 1477 թ., երբ սպանվեց Կարլոս Խիզախը, Նիդերլանդները ժառանգություն մնաց նրա դստերը՝ Մարիային, որն ամուսնացավ Մաքսիմիլիանոս Հաբսբուրգի հետ, որը հետագայում դարձավ Սրբազան հռոմեական կայսրության կայսր: Այսպես Նիդերլանդները հայտնվեց կայսրության կազմում: Երբ Իսպանիայի թագավոր Կարլոս I–ն ընտրվեց նաև Սրբազան հռոմեական կայսրության կայսր, Նիդերլանդները մտավ Իսպանիայի կազմի մեջ: Կարլոս V–ի հրաժարականից հետո Նիդերլանդներն անցավ

նրա որդուն՝ Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II–ին (1555–1598 թթ.):

XVI դ. կեսերին Նիդերլանդները կազմված էր 17 գավառներից (պրովինցիա), որոնցից առավել զարգացած էին Ֆլանդրիան՝ հարավում, և Հոլանդիան՝ հյուսիսում: Այդ ժամանակ Նիդերլանդներում կար 300 քաղաք, 6500 գյուղ և 3 մլն բնակչություն: Երկիրը կառավարում էին Իսպանիայի թագավորի նշանակած փոխարքան և պետական խորհուրդը: Կարևոր հարցեր քննարկելու համար հաճախ հրավիրում էին Գլխավոր շտատներ: Իսպանիան իր պետական եկամտի շուրջ 40%–ը ստանում էր Նիդերլանդներից: Նիդերլանդներում մեծ տարածում էին գտել Ռեֆորմացիայի, մասնավորապես կալվինական գաղափարները: Վախենալով, որ Ռեֆորմացիայի շարժումը կարող էր վերածվել ազգային–ազատագրական պայքարի, կաթոլիկ միապետ Ֆիլիպ II–ը այստեղ հիմնեց ինկվիզիցիայի դատարան: Սակայն սա չփրկեց իրավիճակը, և Ռեֆորմացիան վերածվեց ազատագրական պատերազմի ու հեղափոխության (1566–1609 թթ.):

Ապստամբությունը սկսվեց 1566 թ. պատկերամարտական շարժումով, քանի որ կալվինականները դեմ էին սրբապատկերների և սուրբ մասունքների պաշտամունքին: Շարժումն ընդգրկեց 12 պրովինցիաներ, ավերվեցին 5500 եկեղեցիներ ու վանքեր: Ապստամբության գլուխ կանգնեց **Վիլհելմ I Օրանցին,** որը, ժամանակին խույս տալով իսպանացիների հալածանքներից, փախել էր Գերմանիա: Զորքեր հավաքագրելով՝ նա վերադարձավ Նիդերլանդներ և գլխավորեց ազատագրական պատերազմը: Նրան հանձնվեց գլխավոր հրամանատարի պաշտոնը և բարձրագույն գործադիր իշխանությունը: Սակայն ապստամբների միջև միասնություն չկար, և շուտով նրանք պառակտվեցին: Հարավի պրովինցիաները որոշեցին դադարեցնել պայքարը և մնալ Իսպանիայի կազմում (Իսպանական Նիդերլանդներ): Այս պրովինցիաների մի մասի վրա հետագայում առաջացավ Բելգիա պետությունը: Իսպանացիների դեմ պայքարը շարունակելու համար հյուսիսային յոթ պրովինցիաներ **1579 թ.** կնքեցին **Ուտրեխտի միությունը,** որը հիմք դրեց նոր պետության՝ Միացյալ Գավառների Հանրապետության (Հոլանդիա):

Իսպանիան փորձեց վերադարձնել անջատված պրովինցիաները, սակայն Նիդերլանդներին օգնության հասավ Անգլիան՝ զորքեր ուղարկելով: 1588 թ. Իսպանիան 134 նավերից բաղկացած «Անպարտելի արմադա» նավատորմը ուղարկեց Անգլիայի դեմ: Սակայն ահեղ փոթորիկը ոչնչացրեց նավերի մեծ մասը, իսկ անգլիական նավատորմը՝ մյուս մասը: Իսպանիա վերադարձան միայն 43 նավեր: Իսպանիան ստիպված էր **1609 թ.** ճանաչել Նիդերլանդների անկախությունը, իսկ վերջնականապես նրանից հրաժարվեց 1648 թ., երբ ստորագրեց **Վեստֆալյան հաշտության պայմանագիրը:** Որպես առավել զարգացած պրովինցիա՝ պետության տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում մեծ դեր էր խաղում Հոլանդիան, ուստի պետությունը սկսեցին անվանել Հոլանդիա:

Ֆիլիպ II

Երեսնամյա պատերազմը: Ռեֆորմացիայի ընթացքում գերմանական իշխանների մի մասն ընդունեց բողոքականություն, իսկ մի մասն էլ մնաց կաթոլիկ: Գերմանիայի քաղաքական և դավանաբանական մասնատվածությամբ շահագրգռված էին եվրոպական մի շարք երկրներ, մասնավորապես Ֆրանսիան և Անգլիան: Իրենց իրավունքները պաշտպանելու և հակառեֆորմացիոն ուժերի դեմ պայքարելու համար գերմանա-

կան բողոքական իշխանները 1608 թ. միավորվեցին և ստեղծեցին Ավետարանական միություն: Սրան հակառակ՝ 1609 թ. կաթոլիկ իշխանները միավորվեցին և ստեղծեցին Կաթոլիկական միություն: Սրանցից յուրաքանչյուրին հովանավորում և օգնություն էին ցույց տալիս եվրոպական տարբեր երկրներ:

1618 թ. սկսվեց **Երեսնամյա պատերազմը,** որն առաջին համաեվրոպական պատերազմն էր: Նրա համար առիթ դարձան Չեխիայում (այն Սրբազան հռոմեական կայսրության կազմում էր) տեղի ունեցող իրադարձությունները: 1618 թ. բողոքականություն ընդունած չեխերը ապստամբություն բարձրացրեցին՝ իրենց իրավունքները պաշտպանելու համար, քանի որ նրանց տրված դավանանքի ազատության խոստումը չէր կատարվում: Չեխիայում տեղի ունեցող իրադարձությունները դուրս եկան Սրբազան հռոմեական կայսրության սահմաններից և վերածեցին համաեվրոպական պատերազմի: Գերմանական կաթոլիկ իշխաններին պաշտպանում էին Իսպանիան և պապականությունը, իսկ բողոքական իշխաններին՝ Ֆրանսիան, Դանիան, Շվեդիան, Ռուսաստանը և Անգլիան:

Երեսնամյա պատերազմն ավարտվեց Հաբսբուրգների պարտությամբ, և 1648 թ. կնքվեց **Վեստֆալյան հաշտությունը:** Շվեդիան ձեռք բերեց մի շարք տարածքներ և դարձավ Բալթյան տարածաշրջանի հզոր պետություն: Չնայած Ֆրանսիան քիչ տարածքներ ստացավ, սակայն վերածվեց Եվրոպայի ամենաբարձր քաղաքական հեղինակություն ունեցող երկրի: Միջազգային ճանաչում ստացան Շվեյցարական միությունը և Հոլանդիան: Պատերազմից ամենից շատ տուժեց Գերմանիան, քանի որ Վեստֆալյան պայմանագիրը օրինականացրեց Գերմանիայի քաղաքական և դավանաբանական մասնատվածությունը: Այսպես տապալվեց Եվրոպայում քրիստոնեական կայսրություն ստեղծելու Հաբսբուրգների ծրագիրը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն էր Ռեֆորմացիայի առաջացման գլխավոր պատճառը: Ինչպե՞ս այն սկսվեց, և ի՞նչ էին քարոզում Ռեֆորմացիայի կողմնակիցները: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այն: Թվարկե՛ք բողոքական եկեղեցիները:
2. Որտե՞ղ է Նիդերլանդները: Ինչպե՞ս էր այն դարձել իսպանական տիրույթ: Ի՞նչ վարչամիավորների էր այն բաժանված և ինչպե՞ս էր կառավարվում: Ներկայացրե՛ք բուրժուական հեղափոխության ընթացքն ու ավարտը Նիդերլանդներում:
3. Որո՞նք էին Երեսնամյա պատերազմի պատճառներն ու առիթը: Ներկայացրե՛ք Երեսնամյա պատերազմի արդյունքները:

§ 3. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ XVI ԴԱՐՈՒՄ ԵՎ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Գրականությունը: XVI դ. Արևմտյան Եվրոպայի մշակութային կյանքը վերելք էր ապրում: Իտալիայում այն հայտնի է Բարձր վերածնունդ, իսկ Ալպերից հյուսիս ընկած երկրներում՝ Հյուսիսային վերածնունդ անվանումներով:

Այդ դարաշրջանում հատկապես մեծ զարգացում ապրեց գրականությունը: Գրական երկերում տեղ էին գտնում ոչ միայն գեղարվեստական սյուժեներ, այլև քննարկվում էին պատմական, քաղաքագիտական և սոցիալական բնույթի խնդիրներ: Սոցիալական և ունեցվածքային հավասարության գաղափարները տեղ են գտել իտալացի գրող **Կամպանելայի** «Արևի քաղաքը» ստեղծագործության մեջ: Արևի քաղաքում, որ հիշեցնում էր հեղինակի ապրած ժամանակաշրջանի իտալական քաղաք–հանրապետություն, չկար մասնավոր սեփականություն, աշխատանքը պարտադիր էր բոլորի համար, իսկ կրթության խնդիրն էր մարդու գիտելիքները ծառայեցնել հասարակությանը: Պետության կառա-

Ուիլյամ Շեքսպիր

Ֆրանսուա Ռաբլե



Նիկոլո Մաքիավելի

վարման ձևերի, հասարակության սոցիալ–քաղաքական աստիճանակարգության հետ կապված խնդիրները արծարծված են իտալացի մարդասեր **Մաքիավելու** (1463–1527 թթ.) «Տիրակալը» և «Ֆլորենցիայի պատմությունը» աշխատություններում: Մաքիավելու քաղաքական ծրագիրը միասնական ու անկախ Իտալիայի ստեղծումն էր: Նրա կարծիքով՝ այս նպատակին հասնելու համար չպետք է կանգ առնել բռնության, կեղծիքի և դաժանության առջև: «Նպատակը արդարացնում է միջոցները»,— գտնում էր Մաքիավելին:

Հյուսիսային վերածննդի նշանավոր գրողներից էին **Ֆրանսուա Ռաբլեն** (Ֆրանսիա), **Էրազմ Ռոտերդամցին** (Գերմանիա), **Սերվանտեսը** (Իսպանիա): Վերջինիս մեծ փառք բերեց «Դոն Քիշոտ» երկը:

Հյուսիսային վերածննդի նշանավոր գործիչներից էր Անգլիայի վարչապետ **Թոմաս Մորը** (1478–1535 թթ.), որը հայտնի դարձավ «Ուտոպիա» ստեղծագործությամբ: Նա նկարագրում էր Ուտոպիա անունով մի կղզի, որտեղ գոյություն ուներ առանձին պետություն: Այստեղ բոլորը հագնվում և սնվում էին միատեսակ, իսկ աշխատանքը, երեխաներից, ծերերից և կառավարիչներից բացի, պարտադիր էր բոլորի համար: «Ուտոպիան» գրվել էր այն ժամանակ, երբ Անգլիայում խորացել էր գույքային անհավասարությունը, և ոչխարաբուծության հետագա զարգացման համար ազնվականները գյուղացիներից խլում էին հողերը: Այս կապակցությամբ Մորը ոչխարաբույծ հողատերերին ասել է. «Ձեր ոչխարները խժռում են մարդկանց»:

Անհատին և հասարակության մեջ նրա ազատությունների հիմնախնդրին անդրադարձել է անգլիացի մարդասեր, դրամատուրգ **Ուիլյամ Շեքսպիրը** (1564–1616 թթ.): Նա ուժեղ, օրինական և ազգային շահերը արտահայտող թագավորական իշխանության կողմնակից էր: Նրա դրամաներում՝ «Համլետ», «Օթելլո» և այլն, քննարկված են մարդու բնության, հասարակության մեջ չարի և բարոյականության խնդիրներ: Քանի որ հասարակության մեջ չարը, անարդարությունը, կեղծիքը բավական շատ են, դրամատուրգը կարծիք է հայտնում՝ այս դեպքում կարելի՞ է արդյոք մարդուն համարել «արարչագործության պսակ»: Մարդու անձնական ողբերգության աղբյուրը Շեքսպիրը փնտրում է ոչ թե մարդուն շրջապատող արտաքին միջավայրում, այլ հոգու թուլության մեջ, որը հնարավորություն է տալիս, որ մարդը առաջնորդվի ոչ թե բանականությամբ, այլ զգացմունքներով:

Արվեստը: XVI դ. Վերածննդի արվեստը Իտալիայում հասավ իր զարգացման բարձրակետին: Այդ ժամանակաշրջանում են հիմնականում ստեղծագործել **Լեոնարդո դա Վինչին** (1452–1519 թթ.), **Միքելանջելո Բուոնարոտին** (1475–1564 թթ.) և **Ռաֆայել Սանտին** (1483–1520 թթ.): Լեոնարդո դա Վինչին Բարձր վերածննդի մեծագույն դեմքերից է: Որպես հանճարեղ գեղանկարիչ՝ նա հայտնի է «Ջոկոնդա» («Մոնա Լիզա») նկարով և «Խորհրդավոր ընթրիքը» որմնանկարով: Նա նաև նշանավոր գիտնական էր և ստեղծել է թռչող սարքերի ու ստորջրյա լողացող մեքենաների նախագծեր:

Մեծ հանճարով էր օժտված նաև գեղանկարիչ, քանդակագործ և ճարտարապետ Միքելանջելոն: Մարդու կերպարը նրա արվեստում ձեռք է բերում հերոսական և տիտանական գծեր: Սա հատկապես վերաբերում է նրա քանդակներին, մասնավորապես Դավթի արձանին:

Մեծագույն նկարիչ էր նաև Ռաֆայելը, որի նկարած բազմաթիվ մադոննաները (Տիրամայր) գովերգում են կնոջ գեղեցկությունը և քնքշությունը: Նրա հռչակավոր «Սիքստինյան Տիրամայրը» կարծես թե դիտողին փոխանցում է այն վիշտը, որով ապրում են Տիրամայրը և Հիսուս Քրիստոսը, որն իր ապագա չարչարանքներով պետք է փորձեր փրկել մեղսագործ մարդկությանը:

XV դ. վերջերից Ալպերից հյուսիս ընկած երկրների նկարիչները սկսեցին այցելել Իտալիա և ծանոթանալ իտալական նկարիչների ստեղծագործություններին: Արդյունքում նրանք սովորեցին և սկսեցին կիրառել իտալական գեղանկարչության ձեռքբերումները: Հյուսիսային վերածննդի գեղանկարիչների շարքում հատկապես աչքի էր ընկնում գերմանացի նկարիչ **Ալբրեխտ Դյուրերը:** Մեծ վարպետությամբ է արված նրա «Ինքնանկարը»: Մարդկային կերպարները առավել իրական և խորաթափանց պատկերելու համար նա ուսումնասիրեց մարդու կազմվածքը և գրեց «Չորս գիրք մարդու համամասնությունների մասին» աշխատությունը:

Իտալական վերածննդի ազդեցությունը Նիդերլանդների մշակույթում ամենից առաջ զգացվում էր գեղանկարչության բնագավառում: Նիդերլանդական նկարիչները իրենց նկարների համար նյութ էին քաղում ժողովրդի կենցաղից և առօրյա կյանքից: Նրանք հաճախ էին պատկերում ժողովրդի կյանքից վերցված զանգվածային տեսարաններ: Այս բնագավառում հատկապես հռչակված էր **Պիտեր Բրյոյգել Ավագը:** Իսպանական Նիդերլանդների և Հոլանդիայի առկայության պայմաններում նախկին Նիդերլանդներում սկսեցին ձևավորվել երկու տարաբնույթ մշակույթներ՝ հոլանդական և ֆլամանդական: Հոլանդական կերպարվեստն իր զարգացման բարձրակետին հասավ **Ռեմբրանդտի** (1606–1669 թթ.) ստեղծագործություններում: «Անառակ որդու վերադարձը» կտավում նա պատկերում է մարդու տառապանքները և սերը: Ֆլամանդական կերպարվեստի զարգացման գործում մեծ դեր խաղաց **Ռուբենսը** (1577–1640 թթ.), որի ղեկավարած արվեստանոցում աշխատում էին բազմաթիվ հանճարեղ նկարիչներ:

Առաջին գիտական հեղափոխությունը: Վերածնության և Ռեֆորմացիայի գաղափարների ազդեցությամբ մարդիկ աշխատում էին վերանայել իրենց հայացքները և պատկերացումները բնության, հասարակության և մարդու վերաբերյալ: Դարերով արմատավորված ու քարացած գիտելիքները այլևս հասարակության պահանջմունքները չէին բավարարում: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները, հրազենի արտադրությունը, ձեռնարկության և առևտրի զարգացումը առավել ճշգրիտ գիտելիքների կարիք ունեին: Այդպիսի գիտելիքներ կարելի էր ձեռք բերել փորձի ու հայտնագործությունների ճանապարհով: Այսպես սկսվեց Առաջին գիտական հեղափոխությունը (XVI–XVII դդ.), որի ընթացքում զարգանում էին հասարակության համար մեծ կարևորություն ներկայացնող տեխնիկական և բնական գիտությունները:

Առաջին գիտական հեղափոխության ակունքներում կանգնած էր լեհ գիտնական **Կոպեռնիկոսը** (1473–1543 թթ.): Նա ժխտեց դարերով արմատավորված այն տեսակետը, թե Տիեզերքի կենտրոնում Երկիր մոլորակն է: Տարիների ընթացքում կատարած դիտարկումներից և մաթեմատիկական հաշվարկումներից հետո նա ապացուցեց, որ Տիեզերքի կենտրոնում Արեգակն է, իսկ մյուս մոլորակները, այդ թվում՝ Երկիրը, պտտվում են նրա շուրջը: Ինչպես կաթոլիկ, այնպես էլ բողոքական եկեղեցիներն ընդդիմացան Կոպեռնիկոսի գաղափարներին: 1610 թ. կաթոլիկ եկեղեցին Կոպեռնիկոսի հետևորդներին հայտարարեց հերետիկոս: Եթե Կոպեռնիկոսը հետազոտում էր Տիեզերքը, ապա ֆլամանդացի բժիշկ **Վեզալիուսը** ուսումնասիրում էր մարդու մարմինը: Նա հերձման միջոցով տվեց մարդու մարմնի ներքին կառուցվածքի ճշգրիտ նկարագրությունը: Վախենալով կաթոլիկ եկեղեցու հալածանքներից՝ նա ոչնչացրեց իր աշխատությունների մի մասը և դարձավ Կարլոս V կայսեր անձնական բժիշկը: Սակայն ինկվիզիցիան հասավ նրան, որ Վեզալիուսին դատապարտեց ուխտագնացության դեպի Պաղեստին:

1600 թ. Հռոմի հրապարակներից մեկում ինկվիզիցիայի դատավճռով ողջակիզվեց իտալացի գիտնական **Ջորդանո Բրունոն**: Նա գտնում էր, որ Տիեզերքը անսահման է, և այնտեղ կան բազմաթիվ մոլորակներ: Աստղերը հեռավոր արեգակներ են, որոնց շուրջ պտտվում են մարդկանցով բնակեցված մոլորակներ: Այս տեսակետը նա հիմնավորում էր Սուրբ Գրքից վերցված փաստարկներով. այն է՝ ամենազոր Աստվածը չէր կա-

Ռեմբրանդտ. «Գիշերային պարեկ»

րող սահմանափակվել միայն Երկիր մոլորակի արարմամբ: Ինկվիզիցիան չկարողացավ ստիպել Բրունոյին հրաժարվել այս տեսակետից, որի համար էլ նրան դատապարտեցին ողջակիզման: Իտալացի ֆիզիկոս և աստղաբաշխ **Գալիլեյը** (1564–1642 թթ.) նույնպես գտնում էր, որ Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը: 1609 թ. նա ստեղծեց ամենախոշոր աստղադիտակը և առաջինը դիտեց արևի բծերը, Յուպիտերի արբանյակները և Լուսնի վրա գոյություն ունեցող անհարթությունները: 1633 թ. ինկվիզիցիան Գալիլեյի նկատմամբ դատավարություն կազմակերպեց: Վախենալով խոշտանգումներից՝ նա ստիպված հրաժարվել է իր գաղափարներից, սակայն դուրս գալով դատարանից՝ ասել է. «Բայց, այնուամենայնիվ, Երկիրը պտտվում է»:

Գիտության հետագա զարգացման գործում մեծ դեր խաղաց անգլիացի փիլիսոփա **Բեկոնը**: 1620 թ. լույս տեսավ նրա «Նոր օրգանոն» աշխատությունը, որտեղ արտահայտված է այն գաղափարը, որ ճշգրիտ գիտելիքը կարելի է ձեռք բերել փորձի միջոցով: Նա կարծիք է հայտնել Արեգակի էներգիայի օգտագործման մասին:

Առաջին գիտական հեղափոխության շրջանում ստեղծվեց նոր ժամանակների գիտությունը: Առանձին գիտնականների նվաճումները արագորեն դառնում էին համաշխարհային գիտական մտքի սեփականությունը: Առաջին գիտական հեղափոխությունը դարձավ այն նախադրյալներից մեկը, որը նախապատրաստեց Եվրոպայի անցումը նոր ժամանակներին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ խնդիրներ ու գաղափարներ էին քննարկվում Վերածննդի գրականության մեջ: Համառոտ ներկայացրե՛ք այդ դարաշրջանի նշանավոր գործիչներին ու նրանց ստեղծագործությունները:
2. Վերածննդի արվեստի ի՞նչ ականավոր ստեղծագործողներ գիտեք: Թվարկե՛ք նրանց գործերից: Թվարկե՛ք այդ ստեղծագործություններից նրանք, որոնց նյութը Աստվածաշնչից է: Գիտե՞ք որևէ ստեղծագործություն, որի նյութը անտիկ մշակույթից է:
3. Համառոտ ներկայացրե՛ք Առաջին գիտական հեղափոխության նշանավոր գործիչներին ու նրանց գործունեությունը: Ի՞նչ արդյունքներ ունեցավ Առաջին գիտական հեղափոխությունը:

ՄԱՍ 3 ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

ԳԼՈՒԽ Ա ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ (XVII դար – XX դարի սկիզբ)

§1. ԱՇԽԱՐՀԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՍԿԶԲԻՆ

Աշխարհի քաղաքական քարտեզը XVII դարում: Երկրագնդի ամենից արագ զարգացող աշխարհամասը **Եվրոպան** էր, որտեղ մեկ դարի ընթացքում, ինչպես գիտեք, բնակչությունը կրկնապատկվեց. 1600 թվականին այն կազմում էր մոտ 180 միլիոն մարդ: Եվրոպայում ուժեղ և կայուն պետությունները քիչ էին: Նրանք մշտական հակասությունների մեջ էին և հավակնում էին զավթելու նորանոր տարածքներ:

XVI դարի կեսին **Անգլիան** նվաճեց **Իռլանդիան** և **Շոտլանդիան**: XVII դարում Անգլիան սկսեց նոր տարածքներ նվաճել նաև Եվրոպայի սահմաններից դուրս:

XVII դարում ուժեղ տերություն դարձավ նաև **Ֆրանսիան:** Նա ևս առաջնային դեր էր կատարում նաև աշխարհի շատ կողմերում՝ դառնալով գաղութատեր երկիր:

Նոր ժամանակների սկզբին **Իսպանիան և Պորտուգալիան** թուլացան և իրենց տեղը զիջեցին Անգլիային, Ֆրանսիային և Հոլանդիային:

Եվրոպայի կենտրոնում XVI դարում բողոքականության՝ կալվինականության դրոշի ներքո կայուն պետություն դարձավ 13 կանտոններից (շրջաններից) բաղկացած բազմազգ **Շվեյցարիան**: Կալվինականությունը ազատագրական պայքարի դրոշ դարձավ նաև Նիդերլանդներում: Ազատագրական պատերազմի արդյունքում ստեղծված Հոլանդիան, դարձավ Եվրոպայի զարգացած երկրներից մեկը:

Եվրոպայի ամենաբազմազգ տերությունը **Սրբազան հռոմեական կայսրությունն** էր: Հաբսբուրգ արքայատոհմին պատկանող կայսեր իշխանությունն ուժեղ էր **Ավստրիայում** և **Չեխիայում**: Մնացած հողերը տրոհված էին հարյուրավոր ինքնուրույն գերմանական պետու-

թյունների: XVII դարում նրանցից ուժեղացավ **Պրուսիան**: Նույն դարում Օսմանյան տերության դեմ տևական պատերազմներում Հաբսբուրգ արքայատոհմը նվաճեց նոր տարածքներ, այդ թվում՝ **Հունգարիան:** Քաղաքական առումով մասնատված էր նաև **Իտալիան:**

Հյուսիսային Եվրոպայում միջնադարից ի վեր ուժեղ պետություն էր **Դանիան**, որի հետ միության մեջ էին **Նորվեգիան, Իսլանդիան, Շվեդիան** և **Ֆինլանդիան**: Սակայն XVI–XVII դդ. Դանիան թուլացավ, նրանից անջատվեցին Շվեդիան և Ֆինլանդիան: Շվեդիան դարձավ Բալթիկ ծովի ավազանի ուժեղ պետություն: 1569 թ. Լեհաստանը և Լիտվայի մեծ իշխանությունը միավորվեցին մեկ պետության մեջ, որը ստացավ **Ռեչ Պոսպոլիտա** անվանումը: XVI–XVII դդ. նա բավական հզորացավ: Նույն դարաշրջանում հզոր պետություն դարձավ նաև **Ռուսաստանը:** Արդեն XVII դարում Ռուսաստանի կազմում էր Ուրալյան լեռներից մինչև Խաղաղ օվկիանոս ընկած հսկա տարածքը: Այլ էր իրավիճակը Բալկանյան թերակղզում: Այստեղի երկրները Օսմանյան տերության կազմում էին:

Ամերիկան կամ **Նոր աշխարհը**, ի տարբերություն մյուս աշխարհամասերի, Կոլումբոսի հայտնագործումից ի վեր եվրոպացիների կողմից ամենից արագ յուրացվող տարածքն էր: Այն դարձավ եվրոպացիների տիրույթ: Այդ գործընթացի հիմնական դերակատարներն էին նախ՝ Իսպանիան և Պորտուգալիան (XVI դար), իսկ հետո՝ Անգլիան և Ֆրանսիան (XVII դար): Լատինական Ամերիկան վերածվեց Իսպանիայի և Պորտուգալիայի, իսկ Հյուսիսային Ամերիկան՝ Անգլիայի և Ֆրանսիայի գաղութների:

Ասիա աշխարհամասի երկրները և ժողովուրդները, չնայած փառավոր անցյալին, նոր ժամանակների սկզբին չունեին կայուն հասարակական–քաղաքական կարգեր: Այդպիսի մեծ պետություններ էին Օսմանյան տերությունը, Իրանը, Հնդկաստանը և Չինաստանը: Նրանց կազմում կային տասնյակ ժողովուրդներ, չկար ներքին միասնություն, և դժվարությամբ էին դիմանում ժամանակի փորձությանը: Քաղաքական անկայուն վիճակ էր նաև մյուս երկրներում: XVI դ. Արևելքի երկրներում ապրում էր 288 միլիոն մարդ (երկրագնդի բնակչության 68 %–ը):

Աֆրիկա հսկա աշխարհամասի քաղաքական պատկերը նույնպես առանձնանում էր իր բազմազանությամբ և քաղաքակրթական յուրահատկություններով: Աֆրիկացիներն ապրում էին բազմակացութաձև հասարակություններում: Առավել զարգացած էին Եթովպիան, Սուդանը, Եգիպտոսը և Մաղրիբի երկրները:

Նոր ժամանակների սկզբին **Ավստրալիա** աշխարհամասն աշխարհին անհայտ մի անկյուն էր: Բնակչությունը (մոտ 500 ցեղ), ապրում էր տոհմական համայնքներով: Աշխարհամասը եվրոպացիներին հայտնի դարձավ XVI–XVII դարերում:

Արդյունաբերական քաղաքակրթությունը՝ մարդկության զարգացման նոր աստիճան: Միջին դարերում Արևմտյան Եվրոպայում աստիճանաբար ձևավորվեց առանձնահատուկ քաղաքակրթություն, որի միասնականության հիմքը կաթոլիկ եկեղեցին էր: Սակայն այն ճգնաժամի մեջ հայտնվեց, երբ սկսվեցին անվերջանալի ավատական երկպառակությունները: Հենց այդ ճգնաժամի հաղթահարման գործընթացում Եվրոպայի արևմուտքում՝ Անգլիայում, Ֆրանսիայում և Նիդերլանդներում սկսեց ձևավորվել մի նոր քաղաքակրթություն: Հետագայում այն ընդգրկեց ողջ մայրցամաքը, Ամերիկան և ապա՝ աշխարհի շատ երկրներ և տարածաշրջաններ:

Նոր քաղաքակրթությունը գիտության մեջ հայտնի է տարբեր անվանումներով՝ արևմտյան, եվրոպական, եվրաամերիկյան, ատլանտյան, արդյունաբերական և այլն: Այս անվանումները տարբեր տեսանկյուններից յուրովի ճիշտ են: Չէ՞ որ այն առաջացել է Արևմուտքում, Եվրոպայում, տարածվել Ատլանտյան օվկիանոսից այն կողմ՝ Ամերիկայում: Հաճախ այն անվանում են **արդյունաբերական քաղաքակրթություն,** քանի որ բազմազան ապրանքների և նյութական բարիքների աննախադեպ առատ արտադրությունը հասարակությանն առավել քան երբևէ դարձնում է տնտեսական մեկ մարմին: Քաղաքակրթության այդ տեսակին բնորոշ են հասարակության արագ զարգացումը, գլխապտույտ արագությամբ կատարվող փոփոխությունները: Զարգացման լծակներն են շուկայական տնտեսությունը, ժողովրդի մասնակցությունը պետության կառավարմանը (ժողովրդավարություն), աշխարհիկ իրավական պետությունը, աշխարհիկ կրթությունը և մշակույթը, ընկերային երաշխիքների ապահովումը, նյութական բարիքների բաշխման համակարգը և այլն:

Արդյունաբերական քաղաքակրթությունը դարձավ մարդկության զարգացման մի նոր մակարդակ, առանց որի անհնար էր դրան հաջորդած արդի հասարակության ստեղծումը:

Հասարակական փոփոխությունների միտումները Եվրոպայում: Դեռևս միջնադարում Եվրոպայում ի հայտ եկան ապագա արդյունաբերական քաղաքակրթության սաղմերը: Եվրոպական արդյունաբերական քաղաքակրթության կայացման գործընթացում կարևոր նախադրյալ դարձավ Ռեֆորմացիան (XVI դ.):

Նոր ժամանակների սկզբին Եվրոպայում տնտեսության մեջ գերակշռում էր գյուղատնտեսությունը: Բնակչության 90%–ը գյուղացիներ էին: Գյուղատնտեսության զարգացմանը նպաստեցին աշխարհագրական հայտնագործությունները, որի արդյունքում սկսեցին աճեցնել նաև կարտոֆիլ, եգիպտացորեն, լոլիկ, ծխախոտ, լոբի, դդում և այլն: Մեծ տարածում էր ստանում նաև գյուղարտադրանքի արդյունաբերական մշակումը: Անդրծովյան առևտրի ընդլայնումը գաղութների հետ, բնակչության աճը և տեղաշարժը, Ամերիկայից մեծ քանակությամբ ազնիվ մետաղների ներմուծումը Եվրոպա մեծացրեց ապրանքների պահանջարկը: Արհեստավորական արտադրանքն այլևս չէր բավարարում: Այդ իսկ պատճառով միջնադարյան արհեստանոցի փոխարեն առաջացավ արտադրության ավելի խոշոր ձեռնարկություն՝ **մանուֆակտուրա:** Դրանցում կտրուկ աճեց աշխատանքի արտադրողականությունը: Այսինքն՝ միավոր ժամանակում ավելի շատ ապրանք արտադրելու կարողությունները մեծացան: XVII դարում մանուֆակտուրային արտադրանքն արդեն տարածված էր Անգլիայում, Նիդերլանդներում և Ֆրանսիայում:

XVI–XVII դարերում Եվրոպայի տնտեսության մեջ կատարված տեղաշարժերը փոփոխություններ առաջացրին նաև հասարակության սոցիալական (ընկերային) կառուցվածքում: Դա բոլորից արագ տեղի էր ունենում Անգլիայում և Հոլանդիայում: Անգլիայում ազնվականության մի մասը սկսեց զբաղվել գործարարությամբ՝ իր հողում ստեղծելով ապրանքային տնտեսություն, մանուֆակտուրաներ: Նրանց անվանում էին **նոր ազնվականություն:** Գյուղում ձեռներեց էր դառնում նաև գյուղացիների մի մասը: Այդպիսի գյուղացիները կոչվում էին **ագարակատերեր** (ֆերմերներ): Նոր ազնվականության և ագարակատերերի շնորհիվ անգլիական գյուղատնտեսությունն առաջինը Եվրոպայում դարձավ շուկայական: Եվրոպական մյուս երկրներում այս գործընթացները սկսվեցին ավելի ուշ:

Քաղաքներում ևս զարգանում էր գործարար կյանքը: Քաղաքային գործարարների խավը՝ բուրժուազիան, կազմված էր վաճառականներից, վաշխառուներից, կապալառուներից, դրամափոխներից և այլն: Հաճախ բուրժուա էին դառնում նաև արհեստավորները: Քաղաքներում բուրժուազիայի առաջացումն սկսվել էր ավելի վաղ: Բուրժուազիան և գյուղական ձեռներեցները միասին դարձան գործարար կյանքի կրողները և արտադրության կազմակերպիչները: Բուրժուայի սեփականությունը կոչվում էր **կապիտալ,** որի համար նրան անվանում էին նաև կապիտալիստ:

Շուկայական տնտեսության ստեղծումն ուղեկցվում էր բնակչության մի մասի աղքատացմամբ: Հողազուրկ գյուղացիները դառնում էին վարձու աշխատող՝ բանվոր: Նրանց մեծ մասը տեղափոխվում էր քաղաք: Քաղաքներում բանվոր էին դառնում նաև սնանկացած արհեստավորները և ձեռներեցները:

Նոր դարերի սկզբին Եվրոպայում տիրում էին միապետական կարգեր: «Մեկ երկիր՝ մեկ պետություն» սկզբունքի կիրառումը դարձել էր պատմական անհրաժեշտություն: Ուստի ավանդական միապետական կարգերի փոխարեն եվրոպական երկրներում առաջացավ կենտրոնացված պետական կարգ՝ **միահեծանություն:**

Միահեծանության դասական երկիրը համարվում է Ֆրանսիան: Երկրում ստեղծվել էր թագավորի անձի պաշտամունք: Գործում էր «Մեկ միապետ, մեկ օրենք, մեկ կրոն» սկզբունքը: Նույնիսկ չէր հրավիրվում դասային համաժողովը: Անգլիայում, ընդհակառակը, գործում էր խորհրդարան, որի հետ թագավորը հաշվի էր նստում: Եվրոպական երկրների մեծ մասին բնորոշ էր ֆրանսիական միահեծանությունը:

Իշխող գաղափարախոսության համաձայն՝ թագավորի իշխանությունը ստեղծել էր Աստված: Կրոնը՝ որպես հասարակական կառույց, համարվում էր այդ գաղափարի քարոզիչը: XVII դարի սկզբին Անգլիայի թագավորը պնդում էր. «Չկա եպիսկոպոս, չկա և թագավոր»: Իհարկե, թագավորի աստվածային ծագման գաղափարը կար նաև Հին Արևելքում, միջնադարյան Եվրոպայում և այլ տեղերում: Նոր ժամանակների սկզբին դրանք համալրվեցին նաև աշխարհիկ գաղափարներով: Օրինակ՝ Ֆրանսիայում արդեն կար գիտություն պետության և իրավունքի մասին: Բոլոր այդ ջանքերը նպատակ ունեին հիմնավորելու միահեծանության օրինականությունը, այն տարբերակելու բռնապետությունից: Միահեծանությունը վերջ տվեց ավատական գժտություններին և նպաստեց հասարակության զարգացմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ ուժեղ և կայուն պետություններ կային Եվրոպայում: Ո՞ր տարածքն է ստացել Լատինական Ամերիկա անվանումը, ինչո՞ւ: Որո՞նք էին Աֆրիկայի առավել զարգացած երկրները:
2. Նոր քաղաքակրթությունը որտե՞ղ է ձևավորվել և գիտության մեջ ի՞նչ անվանումներով է հայտնի: Ի՞նչ հատկանիշներ էին բնորոշ քաղաքակրթության այդ տեսակին:
3. XVI–XVII դարերում Եվրոպայում տնտեսության ո՞ր ճյուղն էր գերակշռում: Ի՞նչը նպաստեց ապրանքների պահանջարկի մեծացմանը Եվրոպայում: Արտադրական ի՞նչ նոր ձեռնարկություններ առաջացան:
4. Ումի՞ց էր կազմված բուրժուազիան: Ովքե՞ր էին կապիտալիստները: Ո՞վ էր բանվորը, ովքե՞ր էին դառնում բանվոր:
5. Ի՞նչ է միահեծանությունը: Ինչո՞վ էին տարբերվում Ֆրանսիայի և Անգլիայի միահեծանությունները:

§ 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդյունաբերական քաղաքակրթության տնտեսական համակարգի կազմավորումը: Արդյունաբերական քաղաքակրթությունը մարդկային հասարակության առաջընթացի այն փուլն է, երբ համեմատաբար կարճ ժամանակում արտադրողական ուժերն ավելի զարգացան, քան նախորդ բոլոր ժամանակաշրջաններում՝ միասին վերցրած: Դա նյութական բարիքների արտադրության յուրահատուկ հեղափոխություն էր: Արդյունաբերական քաղաքակրթության տնտեսական համակարգը կազմավորվել է երեք փուլերով:

Առաջին փուլը մանուֆակտուրային կապիտալիզմն է: Այն տևել է XVI դարից մինչև XVIII դարի կեսը: XVII դարում սկսեցին օգտագործել «կապիտալիստ» բառը: Այդպես էին անվանում դրամական կապիտալ ունեցողին: Այս փուլին բնորոշ է **կապիտալի նախասկզբնական կուտակումը**, առանց որի անհնար է արդյունաբերական արտադրության առաջացումը: Ձեռներեցներն այդպիսի կապիտալ կուտակում էին առևտրից, վաշխառությունից, համայնական հողերի յուրացումից, գաղութների կողոպուտից և ստրկավաճառությունից: Հենց այդ կուտակված կապիտալի շնորհիվ առաջացան մանուֆակտուրաներ, որը դարձավ արդյունաբերական քաղաքակրթության տնտեսական հիմքը: Ընդհանուր առմամբ մանուֆակտուրային արտադրությունն ընդլայնվում էր մեծ արագությամբ:

Երկրորդը արդյունաբերական հեղաշրջման փուլն է: Այն սկսվել է XVIII դարի երկրորդ կեսից և ավարտվել XIX դարի վերջին: Արդյունաբերական հեղաշրջումն առաջինը տեղի է ունեցել Մեծ Բրիտանիայում, ապա Բելգիայում, Հոլանդիայում, Ֆրանսիայում և մյուս երկրներում:

Արդյունաբերական հեղաշրջման տեխնիկական կողմը ձեռագործ (մանուֆակտուրային) արտադրանքից անցումն է **մեքենայական** արտադրության: Մանուֆակտուրաների փոխարեն առաջացան արտադրության ավելի խոշոր միավորներ՝ **գործարաններ:** Դարաշրջանին բնորոշ են բազմաթիվ տեխնիկական գյուտերը և գիտական հայտնագործությունները: Արդյունաբերության մեջ իսկական հեղաշրջում առաջացրեց շոգեշարժիչի գյուտը, որի հեղինակն անգլիացի **Ջեյմս Ուատն** էր: Այն արտադրություն մտավ **1785 թ.:** Դա իր հերթին զարկ տվեց մետաղամշակությանը,



Ջեյմս Ուատ

քարածխի արդյունահանմանը և այլն: Սկսվեց նաև մեքենաների միջոցով մեքենաների արտադրությունը, այսինքն՝ առաջացավ արդյունաբերության նոր ճյուղ՝ մեքենաշինությունը:

Արդյունաբերության թռիչքը մեծ հեղաշրջում առաջացրեց հաղորդակցության միջոցների բնագավառում: XIX դարի առաջին տասնամյակներին սկիզբ առավ շոգենավային և երկաթուղային հաղորդակցությունը, որն էժանացրեց ապրանքների տեղափոխությունը: Մեծ թափ առան նավաշինությունը, նավահանգիստների, ճանապարհների, կամուրջների և ջրանցքների կառուցումը: Արդյունաբերական հեղաշրջման շնորհիվ Արևմտյան Եվրոպայում ընդհանուր արտադրանքը XIX դարում աճեց մոտ 10 անգամ: Ավարտվեց ներքին միասնական շուկայի ձևավորումը, որի արդյունքում զարգացած երկրները դարձան տնտեսական կուռ ամբողջություն:

Երրորդ՝ ավարտական փուլը արտադրության աննախադեպ խոշորացումն էր և համաշխարհային տնտեսության կազմավորումը: XIX դարում տնտեսական զարգացման միտումը արտադրության կենտրոնացումն ու խոշորացումն էր: Այդ միտումն արագացավ, երբ գիտությունը և տեխնիկան զարգացման աներևակայելի թռիչք կատարեցին: Առաջացավ արտադրության վերազինման սուր անհրաժեշտություն, որն իր հերթին պահանջում էր կապիտալի խոշոր ներդրումներ: Քանի որ այդպիսիք չկային, ձեռներեցները սկսեցին ստեղծել բաժնետիրական ընկերություններ: Խոշոր կապիտալի ստեղծման պահանջարկը փոխեց նաև բանկերի դերը: Բանկերը, որ առաջացել էին նոր ժամանակների սկզբին, վարկեր էին տրամադրում ձեռներեցներին և նույնիսկ պետություններին: Նոր իրավիճակում բանկիրները՝ որպես շահագրգիռ կողմ, սկսեցին մասնակցել արտադրությանը: Միաժամանակ խոշոր արդյունաբերողները ստեղծում էին սեփական բանկեր: Այդ միախառնումից առաջացավ **ֆինանսական կապիտալը:** Արտադրության կենտրոնացումը, խոշոր կապիտալի առաջացումը և մրցակցության սրումը հանգեցրին **մոնոպոլիաների** (մենատիրություն) ստեղծմանը:

Նոր իրավիճակում շուկայում նախկին ազատ մրցակցությանը փոխարինելու եկավ մոնոպոլիաների մրցակցությունը: Այդ մրցակցությունը դուրս եկավ մի երկրի սահմաններից և ընդունեց միջազգային բնույթ: Կապիտալի արտահանումն այլ երկրներ դարձավ սովորական: XX դարի սկզբին այդ արտահանումը կրկնապատկվեց: Տարբեր երկրների և տարածաշրջանների միջև տնտեսական կապերը սերտացան, առաջացավ **միջազգային միասնական շուկա** և **տնտեսություն:**

Արդյունաբերական քաղաքակրթության առաջացման ընկերային (սոցիալական) արդյունքները: Արդյունաբերական հասարակության կայացման կարևոր առանձնահատկությունն ընկերային բարդ կառուցվածքի և դասային հարաբերությունների առաջացումն է: Զարգացման շարժիչ ուժը դառնում են սեփականության նոր ձևը՝ կապիտալը, և նրա նկատմամբ հասարակության տարբեր դասերի հարաբերությունը: Հասարակությունը բաժանվում է **երկու հիմնական դասակարգերի՝ կապիտալիստ--ձեռներեցների,** որոնց կապիտալի գլխավոր ձևն արտադրության միջոցներն են, և **բանվորների,** որոնք վարձու աշխատողներ են: Նրանց միջև հարաբերությունները վճռական դեր են խաղում հասարակության ընկերային կյանքում: Դա գործատուի և գործառուի հարաբերություններ են, որը աշխատանքի շահագործման պատճառով հաճախ ստացել է հիվանդագին ընթացք: Նրանց միջև հակամարտությունն ընդունված է անվանել դասակարգային պայքար: Աղքատությունը, հատկապես բանվորների ընկերային ծանր դրությունը, բնորոշ է արդյունաբերական հասարակությանը:

Չնայած դրան՝ արդյունաբերական հասարակությանը բնորոշ է նաև ընդհանուր կենսամակարդակի բարձրացումը: Այդ մասին է վկայում բնակչության աճը: Եթե 1800 թ. Եվրոպայում ապրում էր 200 միլիոն մարդ, ապա 1900 թ. այդ թիվն անցավ 400 միլիոնի սահմանը (երկրագնդի բնակչության մոտ 25 %–ը): Դրանից 40%–ը ապրում էր քաղաքներում: Սննդամթերքը դառնում է ավելի բազմազան, քչանում է հացահատիկի օգտագործման չափաբաժինը:

Մոտ XIX դարի կեսից սկսում են աճել առողջապահությանը, կրթությանն ու գիտությանն ուղղված պետական ծախսերը: Կյանքի միջին տևողությունը 30–36 տարեկանից հասնում է 48–52 տարեկանի: Ի տարբերություն նախկինի՝ գրագիտությունը դառնում է զանգվածային: Եթե արդյունաբերական հեղաշրջման սկզբում զարգացած երկրներում հասուն բնակչության կեսն էր գրագետ, ապա XX դարի սկզբին գրագետ էր 90%–ը:

Այսպիսով՝ չնայած երկբևեռությանը՝ արդյունաբերական հասարակությունը ամբողջական ընկերային համակարգ էր: Այդ համակարգի գլխավոր դիմագիծը մարդու մրցակցային և պայմանագրային գործունեությունն է:

Եվրոպան և համաշխարհային առևտրի զարգացումը: Արդյունաբերական քաղաքակրթությունը մշտապես ընդարձակվելու միտում ունի: Նյութական բարիքների առատ արտադրությունը և դրանց սպառման անհրաժեշտությունը, ինչպես նաև արտադրական հումքի մշտական պահանջարկը ստիպում է այդ շուկայի մեջ ընդգրկել նորանոր երկրներ: Շուկայի ընդարձակման գլխավոր միջոցն առևտուրն է, որը նոր ժամանակներում դարձավ համաշխարհային: Այդպիսի առևտրի կենտրոնը Եվրոպայի արագ զարգացող երկրներն էին: Համաշխարհային առևտրի տարածքային ընդլայնումը, ինչպես նաև ապրանքաշրջանառության աճն ուղիղ համեմատական է այդ երկրների տնտեսական զարգացմանը: Օրինակ՝ կապիտալիզմի մանուֆակտուրային փուլի առաջին երկու դարերում (1500–1700 թթ.) Արևմտյան Եվրոպայի երկրների արտաքին առևտուրը Արևելքի և հարավային երկրների հետ ավելացավ 3–5 անգամ:

XVII դարում Հոլանդիան Եվրոպայի առևտրում դարձավ առաջինը: Այս երկիրն ուներ 15 հազար նավ: Նույն դարի վերջում եվրոպական առևտրում առաջին տեղ դուրս եկավ Անգլիան: XVIII դարում նրա գլխավոր մրցակիցը Ֆրանսիան էր, որտեղ առաջացան մաքսից ազատ նավահանգստային քաղաքներ՝ **պորտո–Ֆրանկո:** Այդ դարին բնորոշ էր գաղութային առևտուրը: Այն հաճախ անվանում են **եռանկյունի առևտուր՝ Եվրոպա–Աֆրիկա–Ամերիկա:**

Արդյունաբերական հեղաշրջման փուլում միջազգային առևտրի գլխավոր ասպարեզը Եվրոպան էր: Այստեղ էր սպառվում արդյունաբերական արտադրանքի մեծագույն մասը: Շարունակում էր զարգանալ նաև գաղութային առևտուրը: XIX դ. վերջին և XX դ. սկզբին, երբ ձևավորվեց կապիտալիզմի համաշխարհային տնտեսություն, միջազգային առևտուրը դարձավ նրա բաղկացուցիչ մասը: Տարբեր երկրներ, տարածաշրջաններ, մայրցամաքներ միմյանց հետ արդեն կապված էին երկաթուղային, շոգենավային և հեռագրական կապերով: Համաշխարհային առևտրական նավատորմի տարողությունը XX դ. սկզբին շուրջ 14 միլիոնից հասավ 45 միլիոն տոննայի: Ծովային ուղիներով փոխադրումների մեջ առաջին տեղը գրավում էր Անգլիան, ապա՝ ԱՄՆ–ը, Գերմանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է արդյունաբերական հեղաշրջումը: Ի՞նչ է կապիտալիզմը, և որո՞նք էին նրա բնորոշ հատկանիշները XVII–XIX դդ.: Եվրոպական ո՞ր երկրում առաջինը հաղթանակեց արդյունաբերական հեղաշրջումը և ինչո՞ւ: Տրանսպորտային հաղորդակցության ի՞նչ նոր տեսակներ առաջացան:
2. Ինչպե՞ս և ինչո՞ւ առաջացավ ֆինանսական կապիտալը: Ի՞նչը փոխարինեց շուկայում ազատ մրցակցությանը: Ինչո՞ւ առաջացան միջազգային շուկա և տնտեսություն:
3. Արդյունաբերական զարգացման հետ ի՞նչ հիմնական դասակարգեր են առաջանում: Ցո՛ւյց տվեք արդյունաբերական քաղաքակրթության գլխավոր առանձնահատկությունը:
4. Ո՞ր իրադարձությունների շնորհիվ ընդլայնվեց միջազգային առևտուրը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Եվրոպան դարձավ միջազգային առևտրի գլխավոր կենտրոնը:

§ 3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Արդյունաբերական հասարակության ընդհանուր բնութագիրը: Ժողովրդավարության հաստատումը, որը Եվրոպայում ընթացավ XVII դ. մինչև XX դ. սկիզբը, արդիականացման գլխավոր դրսևորումներից մեկն է: Նրա գլխավոր բովանդակությունը հասարակության քաղաքական համակարգի, առաջին հերթին պետության բնույթի արմատական փոփոխությունն է: Ճիշտ հասկանալու համար այդ նոր դերը՝ ի մի բերենք արդյունաբերական քաղաքակրթության բնորոշ կողմերը: Դրանցից են.

Առաջին՝ աշխատանքի և նրա արդյունքնե-

րի նկատմամբ բացառիկ հարգանք. աշխատանքը դիտվում է ոչ միայն ապրելու միջոց, այլև բարձրագույն բարոյական արժեք և ծառայություն Աստծուն:

Երկրորդ՝ բարձր զարգացած սեփականության՝ կապիտալի առկայություն, որը հնարավորություն է տալիս ապահովելու նյութական բարիքների աննախադեպ առատ արտադրություն:

Երրորդ՝ շուկայի միասնականացում և վերածում տնտեսության գլխավոր լծակի և կարգավորիչի. այն մշտապես ընդարձակվելու, նորանոր տարածաշրջաններ ներառելու միտում ունի: Այդ պատճառով արդյունաբերական հասարակությունն անկասելի ընթացքով դառնում է համաշխարհային քաղաքակրթություն:

Չորրորդ՝ հասարակության ընկերային (սոցիալական) բարդ և զարգացած կառուցվածքի առկայություն. հիմնական դասակարգեր են դառնում ձեռներեցները և բանվորները:

Հինգերորդ՝ զարգացած և հագեցած հասարակական–քաղաքական ու մշակութային կյանք:

Վեցերորդ՝ հասարակության մեջ մարդկանց տնտեսական, ընկերային, հոգևոր, մշակութային և մյուս հարաբերությունների անկախացում իշխանությունից. նախկին հպատակ–թագավոր (իշխան) հարաբերությունը վերանում է, հպատակին փոխարինելու է գալիս քաղաքացին, արդյունքում առաջանում է քաղաքացիական հասարակություն:

Յոթերորդ՝ ժողովրդավարական, իրավական պետություն, որը ստեղծվում է մարդկանց մասնակցությամբ և ընդհանուր համաձայնությամբ, կարգավորում է հասարակական կյանքը օրենքներով, ապահովում նրա կենսագործունեությունը:

Արդյունաբերական քաղաքակրթության այս բնորոշ կողմերից մի քանիսի մասին արդեն խոսվել է: Մնացածներին կծանոթանաք ավելի հանգամանորեն:

Լուսավորական շարժումը՝ հասարակության արդիականացման գաղափարախոսություն: Վերածննդի և Ռեֆորմացիայի ժամանակները սկիզբ դրեցին հասարակության արդիականացման գաղափարական վերելքին: XVII–XVIII դարերում դրան հաջորդեց արդիականացման մի նոր աշխարհայացք՝ **լուսավորական գաղափարախոսությունը:**

XVII դարում բարեփոխումների կարիք զգացող եվրոպական հասարակությանը հուզում էին պետության, քաղաքականության և մարդկանց իրավունքների հիմնախնդիրները: Այդ իսկ պատճառով առաջացավ մարդկանց բնական իրավունքի տեսությունը: Բնական իրավունքի գաղափարն առաջացել է դեռևս անտիկ աշխարհում: Նոր ժամանակների սկզբին առաջիններից մեկը փորձեց այն հիմնավորել հոլանդացի **Գրոտիուսը** (XVII դ.): Նա արդարացի էր համարում այն հասարակությունը, որի օրենքները բխում են բնությունից, այսինքն՝ բնական են, այլ ոչ մարդկանց ցանկությունից: Այդ գործում մեծ դեր խաղաց նաև անգլիացի **Ջոն Լոկը** (1632–1704 թթ.), որը «հասարակության բնական վիճակը» համարում էր ժողովրդի ինքնիշխանությունը, մարդկանց անօտարելի իրավունքների՝ ազատության և սեփականության իրավունքների փոխհամաձայնեցված իրագործումը:

Բնական իրավունքով զբաղվող առանձին մարդկանց գործունեությունը XVIII դարում դարձավ հասարակական հզոր շարժում: Ելնելով նոր գաղափարների բովանդակությունից՝ այն անվանում են «Լուսավորության դար»: Նորովի իմաստավորվեցին գիտությունը, մշակույթը, քաղաքականությունը և տնտեսությունը: Ազգային առանձնահատկություններով հանդերձ՝ այն դարձավ համաեվրոպական հոգևոր երևույթ, որի կենտրոնը Ֆրանսիան էր:

Ֆրանսիայում լուսավորական շարժման նշանավոր գործիչներն էին՝ Շ. Մոնտեսքյոն, Ֆ. Վոլտերը, Դ. Դիդրոն, Ժ.–Ժ. Ռուսոն, Անգլիայում և Շոտլանդիայում՝ կոմս Շեֆտսբերին, Է. Բյորկը, Դ. Հյումը, Ա. Սմիթը, Իտալիայում՝ Պ. Վերրին, Չ. Բեկարիան, Գերմանիայում՝ Խ. Վոլֆը, Յ. Հերդերը, Գ. Է. Լեսինգը, Ի. Կանտը, Ֆ. Շիլլերը, Ռուսաստանում՝ Մ. Լոմոնոսովը, Ն. Նովիկովը և այլք: Նրանք իմաստասերներ էին, գրողներ, արվեստագետներ, իրավագետներ, հասարակական գործիչներ:

Լուսավորական շարժման գլխավոր գաղափարներն էին.

Առաջին՝ ավատատիրական կարգերի և նրա հասարակական կառույցների ժխտումը:

Երկրորդ՝ մարդկային բանականությունը հասարակական երևույթների և զարգացման բացատրման գլխավոր միջոց համարելը: Լուսավորականները շրջանառության մեջ դրեցին «բանական ազգ» հասկացությունը: Հենց այդ պատճառով «Լուսավորության դարի» փոխարեն երբեմն օգտագործում են «Բանականության դար» անվանումը:

Երրորդ՝ մարդկային հասարակությունը որպես առաջադիմական զարգացում դիտելը: Բա-



Ադամ Սմիթ

Ջոն Լոկ

Միխայիլ Լոմոնոսով

ցառություն է Ռուսոն, որի կարծիքով՝ մարդկության երջանիկ դարը մնացել է անցյալում:

Չորրորդ՝ գիտությունը, կրթությունը, կատարյալ օրենքները, գաղափարները՝ հասարակության առաջադիմության շարժիչ ուժեր, իսկ կաթոլիկ եկեղեցին և կրոնական մոլեռանդությունն ու տգիտությունը՝ արգելակիչ ուժ համարելը: Հենց այդ իմաստով է լուսավորությունն աշխարհիկ գաղափարախոսություն:

Հինգերորդ՝ մարդկանց և ազգերի բնական իրավունքների՝ կյանքի, ազատության և սեփականության ապահովումը:

Վեցերորդ՝ այն պնդումը, որ իշխանության աղբյուրը ազգն է, պետությունը հասարակական դաշինք է, օրենքները՝ ընդհանուրի կամքի դրսևորում:

Յոթերորդ՝ սահմանադրական կարգի և քաղաքացիական հասարակության հաստատում, հանրապետության կամ սահմանադրական միապետության հաստատում:

Ութերորդ՝ պետական բարձրագույն իշխանության՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների տարանջատումը:

Իններորդ՝ աշխատանքը ժողովուրդների և մարդկանց հարստության գլխավոր միջոց համարելը: Դրա համար անհրաժեշտ է մարդկանց ազատ, սահմանափակումներից զերծ տնտեսական գործունեություն:

Ինչպես տեսնում եք, լուսավորականների գաղափարները համահունչ են արդյունաբերական քաղաքակրթության բնորոշ կողմերին և բխում են նրա էությունից: Սակայն նրանց բոլորից շատ հուզում էր հասարակական–քաղաքական կարգերի բարեփոխումը:

Սահմանադրական կարգի հաստատման միտումները և գլխավոր արդյունքները: Լուսավորական շարժումը մեծապես սրեց հասարակական միտքը, խթանեց գիտության և մշակույթի զարգացումը: Մեծ թռիչք ապրեցին բնագիտությունը, գեղարվեստական մշակույթը և հասարակական գիտությունները: Առաջին անգամ շրջանառության մեջ դրվեցին գիտական նոր տեսություններ և հասկացություններ: Հումանիտար բնագավառում դրանցից էին՝ «գեղագիտություն», «քաղաքակրթություն», «հանրագիտարան», «սահմանադրություն» և այլն:

Ինչպես Եվրոպայի, այնպես էլ մյուս ժողովուրդների զարգացումը XVII–XIX դարերում ընթացավ լուսավորական գաղափարների դրոշի ներքո: Այդ գործընթացի գլխավոր արդյունքներից մեկը պետականության ազատական–սահմանադրական կարգի հաստատումն էր: Այդպիսի կարգի հաստատումն ուղիղ համեմատական էր արդեն ձեզ ծանոթ հասարակության տնտեսական և ընկերային արդիականացմանը: Դա վերաբերում է նաև քաղաքացիական հասարակության, իրավագիտակցության և քաղաքական նոր մտածողության ձևավորմանը:

Գլխավոր գաղափարը քաղաքացու՝ որպես նոր մարդու ազատագրումն էր բռնապետությունից, արտաքին միջամտությունից, նրա մասնավոր ու գործարար կյանքի ապահովումը: Իսկ դա հնարավոր է պետականության պայմանագրային համակարգի և ազգի ինքնիշխանության սկզբունքի հաստատման միջոցով: Անշուշտ, այսպիսի զարգացման միտումներից էականը պետության ստեղծմանը և ղեկավարմանը չափահաս քաղաքացիների իրա-

կան մասնակցության ապահովումն էր: Օրենքներով կարգավորված, ազատ գործող հասարակական կառույցները (կուսակցություններ, կազմակերպություններ, մամուլ և այլն) և ընդհանուր ընտրական իրավունքը դրա գլխավոր միջոցներն են:

Ազատական–սահմանադրական կարգի հաստատման գործընթացը բոլոր երկրներում միանման չէր: Դա կախված էր տվյալ երկրի կամ տարածաշրջանի պատմական պայմաններից: Քաղաքական համակարգի արդիականացումը շուտ կատարվեց Նիդերլանդների միացյալ գավառներում, Շվեյցարիայում, Ամերիկայում՝ Անգլիայի գաղութներում: Ազատագրվելով օտար տիրապետությունից՝ նրանց հարկ չեղավ հաղթահարելու պետական հին կարգերի դիմադրությունը:

Ազատական–սահմանադրական կարգերի հաստատումը յուրահատուկ ընթացք ունեցավ Անգլիայում և Ֆրանսիայում: Հեղափոխությունների արդյունքում Անգլիան տվեց սահմանադրական–միապետական կարգերի օրինակ, Ֆրանսիան՝ հանրապետական կարգի:

Սահմանադրական կարգերի հաստատումը երկարատև և դժվարին եղավ այն երկրներում, որտեղ միջնադարից պահպանվել էին միապետական կարգի կայուն ավանդույթներ, դասային ամուր կառուցվածք և կրոնի մեծ ազդեցություն: Այդպիսի երկրներ էին Իսպանիան, Ավստրո–Հունգարիան, Ռուսաստանը և այլն: Ռուսաստանը սահմանադրական կարգի հաստատման փորձ կատարեց միայն XX դարի սկզբին:

Սահմանադրությունները հաճախ ստեղծվում էին ազգային–ազատագրական պատերազմների և հեղափոխությունների արդյունքում: Այդպիսիք են Իտալիան, Գերմանիան, Բալկանյան ժողովուրդները և ուրիշներ:

XIX դարը համարվում է սահմանադրությունների դար: Հիրավի, այս շրջանում սահմանադրական կարգեր հաստատվեցին եվրոպական բոլոր պետություններում, բացի Ռուսաստանից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են արդյունաբերական հասարակության բնորոշ կողմերը:
2. Հասարակության արդիականացման ի՞նչ գաղափարախոսություններ են ստեղծվել XV–XVIII դդ.: Բացատրե՛ք «գաղափարախոսություն» հասկացությունը:
3. Նոր ժամանակներում ո՞վ առաջինը հիմնավորեց բնական իրավունքի գաղափարը: Ներկայացրե՛ք Ջոն Լոկի տեսությունը:
4. Ո՞ր երկիրը դարձավ լուսավորական շարժման կենտրոնը: Նշե՛ք լուսավորական շարժման նշանավոր գործիչներին: Որո՞նք էին լուսավորական շարժման գլխավոր գաղափարները:
5. Բացատրե՛ք «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը: Ազատական–սահմանադրական կարգի հաստատումն ի՞նչ ընթացք ունեցավ տարբեր երկրներում:

§ 4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Ազատականությունը՝ լուսավորական շարժման շարունակություն: XIX դ. գլխավոր գաղափարական–քաղաքական հոսանքներից է **ազատականությունը** (լիբերալիզմ՝ լատ. liberum բառից, որ նշանակում է ազատ): Նրա ակունքները սկիզբ են առնում մարդու բնական իրավունքի տեսությունից և լուսավորական շարժումից: Առաջին անգամ ազատական հասկացությունը՝ որպես քաղաքական խմբավորման անվանում, օգտագործվել է 1810 թ. ընտրված Իսպանիայի խորհրդարանում: Այնուհետև տարածվել է Եվրպայի մյուս երկրներում, դարձել առաջադիմությանը կողմնակից կուսակցությունների անվանում:

Ազատականությունը ելնում է լուսավորականների այն հիմնական գաղափարից, համաձայն որի՝ մարդկային հասարակությունը զարգանում է դեպի կատարյալը: Ազատականությանը բնորոշ է ապագայի նկատմամբ լավատեսությունը: Ըստ դրա՝ մարդու գիտելիքները, բարե-

կեցությունը և բարոյական արժեքները հետզհետե առաջընթաց են ապրում: Իսկ այդպիսի զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է հասարակության մեջ հաստատել փաստացի իրավահավասարություն, մարդկանց փոխհամաձայնությամբ օրինական պետության ստեղծում: Ազատական պետության խնդիրն է պայմաններ ստեղծել անհատի ընդունակությունների զարգացման, ինչպես նաև ազատ գործունեության համար՝ ի շահ մարդու և հասարակության: Պետության մյուս խնդիրը մարդկանց ստեղծած օրինական սեփականության և բարիքի պաշտպանությունն է: Այսինքն՝ ազատականները դրանով իսկ փորձում էին գտնել անհատի և հասարակական շահերի ներդաշնակեցման ուղիները: Իսկ այդպիսի զարգացման խոչընդոտներ են միապետի կամայականությունները, կրոնական անհանդուրժողականությունը և այլն:

XIX դարի կեսերին ազատականությունը Եվրոպայում (գլխավորապես՝ Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում) դարձավ ազդեցիկ քաղաքական ուժ ընդդեմ միահեծանության: Իսկ նույն դարի վերջին տասնամյակներին հանդես եկան **նոր ազատականները**: Ժողովրդավարության հաստատումն առաջավոր երկրներում ստեղծեց նոր խնդիրներ: Եթե առաջ ազատականները պնդում էին, թե պետության դերը մարդկանց ազատ գործունեության նկատմամբ պետք է սահմանափակել, ապա այժմ, ընդհակառակը, կարծում էին, որ պետք է մեծացնել պետության կարգավորիչ իրավունքները: Այսինքն՝ պետությունը պետք է դառնա քաղաքական, տնտեսական, ընկերային և մշակութային բարեփոխումների նախաձեռնող և իրագործող: Իհարկե, ազատականները հասարակական բոլոր հիմնախնդիրներին նույն կերպ չէին մոտենում: Նրանց մի մասը մերձեցավ ձախ ուժերին (օրինակ՝ Ֆրանսիայում), մյուսները՝ ազգայնականներին և աջ ուժերին (օրինակ՝ Գերմանիայում):

Պահպանողականության առաջացումը և հասարակական նշանակությունը: **Պահպանողականությունը** (կոնսերվատիզմ՝ լատին. conservatio բառից, որ նշանակում է պահպանում) քաղաքական գաղափարախոսություն է, որն առաջացել է որպես XVII–XVIII դարերի հեղափոխությունների և լուսավորականության հակազդեցություն: Պահպանողականները համոզված էին, որ հասարակության արմատական և արագ փոփոխությունները վնասում են ազգային դարավոր արժեքներին: Սրբացնելով դարերով ձեռք բերված ազգային արժեքները (կրոնը, մշակույթը, սովորույթները, պետական կարգը և այլն)՝ պահպանողականներն իրենց գլխավոր խնդիրը համարում էին դրանց պահպանումը: Այստեղից էլ՝ նրանց բացասական վերաբերմունքը բարեփոխումների նկատմամբ: Պահպանողականները դարավոր արժեքներից մեկը համարել են միապետությունը և ազգային կրոնը: Անգլիացի **Էդմունդ Բյորկի** (1729–1797 թթ.) կարծիքով՝ օրինակելի է անգլիական սահմանադրական միապետական կարգը, որ գալիս է դարերից և բխում ժողովրդի շահերից: XIX դարի սկզբներին պահպանողականության գաղափարները և դրանց իրագործման փորձերը դարձան **հետադիմական:** Մեծ հեղափոխության արդյունքում ստեղծված սահմանադրական կարգերը որակվեցին անօրինական, հին կարգերը՝ օրինական (լեգիտիմ): Ընդսմին՝ օրինական կարգի խախտման պատճառ էր համարվում Աստծո նկատմամբ նախկին հավատի սասանումը:

Եվրոպայում պահպանողականության հայրենիքը Մեծ Բրիտանիան է: Այս երկրում պահպանողական գաղափարները ձևավորվեցին ընտրական բարեփոխումների համար պայքարում: XIX դ. 50–70–ական թվականներին **թորի** կուսակցությունն ավելի կազմակերպվեց, **ստացավ պահպանողական** անվանումը, որը և տարածվեց եվրոպական շատ երկրներում: Այս նոր պահպանողականությունն, ի տարբերություն հնի, ստիպված եղավ ճանաչել արդյունաբերական հասարակության նոր իրողությունները: Երբեմն կազմելով կառավարություն՝ նրանք կատարում էին բարեփոխումներ՝ փորձելով դրանք լավագույնս համատեղել ավանդական արժեքների հետ: Դրանով իսկ նրանք ինչ–որ չափով հավասարակշռում էին հասարակական առաջընթացը՝ զերծ պահելով այն հեղափոխական ծայրահեղություններից: Իսկ այն երկրներում, որտեղ պահպանողականությունը մնացել էր ավանդապաշտության մակարդակում, տեղի ունեցան հեղափոխական ցնցումներ: 1905–1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությունը դրա բնորոշ օրինակն է:

Ազգայնականությունը՝ ազգերի ազատագրման գաղափարախոսություն: Արդյունաբերական քաղաքակրթությունն ազգերի զարգացումը հասցրեց նոր մակարդակի. ազգի, հայրենիքի, լեզվի, մշակույթի գիտակցումն ու իմաստավորումը ձեռք բերեց նոր որակներ: Ի հավելումն այս բոլորի՝ միասնական ներքին շուկայի ձևավորումն ազգը դարձրեց տնտեսա-

Ռոբերտ Օուեն



Ֆրիդրիխ Էնգելս

կան մեկ անբաժանելի մարմին: Այս իրավիճակում առաջանում է հայրենի բնօրրանում ազգի տնտեսական, ընկերային, քաղաքական, մշակութային համախմբման և ազատագրման գաղափարախոսություն, որն անվանում են **ազգայնականություն**: Ազգայնականության առաջացման հզոր խթաններ դարձան լուսավորական շարժումը և Մեծ հեղափոխությունը: 1792 թ. Ավստրիայի դեմ պատերազմում Ֆրանսիայի **Օրենսդիր ժողովն օրենք ընդունեց. «Հայրենիքը վտանգի մեջ է»:** Սա նշանակում է, որ հայրենասիրությունն օրենքի ուժ էր ստանում, որը նորույթ էր: Նապոլեոնի դարաշրջանում վերելք ապրեց Ֆրանսիայի դեմ ազատագրական պայքարը, որը նոր մակարդակի բարձրացրեց ազգայնական շարժումը: Վիեննայի վեհաժողովը ի զորու չեղավ կասեցնելու ազգայնականության հետագա ծավալումը:

XIX դարում ազգայնականությունը երկու դրսևորում ունեցավ: Առաջին՝ ազգայնականության դրոշի ներքո տեղի ունեցան ազգերի քաղաքական համախմբում և ազգային նոր պետությունների ստեղծում: Դրա բնորոշ օրինակ է Գերմանական կայսրության (1871 թ.) և Իտալական թագավորության (1861 թ.) ստեղծումը: Երկրորդ՝ ազգայնական գաղափարների դրոշի ներքո ընթացավ Հունաստանի, Սերբիայի, Ռումինիայի, Բուլղարիայի և մյուսների անկախացումն օսմանյան լծից:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին ազգայնական առաջադիմական շարժումը մեծ տերություններում այլասերվեց և վերածվեց հետադիմական ազգայնամոլության: Դրա մի դրսևորումը մեծապետական **շովինիզմն** էր, որը նպատակ ուներ ձուլելու հպատակ ազգերին: Այդպիսին էին Ավստրո–Հունգարիան, Գերմանիան, Ռուսաստանը և Օսմանյան տերությունը: Հենց այդ քաղաքականության հետևանքներից էր **ցեղասպանությունը**:

Աղքատության վերացման ուսմունքները և հասարակական շարժումները: Արդեն նշվել է, որ արդյունաբերական քաղաքակրթությունը ստեղծում է երկբևեռ՝ ձեռներեց–կապիտալիստների և բանվոր–պրոլետարների հասարակություն: Այս երկու դասակարգերի միջև պայքարը մշտական երևույթ էր ինչպես XIX դարում, այնպես էլ XX դարի սկզբին: Չնայած ընդհանուր կենսամակարդակի աճի միտումին՝ աղքատությունը տարածված էր: Բանվորների, հատկապես կանանց և երեխաների աշխատանքի դաժան շահագործումը մտահոգում էր առաջադեմ մարդկանց: Հենց այդ պատճառով առաջացան ուսմունքներ, որոնք նպատակ ունեին ցույց տալու բարեկեցիկ, առանց աղքատության հասարակության ստեղծման ուղին: Այդպիսի ուսմունքներ էին **սոցիալիզմը** (ընկերվարություն) **և կոմունիզմը** (համայնավարություն):

XIX դարի առաջին կեսին, պայմանավորված արդյունաբերական հեղաշրջմամբ, ստեղծվում է համակարգված ուսմունք սոցիալիզմի մասին: Սոցիալիզմի (լատ.՝ socialis–հասարակական) ուսմունքի ստեղծող են համարվում Ֆրանսիայում **Անրի Սեն-Սիմոնը** (1760–1825 թթ.), իսկ Անգլիայում՝ **Ռոբերտ Օուենը** (1771–1858 թթ.): Նրանք առաջին մտածողներն էին, որ ցույց տվեցին արդյունաբերական հասարակության արատները: Նրանք առաջ քաշեցին նոր հասարակարգի ստեղծման իրենց նախագծերը և համոզված էին, որ դրան կարելի է հասնել մարդկանց բարի կամքի օգնությամբ:

Սոցիալիզմի նշանավոր հետևորդներից էին գերմանացիներ **Կարլ Մարքսը** (1818–1883 թթ.) և **Ֆրիդրիխ Էնգելսը** (1820–1895 թթ.): Նրանց ստեղծած ուսմունքն անվանում են կոմունիզմ: Առաջին անգամ **կոմունիզմ** (ֆր.՝ commune–համայնք) հասկացությունն օգտագործվել է Մեծ

հեղափոխության տարիներին: Հետագայում այդպիսի գաղափարներ արտահայտել են շատերը: Մարքսը և Էնգելսը համոզված էին, որ կապիտալը՝ որպես մասնավոր սեփականություն, բանվորների շահագործման միջոց է: Հետևաբար՝ ամբողջ արտադրության միջոցները՝ գործարանները, պետք է դարձնել հանրային սեփականություն: Եվ քանի որ ձեռներեցները կամավոր չեն զիջի իրենց սեփականությունը, բանվորները պետք է կատարեն սոցիալիստական հեղափոխություն, ստեղծեն իրենց պետությունը: Բանվորական պետությունը հնարավորություն կտա ստեղծելու նոր՝ կոմունիստական հասարակարգ: Ըստ գաղափարի՝ նրան բնորոշ է համընդհանուր սեփականությունը, հանրային աշխատանքը, նյութական բարիքների առատությունը, բարեկեցիկ կյանքը, դասակարգերի և նույնիսկ պետության բացակայությունը:

Մարքսը և նրա հետևորդները Եվրոպայում ու աշխարհի այլ մասերում տարածեցին իրենց գաղափարները, ստեղծեցին բազում կազմակերպություններ և կուսակցություններ: Այդ կուսակցությունները հայտնի են սոցիալիստ–ժողովրդավարներ (սոցիալ–դեմոկրատներ) անունով: Որոշ երկրներում դրանք ունեն սոցիալիստական կամ բանվորական անվանումը: Նրանք իրենց նպատակներին հասնելու համար մասնակցում էին խորհրդարանական ընտրություններին, կազմակերպում գործադուլներ և ցույցեր: Նրանց մի մասը կարծում էր, որ սոցիալիզմին պետք է հասնել միայն հեղափոխության ճանապարհով, մյուսները՝ բարեփոխումների: Ռուսաստանում Մարքսի ուսմունքը շարունակեց **Վլադիմիր Լենինը** (1870–1924), որը հեղափոխության համոզված կողմնակից էր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին XIX դ. առաջացած քաղաքական հիմնական ուսմունքները: Ներկայացրե՛ք ազատականության հիմնական գաղափարները: Ըստ ազատականության տեսության՝ որո՞նք էին պետության հիմնական խնդիրները:
2. Ինչո՞ւ պահպանողական գաղափարները համարվեցին հետադիմական: Ո՞ր երկիրն է համարվում պահպանողականության հայրենիքը:
3. Որո՞նք են ազգայնականության գլխավոր գաղափարները: Ի՞նչ դրսևորումներ ունեցավ ազգայնականությունը XIX դարում: Ո՞ր երկրներում ազգայնականությունը վերածվեց հետադիմական երևույթի:
4. Ովքե՞ր են համարվում սոցիալիզմի ուսմունքի ստեղծողները: Ներկայացրե՛ք Մարքսի և Էնգելսի գաղափարները: Ձեր կարծիքով՝ հնարավո՞ր է արդյոք իրականացնել այդ գաղափարները:

§ 5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՆԳԼԻԱՅԻ ՈՒՂԻՆ

Խորհրդարանական միապետության ստեղծումը XVII–XVIII դարերում: XVII դարի անգլիական հեղափոխությունը խթանեց արդյունաբերական հասարակության ստեղծմանը: Հեղափոխության նվաճումներից էին սահմանադրական մտքի զարգացումը, նոր պետականության ստեղծման փորձերը:

Սահմանադրական կարգի սեփական նախագիծ առաջադրեց անկախականների կուսակցությունը: «Առաջարկությունների գլուխներ» փաստաթղթում նրանք ծրագրում էին ստեղծել սահմանադրական միապետություն: Թագավորի և իր կողմնակիցների համառ դիմադրությունը ձախողեց դրա իրագործումը: Ուստի 1649 թ. անկախականները հաստատեցին հանրապետություն: Այնուհետև Օ. Կրոմվելը միապետականների դեմ պայքարելու և բարեփոխումները պաշտպանելու համար ստեղծեց կառավարման առանձնահատուկ ձև՝ **պրոտեկտորատ:** 1653 թ. նա մի խումբ սպաների հետ կազմեց սահմանադրություն, որը հայտնի է «**Կառավարման միջոց**» անունով: Այդ սահմանադրությունը Եվրոպայի պատմության մեջ առաջին անգամ օրենսդրորեն ձևակերպեց խորհրդարանական պետության գլխավոր սկզ-

DECLARATION
OF THE
COMMONS
assembled in
PARLIAMENT
Against a Scandalous Book Entitulled, The Second part of England's new Chains discovered, &c.

Die Martii, 17 Martii, 1649.

THE House being informed of a scandalous and seditious Book Printed, entitulled, The second part of England's New Chains discovered.

The said Book was this day read.

Resolved upon the Question by the Commons assembled in Parliament, That this printed Paper, entitulled, The second Part of England's New Chains discovered, &c. doth contain most false, scandalous, and reproachful matter, and is highly Seditious and Destructive to the present Government, as it is now Declared and Settled by Parliament, tends to division and mutiny in the Army, and the raising of a new War in the Commonwealth, and to hinder the present relief of Ireland, and to the continuing of Free Quarter: And this House doth further Declare, That the Authors, Contrivers, and Framers of the said Paper, are guilty of High Treason, and shall be proceeded against as Traytors; And that all persons whatsoever, that shall joyn with, or adhere unto, and hereafter voluntarily ayd or abett the Authors, Framers, and Contrivers of the aforesaid Paper, in the prosecution thereof, shall be adjudged as Traytors to the Commonwealth, and be proceeded against accordingly.

Ordered by the Commons assembled in Parliament, That this Declaration be forthwith Printed and Published.

Henry Scobell, Clerk, Parliament.

London, Printed for Edward Husband, Printer to the Honorable House of Commons. Mar. 23. 1649.

Լևելերների ներկայացրած սահմանադրության նախագիծը

բունքներից մեկը՝ իշխանության տարանջատումը:

Մյուս կուսակցությունն իրեն անվանում էր **լևելեր** (հավասարական): Նրանց առաջնորդը Ջոն Լիլբեռնն էր: Նա առաջ էր քաշում մարդու բնական իրավունքից բխող սահմանադրական դրույթներ՝ ժողովրդի ինքնիշխանություն, իրավահավասարություն, չափահաս տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունք, մասնավոր սեփականության անձեռնմխելիություն, տնտեսական գործարարության ազատություն և այլն: Լևելերները ներկայացրին սահմանադրության սեփական նախագիծը՝ «Ժողովրդական համաձայնություն» փաստաթուղթը, որում թեև չի հիշատակվում հանրապետության մասին, բայց և պետական կառուցվածքում տեղ չէր տրվում արքային: Լևելերների սահմանադրական նախագիծը, որն ավելի առաջադիմական էր, չիրագործվեց:

Անգլիայի սահմանադրական կարգի մեծ նվաճում էր 1679 թ. ընդունված **անձի անձեռնմխելիության մասին օրենքը** («Habeas corpus act»): Ըստ օրենքի՝ ձերբակալվածներն իրավունք ունեին պահանջելու դատավորի թույլտվություն, գործի հետաքննություն և գրավի դիմաց կալանքից ազատում:

Ստյուարտ արքայատոհմը, վերականգնելով իր գահը, փորձում էր կրկին անտեսել խորհրդարանի իրավունքները: 1688 թ. խորհրդարանը Ջեյմս II թագավորին մեղադրեց «թագավորության հիմնական սահմանադրության խախտման համար»:

Խորհրդարանը դաշինքի մեջ մտավ Նիդերլանդներում կառավարող Վիլհելմ Օրանցու հետ և նրա զորքի օգնությամբ երկրից վռնդեց Ջեյմս II–ին: 1689 թ. Վիլհելմ Օրանցին որոշակի պայմաններով հռչակվեց Անգլիայի թագավոր: Այդ բոլորը կատարվեց առանց արյունահեղության և բռնությունների, որի համար կատարվածը շատ պատմաբաններ անվանեցին «Փառահեղ հեղափոխություն»: Այդ ժամանակ ընդունվեցին երկրի հասարակական–քաղաքական կյանքը կարգավորող կարևոր օրենքներ: 1689 թ. հաստատված «**Իրավունքների օրենքը**» օրենսդրական իշխանությունը լրիվ տալիս էր խորհրդարանին: Հարկերի և պետական եկամուտների տնօրինումը, ինչպես նաև դատական իշխանությունն անցնում էին խորհրդարանին: Հռչակվում էր նաև խոսքի ազատություն: Հատուկ օրենքով սահմանվում էր կրոնական ազատություն: Թագավորին վերապահվում էր միայն գործադիր իշխանությունը: **Ընդունված օրենքները սկիզբ դրեցին սահմանադրական միապետության ստեղծմանն Անգլիայում:**

XVIII դարում ընդունվեցին նոր օրենքներ, որոնցով ամրապնդվում էր սահմանադրական կարգը: Թագավորի իշխանությունը սահմանափակվեց, մեծացավ խորհրդարանի դերը պետական կյանքում: Քաղաքական կյանքում մեծ դեր էին կատարում **թորի** և **վիգ** կուսակցությունները: Դրանով սկիզբ դրվեց այլախոհությանը, որը ժողովրդավարության կարևոր սկզբունքներից մեկն է: Համայնքների ատյանում մեծամասնություն կազմած թորի կամ վիգ կուսակցությունները կազմում էին կառավարություն: Թագավորը հաստատում էր նրա կազմը և ընդունում հրաժարականը: Ընտրություններում պարտված կուսակցությունը դառնում էր ընդդիմություն: Օրենքներն ընդունում էր խորհրդարանը, հաստատում՝ թագավորը, իրագործում՝ նախարարների խորհուրդը: 1707 թվականից Անգլիան անվանում են նաև Մեծ Բրիտանիա:

Մեծ Բրիտանիայի հասարակական–քաղաքական կյանքը: Արդյունաբերական հեղաշրջման փուլում Անգլիայում արդեն առկա սահմանադրական կարգը և քաղաքական կյանքը որոշակի առաջընթաց ապրեց: Հասարակական կյանքը փոխվում էր մեծ արագությամբ: Խոշոր քաղաքներում կուտակված բնակչությունն ուներ բազում չլուծված կենսական խնդիրներ, հատկապես օտարված էր պետական կյանքից:

Արդյունաբերական հեղաշրջման հենց սկզբից սկսեց աշխուժանալ երկրի քաղաքական կյանքը: Վիգ կուսակցության շատ գործիչներ պահանջում

էին ավելացնել ընտրողների թիվը: Իսկ երբ թագավորը փորձեց անտեսել խորհրդարանի իրավունքները, առաջացավ մեծ ընդդիմություն: Պայքարը դուրս եկավ խորհրդարանի սահմաններից և տարածվեց երկրում: Դրան մասնակցում էին ինչպես հասարակության միջին դասը, այնպես էլ բանվորներ: Այդպիսի շարժումն ընդունված է անվանել **արմատական**: Արմատական շարժումը նպաստում էր ժողովրդավարության հաստատմանը:

Արմատական շարժումը նոր ուժով ծավալվեց XIX դարի 20–30–ական թթ., երբ ավարտվեց արդյունաբերական հեղաշրջումը: Սովորական դարձան ցույցերը, հանրահավաքները և իշխանությունների դեմ ընդվզելը: Համառ պայքարից հետո կառավարությունը 1832 թ. կատարեց ընտրական բարեփոխում: Արդյունքում խորհրդարանի ընտրողների թիվը երեք անգամ աճեց: Անշուշտ, 1832 թ. բարեփոխումը կարևոր քայլ էր դեպի ժողովրդավարացում:

Ընտրական իրավունքի և ժողովրդավարության համար զանգվածային նոր շարժումն ընթացավ XIX դարի 30–50–ական թթ.: Այն պատմության մեջ հայտնի է **չարտիզմ** անունով: Չարտիզմն իր բնույթով արմատական զանգվածային շարժում էր, որը նպատակ ուներ հասնելու տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի իրագործման և հասարակության ընդհանուր ազատականացման: Չարտիստները թեև հաջողության չհասան, սակայն նրանց շարժումը հզոր խթան դարձավ հասարակության հետագա ազատականացման համար: Չարտիստների գաղափարները կյանքի կոչվեցին Անգլիայի պատմության հաջորդ դարաշրջանում:

Չափահաս տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի համար պայքարը կրկին սրվեց XIX դ. երկրորդ կեսին: Դրան մասնակցում էին արմատականներ, ինչպես նաև մեծ թվով բանվորներ: Արդյունքում թորի կուսակցության կառավարությունը 1867 թ. խորհրդարանի միջոցով հաստատեց ընտրական երկրորդ բարեփոխման օրենքի նախագիծը: Հերթական անգամ մեղմացվեց գույքային սահմանափակումը: Ընտրողների թիվը ավելի քան երեք անգամ աճեց: 1884 թ. Համայնքների ատյանը հաստատեց ընտրական երրորդ բարեփոխման օրենքի նախագիծը: Ընտրողների թիվը երկու անգամ աճեց և հասավ միլիոնների: Տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքը օրինականացվեց միայն 1918 թ.:

Կանանց ընտրական իրավունք տալու պայքարի մասնակից կանայք կոչվում էին **ընտրամարտուհի** (անգլ.՝ suffragette): Երկար պայքարից հետո 1918 թ. բարեփոխմամբ ընտրական իրավունք ստացան 30–ից բարձր տարիք ունեցող կանայք: Իսկ չափահաս բնակչության միասնական համընդհանուր ընտրական իրավունքը Մեծ Բրիտանիայում վերջնականապես հաստատվեց միայն 1928 թ.:

Սահմանադրական կարգի ամրապնդումը: XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին Մեծ Բրիտանիայի հասարակական–քաղաքական զարգացման գլխավոր միտումներն էին երկրի սահմանադրական կարգի ամրապնդումը և ժողովրդավարության հաստատումը: Նախ՝ պետական կարգի լուրջ փոփոխություններ տեղի չունեցան: Անգլիացիները կարողանում էին ավանդապահությունը ներդաշնակել արդիականացմանը: Թագավորի իշխանությունը երկրի հասարակական–քաղաքական կյանքում շարունակեց նվազել: Նրա դերը կարելի է բնութագրել հանրահայտ արտահայտությամբ. «**Թագավորն իշխում է, բայց չի կառավարում**»: Միաժամանակ պահպանվեց հարգանքը գահի նկատմամբ, քանի որ այն խորհրդանշում էր անգլիական պետականությունը:

Պետական համակարգում գլխավոր դերը շարունակում էր կատարել Համայնքների ատյանը: Լորդերի ատյանը մղվում էր հետին դիրք: Գլխավոր պատճառը նրա մշտական ընդդիմադիր դիրքորոշումն էր բարեփոխումների նկատմամբ: Այդ պատճառով 1911 թ. օրենքով Լորդերի ատյանը զրկվում է երկրի բյուջեն հաստատելու իրավունքից:

Հասարակական լուրջ նվաճում էր **երկկուսակցական համակարգի** ձևավորումը: Թորի և վիգ կուսակցությունները դարձան կազմակերպված քաղաքական ուժեր: Որդեգրելով համապատասխան գաղափարախոսություն՝ թորին պաշտոնապես ստացավ պահպանողական անվանումը: Նույն պատճառով վիգը կոչվեց ազատական (լիբերալ) կուսակցություն: Ընտրական իրավունքի ընդլայնման և այլախոհության տարածման պայմաններում նրանք ամեն կերպ ձգտում էին շահել ժողովրդի վստահությունը: Նրանց ջանքերով օրինականացվեց արհմիությունը, բարեփոխվեցին կրթությունը, բանակը, դատարանը, տեղական ինքնակառավարումը և այլն: Ընտրական պայքարն ազատ էր, տիրում էր խոսքի, ժողովների, գործադուլի, ցույցերի և հանրահավաքների ազատություն: Առաջանում էին նաև այլ կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշե՛ք Անգլիական հեղափոխության արդյունքները: 1660–1680–ական թթ. սահմանադրական կարգի հաստատման ի՞նչ քայլեր իրականացվեցին: Ինչո՞ւ Անգլիայում միապետությունը պահպանվեց:
2. Ե՞րբ են ձևավորվել թորի և վիգ կուսակցությունները: Ինչպե՞ս էր կազմավորվում երկրի կառավարությունը: Ե՞րբ է ստեղծվել Մեծ Բրիտանիան:
3. Ի՞նչ արդյունքներ տվեց ընտրական իրավունքի ընդլայնման համար սկսված արմատական շարժումը: Ի՞նչ է չարտիզմը, վերհանե՛ք դրա նշանակությունը:
4. Ներկայացրե՛ք Անգլիայում համընդհանուր ընտրական իրավունքի վերջնական հաստատման գործընթացի փուլերը:
5. Ո՞րն էր Մեծ Բրիտանիայի հասարակական–քաղաքական զարգացման գլխավոր միտումը XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին: Մեկնաբանե՛ք «Թագավորն իշխում է, բայց չի կառավարում» արտահայտությունը:

§ 6. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՈՒՂԻՆ

Սահմանադրական կարգերի հաստատման սկիզբը: 1789 թ. Ֆրանսիայում հասարակական–պետական ճգնաժամը վերածվեց հեղափոխության: Ընտրված **Դասային համաժողովն** իրեն հռչակեց **Ազգային ժողով** և ապա՝ **Սահմանադիր ժողով**: Հեղափոխական վերելքի պայմաններում Սահմանադիր ժողովը քննարկում և հաստատում էր բազմաթիվ նոր օրենքներ, որոնք ազատականացնում էին հասարակությունը: **1789 թ. օգոստոսի 26–ին** նա հաստատեց համամարդկային արժեք ունեցող **«Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը»:** Դրա հիմքում ընկած էր մարդու բնական իրավունքի տեսությունը: Հռչակագիրն ուներ 17 հոդված և սահմանում էր քաղաքացիների կյանքի, ազատության, սեփականության, բռնությանը դիմադրելու, ազգի ինքնիշխանության, իրավահավասարության, իշխանությանը մասնակցելու իրավունքները: Հռչակագիրը, որը մինչև այժմ հարուցում է ֆրանսիացիների ազգային հպարտությունը, դարձավ հետագա սահմանադրական օրենսդրության հիմքը:

1791 թ. Սահմանադիր ժողովը հաստատեց Ֆրանսիայի **առաջին սահմանադրությունը,** որը Ֆրանսիան հռչակում էր սահմանադրական միապետություն: Սահմանվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանության տարանջատում: Սահմանադրությունն առաջին անգամ օրինականացնում էր Ֆրանսիայի տնտեսական, ընկերային, վարչական, մշակութային և քաղաքական միասնությունը: Դրանով իսկ հիմք էր դրվում իրավական պետությանը:

Սակայն թագավորը և միահեծանության կողմնակիցները կատաղի պայքար սկսեցին հին կարգերը վերականգնելու համար: Դա հեղինակազրկեց միապետական կարգը: Առաջացավ հանրապետական շարժում: 1792 թ. ամռանը ապստամբ ժողովուրդը տապալեց միապետությունը: Դա նշանակում էր առաջին սահմանադրության վերացում: Ընտրվեց նոր Սահմանադիր ժողով՝ **Ազգային կոնվենտ**: 1792 թ. սեպտեմբերին նրա առաջին օրենքով վերացվեց միապետությունը, երկրորդ օրենքով Ֆրանսիան հռչակվեց հանրապետություն:

Առաջին հանրապետությունը (1792–1804) օրինական, սահմանադրական պետություն էր, քանի որ Ազգային կոնվենտն ընտրել էին Ֆրանսիայի 21 տարին լրացած բոլոր տղամարդիկ: Այդ ժամանակ Եվրոպայի և ոչ մի երկրում ժողովրդավարության այդպիսի դրսևորում չկար: Սակայն ֆրանսիական ազգը պառակտված էր հին և նոր կարգերի կողմնակիցների: 1793–1794 թթ. հաստատվեց ծայրահեղ հանրապետականների՝ յակոբինների հեղափոխական բռնատիրությունը: Նրա բոլոր միջոցառումներն օինականացրեց Ազգային կոնվենտը: Ժողովրդի կամքը կատարելու համար յակոբիններն ընդունեցին հին կարգերը հիմնովին վերացնելու մասին օրենք, ինչպես նաև ժողովրդավարական սահմանադրություն:

1795 թ. Ազգային կոնվենտն ընդունեց հանրապետության նոր, ավելի չափավոր սահմանադրություն: Այս սահմանադրության մեջ ևս պահպանված էր իշխանության տարանջատումը: 1795–1799 թթ. գործադիր իշխանության

Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը

անունով հանրապետությունը կոչվում էր Դիրեկտորիա:

1799 թ. գեներալ Նապոլեոն Բոնապարտը կատարեց հեղաշրջում, որից հետո սահմանադրական կարգը կտրուկ սասանվեց: Ընդունված երկու սահմանադրությունները (1799 թ. և 1804 թ.), թեև ձևականորեն պահպանում էին հանրապետությունը և իշխանության տարանջատումը, իրականում ամրապնդում էին Նապոլեոն Բոնապարտի անձնական իշխանությունը: Դրանք հաստատվում էին հանրաքվեներով: Իրեն տրված օրենքի ուժով 1804 թ. Նապոլեոն I–ը թագադրվեց կայսր: Նա թե՛ կոնսուլության (1799–1804 թթ.), թե՛ կայսրության (1804–1814 թթ.) տարիներին կյանքի կոչեց բազմաթիվ օրենքներ: Դրանք հետագայում նպաստեցին երկրի հասարակական–քաղաքական զարգացմանը:

Երկրորդ հանրապետությունը: 1814–1847 թթ. սահմանադրական կարգերից նահանջի դարաշրջան էր: Բուրբոնների վերականգնումը և ապա 1830 թ. հեղափոխությունը սահմանափակեցին ֆրանսիացիների ազատությունը: Ահա թե ինչու շուտով Ֆրանսիան կրկին կանգնեց հեղափոխական փորձության առջև: Նոր հեղափոխությունն ընթացավ 1848–1489 թթ.: Ջենքի դիմած հազարավոր մարդիկ արքայական գահը հանդիսավոր այրեցին Փարիզի հրապարակներից մեկում: Նորաստեղծ ժամանակավոր կառավարությունը Ֆրանսիան **երկրորդ** անգամ հռչակեց **հանրապետություն (1848–1852 թթ.):**

1848 թ. աշնանը ժողովրդի կողմից ընտրված Սահմանադիր ժողովը հաստատեց **Երկրորդ հանրապետության սահմանադրությունը:** Այն Ֆրանսիան հռչակեց «միասնական և անբաժանելի» հանրապետություն: Նոր պետության իրավական համակարգի սկզբունքներ հռչակվեցին ազատությունը, հավասարությունը և եղբայրությունը, իսկ հիմքերը՝ ընտանիքը, աշխատանքը, սեփականությունը և հասարակական կարգուկանոնը: Սահմանվում էր 21 տարին լրացած տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունք: Բարձրագույն օրենսդիր իշխանությունը տրվեց Օրենսդիր ժողովին, իսկ գործադիր իշխանությունը՝ ժողովրդի կողմից ընտրված նախագահին:

Երկրորդ կայսրության անկումը և երրորդ հանրապետության առաջացումը: Սակայն նոր սահմանադրությունը չմիավորեց ֆրանսիական ժողովրդին: Դեռևս հասարակական մեծ ուժ էին հին կարգերի կողմնակիցները՝ միապետականները: Այս իրավիճակում հասարակության համախմբման դերն իր վրա վերցրեց նորընտիր նախագահը՝ Նապոլեոն I–ի եղբորորդի Լուի Նապոլեոնը: Նա որոշեց վերականգնել կայսրությունը և 1851 թ. կատարեց պետական հեղաշրջում: Այնուհետև՝ 1852 թ., կազմակերպվեց հանրաքվե, որով օրինականացվեց կայսրության վերականգնումը: Հանրապետությունը վերացվեց, իսկ Լուի Նապոլեոնը հայտարարվեց «Ֆրանսիացիների կայսր»՝ Նապոլեոն III (1852–1870 թթ.) անունով: Սահմանափակվեցին Օրենսդիր ժողովի և իշխանության մյուս մարմինների լիազորությունները, ազատ մամուլը, ընդհանրապես քաղաքացիների ազատությունը: Բոլորը պետք է ենթարկվեին կայսեր կամքին: Նրա կառավարումն իր բնույթով **ավտորիտար** (անձնիշխան) էր:

Երկրորդ կայսրությունը կենսունակ չէր: 1870–1871 թթ. Ֆրանսիան պարտվեց Գերմանիայի դեմ պատերազմում: Վիրավորվեց ֆրանսիացիների ազգային հպարտությունը: Ավելին՝ կայսրը գերի ընկավ և վերջնականապես հեղինակազրկվեց: Հանրապետության վերականգնումը դարձավ անխուսափելի:

1870 թ. սեպտեմբերի 4–ին, երբ Փարիզ հասավ ֆրանսիական զորքի խայտառակ պարտության լուրը, ժողովուրդն ապստամբեց: Տեղի ունեցավ հերթական հեղափոխությունը, որի արդյունքում Ֆրանսիան **երրորդ** անգամ հռչակվեց **հանրապետություն:** Սակայն պատերազմում կրած պարտությունը և ժողովրդի ծանր դրությունը պատճառ դարձան նոր ապստամբության, որը

սկսվեց 1871 թ. մարտի 18–ին: Բանվորները համոզված էին, որ կառավարությունը չի ցանկանում բարելավել իրենց վիճակը և թշնամուն վռնդել երկրից: Նրանք ստեղծեցին իրենց իշխանությունը՝ կոմունան: Սակայն կառավարական զորքերը դաժանորեն ճնշեցին ապստամբությունը:

Փարիզի կոմունան, որը եզրափակեց 1789 թ. սկսված հեղափոխությունների դարաշրջանը, հերթական անգամ ցույց տվեց, որ արդարացի պետությունը միշտ պետք է ստեղծել ժողովրդի համաձայնությամբ: Պետության և ժողովրդի փոխհամագործակցությունը խաղաղ բարգավաճման սահմանադրական միակ երաշխիքն է:

Երրորդ հանրապետության ժողովրդավարացման գործընթացը: Փարիզի կոմունայի ճնշումից հետո երկրում ծայր առավ հանրապետականների և միապետականների անհաշտ պայքար: Հենց այդ պայքարի բովում ստեղծվեց Երրորդ հանրապետության սահմանադրությունը: Ազգային ժողովը 1875 թ. այն հաստատեց ընդամենը մեկ ձայնի առավելությամբ:

Ըստ նոր սահմանադրության՝ Ֆրանսիան հռչակվում էր **նախագահական հանրապետություն:** Սահմանադրությունը հաստատում էր միայն պետական կարգը: Նրանում քաղաքացիների ազատությունների մասին խոսք չկար: Հանրապետականները խնդիր դրեցին սահմանադրությունը դարձնելու ավելի ժողովրդավարական, ամրապնդելու Երրորդ հանրապետությունը: Օրենքներ ընդունվեցին, որոնցով հուլիսի 14–ը սահմանվեց ազգային տոն, օրինականացվեց ժողովների, ցույցերի և մամուլի ազատությունը, թույլատրվեց արհմիությունների գործունեությունը և այլն: Այլ օրենքներով սահմանվեց անվճար, պարտադիր և աշխարհիկ տարրական կրթություն:

Սակայն հանրապետականները նոր իրավիճակում պառակտվեցին միմյանց հետ մրցակցող քաղաքական խմբերի: Մի մասը գտնում էր, որ բարեփոխումների հարցում չի կարելի շտապել: Ըստ նրանց՝ բարեփոխում պետք է կատարել միայն հարմար առիթների և քաղաքացիների մեծ մասի համաձայնության դեպքում: Նրանց անվանում էին չափավոր հանրապետական կամ **օպորտունիստ:** Դրանից հիասթափված՝ բոլոր նրանք, ովքեր կարիք ունեին արագ բարեփոխումների, ստեղծեցին արմատական կուսակցություն: XX դ. սկզբին արմատականները հաղթեցին ընտրություններում և կազմեցին կառավարություն: Նրանց բարեփոխումների շնորհիվ **եկեղեցին անջատվեց պետությունից և դպրոցից:** Ֆրանսիան դարձավ աշխարհիկ պետություն: Կատարվեցին նաև ընկերային բարեփոխումներ:

Երրորդ հանրապետությանը բնորոշ էին բազմակուսակցականությունը և հասարակական տարաբնույթ շարժումները: Իշխանության չարաշահումը, նույնիսկ դատական անարդար վճիռը ստանում էր հասարակական մեծ հնչեղություն, վերածվում ժողովրդավարության համար սուր պայքարի: Սակայն այդ պայքարն ընթանում էր օրինականության շրջանակներում: Արդյունքում ամրապնդվեցին Երրորդ հանրապետության սահմանադրական կարգերը և ժողովրդավարությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս ձևավորվեց Ազգային ժողովը Ֆրանսիական մեծ հեղափոխության սկզբում, ինչո՞ւ այն վերանվանվեց Սահմանադիր ժողով: Ցո՛ւյց տվեք «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» պատմական նշանակությունը: Ե՞րբ է ընդունվել Ֆրանսիայի առաջին սահմանադրությունը:
2. Որքա՞ն է գոյատևել Առաջին հանրապետությունը: Սահմանադրական կարգը ի՞նչ փոփոխությունների ենթարկվեց այդ տարիներին:
3. Ե՞րբ է ստեղծվել Երկրորդ հանրապետությունը: Ինչո՞ւ Լուի Նապոլեոնին հաջողվեց վերականգնել Առաջին կայսրության պետական կարգը:
4. Պատմական ի՞նչ պայմաններում վերականգնվեց հանրապետական կարգը Ֆրանսիայում: Ո՞րն է Փարիզի կոմունայի նշանակությունը:
5. Ե՞րբ ընդունվեց Երրորդ հանրապետության սահմանադրությունը: Ներկայացրե՛ք ֆրանսիական հասարակության ժողովրդավարացման գործընթացի գլխավոր արդյունքները XIX դ. վերջին և XX դ. սկզբին:

§ 7. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գերմանիայի և Իտալիայի քաղաքական մասնատվածության հաղթահարումը: Ի տարբերություն մյուս երկրների՝ Գերմանիան և Իտալիան անցել են քաղաքական զարգացման յուրահատուկ ուղի: Դրա բնորոշ կողմը դեռևս միջնադարից գոյություն ունեցող քաղաքական մասնատվածությունն էր: Այդ իրավիճակը շարունակեց պահպանվել մինչև XIX դարի կեսերը:

XVII դարում գերմանական հողերում կար ինքնիշխան 300 աշխարհիկ և հոգևոր իշխանություն, 51 կայսերական ազատ քաղաք, հազարավոր ասպետական տիրույթներ: Այս բոլոր պետությունները կազմում էին Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրությունը, որը ձևական քաղաքական միավորում էր: Գերմանական հողերի վերոնշյալ քաղաքական իրավիճակը մեծ իմաստասեր Հեգելն անվանել է «օրինականացված անիշխանություն»: Վիեննայի վեհաժողովի որոշմամբ ստեղծվեց **Գերմանական միություն,** որի կազմում կար 38 պետություն: Գերմանական միությունը՝ որպես համադաշնություն, թույլ կապեր ունեցող պետությունների միավորում էր:

Գերմանական միությունում Պրուսիան, որ մրցակցում էր Ավստրիայի հետ, դարձավ ամենաազդեցիկ պետությունը: Մինչև XIX դարի կեսը գերմանական մշակույթը ձեռք բերեց համաեվրոպական նշանակություն: Գերմանիան նախ և առաջ մեծ իմաստասերների, գրողների հայրենիքն է: Նրանցից են Իմանուիլ Կանտը, Յոհան Հերդերը, Գեորգ Հեգելը, Ֆրիդրիխ Շիլլերը, Յոհան Վոլֆգանգ Գյոթեն և այլք: Հենց նրանք մարդկանց մեջ արմատավորեցին ընդհանուր հայրենիքի գաղափարը: Ձևավորվել էր գերմանական միասնական ազգը, որը դեռևս մշակութային ընդհանրություն էր, բայց ոչ քաղաքական: 1848–1849 թթ. հեղափոխությունը Գեմանիայում նախ և առաջ խնդիր ուներ ստեղծելու միասնական ազգային պետություն: Չնայած հեղափոխության պարտությանը՝ պայքարը միասնական պետության ստեղծման համար շարունակվեց:

Պրուսիայի գլխավորությամբ Գերմանական կայսրություն ստեղծելու համոզված կողմնակից էր **Օտտո Բիսմարկը:** 1862 թ. Պրուսիայի թագավորը նրան նշանակեց առաջին նախարար: Իրագործելով ռազմական բարեփոխում՝ Պրուսիան ջախջախեց երկրի միավորման գլխավոր խոչընդոտներ Ավստրիային (1866 թ.) և Ֆրանսիային (1870–1871 թթ.): **1871 թ. հունվարի 18–ին** Ֆրանսիայի մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Վերսալում՝ Լուի XIV–ի երբեմնի շքեղ ապարանքում, հանդիսավոր կերպով **հռչակվեց Գերմանական կայսրության** ստեղծումը:

Ազգային պետության ստեղծման նույնպիսի ուղի անցավ Իտալիան՝ հռոմեական քաղաքակրթության երբեմնի օջախը, Վերածննդի և հումանիզմի (մարդասիրության) հայրենիքը: XVIII դարի վերջից այստեղ սկսվեց ազգային միավորման համար մի հզոր շարժում՝ **Ռիսորջիմենտոն** (Վերածնություն), որն ընդգրկեց մշակույթը և ողջ հասարակական–քաղաքական կյանքը: Մշակույթում նրա ջատագովները դարձան Ն. Պագանինին, Ջ. Վերդին, Ա. Մանձոնին, ազատագրական պայքարում՝ Ջ. Մաձինին և Ջ. Գարիբալդին: 1848–1849 թթ. երկրի միավորման համար տեղի ունեցավ ազգային հեղափոխություն: Չնայած պարտությանը՝ այն հերթական անգամ ամրապնդեց ընդհանուր հայրենիքի գաղափարը և հող նախապատրաստեց միասնական պետության ստեղծման համար:

XIX դարի 50–60–ական թվականներին տեղի ունեցավ Իտալիայի քաղաքական միավորումը և համազգային պետության ստեղծումը: Ազատագրական պատերազմն ընդունեց համաժողովրդական բնույթ: Դրանում մեծ դեր կատարեց **Գարիբալդին,** որը ժողովրդի աջակցությամբ ազատագրեց Իտալիայի հարավը: **1861 թ. Իտալիան հռչակվեց թագավորություն: 1871 թ.** Հռոմը դարձավ Իտալիայի մայրաքաղաք, որով **ավարտվեց Ռիսորջիմենտոյի մեկդարյա հերոսական ժամանակաշրջանը:**

Գերմանական կայսրությունը՝ սահմանադրական միապետություն: Միասնության բացակայությունը ոչ միայն խանգարել է Գերմանիայի բնականոն զարգացմանը, այլև իր կնիքը թողել երկրի պետական կառուցվածքի, քաղաքական կյանքի և հասարակական հարաբերությունների վրա: 1871 թ. ապրիլին Ռայխստագը հաստատեց Գերմանական կայսրության սահմանադրությունը: Գերմանիան միաձույլ ազգ էր.

միասնական տնտեսություն, հասարակական հարաբերություններ և մեկ մշակույթ: Չնայած դրան՝ պետությունը դաշնային էր: Այն միավորում էր 22 միապետերի և երեք ազատ քաղաքների՝ Համբուրգ, Բրեմեն և Լյուբեկ: Պահպանվեցին տեղական սահմանադրությունները:

Գերմանիայի բարձրագույն օրենսդիր ատյանները երկուսն էին: Ռայխստագը բաց քվեարկությամբ ընտրում էին 25 տարին լրացած բոլոր տղամարդիկ, բացի զինվորականներից: Ռայխստագի գլխավոր դերերից մեկը պետական բյուջեի հաստատումն էր: Միութենական խորհրդի կազմի մեջ մտնում էին դաշնության անդամ պետությունների ներկայացուցիչները: Օրենքն իրավական ուժ էր ստանում միայն երկու ատյանների հաստատումից հետո: Ընդսմին՝ Միութենական խորհրդում քվեարկության կարգն այնպիսին էր, որ օրենքը չհաստատվի առանց Պրուսիայի համաձայնության:

Գործադիր իշխանությունը պատկանում էր **կայզերին**, որը պետք է լիներ Պրուսիայի Հոհենցոլեր արքայատոհմից: Կայզերը նշանակում էր միակ համակայսերական նախարարին՝ կանցլերին, որի միջոցով ղեկավարում էր երկիրը: Կանցլերը պատասխանատու էր միայն կայզերին: Կայզերն ուներ նաև վետոյի (արգելաքվեի) իրավունք, եթե օրենքը երկու ատյանները չէին ընդունել միաձայն: Բացի այդ, նա իրավունք ուներ արձակելու Ռայխստագը և նշանակելու նոր ընտրություններ:

Մինչև դարի վերջն ընդունվեցին այլ օրենքներ, որով ստեղծվեցին միասնական օրենսդրական, դրամական և փոստային համակարգեր: Ստեղծվեց նաև գերագույն դատական ատյան՝ կայսերական դատարան, որի նստավայրը դարձավ Լայպցիգ քաղաքը: Դրանով ցանկանում էին ցույց տալ դատական իշխանության անկախությունը գործադիրից: Այսպիսով՝ **Գերմանիան դարձավ միաձույլ սահմանադրական միապետություն:**

Օրենքներով նախատեսված էին նաև քաղաքացիների ժողովրդավարական ազատություններ: Բայց քաղաքացիներն այստեղ ավելի քիչ իրավունքներ ունեին, քան հանրապետական Ֆրանսիայում: Չնայած դրան՝ Գերմանիայում քաղաքական կյանքը հագեցած էր: Գործում էին մի քանի կուսակցություններ, որոնք, ինչպես նաև բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, նպաստում էին երկրի ազատականացմանը և մշակույթի զարգացմանը: Գերմանական հասարակության մեջ, ինչպես և Եվրոպայի մյուս երկրներում, մշտական պայքար էր գնում պահպանողական և ազատական ուժերի միջև: Պայքարը հիմնականում ընթանում էր սահմանադրական շրջանակներում: Գերմանիայի ազատականացումը հատկապես արագացավ 1890 թ–ից հետո, երբ կայսերական կանցլեր Օ. Բիսմարկը հեռացավ իշխանությունից: Ամրապնդվեց ազատ խոսքը և այլախոհությունը: XX դարի սկզբին Գերմանիայում լույս էր տեսնում 4000–ից ավելի լրագիր:

Միևնույն ժամանակ Գերմանիայում տարածված էր **ազգայնամոլությունը:** Պանգերմանական գաղափարախոսությունը նախատեսում էր Եվրոպայի կենտրոնում ստեղծել «**Մեծ Գերմանիա**», որը հնարավորություն կտար հասնելու համաշխարհային գերիշխանության: Դա ինչպես Գերմանիայի, այնպես էլ մյուս երկրների համար ունեցավ ողբերգական հետևանքներ:

Իտալական պետության և հասարակության արդիականացումը: Իտալական թագավորությունը սահմանադրական միապետություն էր: Պետության սահմանադրությունը ստեղծվել էր դեռևս 1848 թ.՝ Սարդինիայի արքայական հատուկ օրենքով: Այսինքն՝ սահմանադրությունը չէր ստեղծվել ժողովրդի կողմից ընտրված Սահմանադիր ժողովի կողմից: Այն գործեց մինչև 1922 թ.:

Սահմանադրությունը հաստատում էր իշխանության յուրատեսակ տարանջատում: Գործադիր իշխանությունն ամբողջովին վերապահվում էր թագավորին: Օրենքն իրավական ուժ էր ստանում, եթե այն հաստատում էին պատգամավորների ատյանը, Ծերակույտը և թագավորը: Դատարանը ևս ենթարկվում էր թագավորին: Ծերակույտի անդամներին նշանակում էր թագավորը ցմահ: Ծերակույտը միաժամանակ Գերագույն դատարան էր: Պատգամավորների ատյանում կարող էին ընտրվել 30 տարին լրացած քաղաքացիները: Ատյանին էր վերապահված հարկերի սահմանման, ինչպես նաև պետական ծախսերի նախնական քննարկման և հաստատման իրավունքը:

Սահմանադրությունը ամրագրում էր նաև քաղաքացիների իրավունքներ: Բոլոր քաղաքացիներն օրենքի առաջ հավասար էին: Երաշխավորվում էր սեփականության, բնակարանի և անձի անձեռնմխելիություն: Թույլատրվում էր մամուլի, ժողովների ազատություն՝ առանց չարաշահման:

Իտալիայի միավորումից հետո փոխվեց նաև Հռոմի պապի կարգավիճակը: Պապը միշտ խանգարել էր Իտալիայի միավորմանը: **1871 թ.** օրենքով **վերացվեց պապի աշխարհիկ իշխանությունը**: Նա մնում էր բոլոր կաթոլիկների հոգևոր

առաջնորդը և կարող էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ: Պապի իշխանությունը սահմանափակվում էր Վատիկանի և Լաթերանյան ապարանքներով: Հռոմի պապը հրաժարվեց իր մասին օրենքը ճանաչելուց և երկար ժամանակ թշնամական հարաբերությունների մեջ էր պետության հետ:

Իտալիան Եվրոպայի զարգացած երկրների համեմատությամբ տնտեսապես հետամնաց երկիր էր: Ահա թե ինչու, չնայած սահմանադրական երաշխիքներին, իտալական հասարակության արդիականացումը դժվարին ընթացք ունեցավ: Մինչև XX դարի սկիզբը սուր պայքար էր ընթանում պահպանողական և ազատական ուժերի միջև: Այդ պայքարում հաղթեցին ազատականները, որոնց շնորհիվ կատարվեցին բազմաթիվ բարեփոխումներ: Եվ չնայած դրան՝ մեծ թափ էր ընդունել ռազմականացումը: Ռիսորջիմենտոյի դարաշրջանի առաջադեմ ազգայնականությանը փոխարինելու եկավ ազգայնամոլությունը, որը երկիրը տարավ աղետաբեր պատերազմների հունով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ ստեղծվեց Գերմանական միությունը: Ինչո՞ւ Պրուսիան դարձավ գերմանական հողերի միավորման ազդեցիկ ուժը: Ո՞րն էր 1848–1849 թթ. Գերմանական հեղափոխության գլխավոր նպատակը. իրագործվե՞ց այն, թե՞ ոչ:
2. Ներկայացրե՛ք Օտտո Բիսմարկի գործունեությունը: Ե՞րբ և որտե՞ղ հռչակվեց Գերմանական կայսրությունը:
3. Ի՞նչ է նշանակում Ռիսորջիմենտո: Ովքե՞ր էին այս շրջանում Ռիսորջիմենտոյի գլխավոր դեմքերը: Ներկայացրե՛ք Իտալիայի միավորման գործընթացը XIX դ. 50–60–ական թվականներին:
4. Ե՞րբ ընդունվեց Գերմանական կայսրության սահմանադրությունը: Ի՞նչ պետական կարգ էր այն սահմանում: Ժողովրդավարական ի՞նչ իրավունքներ հաստատվեցին Գերմանիայում XIX դ. վերջերին: Ի՞նչ նպատակ էր հետապնդում համագերմանականության գաղափարախոսությունը:
5. Ո՞ր սահմանադրությունը հաստատվեց որպես միավորված Իտալիայի հիմնական օրենք: Ինչո՞ւ էր Հռոմի պապը խոչընդոտում Իտալիայի միավորմանը:

§ 8. ԱՎՍՏՐՈ–ՀՈՒՆԳԱՐԻԱՆ՝ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

Բազմազգ տերության պատմական ուղին: Արդեն նշվել է, որ XVI–XVII դարերում Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրության Հաբսբուրգ արքայատոհմը սեփական տիրույթների ընդարձակման հաշվին բավականին հզորացավ: Արդյունքում Ավստրիան դարձավ մեծ տերություն: Նրա կազմի մեջ էին Չեխիան, Հունգարիան, Բելգիան, Իտալիայի, Սերբիայի, Բոսնիայի, Վալախիայի մի մասը և այլ հողեր: Ընդամին, Հունգարիան տերության կազմում ուներ թագավորության կարգավիճակ:

XVIII դարում Հաբսբուրգների գլխավոր հոգսը դարձավ նվաճված երկրները պահպանելը: Իսկ դա հեշտ չէր: Հաճախակի էին ընդվզում հպատակ ժողովուրդները, շարունակվում էին պատերազմները Օսմանյան տերության, Ֆրանսիայի, Պրուսիայի և մյուս պետությունների դեմ: Բացի այդ, կայուն չէին տերության միասնությունը, պետական հիմնարկների գործունեությունը: Լուսավորյալ միապետներ Մարիա Թերեզայի և նրա որդի Յոզեֆ II–ի գահակալման դարաշրջանում (1740–1790 թթ.) կատարվեցին շատ բարեփոխումներ: Սակայն դրանք ընդհատվեցին Մեծ հեղափոխության և նապոլեոնյան դարաշրջանում: 1806 թ. Նապոլեոն I–ը վերացրեց Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրությունը: Հաբսբուրգ արքայատոհմը պահպանեց միայն Ավստրիայի կայսեր տիտղոսը: Տերությունը վերջնական կործանումից փրկվեց Ռուսաստանում Ֆրանսիայի պարտության շնորհիվ: Ի վերջո Ավստրիան հայտնվեց հաղթողների մեջ և 1815 թ. Վիեննայի վեհաժողովի պայմանագրերով պահպանեց իր տիրույթները:

XIX դարում Ավստրիական կայսրությանը սպասում էին նոր փորձություններ: Պետությունը վարում էր հետադիմական քաղաքականություն:

Ավստրիան հասարակական զարգացմամբ հետ էր մնում Եվրոպայի առաջավոր երկրներից: Ուստի և հասարակական ընդդիմությունը պետության դեմ հետզհետե մեծանում էր:

Ավելի վաղ՝ XVIII դարի վերջից, Հունգարիայում, Չեխիայում և մյուս շրջաններում վերելք էր ապրում ազգային կյանքը: **Ազգային վերածնունդ.** պատմության մեջ այդպես է մնացել դարաշրջանի անունը: Ազգերի մեջ մեծանում էր սեփական պետություն ունենալու ձգտումը:

Ավստրո–Հունգարիայի առաջացումը: 1845–1847 թթ. Ավստրիական կայսրությունում անբերրիության տարիներ էին: Դա աննախադեպ սրեց ընկերային և ազգային հակասությունները: 1848 թ. ապստամբություն սկսվեց մայրաքաղաք Վիեննայում: Ընդվզումները տարածվեցին կայսրության բոլոր կողմերում: Ամենուրեք պահանջում էին բարեփոխումներ և առաջին հերթին՝ սահմանադրություն: Հետադիմական կառավարությունը հրաժարական տվեց, իշխանության գլուխ եկան ազատականները: Նորընտիր խորհրդարանը՝ Ռայխստագը, դարձավ քաղաքական պայքարի ասպարեզ: Ընդունվեցին օրենքներ, որոնցով վերացվում էին ճորտությունը, ավատական հարկերը և այլն: Ավստրիայում հեղափոխական դեպքերն արյունալի ընթացքով շարունակվեցին մինչև աշուն: Ի վերջո կայսերական զորքերը կարողացան ճնշել հեղափոխության կենտրոնի՝ Վիեննայի բնակչության դիմադրությունը:

Հեղափոխությունն ավելի արյունալի ընթացք ստացավ ազգային շրջաններում: Սլավոնական ազգերը համաժողով հրավիրեցին Չեխիայի մայրաքաղաք Պրահայում: Երբ կայսերական զորքը կրակեց ցուցարարների վրա, քաղաքում սկսվեց ապստամբություն: Այն մեծ դաժանությամբ ճնշվեց:

Հունգարիայում հեղափոխությունը վերածվեց Ավստրիայի լծի դեմ ազգային–ազատագրական հզոր պատերազմի: Հունգարները կարողացան ստեղծել սեփական **սահմանադրություն** և **անկախ պետություն:** Անկախության համար պատերազմը շարունակվեց մինչև 1849 թ. ամառը: Ճակատամարտերից մեկում զոհվեց հունգար մեծ բանաստեղծ Շանդոր Պետեֆին: Միայն Ռուսաստանի օգնությամբ Ավստրիան կարողացավ ճնշել Հունգարիայի ապստամբությունը:

1848–1849 թթ. հեղափոխության ճնշումից հետո Ավստրիայում հաստատված կարգը հիշեցնում էր միահեծանության ժամանակները: Սակայն դա երկար չշարունակվեց: Ազատության համար պայքարը շարունակեցին հպատակ ազգերը, հատկապես հունգարները: Հակասությունները մեղմելու համար 1860 թ. կայսեր անունից հրապարակվեց դաշնային սահմանադրություն: Այն որոշ իրավունքներ էր տալիս հունգարներին և մյուս ազգերին: Սակայն գերմանացիների ճնշման տակ հաջորդ տարում հռչակվեց նոր սահմանադրություն, որն ապահովում էր նրանց գերիշխող դիրքը և պետության կենտրոնացումը: Դա առաջացրեց բողոքի նոր ալիք, որն ի չիք դարձրեց նոր հիմնական օրենքի գործադրումը: Դրությունը ծանրացավ, երբ Ավստրիան կորցրեց իտալական տիրույթները: Մյուս կողմից՝ կայսրը պարտվեց Պրուսիային (1866 թ.) և հեռացավ Գերմանիայից: Առաջացավ կայսրության փլուզման վտանգ: Հաբսբուրգ արքայատոհմը ստիպված եղավ լուրջ զիջումներ կատարելու հունգարներին:

1867 թ. Ավստրիայի և Հունգարիայի միջև կնքվեց համաձայնագիր, որն ամրապնդվեց տարեվերջին ընդունված սահմանադրությամբ: Արդյունքում Ավստրիական կայսրությունը վերակազմավորվում էր **Ավստրո–Հունգարիայի:** Պետության կառուցվածքը ստեղծվում էր երկու ազգերի դաշինքի հիմքի վրա: Տերության գլուխ էր համարվում Հաբսբուրգ արքայատոհմի կայսրը, որն ուներ մեծ իրավունքներ: Օրենքով նա Ավստրիայի կայսրն էր, Հունգարիայի՝ թագավորը: Նրան էին ենթարկվում համակայսերական երեք՝ ռազմական, արտաքին գործոց և վերջիններիս ծախսերը հոգացող ֆինանսական նախարարությունները: Բացի այդ, կայսրն իրավունք ուներ պետության երկու մասերում հաստատելու ընդունված օրենքները, վարչապետերին, հրավիրելու և արձակելու խորհրդարանները, նշանակելու դրանց վերին ատյանների անդամներին, արտակարգ դեպքերում ուղղակի ղեկավարելու պետությունը և այլն:

Այս բոլորը նորաստեղծ տերությանը տալիս էր դաշնային բնույթ: Մյուս կողմից՝ պետության կառուցվածքը համադաշնային էր, որովհետև Հունգարիան և Ավստրիան իրավահավասար միավորներ էին, ներքին կյանքում՝ լրիվ անկախ: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր պետական կառուցվածքը՝ օժտված օրենսդիր և գործադիր լայն իրավունքներով: Հունգարիան ուներ իր սահմանադրությունը, որը կարգավորում էին երկրի պետական կյանքի բոլոր բնագավառները: Երկու պետությունների միջև կար հստակ վարչական սահման: Այլ պետությունների հետ տնտեսական հարաբերությունները կարգավորվում էր կողմերի միջև 10 տարով կնքված պայմանագրերով, որոնք պարբերաբար վերահաստատվում էին:

Ինչպես տեսնում ենք, Ավստրո–Հունգարիան նախադեպը չունեցող, առանձնահատուկ սահմանադրական միապետություն էր: Դա հիմք է տվել նրան անվանելու **երկկենտրոն** կամ **երկմիասնական կայսրություն:**

Քաղաքական կյանքը: 1867 թ. սահմանադրությունը որոշ չափով ազատականացրեց հասարակությունը: Դատավորները դարձան գործադիր իշխանությունից անկախ, ընդլայնվեցին օրենսդիր ատյանի իրավունքները, հաստատվեց անձի անձեռնմխելիություն և այլն: 1907 թ. Ավստրիայում օրենք ընդունվեց տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի մասին: Այս բոլորի շնորհիվ մինչև XX դարի սկիզբն Ավստրո–Հունգարիայում տնտեսությունը վերելք ապրեց:

Միևնույն ժամանակ Ավստրո–Հունգարիայում ժողովրդավարությունն ավելի ցածր մակարդակում էր, քան Եվրոպայի առաջավոր երկրներում: Գլխավոր պատճառը տերության բազմազգ բնույթն էր, որում անխուսափելի էր հպատակ ազգերի իրավունքների անտեսումը: Նոր իրադրությունում կայսրությունում գերիշխող դարձան երկու ազգեր՝ ավստրոգերմանացիները և հունգարները: Ավստրիայի վարչական տարածքի մեջ էին Չեխիան, Մորավիան և իտալական հողեր: Հունգարիայի տարածքի մեջ էին Խորվաթիան, Սլովենիան, Սլովակիան, ինչպես նաև ուկրաինական և սերբական հողեր: Բնականաբար, նշված ազգերը դժգոհ մնացին կատարվածից և պահանջում էին իրավահավասարություն: Ավստրո–Հունգարիայի ներքաղաքական կյանքի բնորոշ կողմը դարձավ հպատակ ազգերի պայքարն ազատության համար:

Ավստրիայում հիմնական ազգային հակասությունն ավստրոգերմանացիների և չեխերի միջև էր: Չեխիան պահանջում էր նույնպիսի իրավունքներ, ինչպիսին ստացել էր Հունգարիան: Այսինքն՝ երկմիասնականի փոխարեն ստեղծել եռմիասնական պետություն: Իրենց հերթին՝ ավստրոգերմանացիները անտեսում էին չեխերի իրավունքները: XIX դ. վերջին և XX դ. սկզբին նրանց միջև բազմիցս բախումներ տեղի ունեցան չեխերենի կիրառման օրինականացման հարցում: Այդ պայքարում առաջացավ նոր չեխերի շարժումը, որը, հակառակ հին չեխերի, ձգտում էր անկախության: Մյուս կողմից՝ ավստրոգերմանացիների մեջ տարածում գտան ազգայնամոլական համագերմանական գաղափարները:

Հունգարիայում ևս ազգային հիմնախնդիրը հիվանդագին ընթացք ունեցավ: 1868 թ. Հունգարիայի խորհրդարանն օրենք ընդունեց «ազգերի իրավահավասարության» մասին: Ըստ օրենքի՝ Հունգարիայի բոլոր քաղաքացիներն իրավահավասար էին և կազմում էին «միասնական հունգարական ազգ»: Գործնականում դա նշանակում էր մաջարականացում, այսինքն՝ բոլոր ազգերի վերածում հունգարների: Բացառություն էր Խորվաթիան, որը ստացավ որոշ ինքնավարություն: Հունգարները նաև ձգտում էին Ավստրո–Հունգարիայի համապետական կյանքում գերիշխող դիրք գրավելու:

Ավստրո–Հունգարիայի քաղաքական կյանքում մեծ դեր էր խաղում նաև բանվորական շարժումը, վարձու աշխատողների պայքարն իրենց ընկերային վիճակի թեթևացման համար: Սակայն այդ շարժումը ևս ազգային երանգ ստացավ և մեծ արդյունքների չհասավ:

Ազգայնամոլությունը, որը գերիշխող դարձավ Ավստրո–Հունգարիայի ներքաղաքական կյանքում, ունեցավ կործանարար հետևանքներ: Հաբսբուրգ արքայատոհմը ձգտում էր այն նպատակաուղղել դեպի արտաքին քաղաքականություն: Երկու դեպքում էլ այն պատճառ դարձավ Առաջին աշխարհամարտում Ավստրո–Հունգարիայի երկկենտրոն կայսրության փլուզման:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշե՛ք, թե ինչ տարածքներ էր ընդգրկում Ավստրիան: XVIII դ. իշխող արքայատոհմը քաղաքական ո՞ր խնդրի լուծմամբ էր հիմնականում զբաղված: Ի՞նչ արդյունքներ ունեցավ 1848–1849 թթ. հեղափոխությունը:
2. Ի՞նչ նպատակով 1860 թ. հրապարակվեց դաշնային սահմանադրություն: Որո՞նք էին հունգարներին զիջելու ավստրիացիների քաղաքականության պատճառները:
3. Ե՞րբ և իրավական ո՞ր հիմքով ստեղծվեց երկկենտրոն տերությունը՝ Ավստրո–Հունգարիան: Ի՞նչ նշանակություն ունեցավ հասարակության ազատականացման գործում 1867 թ. սահմանադրությունը:
4. Ինչո՞ւ ազգային հարցը դարձավ տերության ներքաղաքական կյանքի հիմնական հակասությունը: Ներկայացրե՛ք կայսրությունում առաջացած ազգային հակադրությունների էությունը:

§ 9. ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

Ազգային պետությունների առաջացման նախադրյալները: Նախորդ դասընթացից արդեն գիտենք, որ Եվրոպայի մաս կազմող Բալկանյան երկրները՝ Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան, Ռումինիան, Չեռնոգորիան, Ալբանիան և մյուսներն, անցել են զարգացման դժվարին ուղի: Գլխավոր պատճառն օսմանյան դարավոր տիրապետությունն էր, որը՝ որպես արևելյան քաղաքակրթություն, անհամատեղելի էր եվրոպական արժեքներին:

Բնականաբար, օսմանյան լուծը չէր կարող ամբողջովին կասեցնել բալկանյան ժողովուրդների ազգային զարգացումը: Արդեն XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին արդիականացումը դրսևորվում էր տնտեսության, մշակույթի և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Արդյունաբերական հեղաշրջման դարաշրջանում Բալկանյան թերակղզին ներքաշվեց առաջավոր երկրների շուկայական ոլորտ:

Տնտեսության որոշ աշխուժացումը նպաստեց ազգային ինքնագիտակցության և մշակույթի զարգացմանը: Ազգային ինքնագիտակցությունը, այսինքն՝ սեփական հայրենիքի, լեզվի, մշակույթի և ինքնության գիտակցումն ու արժևորումը բնորոշ է բոլոր հասարակությունների արդիականացմանը: Շատերը կուտակված կապիտալի մի մասն օգտագործում էին ազգօգուտ գործերում: Ձևավորվեցին հույների, բուլղարների, սերբերի և մյուսների գրական լեզուները: Սկիզբ դրվեց մամուլին, տպագրությանը, աշխարհիկ կրթությանը և դասագրքերի ստեղծմանը: XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին լույս էր տեսնում 8 հունարեն պարբերական: Բուլղարերեն առաջին դասագիրքը ստեղծվեց 1824 թ., թերթերը՝ 40–ական թվականներին: Սերբական գրական լեզվի և նոր մշակույթի ստեղծման մեջ մեծ դեր կատարեց Վուկ Կարաջիչը (1787–1864 թթ.): Եվրոպայի հետ կապերը բալկանյան ժողովուրդների մեջ ուժեղացնում էին օսմանյան տիրապետությունից ազատագրման ձգտումը: Ստեղծվեցին հասարակության քաղաքական բարեփոխման նախագծեր, որոնց մեջ առաջնայինը ազգային–ազատական պետության ստեղծման գաղափարն էր:

Ազգային–ազատագրական շարժումների գլխավոր արդյունքները: XIX դարը օսմանյան լծից բալկանյան ժողովուրդների ազատագրման հիմնական ժամանակաշրջանն է: Ի տարբերություն միջնադարի՝ նոր դարաշրջանին բնորոշ էին գաղափարական ուղղվածությունը և պետության ստեղծման համար նպատակասլաց պայքարը:

Բալկանյան թերակղզում հույն նոր ազգի ձևավորման գործընթացը մյուսներից ավելի արագ էր ընթանում: Հետևաբար առաջինն իր ազատությունը ձեռք բերեց **Հունաստանը:** Հույներն ապստամբություն սկսեցին 1821 թ.: Այդ ժամանակ Եվրոպայում տիրում էր հետադիմություն, ուստի տերությունները սկզբում թշնամանքով վերաբերվեցին Հունաստանի ընդվզմանը: Չնայած դրան՝ հույները, մի քանի տարի միայնակ, հերոսական պատերազմ վարեցին սուլթանի դեմ: Ի վերջո Անգլիան, Ռուսաստանն ու Ֆրանսիան, սեփական շահերին հետամուտ, սուլթանից պահանջեցին ինքնավարություն տալ Հունաստանին: Մերժում ստանալով՝ դաշնակիցների միացյալ նավատորմը ջախջախեց օսմանցիներին: 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմում սուլթանը նոր պարտություն կրեց և հաշտվեց Հունաստանի անկախ պետության ստեղծման հետ: **1830 թ.** տերությունները ճանաչեցին Հունաստանի անկախ թագավորությունը: Սակայն նրա սահմանների մեջ չմտան Կրետեն, Թեսալիան և հունական այլ հողեր: Այդ իսկ պատճառով հույների ազատագրական պայքարը շարունակվեց մինչև 1913 թ., երբ Բալկաններում վերացավ օսմանյան լուծը:

Օսմաններին չհաջողվեց լրիվ իրեն ենթարկել **Չեռնոգորիան**: Լեռներում ապրող այդ հերոսական ժողովուրդն արդեն XVIII դ. վերջից ինքնուրույն էր: Չեռնոգորիան սուլթանի դեմ պատերազմներում իր անկախությունն ամրապնդեց 1862 թ.:

Սերբիայի ազատագրական պայքարն անկախության համար ընթացավ ավելի երկար: Համառ պայքարից հետո՝ 1830 թ., սուլթանը ստիպված եղավ Սերբիան ճանաչել որպես ինքնավար ժառանգական իշխանություն: 1838 թ. նա հաստատեց Սերբիայի կառավարման կանոնադրությունը: 1867 թ. օսմանյան կայազորերը դուրս հանվեցին Սերբիայից, որը կարևոր քայլ էր դեպի ինքնիշխանություն:

Դանուբյան իշխանությունները՝ **Մոլդովան** և **Վալախիան**, համառ պայքարում կարողացան որոշ չափով պահպանել ինքնավարություն: Այն ամրապնդվեց 1828–1829 թթ. ռուս–թուրքական

պատերազմի արդյունքում: Շուտով պայքար սկսվեց այդ իշխանությունների միության հիման վրա Ռումինական պետություն ստեղծելու համար: 1859–1862 թթ. ընթացքում պայքարն ավարտվեց հաջողությամբ: Ստեղծվեց **Ռումինիա** իշխանությունը, որը դեռևս կախյալ էր սուլթանից:

1875–1876 թթ. Բոսնիան, Հերցեգովինան, Սերբիան, Բուլղարիան, Ռումինիան և Չեռնոգորիան անհաջող պատերազմ սկսեցին Օսմանյան տերության դեմ: Բալկանյան ճգնաժամը վերածվեց հերթական ռուս–թուրքական պատերազմի: Արդյունքում օսմանյան զորքերը պարտվեցին: 1878 թ. Բեռլինի վեհաժողովը ճանաչեց **Սերբիայի, Ռումինիայի** և **Չեռնոգորիայի** անկախությունը: Ավստրո–Հունգարիան բռնազավթեց Բոսնիան և Հերցեգովինան: Բուլղարիան տրոհվեց երկու մասի: Մի մասում ստեղծվեց սուլթանից կախյալ բուլղարական իշխանություն, մյուս մասը դարձավ ներքին ինքնավարություն ունեցող օսմանյան նահանգ: 1885 թ. վերջինս ապստամբեց և միացավ Բուլղարիային: **Բուլղարիան** վերջնական անկախության հասավ **1908 թ.:**

Բալկանյան թերակղզու ամենահետամնաց երկիրը **Ալբանիան** էր: Տևական պայքարից հետո Ալբանիան անկախ հռչակվեց և տերությունների կողմից ճանաչվեց 1912–1913 թթ.:

Մակեդոնիան ևս ազատագրվեց օսմանյան տիրապետությունից: Սակայն 1913 թ. երկիրը բաժանվեց Սերբիայի, Հունաստանի և Բուլղարիայի միջև: Նրա, ինչպես նաև Բոսնիայի և Հերցեգովինայի ազատագրումն իրագործվեց Առաջին աշխարհամարտից հետո:

Բալկանյան պետությունների արդիականացումը: Բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարն ընթանում էր ազգայնական գաղափարների դրոշի ներքո, որոնք նաև խթանեցին հասարակության ազատականացումը: Սահմանադրությունների ընդունումը և բարեփոխումները կատարվում էին հասարակական սուր պայքարի պայմաններում:

Ազգային արդյունաբերության ստեղծումը նոր էր սկսվում և ձգձգվեց մինչև XX դարի սկիզբը: Դրան խանգարում էին ավատական հողատիրությունը և օտար կապիտալի ներհոսքը: Եվ չնայած դրան՝ XX դարի սկզբին Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան, Ռումինիան և մյուսները դարձան ագրարային–արդյունաբերական երկրներ: Դրանում քիչ դեր չխաղաց սահմանադրական կարգի ստեղծումը և ազատական օրենքների ընդունումը:

Սահմանադրության ստեղծման գաղափարն առաջացավ Մեծ հեղափոխության ազդեցությամբ: 1822 թ. Հունաստանի Ազգային ժողովը հաստատեց առաջին սահմանադրությունը, որը նախատեսում էր ժողովրդավարական հանրապետություն: Սակայն ի վերջո Հունաստանը դարձավ սահմանադրական միապետություն: Երկու անգամ (1843 թ. և 1864 թ.) ներքաղաքական սուր պայքարում երկրում ընդունվեցին սահմանադրություններ: Արդյունքում՝ Հունաստանում հաստատվեցին տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունք և ժողովրդավարական ազատություններ, առաջացան կուսակցություններ:

Սերբիայում պետական մարմինները ձևավորվում էին ազատագրական պայքարին զուգահեռ: XIX դարի 60–ական թվականներին ժողովուրդը ներկայացնող **Սկուպշչինան** վերջնականապես դարձավ բարձրագույն օրենսդիր իշխանություն: 1869 թ. ընդունվեց նոր սահմանադրություն, որով Սերբիան հռչակվում էր միապետություն: Օրենսդիր իշխանությունը համատեղ իրագործում էին իշխանը և Սկուպշչինան: Հաստատվեց նաև անձի ու տպագրության ազատություն: Ազատականները դրանից հետո էլ շարունակեցին պայքարը ժողովրդավարության համար: Բեռլինի վեհաժողովից հետո վերջնականապես ձևավորվեցին քաղաքական կուսակցություններ: 1882 թ. Սերբիան հռչակվեց թագավորություն, 1888 թ. սահմանադրությամբ՝ սահմանադրական միապետություն: Սակայն պահպանողականներին հաջողվեց անտեսել սահմանադրությունը: 1903 թ. պետական հեղաշրջումից հետո վերականգնվեց 1888 թ. սահմանադրությունը, ընդլայնվեց ժողովրդավարությունը: Դրանից հետո սերբական հասարակության արդիականացումն արագացավ:

Ռումինիայում սահմանադրությունն ընդունվեց 1866 թ.: Սահմանադրությունը մեծ իրավունքներ էր տալիս իշխանին: Ավելի սահմանափակ էր երկատյան խորհրդարանի իրավունքները: Ընտրական իրավունքը սահմանափակ էր: Միևնույն ժամանակ հռչակվում էին քաղաքացիների ժողովրդավարական ազատություններ: 1881 թ. Ռումինիան հռչակվեց թագավորություն: Դրանից հետո էլ շարունակվեց տնտեսության և քաղաքական կյանքի ազատականացումը:

Բեռլինի վեհաժողովից անմիջապես հետո՝ 1879 թ., Բուլղարիայի **Տիռնովո** քաղաքում ընդունվեց ազատական սահմանադրություն: Բուլղարիան հռչակվում էր սահմանադրական միապետություն: Պետության ղեկավարի՝ իշխանի (հետագայում՝ թագավոր) և Ազգային ժողովի

իրավունքները հստակորեն տարանջատվում էին: Հաստատվում էին քաղաքացիների սեփականության անձեռնմխելիությունը, ժողովրդավարական ազատությունները, ինչպես նաև 21 տարին լրացած արական բնակչության ընդհանուր ընտրական իրավունքը: Դրանց իրագործման համար պայքարը հետագայում շարունակվեց: Այն հաճախ էր դուրս գալիս սահմանադրական շրջանակներից, ստանում բռնի ընթացք: Դրանում մեծ դեր էր խաղում իշխանը, որը ձգտում էր միահեծանության: Քաղաքական սուր պայքարում առաջանում էին նոր կուսակցություններ, որոնց դերը հասարակական կյանքում մեծ չէր:

Բալկանյան երկրների արդիականացումը հասավ զգալի հաջողությունների: Սակայն նրանք չկարողացան հասնել Արևմտյան Եվրոպայի առաջավոր երկրներին:

Հարցեր և առաջադրանքներ

1. XVII–XVIII դդ. ի՞նչն էր արգելակում Բալկանյան երկրների ու ժողովուրդների բնականոն զարգացումը: Արդիականացման գործընթացը ի՞նչ հետևանքներ ունեցավ նրանց համար:
2. Վերհանե՛ք լուսավորական գաղափարների տարածման և մշակույթի զարգացման ազդեցությունը Բալկանյան երկրների ազգային–ազատագրական պայքարի վրա:
3. Ինչո՞ւ XIX դ. ընթացքում Բալկանյան գրեթե բոլոր երկրները կարողացան հասնել անկախության: Կազմե՛ք նրանց անկախացման գործընթացի ժամանակագրությունը:
4. Ներքին և արտաքին ի՞նչ նախադրյալների շնորհիվ զարգացավ Բալկանյան երկրների տնտեսությունը:
5. Բալկանյան ո՞ր պետությունը առաջինը ընդունեց սահմանադրություն: Ի՞նչ պետական կարգ հաստատվեց Բալկանյան ազգային պետություններից յուրաքանչյուրում:

§10. ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ

Ռուսաստանի արդիականացման սկիզբը: Արդեն գիտեք, որ Ռուսաստանում XVII դարի սկզբին հաստատվեց Ռոմանով արքայատոհմի միահեծանությունը: Սակայն ռուսական ավանդական հասարակությունը հետ էր մնում Եվրոպայից: Հին կարգերի բարեփոխումը և շրջադարձը դեպի Եվրոպա սկսեց իրագործել **Պետրոս (Պյոտր) I Ռոմանովը** (1682–1725 թթ.): Նա երազում էր Ռուսաստանը դարձնել արևմտյան արժեքների երկիր: Քառորդ դարի ընթացքում եռանդուն ցարին հաջողվեց կատարել բազմապիսի բարեփոխումներ: Արդյունքում Ռուսաստանն առաջին անգամ իրեն զգաց Եվրոպայի մաս: Կառուցվեց նոր մայրաքաղաք, բացվեցին դպրոցներ, հիմնվեցին գիտությունների ակադեմիա, թերթ, ստեղծվեց նոր բանակ և նավատորմ, բարեփոխվեց պետության կառավարումը:

Անշուշտ, բարեփոխումների արդյունքում Ռուսաստանը միանգամից չդարձավ եվրոպական երկիր: Ավելին՝ բարեփոխումները հաճախ ձախողվում էին կամ ունենում անցանկալի հետևանքներ: Այսպես՝ Ռուսաստանում **ազատավարձու** աշխատանքի փոխարեն մնաց ճորտական հարկադիր աշխատանքը, որն անհամատեղելի էր կապիտալիզմին: Հաջողություն չունեցավ քաղաքների ինքնակառավարման բարեփոխումը, ինչպես նաև դատական բարեփոխումը: Ի տարբերություն Եվրոպայի՝ Ռուսաստանում տնտեսության զարգացման գլխավոր լծակը պետությունն էր:

1721 թ. օրենքով Պետրոս Մեծն ընդունեց կայսեր տիտղոսը: Օրենքում նշված է, որ կայսրը Ռուսաստանի **ինքնակալն** է: Այսինքն՝ կայսեր հրամաններն օրենքի ուժ ունեին բոլորի համար: Ոչ մի խոսք չկար հպատակների իրավունքների մասին: Չկար խորհրդարան կամ տարբեր դասերի ներկայացուցիչների ժողով: Դրանով իսկ հասարակությունը լրիվ օտարվում էր պետության ղեկավարումից: Հիշենք, որ նույն դարաշրջանում Անգլիայում մեծանում էր խորհրդարանի դերը, սահմանափակվում՝ թագավորի իշխանությունը: Այս բոլորը ցույց է տալիս, որ Ռուսաստանի արդիականացումը մակերեսային էր:

XVIII դարի երկրորդ կեսին Ռուսաստանում

առաջադիմեց մանուֆակտուրային կապիտալիզմը: Արդյունաբերության զարգացումը դադարեց միայն պետության հոգսը լինելուց: Միաժամանակ Եվրոպայից Ռուսաստան էին թափանցում լուսավորական գաղափարներ: Սակայն դրանց արձագանքեցին քչերը: Իրեն լուսավորական էր համարում **Եկատերինա II–ը** (1762–1796 թթ.): Չնայած դժվարություններին՝ կայսրուհին կատարեց որոշ ազատական բարեփոխումներ: Օրինակ՝ 1775 թ. օրենք ընդունվեց ազատ ձեռներեցության մասին: Նույն թվականի վարչական օրենքով Ռուսաստանը բաժանվեց 50 նահանգների: Ընդսմին՝ առաջին անգամ նահանգներում տարանջատվեցին գործադիր, դատական և ֆինանսական իշխանությունները: Եկատերինայի օրոք առաջին անգամ Ռուսաստանի օրենսդրության մեջ ամրապնդվեց հպատակների իրավունք հասկացությունը: Մյուս կողմից՝ Ռուսաստանի վերածվելը եվրոպական մեծ տերության նպաստեց ռուսների ազգային ինքնագիտակցության խորացմանը: Այն ուներ կայսերական բնույթ: Այսինքն՝ սեփական ազգի բացառիկությունը և առավելությունը կայսրության մյուս ժողովուրդների նկատմամբ: Դա ևս խոչընդոտում էր Ռուսաստանի արդիականացմանը:

Ռուսական քաղաքակրթությունը XIX դարում: XIX դարի սկզբին Ռուսաստանը Եվրոպայի ամենախոշոր տերությունն էր թե՛ ազգաբնակչությամբ (36 միլիոն), թե՛ տարածքով (մոտ 16 միլիոն քառ. կմ): Հարյուր տարվա ընթացքում այն դարձավ աշխարհի խոշորագույն տերություններից մեկը: Այնուամենայնիվ, ռուսական հասարակությունը մշտապես ճգնաժամի մեջ էր: Ինչո՞վ էր պայմանավորված այդպիսի զարգացումը:

XIX դ. ընթացքում ռուսները շարունակ բանավիճում էին՝ ինչ քաղաքակրթական ուղիով պետք է զարգանա Ռուսաստանը: Հասարակության մեծ մասը այն կարծիքին էր, որ պետք է հավատարիմ մնալ ազգային ավանդական արժեքներին: Մյուսները պնդում էին, որ պետք է հետևել Արևմուտքին: Ոմանք էլ մտածում էին հեղափոխության մասին: Բոլոր այս գործընթացներին մասնակցում էին Ռուսական կայսրության հպատակ ազգերը՝ ուկրաինացիները, բելոռուսները, հայերը, վրացիները, մերձբալթյան ժողովուրդները և այլք:

Ռուսական պետությունը այդ բանավեճում, որպես կանոն, հետևում էր հասարակության մեծ մասի ցանկությանը՝ պահպանել ավանդական հասարակությունը, խուսափել արագ բարեփոխումներից: Իհարկե, հասարակության ազատականացումը ժամանակի հրամայական պահանջ էր, և ցարերից ոմանք դա հասկանում էին: Իր գահակալման սկզբում բարեփոխումների ուղին բռնեց **Ալեքսանդր I–ը** (1801–1825 թթ.): Ամենագլխավորը ժողովրդական կրթության համակարգի ստեղծումն էր: Սակայն ցարը բարեփոխումներից հրաժարվեց Ֆրանսիայի դեմ Հայրենական պատերազմից (1812 թ.) ու Վիեննայի վեհաժողովից հետո (1814–1815 թթ), երբ Եվրոպայում տիրում էր հետադիմությունը:

Պետրոս I

XIX դարի սկզբին Ռուսաստանում լուսավորական գաղափարները տարածված չէին: Դրանք հիմնականում ծանոթ էին երիտասարդ ազնվական այն սպաներին, ովքեր մասնակցել էին Ֆրանսիայի դեմ ռուսական զորքերի 1813–1814 թթ. արշավանքին: Հենց նրանք էլ սկսեցին ստեղծել գաղտնի ընկերություններ, առաջ քաշել սահմանադրական նախագծեր: 1825 թ. դեկտեմբերին նրանք ապստամբեցին և փորձեցին նոր գահ բարձրացած Նիկոլայ I–ին (1825–1855 թթ.) պարտադրել ազատական բարեփոխումներ: **Դեկաբրիստները,** ինչպես նրանք մնացել են պատմության մեջ, ձախողվեցին: Հասարակության մեջ ռուս ազգի ինքնության շուրջ սուր բանավեճեր սկսվեցին: Ռուս մտավորականությունը բաժանվեց երկու ճամբարի՝ **արևմտականների և սլավոնասերների:**

Արևմտականները կարծում էին, որ Ռուսաստանը պետք է առաջ գնա Պետրոս Մեծի նախանշած ուղիով: Նրանք չէին ժխտում Ռուսաստանի յուրօրինակ ազգային ինքնությունը: Միաժամանակ համոզված էին, որ պետք է վերացվի ճորտությունը, զարգացմանը խոչընդոտող գյուղական համայնքը և հաստատվի սահմանադրական միապետություն:

Սլավոնասերները համոզված էին, որ երկրի եվրոպականացումը կվերացնի ռուսների ազգային արժեքները և ինքնությունը: Ըստ նրանց՝ ռուսական հասարակությունն ընդունակ է շրջանցելու կապիտալիզմը և ազգային արժեքների հիմքի վրա կառուցելու նոր հասարակարգ: Սլավոնասերների կարծիքով՝ սլավոնական քաղաքակրթությունը, որի միջուկը Ռուսաստանն է, ավելի բարձր է Եվրոպայից: Սլավոնասերները կտրուկ բարձրացրին ռուսների ազգային ինքնագիտակցությունը, խորացրին նրա մեծապետական բնույթը:

Մինչ այդ Ռուսաստանի տնտեսությունն անկասելի զարգանում էր արդյունաբերական ուղիով: Գիտակցելով բարեփոխումների անհրաժեշտությունը՝ **Ալեքսանդր II–ը** (1855–1881 թթ.) 1861 թ. վերացրեց ճորտությունը, հաստատեց տեղական ինքնակառավարում, բարեփոխեց դատական համակարգը և այլն: Ալեքսանդր Ազատարարը մտածում էր նաև սահմանադրություն ընդունելու մասին, սակայն սպանվեց հեղափոխական նարոդնիկների կողմից:

Քաղաքակրթական ճգնաժամը: Ռուսական քաղաքակրթության արդիականացման այլ ուղի էին առաջարկում հեղափոխականները: Նրանք համոզված էին, որ ինքնակալությունը խաղաղ ճանապարհով հնարավոր չէ բարեփոխել: Եվ ազատական իդեալին հակադրեցին հեղափոխական ժողովրդավարական իդեալը, որի իրագործման արդյունքում պետք է կառուցվեր սոցիալիստական հասարակարգ: Նրանց կարծիքով՝ Ռուսաստանում դա հեշտ էր անել, քանի որ գյուղական համայնքը սոցիալիզմի սաղմն է: Նրանք մտածում էին համայնքում տիրող հավասարությունը գյուղացիական հեղափոխության միջոցով տարածել Ռուսաստանում:

XIX դարի 70–ական թվականներին Ռուսաստանում գյուղացիական հեղափոխության հետևորդներ դարձան **նարոդնիկները**: Գյուղացիների մեջ քարոզչական աշխատանք տանելու համար նրանք կազմակերպեցին «Երթ դեպի ժողովուրդ»: Այդ մեծ միջոցառումն ավարտվեց ձախողմամբ, քանի որ հերթական անգամ գյուղացիները ցույց տվեցին իրենց նվիրվածությունն ինքնակալությանը:

Հեղափոխականների հաջորդ սերնդին Ռուսաստանում անվանում էին **սոցիալ–ժողովրդավարներ**: Նրա գաղափարական հիմքը դարձան կապիտալիզմի վերացման և սոցիալիզմի հաստատման մարքսիստական հայացքները: Ռուսական հեղափոխական շարժման ծայրահեղ թևի ղեկավարը դարձավ Վ. Ուլյանովը (Լենին):

XX դարի սկզբին Ռուսաստանում արդիականացումն ընդգրկեց հասարակության բոլոր դասերը: Սակայն պետության ավանդական կառույցները, հասարակության մեջ գերիշխող պահպանողականները խանգարում էին առաջընթացին: Նույնիսկ ազատականները գործում էին ընդհատակում: Բանվորական շարժումն ընդունեց քաղաքական բնույթ: Սկսեցին առաջանալ կուսակցություններ, որոնց ծրագրերի գլխավոր նպատակը սահմանադրական կարգերի ստեղծումն էր:

Ինքնակալությունը հաշվի չէր նստում նաև կայսրության ծայրամասերում գործող հպատակ ազգերի ազգայնական շարժման հետ: Այդ շարժումները հաճախ համահունչ էին Ռուսաստանի արդիականացման գործընթացին: Այդ իսկ պատճառով ինքնակալության թշնամանքը հպատակ ազգերի ազատագրական ձգտումների նկատմամբ խորանում էր:

Հասարակության արդիականացման ճգնաժամն առաջին անգամ հանգեցրեց համաժողովրդական արյունալի հեղափոխության, որն ընթացավ 1905–1907 թթ.: Թեև ինքնակալությունը հաղթեց, բայց և ստիպված եղավ նահանջել պետական ավանդապահությունից: 1906 թ. ապրիլին հրապարակված «Ռուսական կայսրության պետական հիմնական օրենքները» նախատեսում էր օրենսդրական իրավունքով երկատյան Պետական դումայի ստեղծում: Այն պետք է հրավիրվեր ընտրական օրենքի հիման վրա: Իսկ դա նշանակում էր պետական ավանդական կարգի փոփոխություն և արդիականացում: Դրան էր միտված նաև գրաքննության մեղմացումը, ազատ խոսքի տարածումը և այլն: Տնտեսության ազատականացման գործում մեծ նշանակություն ունեցավ գյուղական համայնքի մասին օրենքը: Ըստ այդ օրենքի՝ գյուղացիներն իրավունք էին ստանում դուրս գալու համայնքից և դառնալու հողի մասնավոր սեփականատեր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ արդյունքներ տվեցին Պետրոս I–ի բարեփոխումները: Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց Եկատերինա II կայսրուհին:
2. Ինչը ստիպեց Ալեքսանդր I–ին հրաժարվել բարեփոխումների իրագործումից: Ովքե՞ր էին դեկաբրիստները: Ի՞նչ գաղափարներ էին նրանք առաջ քաշում:
3. Ներկայացրե՛ք արևմտականների և սլավոնասերների հայացքները: Ինչո՞ւ է Ալեքսանդր II–ը ժողովրդի հիշողության մեջ մնացել Ազատարար անունով:
4. Հեղափոխական շարժման մեջ ի՞նչ ուղղություններ էին ձևավորվել Ռուսաստանում XIX դ. վերջին: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ ձախողվեցին նարոդնիկների ձեռնարկումները: Ներկայացրե՛ք 1905–1907 թթ. հեղափոխության արդյունքները:

§11. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՈՒՂԻՆ

Արդյունաբերական քաղաքակրթության ձևավորումը ԱՄՆ–ում: Նոր ժամանակներում Ամերիկայի երկրների զարգացման գլխավոր արդյունքն արդյունաբերական քաղաքակրթության առաջացումն էր: Այն արևմտյան քաղաքակրթության մի մասն է: Ամերիկյան քաղաքակրթությունն անցել է ձևավորման յուրահատուկ ուղի, որում հատկապես առանձնանում է Ամերիկայի Միացյալ Նահանգները: Ընդամենը մեկ դարում տնտեսության մեջ ԱՄՆ–ը կարողացավ գերազանցել բոլորին և աշխարհում դառնալ առաջատար: Ինչպե՞ս դա տեղի ունեցավ:

XVII–XVIII դդ. Անգլիայի հյուսիսամերիկյան գաղութներում ձևավորվեց **ամերիկյան ազգը**: Ձևավորվել էր մարդկային մի նոր անհատականություն, որին բնորոշ էր գոյատևման համար պայքարը, համարձակությունը, սեփական ճակատագրի ազատ տնօրինումը, նախաձեռնությունն ու գործարարությունը: XVIII դ. վերջին ընդհանուր հայրենիքի, լեզվի, մշակույթի, հասարակական հոգեբանության և գիտակցության ձևավորման գործընթացը դարձել էր անշրջելի: Դա հանգեցրեց ազատության նվաճման և սեփական պետության՝ ԱՄՆ–ի ստեղծման (1775–1783 թթ.):

Կապիտալիզմի ուղիով ԱՄՆ–ն ավելի արագ էր զարգանում, քան Եվրոպայի առաջավոր երկրները: Ի տարբերություն մյուս երկրների, ամերիկացիներին հարկ չեղավ հաղթահարելու մինչարդյունաբերական հասարակության ավանդույթները և մյուս արգելքները:

Երկրում կար երեք տնտեսական շրջան՝ արդյունաբերական հյուսիս–արևելք, ստրկական աշխատանքի վրա հիմնված գյուղատնտեսական հարավ և նոր յուրացվող արևմտյան հողեր: Հարուստ հանքային, ջրային և անտառային պաշարները նպաստեցին արդյունաբերական հեղաշրջման արագ ծավալմանը, որը սկսվեց XIX դ. 40–ական թթ.: Ստրկության վերացումը (1861–1865 թթ.) նպաստեց կարճ ժամանակում գյուղատնտեսության մեջ ֆերմերային տնտեսության հաստատմանը: Գյուղատնտեսության այդպիսի արագ շուկայացումն ընդունված է անվանել կապիտալիզմի զարգացման «**ամերիկյան ուղի**»:

Սակայն արդյունաբերական արտադրանքի մեծ թռիչքը կատարվեց XIX դարի վերջերին և XX դարի սկզբին: Առաջացան արդյունաբերական նոր ճյուղեր: Հատկապես ավտոմեքենաների արտադրությունը դարձավ երկրի արդյունաբերության հզորության խորհրդանիշը: **Նյու Յորքը** դարձավ համաշխարհային ֆինանսական և գործարար կենտրոն: 1913 թ. դրությամբ ԱՄՆ–ն արտադրում էր համաշխարհային արդյունաբերության 36%–ը: Ամերիկացիներն առաջ անցան առաջավոր արդյունաբերական ազգերից: «**Ամերիկյան հրաշքն**» այն է, որ երկիրը հասավ այդպիսի արդյունքի շատ կարճ ժամանակում: Դրան նպաստեցին մի շարք այլ գործոններ՝ որակյալ աշխատուժի ներգաղթ, տեխնիկայի նորագույն նվաճումների արագ ներդրում, տնտեսության մեջ եվրոպական կապիտալի մեծ ներհոսք և այլն: ԱՄՆ ներգաղթածների մեջ էին բազմաթիվ տաղանդավոր գիտնականներ և գյուտարարներ: Այս բոլորի շնորհիվ ԱՄՆ–ը վերածվեց նյութական բարիքների արտադրությունը մարմնավորող արդյունաբերական քաղաքակրթության:

ԱՄՆ–ի հասարակական–քաղաքական կարգերի ժողովրդավարացումը: ԱՄՆ–ի հասարակական–քաղաքական կարգերը սկսել են ձևավորվել դեռևս XVII դարի սկզբից, երբ այստեղ հայտնվեցին առաջին վերաբնակիչները: Նոր ձևավորվող ամերիկյան հասարակությունում մեծ էր բացասական վերաբերմունքը կառավարման միապետական ձևի նկատմամբ: Ահա թե ինչու անկախության պատերազմի ժամանակ յուրաքանչյուր նահանգ **Անկախության հռչակագրից (1776 թ. հուլիսի 4)** հետո ստեղծեց իր սահմանադրությունը: Դրանց հիման վրա ստեղծված սահմանադրությունը («Համադաշնության հոդվածներ») գործողության մեջ մտավ 1781 թ.: Ստեղծվեց անկախ պետությունների համադաշնություն: Եվ միայն համապետական դժվարությունները, զարգացման խոչընդոտները համատեղ հաղթահարելու անհրաժեշտությունը ստիպեց **1787 թ.** ընդունելու նոր՝ յոթ հոդվածից բաղկացած հիմնական օրենք, ըստ որի՝ **ԱՄՆ–ը դարձավ դաշնային հանրապետություն:** Սահմանվեց գերագույն իշխանության տարանջատում՝ Կոնգրես, նախագահ և Գերագույն դատարան: 1791 թ. ուժի մեջ մտան սահմանադրության առաջին տասը փոփոխությունները («Իրավունքների մասին օրենքներ»), որոնք սահմանում էին ժողովրդավարական ազատություններ:

ԱՄՆ–ի Սահմանադրությունը սկիզբ դրեց քաղաքական նոր համակարգի հաստատմանը, որը շարունակվեց մինչև XIX դ. 70–ականները: Այս ժամանակահատվածում ձևավորվեցին երկրի քաղաքական դաշտը, պետական կյանքի սկզբունքներն ու ավանդույթները: Այսպես՝ առաջին նախագահ **Ջորջ Վաշինգտոնը** (1789–1797 թթ.) հիմք դրեց իր պաշտոնում ոչ ավելի, քան երկու անգամ ընտրվելու ավանդույթին: Երրորդ նախագահ **Թոմաս Ջեֆերսոնը** (1801–1809 թթ.) իր հերթին սկիզբ դրեց կառավարություն կազմելու միակուսակցական սկզբունքին: Պետության դաշնային կառուցվածքը նպաստում էր ժողովրդավարության զարգացմանը: Աստիճանաբար հասարակական կյանքում ուրվագծվում են երկու քաղաքական ուժեր՝ **Ժողովրդավարական** (դեմոկրատական, 1828 թ.) և **Հանրապետական** (1854 թ.) կուսակցությունները: Ներքաղաքական կյանքի գլխավոր հիմնախնդիրը ստրկությունն էր, որն ի վերջո հանգեցրեց քաղաքացիական պատերազմի: Ստրկության վերացման գործում մեծ դեր կատարեց հանրապետական նախագահ **Աբրահամ Լինկոլնը,** որը բարձրացրեց այդ կուսակցության հեղինակությունը: Արդյունքում ձևավորվեց քաղաքացիական հասարակություն:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին մշտական էին միջին դասի զանգվածային շարժումները և երրորդ՝ իշխող կուսակցության ստեղծման համար պայքարը: ԱՄՆ–ի ժողովրդավարության սև բիծը սևամորթ բնակչության նկատմամբ խտրականության պահպանումն էր, որը հաճախ ստանում էր դաժան դրսևորումներ:

XX դ. սկզբին հասարակական շարժումների ճնշմամբ երկու կուսակցությունների ներսում պայքար սկսվեց առաջադիմական բարեփոխումների համար: Դրանում մեծ դեր էր խաղում նախագահ **Թեոդոր Ռուզվելտը** (1901–1908 թթ.): Ռուզվելտի բարեփոխումների նախագիծը ստացավ **«նոր ազգայնականություն»** անվանումը: Այն նախատեսում էր բարձրացնել պետության դերը հասարակական կյանքում, պայքարել տարաբնույթ չարաշահումների դեմ: Սակայն բարեփոխումների համար պայքարում առաջնությունն անցավ ժողովրդավարներին: 1912 թ. նախագահական ընտրությունում հաղթեց նրանց թեկնածու **Վուդրո Վիլսոնը:** Նրա բարեփոխումների ծրագիրը հայտնի է **«նոր ազատություն»** անունով: Նոր ընդունած օրենքներից էին առաջադիմական եկամտահարկը, մոնոպոլիաների չարաշահումների սահմանափակումը և այլն:

Անկախության հռչակագրի ստորագրումը

Լատինական Ամերիկայի երկրների արդիականացումը: Կենտրոնական և Հարավային Ամերիկայում նոր ժամանակների սկզբին հաստատվեց Պորտուգալիայի (միայն Բրազիլիայում) և Իսպանիայի գաղութային տիրապետությունը: **Այս գաղութները XIX դարի կեսին ստացան Լատինական Ամերիկա ընդհանուր անվանումը:** Այստեղ ևս, ինչպես ԱՄՆ–ում, եվրոպացիների հետնորդներն աստիճանաբար դարձան առանձին ազգեր, որոնք ունեն **ամերիկացի** ընդհանուր անվանումը: Նրանք առաջացել են կրեոլների (իսպանացիների հետնորդները), բնիկների (հնդկացիներ) և աֆրիկյան սևամորթների համաձուլումից, չնայած բնիկ շատ ժողովուրդներ պահպանեցին իրեն լեզուն և մշակույթը: Ամերիկյան ազգի ձևավորմանը նպաստում էր ազգային արդյունաբերության և մշակույթի ստեղծումը: Մեծ տարածում ստացան լուսավորական գաղափարները:

XIX դարի սկզբին անկախ հայրենիք ունենալու պայքարն սկսեց վերելք ապրել: Ամերիկացիների վրա մեծ տպավորություն թողեցին ԱՄՆ–ի առաջացումը և Մեծ հեղափոխությունը: Սկսվեցին ազատագրական պատերազմներ, որ հիմնականում ծավալվեցին 1810–1826 թթ.: Արդյունքում առաջացավ 20 պետություն՝ Մեքսիկան, Արգենտինան, Չիլին, Կոլումբիան և այլն: Կուբան համառ պայքարից հետո ազատության հասավ միայն 1902 թ.:

Նորանկախ պետությունների արդիականացումն ընթանում էր դժվարին պայմաններում: Դրան խանգարում էին հասարակության բազմակացութաձևությունը, ինչպես նաև ԱՄՆ–ի և եվրոպացիների միջամտությունները: Հիմնական օրենքները, որոնք ձեռք էին բերվում դժվարին պայքարում, պատճենում էին ԱՄՆ–ի Սահմանադրությունը՝ նախագահ, երկատյան օրենսդիր մարմին, փոքրաթիվ ընտրողներ: Իսկ Բրազիլիան, որ երկար ժամանակ կայսրություն էր, 1891 թ. դարձավ հանրապետություն և

ԱՄՆ–ի նմանությամբ կոչվեց Բրազիլիայի Միացյալ Նահանգներ: Ընդսմին ողջ Լատինական Ամերիկայում, ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտը, սովորական էր սահմանադրությունների փոփոխումը (բոլորը միասին՝ 125 անգամ), բռնապետությունների հաստատումը, քաղաքացիական պատերազմները և այլն: Տնտեսության մեջ պահպանվեց օտար կապիտալի մեծ դերը: Չնայած այս բոլորին՝ անկախության պահպանումը հնարավորություն ընձեռեց զարգացնելու ազգային արդյունաբերությունը, ինչպես նաև մշակույթը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք ԱՄՆ պետության կազմավորման գործընթացը: Որո՞նք էին «ամերիկյան հրաշքի» նախադրյալները: Ինչո՞ւ ԱՄՆ–ը դարձավ արևմտյան քաղաքակրթության առաջատար երկիրը:
2. Կառավարման ի՞նչ համակարգ էր հաստատվել ԱՄՆ–ում: Նշեք ԱՄՆ–ում ժողովրդավարական հասարակության հաստատման պայմանները:
3. Ներկայացրեք նախագահ Թ. Ռուզվելտի դերը ԱՄՆ–ի հզորացման գործում: Ի՞նչ անունով են հայտնի նրա և Վ. Վիլսոնի բարեփոխումների ծրագրերը:
4. Ինչպե՞ս են ձևավորվել լատինաամերիկյան ազգերը: Պատմական ի՞նչ պայմաններ նպաստեցին Լատինական Ամերիկայում նոր պետությունների առաջացմանը: Նշեք այդ պետությունների արդիականացման ճանապարհի խոչընդոտները:

ԳԼՈՒԽ Բ

ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

§1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Կայսրության դրությունը: XVIII դ. վերջերին Օսմանյան կայսրությունը Ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցության ներքո թևակոխեց պատմության Նոր դարաշրջանը: Օսմանյան կայսրության համար նոր ժամանակները դարձան սոցիալ–տնտեսական ու քաղաքական անկման, ռազմական պարտությունների, տարածքային կորուստների, հպատակ ժողովուրդների ապստամբությունների ու նրանց արյունալի կոտորածների և, վերջապես՝ ցեղասպանության շրջան: Իշխող շրջանակների փորձերը սահմանափակ արևմտամետ բարենորոգումների միջոցով ապահովելու կայսրության գոյատևումը մնացին անարդյունք:

Կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդները, գտնվելով սոցիալ–տնտեսական, քաղաքական և հոգևոր–մշակութային զարգացման ավելի բարձր մակարդակի վրա, քան թե իշխող թուրք ժողովուրդը, ավելի պատրաստ էին Մեծ հեղափոխության առաջադեմ ազատական և ժողովրդավարական գաղափարների ընկալմանը: Դա խթանեց նրանց՝ թուրքական լծի դեմ ուղղված ազգային–ազատագրական պայքարի բուռն աճը:

Այդ պայմաններում ծանրացավ Օսմանյան կայսրության միջազգային դրությունը: **Արևելյան հարցը**՝ Օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրման խնդիրը, դարձավ նոր ժամանակների միջազգային հարաբերությունների կարևորագույն հարցերից մեկը:

Օսմանյան կայսրությունը բարենորոգումների շրջանում: Ստեղծված ծանր իրավիճակից իշխող թուրքական վերնախավը փորձեց դուրս գալ՝ բռնելով սահմանափակ արևմտամետ բարենորոգումների ճանապարհը:

Այդպիսով նա հույս ուներ ուժեղացնելու բանակը և ձևական զիջումների միջոցով թուլացնելու հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական պայքարը:

Բարենորոգումներին XVIII դ. վերջում սկիզբ դրեց սուլթան Սելիմ III–ը: Եվրոպական օրինակով ստեղծվեցին սահմանափակ թվով նոր զինվորական ստորաբաժանումներ, հիմնադրվեցին զինվորական ուսումնարաններ: Շարունակելով բարենորոգումները՝ սուլթան Մահմուդ II–ը 1826 թ. վերացրեց օսմանյան բանակի ենիչերիական ստորաբաժանումները: Սակայն այդ բարենորոգումները չուժեղացրին օսմանյան բանակը: 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմում Օսմանյան կայսրությունը պարտվեց և ստիպված էր ճանաչել Հունաստանի անկախությունը:

1839 թ. հայտարարվեց արևմտամետ բարենորոգումների մի նոր փուլի մասին, որն ստացել է **թանզիմաթ (1839–1876 թթ.)** անունը: Այդ բարենորոգումները, որոնք նախատեսում էին, որ ոչ մուսուլմանները լինելու են իրավահավասար մուսուլմանների հետ, մնացին զուտ խոստումներ:

1853 թ. Ռուսաստանը պատերազմ սկսեց Օսմանյան կայսրության դեմ, որի իրական նպատակն էր նրա տարածքային անդամահատումը: Անգլիան ու Ֆրանսիան աջակցեցին Օսմանյան կայսրությանը: Սկիզբ առած Արևելյան կամ Ղրիմի պատերազմը ավարտվեց 1856 թ. Ռուսաստանի պարտությամբ: Արդյունքում՝ Օսմանյան կայսրությունում ուժեղացավ Անգլիայի ու Ֆրանսիայի ազդեցությունը:

Թանզիմաթը չհասավ նպատակին: Չհաջողվեց ապահովել երկրի տնտեսական զարգացումը և դանդաղեցնել կայսրության քայքայման գործընթացը: Չհաջողվեց նաև թուլացնել հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական շարժումները:

1876 թ. բռնկվեց բուլղարների խոշոր ապստամբությունը, որը թուրքական իշխանություններին հաջողվեց ճնշել միայն արյան մեջ խեղդելով այն: Բուլղարների ազգային–ազատագրական շարժման դեմ պայքարելու նպատակով կառավարությունը ընդունեց գործողությունների ծրագիր՝ ցեղասպանական իր էությամբ: Այն չհաջողվեց իրականացնել, քանի որ 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում սկիզբ դրվեց Բուլղարիայի անկախացմանը:

Դժգոհությունը համակել էր նաև իշխող թուրքական խավին, ինչի արդյունքում առաջացավ «**նոր օսմանցիների**» ընդդիմադիր շարժումը: Այն գտնում էր, որ կայսրության տարածքային ամբողջականության պահպանման միակ միջոցը սուլթանի իշխանության սահմանափակումն է և սահմանադրության հռչակումը:

1876 թ. Օսմանյան կայսրության ձգնաժամը ընդունեց առանձնապես սուր բնույթ: Մի շարք դավադրությունների արդյունքում գահընկեց արվեցին երկու սուլթաններ և գահ բարձրացավ Աբդուլ Համիդ II–ը, որը ստիպված էր 1876 թ. դեկտեմբերին իր հրովարտակով ազդարարել սահմանադրության ընդունումը: Հաջորդ տարի տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Գումարվեց առաջին օսմանյան խորհրդարանը, որտեղ, բացի թուրքերից, ներկայացված էին քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում նաև հայերը:

Օսմանյան կայսրությունը սուլթան Աբդուլ Համիդ II–ի օրոք: Սուլթան Աբդուլ Համիդ II–ի կառավարման տարիները (1876–1909 թթ.) Օսմանյան կայսրության պատմության ամենադաժան շրջաններից է: 1878 թ. նա ցրեց խորհրդարանը և հաստատեց միանձնյա կառավարման համակարգ, որը հենվում էր բացահայտ բռնության ու պետական ահաբեկչության քաղաքականության վրա: Լինելով բացառիկ կասկածամիտ ու վախկոտ՝ Աբդուլ Համիդը ստեղծել էր մարդկության պատմության ամենահզոր գաղտնի ոստիկանական ծառայություններից մեկը, հաստատել էր խիստ գրաքննություն, որի գործունեությունը շատ դեպքերում վերածվում էր զավեշտի: Այսպես, օրինակ՝ արգելված էր օգտագործել H_2O բանաձևը, քանի որ այն կարող էր կարդացվել՝ Համիդ II–ը հավասար է զրոյի: Պատահական չէ, որ ժամանակակիցները նրա կառավարման շրջանը բնութագրում էին որպես **«զուլյում»,** ինչը կարելի է թարգմանել որպես զանգվածային ահաբեկում և կոտորած, իսկ իրեն անվանում էին «արյունարբու» կամ «կարմիր» սուլթան:

Աբդուլ Համիդ II–ը վերջ դրեց արևմտամետ բարենորոգումների քաղաքականությանը և որդեգրեց **համաիսլամականության** (պանիսլամիզմ) քաղաքականությունը: Նա օգտագործեց այն հանգամանքը, որ թուրք սուլթանները դեռևս XVI դ. բռնազավթել էին խալիֆի՝ աշխարհի բոլոր մուսուլմանների առաջնորդի տիտղոսը: Սուլթանը կայսրության ներսում իր քաղաքականության հենարան որոշեց դարձնել մուսուլմաններին, իսկ արտաքին քաղաքական ոլորտում համախմբել աշխարհի մուսուլման ժողովուրդներին Օսմանյան կայսրության ղեկավարության ներքո և օգտագործել նրանց իր նպատակների իրագործման համար:

Աբդուլ Համիդ II–ի կառավարման շրջանում

ավելի ակնառու դարձավ Օսմանյան կայսրության հետամնացությունը, ավելի ուժեղացավ նրա կախվածությունը արտասահմանյան կապիտալից: Կայսրության ծանրագույն խնդիրներից էր մնում ազգային հարցը:

XIX դարի 70–ական թվականներից միջազգային բնույթ ձեռք բերեց **Հայկական հարցը:** Սկզբում լինելով Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս՝ հետզհետե այն սկսեց փոխարինել նրան՝ դառնալով միջազգային հարաբերությունների կարևորագույն խնդիրներից մեկը: Աբդուլ Համիդը հայ ժողովրդի ազգային–ազատագրական շարժումը կասեցնելու նպատակով սկզբում կիրառեց «խաղաղ» մեթոդներ և ստեղծեց քրդերից կազմված «համիդիե» հրոսակախմբերը:

1894–1896 թթ. թուրքական իշխանությունները անցան հայ ժողովրդի զանգվածային կոտորածների քաղաքականության իրագործմանը, որի նպատակն էր ֆիզիկապես ոչնչացնել հայերին իրենց պատմական հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի տարածքի վրա և այդ կերպ «լուծել» Հայկական հարցը: Այդ քաղաքականությանը, որը բնութագրվում է որպես **Հայոց ցեղասպանության առաջին փուլ,** զոհ գնացին շուրջ 300 հազար հայեր: Այդ հայասպան քաղաքականությունը դատապարտվեց ողջ առաջադեմ մարդկության կողմից:

Օսմանյան կայսրությունը երիտթուրքերի իշխանության շրջանում: Աբդուլ Համիդ II–ի բռնատիրական քաղաքականությունը դժգոհություն էր առաջացրել նաև թուրքական միջավայրում: Ստեղծվեց գաղտնի կազմակերպություն, որի նպատակն էր գահընկեց անել նրան և վերահաստատել սահմանադրությունը: Այդ կազմակերպության անդամներն իրենց անվանում էին երիտթուրքեր: Նրանց հաջողվեց իրենց կազմակերպության մեջ ներգրավել նաև օսմանյան բանակի բազմաթիվ սպաների, որոնք և **1908 թ. հուլիսին կատարեցին հեղաշրջում՝** ստիպելով Աբդուլ Համիդ II–ին հռչակել սահմանադրության վերականգնումը:

Երիտթուրքական կուսակցությունը, բացարձակ մեծամասնությամբ հաղթելով խորհրդարանական ընտրություններում, եկավ իշխանության: Սկզբում երիտթուրքերը պահեցին Աբդուլ Համիդ II–ին գահի վրա, սակայն երբ վերջինս 1909 թ. փորձեց կազմակերպել հեղաշրջում իրենց դեմ, գահընկեց արին նրան: Գահ բարձրացավ սուլթան Մեհմեդ Ռեշադ V–ը, որը լիովին գտնվում էր երիտթուրքերի ազդեցության ներքո:

Չկարողանալով լուծում տալ երկրի առջև ծառացած բազմաթիվ սոցիալ–տնտեսական ու քաղաքական խնդիրներին՝ երիտթուրքերը իրենց քաղաքականության հիմնաքարը դարձրին պայքարը հպատակ ժողովուրդների ազգային–ազատագրական շարժումների դեմ: Սկսած 1911 թ.՝ պաշտոնական գաղափարախոսություն հռչակվեց **պանթյուրքիզմը**՝ ծայրահեղ մեծապետական քաղաքական–հասարակական ուսմունքը: Այն բազմազգ կայսրության ներսում մերժում էր ոչ թուրք ժողովուրդների իրավունքը պահպանելու իրենց ազգային ինքնությունը և քարոզում էր նրանց բռնի թուրքացման անհրաժեշտությունը: Արտաքին քաղաքականության ոլորտում որպես գլխավոր նպատակ էր հռչակում աշխարհի թյուրքալեզու ժողովուրդների միասնական պետության ստեղծումը՝ Օսմանյան Թուրքիայի ղեկավարության ներքո:

Երիտթուրքերի տիրապետության տարիներին արձանագրվեցին լուրջ անհաջողություններ թե՛ ներքին, թե՛ արտաքին ոլորտներում: Ազգային–ազատագրական շարժումը թուրքական բռնապետության դեմ ընդլայնվեց և ներառավ նաև մուսուլման ժողովուրդներին՝ ալբանացիներին և արաբներին: Շարունակվեցին նաև ռազմական պարտությունները և տարածքային կորուստները: Տրիպոլիտանական և երկու Բալկանյան պատերազմները ակնառու դարձրին Օսմանյան կայսրության հետագա թուլացումը:

Փորձելով իրականացնել նվաճողական պանթյուրքիստական ծրագրերը՝ երիտթուրքերի պարագլուխները միացան Գերմանիայի կողմից ղեկավարած դաշինքին և ներքաշեցին Օսմանյան կայսրությանը Առաջին համաշխարհային պատերազմի մեջ: Նրանց գլխավոր նպատակն էր ռուսներից նվաճել Կովկասը:

Երիտթուրքական իշխանությունները, համարելով, որ պատերազմի պայմաններում ստեղծվել են բարենպաստ իրադրություն նախապատրաստած հայաջինջ ծրագիրն իրականացնելու համար, 1915 թ. գարնանից սկսեցին խաղաղ հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածը՝ շարունակելով և շատ ավելի մեծ թափ հաղորդելով Աբդուլ Համիդ II–ի հայոց ցեղասպանության քաղաքականությանը: Մարդկության դեմ ուղղված ծանրագույն այդ հանցագործության զոհ գնացին շուրջ 1,5 միլիոն հայեր:

Պատերազմում Օսմանյան կայսրությունը պարտություն կրեց և հայտնվեց վերջնական փլուզման շեմին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք Օսմանյան կայսրության դրության առանձնահատկությունները նոր շրջանում: Ի՞նչ հետևանքներ ունեցավ կայսրության ժողովուրդների ազատագրական պայքարը:
2. Ո՞վ նախաձեռնեց թանզիմաթը. ինչո՞ւ այն հաջողություն չունեցավ: Ի՞նչ նպատակ էր հետապնդում «Նոր օսմաններ» կազմակերպությունը:
3. Ի՞նչ արդյունք ունեցավ երիտթուրքական շարժումը: Ներկայացրե՛ք Աբդուլ Համիդ II–ի և երիտթուրքերի՝ հայերի հանդեպ քաղաքականության էությունը:

§2. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Նապոլեոնի եգիպտական արշավը: Նոր ժամանակների սկիզբը արաբական աշխարհում ազդարարեց գեներալ Նապոլեոն Բոնապարտի կողմից կազմակերպված ֆրանսիական արշավը Եգիպտոսի դեմ: Այդ ժամանակ Եգիպտոսը գտնվում էր **մամլյուք** բեյերի իշխանության ներքո, որոնք ենթարկվում էին օսմանյան սուլթաններին: 1798 թ. ֆրանսիական 30–հազարանոց բանակը ափ իջավ Եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգստում: Նապոլեոնը հրապարակեց հրովարտակ, որտեղ եգիպտացիներին խոստացավ ազատագրել նրանց մամլյուքների լծից և հաստատել արդար կառավարման համակարգ: Ֆրանսիական բանակը, որը իր ժամանակի ուժեղագույն բանակն էր աշխարհում, հեշտությամբ պարտության մատնելով հետամնաց և անկազմակերպ մամլուքյան զորքերին, գրավեց Կահիրեն: Եգիպտոսը հայտնվեց ֆրանսիացիների իշխանության տակ:

Հետագայում Նապոլեոնը շարունակեց հարձակումը Սիրիայի վրա, սակայն հանդիպելով թուրքական և անգլիական զորքերի համառ դիմադրությանը՝ ստիպված էր նահանջել Եգիպտոս: Այդ պարտությունից հետո նա հասկացավ, որ ֆրանսիական տիրապետությունը Եգիպտոսում դատապարտված է, ուստի լքեց իր բանակը և վերադարձավ Ֆրանսիա:

Եգիպտոսի արաբները չընդունեցին ֆրանսիացիների իշխանությունը և ծավալեցին զինված դիմադրական շարժում:

Այդպիսով՝ ֆրանսիացիների կողմից Եգիպտոսի գրավումը մի կողմից նպաստեց այդ երկրի արաբ ազգաբնակչության միջավայրում ազատագրական նկրտումների առաջացմանը, իսկ մյուս կողմից հնարավորություն տվեց արաբներին ծանոթանալու Ֆրանսիական հեղափոխության առաջադեմ գաղափարներին:

Մուհամեդ Ալիի կառավարումը Եգիպտոսում: Եգիպտոսից ֆրանսիացիների հեռանալուց հետո այստեղ մնացին թուրքական, անգլիական և մամլյուքների բանակները: Անգլիացիները, օգնություն ցույց տալով մամլյուքներին, փորձում էին օգտագործել նրանց թուրքերի դեմ և հաստատել իրենց գերիշխանությունը Եգիպտոսում: Երբ 1803 թ. անգլիացիները դուրս բերեցին իրենց զորքերը, պայքարը թուրքերի և մամլյուքների միջև ծայրաստիճան սրվեց: Դրանից օգտվեց ալբանացի **Մուհամեդ Ալին,** որը ծառայում էր թուրքական բանակում և **1805 թ. եկավ իշխանության Եգիպտոսում:** Օսմանյան սուլթանը ստիպված էր ճանաչել նրան Եգիպտոսի փաշա:

Մուհամեդ Ալիի իշխանության շրջանում (1805–1840 թթ.) Եգիպտոսում կարևոր բարենորոգումներ իրականացվեցին գյուղատնտեսության, ռազմական, պետական կառավարման և մշակութային ոլորտներում, որոնք նպաստեցին երկրի սոցիալ–տնտեսական զարգացմանը, մշակութային վերածննդին և բանակի հզորացմանը:

Օգտագործելով այդ բարենպաստ պայմանները՝ Մուհամեդ Ալին սկսեց իրականացնել հզոր միասնական արաբական պետություն ստեղծելու իր ծրագիրը: 1831 թ. նրա ղեկավարած բանակը գրավեց Սիրիան և սկսեց առաջխաղացումը դեպի Փոքր Ասիա: Թուրքական սուլթանը Մուհամեդ Ալիին հայտարարեց ապստամբ և փորձեց կանգնեցնել նրա առաջխաղացումը, սակայն թուրքական բանակը կրեց մի շարք ծանր պարտություններ: 1832 թ. եգիպտական զորքերը հայտնվեցին Կոստանդնուպոլսի մատույցներում:

Թվում էր, թե Օսմանյան կայսրությունը դատապարտված է, սակայն ռուսական ռազմական օգնության շնորհիվ այն փրկվեց: Մուհամեդ Ալին ստիպված էր կնքել զինադադար և հետ քաշել իր զորքերը Փոքր Ասիայից: Նա ճանաչեց սուլթանի գերիշխանությունը՝ փոխարենը պահպանելով իր իշխանությունը Եգիպտոսում և Սիրիայում:

Հետագայում եվրոպական երկրները Անգլիայի ղեկավարությամբ, ձգտելով պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, կազմակերպեցին զինված միջամտություն հօգուտ թուրքերի և պարտության մատնեցին Մուհամեդ Ալիին: Այդպիսով Ալիի ծրագիրը չիրականացավ: 1841 թվականից Եգիպտոսը անցավ անգլիացիների հսկողության տակ: 1882 թ. նրանք գրավեցին այդ երկիրը:

Լուսավորչական շարժումը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ): XIX դ. երկրորդ կեսից Սիրիայի տարածքում, որի մեջ մտնում էր նաև ժամանակակից Լիբանանը, սկիզբ առավ լուսավորչական շարժում, որի ղեկավարները առաջ քաշեցին կրթության տարածման միջոցով արաբ ժողովրդի վերածննդի գաղափարը: Այդ շարժման առաջացմանը նպաստեցին թանզիմաթի արևմտամետ բարենորոգումները և սահմանադրության հռչակումը Օսմանյան կայսրությունում: Մեծ դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ **1861 թ. Լիբանանը** ֆրանսիացիների օգնությամբ ձեռք բերեց ինքնավարություն Օսմանյան կայսրության կազմում:

Արաբական վերածննդի գործիչները հանդես էին գալիս արաբական լեզվի, գրականության, մշակույթի զարգացման օգտին, քարոզում էին հայրենասիրական գաղափարներ: Նրանք հիմնադրում էին դպրոցներ, որտեղ ուսուցումը տեղի էր ունենում արաբերենով, հրապարակում էին արաբերեն պարբերականներ: Լուսավորիչները հանդես էին գալիս նաև կրոնական թշնամանքի, անհանդուրժողականության և ֆանատիզմի, ինչպես նաև ֆեոդալական նախապաշարումների դեմ: Նրանք կոչ էին անում արաբ մտավորականությանը ծանոթանալու առաջադեմ եվրոպական գաղափարներին և քարոզում էին ազատական գաղափարներ: Այդ շարժման ականավոր ներկայացուցիչներից էր **Բութրուս ալ–Բուսթանին:**

Հետագայում այդ շարժումը տարածվեց նաև Եգիպտոսում: Այստեղ այն հանդես եկավ ավելի շատ իսլամի արդիականացման և համաիսլամականության տեսքով: Արաբական վերածննդի այդ ուղղության ներկայացուցիչները կարևորում էին պայքարը եվրոպական ազդեցության դեմ՝ համարելով, որ բարենորոգումներ կատարելով իսլամի կրոնում և հարմարեցնելով այն ժամանակակից պահանջներին՝ հնարավոր կլինի իրականացնել մուսուլմանական աշխարհի համախմբումը համաիսլամականության դրոշի ներքո: Համաիսլամականության գաղափարախոսն էր **Ջալալ էդ Դին Աֆղանին:**

Հետզհետե արաբ լուսավորիչների միջավայրում սկսեցին ձևավորվել արաբական ազգայնականության գաղափարները: Սկսեցին հնչել կոչեր՝ զինված ապստամբության միջոցով ազատվել թուրքական լծից և վերականգնել միասնական արաբական հայրենիքի անկախությունը:

Արաբների ազգային–ազատագրական պայքարը թուրքական լծի դեմ: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից և սահմանադրության վերականգնումից հետո արաբների ազատագրական շարժումը Օսմանյան կայսրությունում նոր վերելք ապրեց: Սկզբնական շրջանում արաբական ղեկավարները հույս ունեին հասնել արաբների ինքնավարության բարենորոգված Օսմանյան կայսրության շրջանակներում: Սակայն երբ պարզ դարձավ, որ երիտթուրքերը անց են կացնում մեծապետական պանթուրքիստական քաղաքականություն ազգային հարցում, արաբները սկսեցին ստեղծել գաղտնի կազմակերպություններ, որոնք հանդես էին գալիս անկախության օգտին: 1913 թ. գաղտնի «**Ալ Ահդ**» («Պատգամ») կազմակերպության կողմից, որի մեջ մտնում էին հիմնականում օսմանյան բանակում ծառայող արաբ սպաներ, սկսեց նախապատրաստվել զինված ապստամբություն թուրքական բռնապետության դեմ: Թուրքական իշխանություններին հաջողվեց բացահայտել այդ ընդհատակյա կազմակերպությունը, ձերբակալել նրա ղեկավարներին և կանխել ապստամբությունը:

Առաջին համաշխարհային պատերազմը էլ ավելի սրեց թուրք–արաբական հակամարտությունը: 1915–1916 թթ. թուրքական իշխանությունները ձեռնարկեցին արյունալի պատժիչ միջոցառումներ արաբ ազգայնականների դեմ: Մահապատժի ենթարկվեցին շուրջ 800 արաբական ազգային–ազատագրական շարժման ղեկավար գործիչներ:

Սակայն նույնիսկ այդ ծանր հարվածը չընկճեց արաբներին: **1916 թ. Հիջազում,** որտեղ գտնվում են իսլամի սրբազան քաղաքներ Մեքքան և Մեդինան, անգլիացիների օգնությամբ սկսվեց հակաթուրքական զինված ապստամբություն: Օսմանյան կայսրությունը, ներգրավված լինելով պատե-

ռազմի մեջ, հնարավորություն չուներ ճնշելու ապստամբությունը: Հիջազի տիրակալ Հուսեյնը հայտարարեց իրեն արաբ ժողովրդի թագավոր և ստեղծեց կառավարություն, որի նստավայր հաստատվեց **Մեքքան:** Թվում էր, թե սկիզբ է առնում Օսմանյան կայսրության փլատակների վրա միասնական արաբական պետության ստեղծման մասին արաբ ազգայնական գործիչների երազանքի իրականացումը:

Սակայն Անտանտի առաջատար երկրները՝ Անգլիան ու Ֆրանսիան, ունեին այլ ծրագրեր արաբական երկրների վերաբերյալ: Նրանք չճանաչեցին Հուսեյնին Օսմանյան կայսրության գերիշխանության տակ գտնվող բոլոր արաբների թագավոր՝ սահմանափակվելով միայն նրան որպես հետամնաց Հիջազի թագավոր ճանաչելով: Անգլիան ու Ֆրանսիան, ինչպես նաև Ռուսաստանը սկսեցին գաղտնի բանակցություններ՝ պատերազմի ավարտից հետո Օսմանյան կայսրության տրոհման և նրա տարածքների վրա իրենց գերիշխանության հաստատման մասին: 1916 թ. նրանք ստորագրեցին գաղտնի համաձայնագիր, որը հետագայում հայտնի դարձավ նրա վրա իրենց ստորագրությունները դրած դիվանագետներ **Սայքսի** (Անգլիա) և **Պիկոյի** (Ֆրանսիա) անունով: Այն նախատեսում էր Օսմանյան կայսրության արաբական տիրույթների բաժանումը Ֆրանսիայի և Անգլիայի միջև:

Միաժամանակ, անգլիական զորքերը ստանալով արաբների աջակցությունը՝ 1917 թ. գրավեցին Իրաքը և Պաղեստինը: Հաջորդ տարի անգլիացիները գրավեցին նաև Սիրիայի և Լիբանանի գլխավոր քաղաքները:

1918 թ. սեպտեմբերին Անգլիան ու Ֆրանսիան ստորագրեցին նոր համաձայնագիր, որը հիմնականում վերահաստատեց Սայքս–Պիկոյի գաղտնի համաձայնագրի դրույթները: Արաբական երկրների մեծ մասը բաժանվեց նրանց միջև: Արաբների իշխանությունը ճանաչվեց միայն **Հիջազում** և **Հորդանանում:**

Արաբական միասնական պետություն ստեղծելու գաղափարն անցավ պատմության գիրկը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ կարգավիճակ ուներ Եգիպտոսը Օսմանյան կայսրությունում XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին: Ի՞նչ դեր խաղաց Նապոլեոն I–ի եգիպտական արշավանքը:
2. Պարզաբանե՛ք Մուհամեդ Ալիի բարեփոխումների արդյունքները: Ինչո՞ւ Եգիպտոսի անկախացման համար պայքարն այս շրջանում հաջողությամբ չպսակվեց:
3. Նշե՛ք արաբ լուսավորական շարժման հայտնի դեմքերի: Արաբական ո՞ր երկրներում տեղի ունեցան ազգայնական շարժումներ. ի՞նչ արդյունք ունեցան դրանք:
4. Ներկայացրե՛ք արաբական աշխարհում Անգլիայի և Ֆրանսիայի գերիշխանության հաստատման գործընթացը:

§ 3. ԻՐԱՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Իրանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին: Նոր ժամանակների սկիզբը Իրանում համընկնում է **Ղաջարների** թյուրքական ցեղի հարստության հաստատման հետ, որը շարունակվեց մոտ 130 տարի:

Այս հարստության հիմնադիրը դեռ երիտասարդ տարիներից փառամոլությամբ ու դաժանությամբ աչքի ընկնող **Աղա Մոհամմադ** խանն էր: 1794 թ. նա գերեվարեց նախորդ կառավարող հարստության ներկայացուցիչ վերջին շահին: Հաջորդ տարի երկրի նոր մայրաքաղաք հռչակվեց **Թեհրանը,** որը մինչև այդ աննշան քաղաք էր: 1796 թ. Աղա Մոհամմադ խանը թագադրվեց որպես Իրանի շահ: Աղա Մոհամմադը նպատակ ուներ վերականգնելու Իրանի երբեմնի հզորությունը: Նա ցանկանում էր լիովին գրավել Անդրկովկասը՝ դուրս մղելով այնտեղից Իրանի գլխավոր ախոյանին՝ Ռուսաստանին: 1797 թ. իրանական բանակը ներխուժեց Անդրկովկաս ու գրավեց Ղարաբաղը: Սակայն Շուշիում Աղա Մոհամմադ շահը դավադրաբար սպանվեց:

Հետագայում պայքարը Իրանի և Ռուսաստանի միջև Կովկասի համար ավելի սրվեց, տեղի ունեցան արյունալի պատերազմներ: Այդ պայ-

քարն ավարտվեց Ռուսաստանի ռազմական հաղթանակով: 1828 թ. ստորագրվեց Թուրքմենչայի պայմանագիրը, որը ամրագրեց նաև Արևելյան Հայաստանի հիմնական հատվածը Ռուսաստանի կազմում: Նրանց միջև ստորագրվեց նաև առևտրական պայմանագիր, որը սկիզբ դրեց ռուս առևտրականների արտոնություններին Իրանում:

Հարավային Կովկասում կրած ծանր պարտություններից հետո Իրանը ձգտում էր փոխհատուցել իր տարածքային կորուստները նոր նվաճումներով Միջին Արևելքում: Սակայն այս դեպքում սրվեցին հարաբերությունները Անգլիայի հետ:

1837 թ. ծագեց անգլո–իրանական հակամարտություն աֆղանական Հերաթ քաղաքի համար: Այդ քաղաքը կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն ուներ Անգլիայի համար, քանի որ գտնվում էր Հնդկաստանի հետ կապող ճանապարհի վրա: Իրանի վրա ճնշում գործադրելու նպատակով անգլիական նավատորմը մտավ Պարսից ծոց, և Իրանը ստիպված 1841 թ. ստորագրեց առևտրական պայմանագիր Անգլիայի հետ: Այդ պայմանագիրը հաստատեց անգլիացիների հսկողությունը Իրանի տնտեսության նկատմամբ:

Բաբիների շարժումը: XIX դարի կեսերին քաղաքական ու սոցիալական խոր ճգնաժամի մեջ հայտնված Իրանում հրապարակ է իջնում նոր կրոնա–քաղաքական ուսմունք՝ **բաբիականությունը**: Նրա հիմնադիրն էր Ալի Մուհամմեդը:

Ալի Մուհամմեդը 1844 թ. իրեն հայտարարեց շուրջ հազար տարի առաջ անհետացած իմամ Մահդիի պատգամախոս՝ Բաբ (բաբ՝ արաբ. դարպաս), ով ժողովրդին հաղորդելու էր իմամի կամքը: Երեք տարի անց Բաբը հայտարարեց, թե ինքն է Մահդին: Բաբի գրչին է պատկանում «Բայան» («Հայտնություն») վերնագրով գիրքը, որտեղ շարադրված են բաբիականության հիմնական դրույթները:

Համաձայն այդ դրույթների՝ Իրանում պետք է ստեղծվեր Բաբիների սրբազան թագավորություն: Այստեղ կհաստատվեին սոցիալական արդարություն ու հավասարություն, հողը և բերքը կլինեին բոլորինը: Բաբի ուսմունքը մեծ տեղ էր հատկացնում կրոնական հարցերին: Նա պնդում էր, որ Ղուրանը հնացել է և պետք է փոխարինվի «Բայանով»: Նա չէր ընդունում նույնիսկ «ջիհադը»՝ «անհավատների» դեմ մուսուլմանների սրբազան պատերազմը: Բաբիները կնոջ ու տղամարդու իրավահավասարության, միամուսնության կողմնակից էին: Նրանց միջավայրում խրախուսվում էր հանդուրժողականությունն այլախոհության և անհավատության նկատմամբ: Ըստ էության, բաբիականությունը նախատեսում էր ստեղծել նոր հասարակություն:

Բաբի ուսմունքը արագորեն տարածվեց ողջ երկրով մեկ: Ահաբեկված իշխանությունները ձերբակալեցին Բաբին, բանտարկեցին և հետագայում գնդակահարեցին: Սակայն նրա կողմնակիցները չընկճվեցին և մեծ թափ ստացած կրոնա–սոցիալական այս շարժումը ճնշել հաջողվեց միայն 1852 թվականին:

Անգլո–ռուսական մրցակցությունը Իրանում: Իրանի թուլությունը մեծ հնարավորություններ ստեղծեց ժամանակի հզոր տերությունների՝ հատկապես **Անգլիայի** և **Ռուսաստանի** համար առանց ռազմական զավթումների «խաղաղ» մուտք գործելու այդ երկիր և հաստատելու այստեղ իրենց հսկողությունը: Իրանը անշեղորեն վերածվում էր Ռուսաստանի և Անգլիայի ռազմական կցորդի: Երկրի հյուսիսում տեղակայվեցին ռուսական, իսկ հարավում՝ անգլիական զորքեր:

Տնտեսության քայքայման պատճառով պետական եկամուտների նվազումը ստիպում էր ղաջարական շահերին շարունակ վարկեր վերցնել Անգլիայից, ինչը ուժեղացնում էր Իրանի տնտեսական ու ֆինանսական կախվածությունը նրանից: Անգլիան առաջին օտարերկրյա պետությունն էր, որը սկսեց կոնցեսիաներ ձեռք բերել: Նրանց թվին էր պատկանում Անգլո–պարսկական նավթային ընկերությունը, որը ժամանակի ընթացքում դարձավ աշխարհի ամենախոշոր ընկերություններից մեկը:

Ռուսաստանը նույնպես ձգտում էր խոշոր կոնցեսիաների տիրանալ: Ռուսական կոնցեսիաներից աչքի էր ընկնում ռուսահպատակ հայ մեծահարուստ Ստեփան Լիանոզովի՝ Կասպից ծովի հարավային մասում ձկան որս իրականացնելու բացառիկ իրավունքը:

Օտար պետությունների գաղութային քաղաքականությունը Իրանի նկատմամբ խոչընդոտում էր բնական հարստությունների առատությամբ աչքի ընկնող այդ երկրի սոցիալ–տնտեսական զարգացումը: Ամենուրեք տիրում էին աղքատությունը, չքավորությունը, սովը, կաշառակերությունը:

1905–1911 թթ. սահմանադրական շարժումը: Իրանի առաջադեմ մտավորականությունը փորձում էր գտնել ծանր վիճակից

դուրս գալու ուղիներ՝ առաջարկելով բռնել արևմտամետ բարենորոգումների ուղին:

XIX դ. երկրորդ կեսի բարենորոգիչների կարկառուն ներկայացուցիչներից էր հայազգի **Մալքոմ** (Մելքոն) **խանը** (Հովսեփ Հակոբի Մելքումյան): Վարելով շահական պալատում մի շարք բարձր պաշտոններ, նա նաև զբաղվում էր հասարակական, լուսավորչական ու գրական գործունեությամբ, հանդես էր գալիս երկրում արևմտամետ բարենորոգումներ իրականացնելու և սահմանադրություն հռչակելու օգտին:

Երբ 1905 թ. հարատև սովի պատճառով Թեհրանում տարերայնորեն ծագեցին զանգվածային ընդվզումներ իշխանությունների դեմ, նրանց մասնակիցները պահանջեցին հռչակել սահմանադրություն ու գումարել մեջլիս (խորհրդարան): Շահը ստիպված էր զիջումների գնալ: **1906 թ. հրապարակվեց նրա հրովարտակը սահմանադրություն ընդունելու և մեջլիս հրավիրելու վերաբերյալ:** Նույն տարում մեջլիսը սկսեց գործել:

Սակայն հետադիմական ուժերը նոր շահ Մուհամմեդ Ալիի ղեկավարությամբ, ստանալով օտարերկրյա պետությունների, առաջին հերթին Ռուսաստանի օգնությունը, անցան հակահարձակման: Ռուս կազակների գումարտակը շահի հրամանով իրականացրեց պետական հեղաշրջում և ձերբակալեց մեջլիսի անդամներին: Երկրում ծավալվեց սուր պայքար սահմանադրականների և շահի կողմնակիցների միջև: Շարժմանը մասնակցում էին նաև **Հայ հեղափոխական դաշնակցության** ներկայացուցիչները՝ որպես սահմանադրականների դաշնակիցներ: Առավել աչքի ընկավ հայազգի տաղանդավոր զորավար **Եփրեմ խանը:** Ստանալով հասարակ ժողովրդի աջակցությունը՝ հեղափոխական ուժերին հաջողվեց վերականգնել սահմանադրական կարգերը:

Սակայն 1911 թ. գրավելով Հյուսիսային Իրանը՝ Ռուսաստանը պարտադրեց առաջադեմ ուժերին հեռանալ իշխանությունից և հանձնել այն շահի կողմնակիցներին: Այդպիսով՝ սահմանադրական շարժումը ավարտվեց պարտությամբ:

1905–1911 թթ. սահմանադրական շարժումը նպաստեց երկրի ազգաբնակչության քաղաքական և ազգային գիտակցության վերելքին:

Հարցեր և առաջադրանքներ

1. XVIII դարի վերջին ո՞ր հարստությունը հաստատվեց Իրանում:
2. Տարածքային ի՞նչ կորուստներ և ո՞ր պատերազմների արդյունքում ունեցավ Իրանը XIX դարում:
3. Որքա՞ն է տևել բաբիական շարժումը, ի՞նչ գաղափարներ էր քարոզում նրա հիմնադիրը:
4. Ներկայացրե՛ք 1905–1911 թթ. սահմանադրական շարժման ընթացքն ու արդյունքները:

§4. ՉԻՆԱՍՏԱՆԻ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Չինաստանի ինքնահզորացման փորձերը: XIX դարի երկրորդ կեսին Չինաստանը՝ երբեմնի ծաղկուն քաղաքակրթության երկիրը, դարձավ արևմտյան արդյունաբերական ազգերի կիսագաղութը: Երկիրը շարունակ պարտություն էր կրում եվրոպացիների դեմ պատերազմներում: Կնքված անիրավահավասար պայմանագրերով օտարերկրացիները ստացան գործարարությամբ զբաղվելու նպաստավոր պայմաններ: 1871 թ. Լոնդոնի և Հոնկոնգի միջև ստեղծվեց հեռագրական կապ, որը հեշտացրեց եվրոպացիների գերիշխումը չինական շուկայում:

Չինաստանը դարձավ առաջավոր ազգերի արդյունաբերական արտադրանքի սպառման շուկա: Օտարերկրյա բանկերը փոխառություններ էին տրամադրում պետությանը, վերահսկում նրա եկամուտները, երկրի առանձին տեղերում ձեռք բերում նորանոր արտոնություններ: Այդ բոլորը վնասում էր չինական տնտեսության զարգացմանը: Մյուս կողմից՝ Չինաստանի ներքաշումը համաշխարհային տնտեսության մեջ նպաստեց ազգային տնտեսության զարգացմանը: Սակայն դրան խանգարում էր օտարերկրացիների վերահսկողությունը:

Մշտական պարտությունները Ցին արքայատոհմի վերնախավում առաջացրեց համոզում, որ եվրոպացիները ռազմական տեխնիկայի հար-

ցում ավելի ուժեղ են: Ուստի նրանք որոշեցին հրաժարվել նախկին մեկուսացումից, դեսպանություններ փոխանակել, կնքել շահավետ պայմանագրեր, յուրացնել արևմտյան ազգերի ռազմատեխնիկական փորձը, ուժեղացնել բանակը: Այս քաղաքականությունը, որը շարունակվեց 1860–1894 թթ., Չինաստանի պատմության մեջ հայտնի է «**ինքնահզորացում**» անունով: Արևմտյան տերությունների մասին հրատարակվեցին գրքեր, ստեղծվեցին արտաքին գործերի պետական մարմիններ, դպրոցներ, զինագործարաններ և նավաշինարաններ: 1868 թ. արտադրվեց չինական առաջին մեծ շոգենավը:

1894–1895 թթ. պատերազմում Չինաստանը պարտվեց Ճապոնիայից: Պատերազմն ակնհայտորեն ցույց տվեց, որ «ինքնահզորացման» քաղաքականությունը ձախողվել է: Դրա գլխավոր պատճառն այն էր, որ բարեփոխումները կատարվում էին չինական ավանդական հասարակության պահպանման պայմաններում: Չինական արքունիքը և հասարակության վերնախավը դեմ էին արմատական բարեփոխումներին:

Չինաստանի արդիականացման սկիզբը: «Ինքնահզորացման» քաղաքականության ձախողումից հետո Չինաստանում սկսվեց արդիականացման համար պայքարի մի նոր փուլ, որը շարունակվեց ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտը: Չինական ավանդական հասարակության բարեփոխման հիմնավորմամբ հանդես եկավ **Կան Յուվեյը**: Գլխավոր պահանջներն էին՝ բանակի ուժեղացում, ազգային արդյունաբերության պաշտպանություն, կոնֆուցիականության ամրապնդում, սահմանադրական միապետության ստեղծում և այլն: Նա մտածում էր **համատեղել չինական ավանդական հասարակությունը արևմտյան արժեքների հետ:** Կան Յուվեյի կողմնակիցները ստեղծում էին կազմակերպություններ, հրատարակում թերթեր, արքունիք ներկայացնում բարեփոխման նախագծեր և այլն: Շարժումն ընդունեց համաչինական բնույթ: Սակայն հին կարգերի կողմնակիցները կարողացան ձախողել բարեփոխումների համար պայքարը:

Չին ժողովրդի ազգային հպարտությանը վիրավորում էր արևմտյան տերությունների ներթափանցումը Չինաստան: 1898–1901 թթ. ընթացավ համաժողովրդական ապստամբություն ընդդեմ օտարերկրացիների: Այն ղեկավարում էր «**Իխետուան**» («Արդարության և խաղաղության ջոկատներ» կամ «Իխեցյուան»՝ «Բռունցք հանուն արդարության և ազատության») գաղտնի կրոնական ընկերությունը: Նա խնդիր ուներ փրկելու Չինաստանի քաղաքակրթությունը, թույլ չտալու նրա արևմտականացումը: Սակայն արևմտյան տերությունները կարողացան ճնշել չին ժողովրդի ընդվզումը:

Չինաստանի արդիականացման գլխավոր խոչընդոտը Ցին արքայատոհմն էր և հին ազնվականությունը: Ահա թե ինչու նրանց դեմ սկսվեցին հեղափոխական շարժումներ հանուն երկրի լիարժեք նորացման: Դրանք գլխավորում էր **Սուն Յաթսենը:** Նա հիմնեց «**Չինաստանի վերածննդի միություն**» կազմակերպությունը, որը խնդիր ուներ իրագործելու երեք նպատակ՝ **ազգայնականություն** (մանջուրական Ցին արքայատոհմի վերացում), **ժողովրդապետություն** (հանրապետական կարգի ստեղծում) և **ժողովրդական բարեկեցություն**: Միաժամանակ պայքար սկսվեց սահմանադրության համար: Առաջանում էին նորանոր հեղափոխական կազմակերպություններ:

1911–1912 թթ. Չինաստանում տեղի ունեցավ **հեղափոխություն,** որը պատմության մեջ հայտնի է **սինխայան** անվամբ (չինական լուսնային օրացույցի տարվա անունով): Նրանում մեծ դեր էին կատարում Սուն Յաթսենը և իր կողմնակիցները: Սինխայան հեղափոխության արդյունքում տապալվեց միապետական կարգը, և հաստատվեց հանրապետություն: Սակայն երկրում կայունություն չհաստատվեց, և ժողովրդավարության համար պայքարը շարունակվեց հաջորդ տասնամյակներին:

Ճապոնիան՝ Արևելքի առաջին արդյունաբերական երկիր: 1868 թ. հեղափոխության արդյունքում տապալվեց Տոկուգավա իշխանատոհմի սյոգունի իշխանությունը, որը կայսեր անունից Ճապոնիան կառավարում էր 1603 թ. ի վեր: Իշխանությունն անցավ 15–ամյա Մուցուխիտո կայսրին, որը ստացավ **Մեյձի (Լուսավորյալ կառավարում)** անունը: Այս իրադարձությունը շրջադարձային եղավ Ճապոնիայի պատմության մեջ: Համեմատաբար կարճ ժամանակում՝ մինչև XX դարի սկիզբը, Ճապոնիան վերածվեց Արևմուտքին մրցակից **արդյունաբերական տերության:** Դա բարեփոխումների և ծաղկման դարաշրջան էր:

Երկրում ձևավորվեցին արդյունաբերական քաղաքակրթությանը բնորոշ հասարակական հարաբերություններ և ազգային հզոր մշակույթ: Վերջ տրվեց ավատատիրությանը, հաստատվեց դասային հավասարություն, ձևավորվեցին ներ-

քին միասանական շուկա և մրցունակ արտադրություն: Խոշոր արդյունաբերական քաղաքներ դարձան Տոկիոն, Օսական, Կիոտոն և այլն: Բնակչության թիվը 38–ից հասավ ավելի քան 72 միլիոնի: Առաջին աշխարհամարտի նախօրյակին Ճապոնիան դեռևս ագրարային–արդյունաբերական երկիր էր: Չնայած դրան՝ զարգացման արագությամբ երկիրը նույնիսկ առաջ էր անցել ԱՄՆ–ից և Գերմանիայից:

Հասարակական առաջընթացում կարևոր նշանակություն ունեցավ սահմանադրական կարգերի ստեղծումը: Ճապոնիան իր համար հարմար գտավ Գերմանական կայսրության սահմանադրության օրինակը: **1889 թ.** հաստատված **հիմնական օրենքով** երկիրը հռչակվում էր **սահմանադրական միապետություն:** Սահմանադրությամբ կայսրը երկատյան խորհրդարանից ստանում էր ավելի մեծ իրավունքներ: Քաղաքացիներին տրվում էին ժողովրդավարական ազատություններ: Առաջացան կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ և տարաբնույթ շարժումներ:

Արտաքին քաղաքականության մեջ Ճապոնիան հասավ բազմապիսի հաջողությունների: Մինչև XX դարի սկիզբը երկիրն ազատվեց 15 անիրավահավասար պայմանագրերից: Վերացվեցին օտարերկրացիների արտերկրային իրավունքները: Այլ երկրների հետ հաստատվեցին դիվանագիտական, տնտեսական և մշակութային կայուն հարաբերություններ:

Ստեղծելով ուժեղ բանակ՝ Ճապոնիան միջազգային ասպարեզում սկսեց մեծ դեր խաղալ: Մինչև Առաջին աշխարհամարտ երկրի տարածքը զավթումների հաշվին կրկնապատկվեց: Զավթումների գլխավոր ուղղությունները Կորեան և Չինաստանն էին: Երկրին հատկապես հզորացրին հաղթանակները 1894–1895 թթ. չին–ճապոնական և 1904–1905 թթ. ռուս–ճապոնական պատերազմներում: Այդ բոլորի շնորհիվ Ճապոնիան դարձավ գաղութային տերություն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բացատրե՛ք Չինաստանի «ինքնահզորացման» քաղաքականության էությունը: Ինչո՞ւ այն ձախողվեց:
2. Ո՞վ էր Կան Յուվեյը, ի՞նչ պահանջներ նա առաջադրեց հասարակության բարեփոխման համար: Արևմտականացման դեմ ուղղված ի՞նչ շարժում սկսվեց, ինչո՞վ այն ավարտվեց: Որո՞նք էին 1911–1912 թթ. չինական հեղափոխության գլխավոր արդյունքները:
3. Ներկայացրե՛ք XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Ճապոնիայի արդիականացման գլխավոր արդյունքները:
4. Քաղաքական ի՞նչ համակարգ ձևավորվեց Ճապոնիայում: Թվարկե՛ք արտաքին քաղաքականության բնագավառում երկրի ունեցած հաջողությունները:

§5. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գաղութային համակարգի բնորոշ կողմերը: Գաղութացումը՝ որպես վերաբնակեցում, ինչպես նաև նվաճված հողերի կողոպուտի և յուրացման համակարգ, միշտ եղել է համաշխարհային պատմական գործընթացի մասը: Օտար երկրներում, երբեմն էլ թույլ բնակեցված հողերում ինչ–ինչ պատճառներով մարդիկ վերաբնակվում և ստեղծում էին համատեղ կյանքի մեծ կամ փոքր ազգային համայնքներ և նույնիսկ պետական կազմավորումներ: Այդպես էին, օրինակ, հին հունական գաղութները Սև և Միջերկրական ծովերի ավազանում: Գաղութացումը՝ որպես արտերկրային ծավալում, մեծ մասամբ ընթացել է բռնի միջոցներով և տևել դարեր: Այդպիսին են եղել Հին Եգիպտոսի, Իրանի, Հռոմի տերությունները, միջնադարում՝ Արաբական խալիֆայությունը, Մոնղոլական և Օսմանյան հսկա պետությունները և այլն: Պետք է նկատի ունենալ, որ գաղութային համակարգի բնորոշ կողմերից մեկը քաղաքակրթությունների տևական բախումն է: Բազմաթիվ ժողովուրդների կյանքում դա ունեցել է ծանր հետևանքներ:

Նոր դարերում գաղութացման երևույթը մնացել է նույնը: Միաժամանակ ի հայտ են եկել առանձնահատկություններ.

Առաջին՝ արտաերկրային ծավալման հա-

մաշխարհային գլխավոր կենտրոնը դառնում է Եվրոպան: Եվրոպացիները, հենվելով իրենց գիտատեխնիկական նվաճումների վրա, կարողացան ստեղծել աննախադեպ համաշխարհային գաղութային շուկայական տնտեսություն:

Երկրորդ՝ մշտապես զարգացող արդյունաբերությունը և շուկայական տնտեսությունը պահանջում էին հումքի նորանոր աղբյուրներ: Գաղութները դառնում են հումքի աղբյուր:

Երրորդ՝ եվրոպական արդյունաբերությունը պահանջում էր իր ապրանքների նոր շուկաներ: Տեղական շուկան դառնում էր նեղ, ուստի գաղութները ժամանակի ընթացքում վերածվում են սպառման շուկաների:

Չորրորդ՝ կապիտալիզմը զարգանում էր ոչ միայն խորությամբ, այլև լայնությամբ: Եվրոպացիները կապիտալ էին ներդնում հետամնաց երկրներում՝ ստեղծելով պլանտացիաներ, հանքավայրեր, ձեռնարկություններ, կառուցում երկաթուղիներ և այլն: Դրանցում չնչին աշխատավարձով աշխատում էին տեղացիները:

Հինգերորդ՝ գաղութներում ծավալվող տնտեսական, մշակութային և հասարակական–քաղաքական գործընթացներն ի վերջո հանգեցնում են արդյունաբերական նոր ազգերի առաջացման և նրանց ազատագրման:

Գաղութային կայսրությունների առաջացումը և մրցակցությունը: Գաղութային կայսրությունների ստեղծման առաջին փուլը աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակաշրջանն էր: Առաջինը գաղութային կայսրություններ դարձան **Պորտուգալիան և Իսպանիան**: Պորտուգալիան հաջողության հասավ Արևելքում, Իսպանիան՝ Լատինական Ամերիկայում: Պատճառն այն է, որ Աֆրիկայի ափերով Արևելք տանող ուղին հայտնվեց Պորտուգալիայի ձեռքում: Ասիայում Իսպանիայի միակ գաղութը դարձավ Ֆիլիպինները: Լատինական Ամերիկայում պորտուգալացիներն իրենց ձեռքում կարողացան պահել միայն Բրազիլիան:

XIV–XVII դարերում պորտուգալացի և իսպանացի գաղութարարների արտերկրային ծավալումն ուներ երկու առանձնահատկություն: **Առաջին՝** գաղութային նվաճումները, որոնք հիմնականում կատարում էին ասպետական զորքերը, կոչված էին բավարարելու Եվրոպայի ոսկու պահանջակը: Ոսկին՝ որպես փոխանակման միջոց, անհրաժեշտ էր նոր սաղմնավորվող շուկայական տնտեսությանը: Դրանով էին այս նվաճումները տարբերվում նախկին արտերկրային նվաճումներից: **Երկրորդ՝** Պորտուգալիայում և Իսպանիայում դեռևս տիրում էր ավատատիրությունը: Պետության իրականացրած զավթումներին բնորոշ էին ուղղակի կողոպուտը, ստրկավաճառությունը և կրոնական մոլեռանդությունը: Արքայական իշխանությունը նպատակ ուներ գաղութներում հաստատելու առևտրական մենաշնորհ, որից ստացվում էր գլխավոր շահույթը: Այսինքն՝ տվյալ դարաշրջանի գաղութատիրությունն ուներ առևտրային բնույթ:

Պորտուգալիան և Իսպանիան սկիզբ դրեցին նոր ժամանակների գաղութատիրությանը, սակայն դրա արդյունքներից օգտվեցին նրանց մրցակիցներ **Նիդերլանդները** և **Անգլիան:** Նիդերլանդները գաղութային կայսրություն դարձավ XVII դարի առաջին կեսին: Հոլանդիայի առևտրական քաղաքները ստեղծեցին Արևելահնդկական ընկերությունը, որը գործում էր Ասիայում և Աֆրիկայում: Ընկերությունն իրավունք ստացավ զորք ունենալու, պատերազմ հայտարարելու, հաշտություն կնքելու, դրամ հատելու, ամրոցներ և առևտրական հենակետեր կառուցելու: Նա կարողացավ Պորտուգալիային դուրս մղել Ինդոնեզիայից, Ցեյլոնից, Թայվանից, Հնդկական և Խաղաղ օվկիանոսների մի շարք կղզիներից: Արևելահնդկական ընկերություններ ստեղծվեցին նաև Եվրոպայի մի քանի այլ երկրներում:

Առևտրական արտոնյալ ընկերություններ ստեղծվեցին նաև **Անգլիայում**: Նրանցից հատկապես հզորացավ անգլիական **Արևելահնդկական ընկերությունը** (1600 թ.): Անգլիացիները սկզբում Ամերիկայի համար մրցակցության մեջ մտան Իսպանիայի հետ: Արդյունքում Հյուսիսային Ամերիկայում XVII դ. սկզբին հիմնվեցին առաջին անգլիական գաղութները: Հզորացնելով նավատորմը՝ XVII դ. երկրորդ կեսին նրանք սկսեցին գաղութներ զավթել նաև Արևելքում: Այդ հողի վրա Անգլիան տևական պատերազմների մեջ մտավ Հոլանդիայի դեմ և ի վերջո հաղթեց: Հոլանդիայի գլխավոր գաղութն Ասիայում մնաց Ինդոնեզիան: Ճիշտ է, Հոլանդիան մնաց գաղութային կայսրություն, բայց առաջնությունն անցավ Անգլիային:

XVII դարի վերջից գաղութային նվաճումներում գլխավոր մրցակիցներ են դառնում **Անգլիան** և **Ֆրանսիան**: Պայքարի ասպարեզ դարձան Հնդկաստանը և Հյուսիսային Ամերիկան՝ գլխավորապես Կանադան: Այդ պատերազմներում ևս հաղթեց Անգլիան: Եվ չնայած դրան՝ Ֆրանսիան ևս կարողացավ ստեղծել գաղութային կայսրություն: Նրա մեջ մտնում էին Ալժիրը, Թունիսը, Կամբոջան (Կամպուչիա), Վիետնամը և այլն:

Աշխարհի գաղութային բաժանման հետևանքները: XIX դ. աշխարհի ամենամեծ գաղութային կայսրությունը **Մեծ Բրիտանիան էր:** Բրիտանացիները հպարտանում էին իրենց նվաճումներով. «Բրիտանական անսահման կայսրությունում արևը երբեք մայր չի մտնում, և արյունը երբեք չի չորանում»: Հենց այդ առիթով շրջանառության մեջ մտավ **«իմպերիալիզմ»** հասկացությունը: Սակայն ինչպես Անգլիան, այնպես էլ մյուս գաղութային տերությունները ձեռք բերածով չբավարարվեցին: XIX դ. վերջին և XX դ. սկզբին նոր գաղութներ ձեռք բերելու համար պայքարն ավելի սրվեց երկու պատճառով: **Առաջին՝** ավարտվում է արդյունաբերական քաղաքակրթության և համաշխարհային տնտեսության ձևավորումը: **Երկրորդ՝** առաջանում են նոր ազգային պետություններ և հզոր արդյունաբերություն ունեցող երկրներ (Գերմանիա, Իտալիա, ԱՄՆ, Ռուսաստան, Ճապոնիա և այլն):

Նոր դարաշրջանում գաղութների համար պայքարն ընթանում էր Ասիայում և հատկապես Աֆրիկայում: 1876 թ. դրությամբ եվրոպացիները գաղութացրել էին «Սև մայրցամաքի» ընդամենը 10 %–ը: Նրանց լրիվ անծանոթ էին մայրցամաքի ներքին շրջանները:

Աֆրիկայի վերջնական բաժանման գործում մեծ նշանակություն ունեցավ Բեռլինի միջազգային համաժողովը, որին մասնակցում էր 12 եվրոպական երկիր, ինչպես նաև ԱՄՆ–ը և Օսմանյան տերությունը: Սուր մրցակցության պայմաններում մասնակիցները ստորագրեցին եզրափակիչ պայմանագիր, որով սահմանվում էին մայրցամաքի համատեղ գաղութացման սկզբունքները և կարգը: 1900 թ. դրությամբ Աֆրիկայի 90 %–ն արդեն բաժանվել էր Ֆրանսիայի, Անգլիայի, Բելգիայի, Պորտուգալիայի, Իսպանիայի, Գերմանիայի և Իտալիայի միջև: Ամենաշատը բաժին հասավ Ֆրանսիային՝ 42,1%: Աֆրիկայում անկախ պետություններ մնացին միայն Եթովպիան և Լիբերիան:

XX դարի սկզբին աշխարհի գաղութային բաժանումն ավարտվել էր: Ամենամեծ գաղութային տերությունը նախկինի պես Մեծ Բրիտանիան էր: Նրա տիրապետության տակ գտնվում էր 430 միլիոն բնակչություն և 18 միլիոն քառ. կմ տարածք: Երկրորդը Ֆրանսիան էր, որը տիրում էր 50 միլիոն բնակչություն և 9,7 միլիոն քառ. կմ տարածք ունեցող երկրների: Գաղութային նոր կայսրություններ դարձան Գերմանիան, ԱՄՆ–ը, Իտալիան, Ճապոնիան և Բելգիան:

Արդյունաբերական քաղաքակրթության գաղութային համակարգի ստեղծումն ունեցավ հսկայական հետևանքներ.

Առաջին՝ աշխարհի բոլոր երկրները ներքաշվեցին կապիտալիզմի համաշխարհային տնտեսության մեջ և սկսեցին զարգանալ արևմտյան քաղաքակրթության ուղիով:

Երկրորդ՝ ձևավորվեցին գաղութային կայսրություններ, որոնց բնորոշ էին գաղութների քաղաքական ենթարկումը, տնտեսական շահագործումը և գաղափարական ճնշումները:

Երրորդ՝ գաղութային նվաճումների ընթացքում ոչնչացվեցին կամ կործանման եզրին հասցվեցին տասնյակ ժողովուրդներ: Վերաբնակեցման հետևանքով բնիկների հողում առաջացան Ամերիկա մայրցամաքի ժամանակակից երկրները, Ավստրալիան, Նոր Զելանդիան և այլն:

Չորրորդ՝ Աֆրիկայի գաղութացումն ուղեկցվեց ստրկավաճառությամբ: Չորս դարի ընթացքում Աֆրիկայից որպես ստրուկ Ամերիկա է արտահանվել 15–16 միլիոն մարդ: Այդ ընթացքում զոհվել է 60–70 միլիոն մարդ: Դրա հետևանքով 1650–1850 թթ. Աֆրիկայի բնակչության թիվը մնացել է անփոփոխ՝ 100 միլիոն մարդ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք նոր ժամանակներում գաղութացման գործընթացի առանձնահատկությունները:
2. Որո՞նք էին նոր ժամանակների գաղութային տերությունները: Ներկայացրե՛ք նրանց միջև տեղի ունեցած մրցակցության հիմնական արդյունքները:
3. Ինչո՞ւ XIX դարի վերջին և XX դարի սկզբին սրվեց պայքարը գաղութների համար:
4. Ե՞րբ ավարտվեց աշխարհի գաղութային բաժանումը: Ո՞ր երկիրն էր ամենամեծ գաղութատերը, ո՞րն էր հաջորդը:
5. Ներկայացրե՛ք գաղութային համակարգի ստեղծման հետևանքները:

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ, ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ,
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱԼԵՐԻ ՂԼԵՉՅԱՆ,
ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

10

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ

Հրատարակչության տնօրեն՝ ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր՝ ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Խմբագիր՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՁԱՔԱՐՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ ՆՎԱՐԴ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
Սրբագրիչներ՝ ՍԵՐԺ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ԼԻԱՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ ԼԱԼԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
Շապիկի համակարգչային մշակումը՝ ԱՐԵՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ
Քարտեզագիր՝ ԳՐԻԳՈՐ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ISBN 978–99941–1–634–8
Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 11 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 45000 օրինակ:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Ֆաքս՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am
էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am